



Թափոնների կառավարումը Հայաստանում **Waste Governance in Armenia**

Կայուն զարգացման նպատակների փորձագետների փոխանակման հայ-շվեդական ծրագրի շրջանակներում
In the frames of the Swedish Armenian SDG Expert Exchange Programme

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ գեկույց

Մարտ 2020
Երևան, Հայաստան

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՍՏՄ	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊԸ	Արտադրողի պատասխանատվության ընդլայնում
ԱՊԿ	Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն
ԱՐՄՍՍՍՏ	ՀՀ վիճակագրական կոմիտե
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ԲԿԼՓ	Բնապահպանական կառավարման լավագույն փորձ
ԲԿՀ	Բնապահպանական կառավարման համակարգ
ԵՀԳԳ	Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԷՀԿ	Էկոլոգիապես համահունչ կառավարում
ԹԵԵԿԿ	Թափոնից Էներգիա ստացող եվրոպական կայանների կոնֆեդերացիայի
ԼՀՏ	Լավագույն հասանելի տեխնիկա
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ԿԹ	Կոշտ թափոն
ԿԿԹ	Կոշտ կենցաղային թափոն
ԿԿԹԿ	Կոշտ կենցաղային թափոնների կառավարում
ԿԿՑ	Կատարողական հիմնական ցուցանիշ
ԿՑԳ	Կենսացիկլի գնահատում
ԿՕԱ	Կայուն օրգանական աղտոտիչ
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԲՏՀ	Համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգ
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՎԿԱԿ	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
ՄԱԱԶԿ	Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱՀ	Մաքուր արտադրություն հայեցակարգ
ՄԱՇՄԾ	Միավորված ազգերի շրջակա միջավայրի ծրագիր
ՄՀՀ	Միջհամայնքային համագործակցություն
ՆՕԿ	Նյութի օգտահանման կայան
Շ/Բ	Շինարարության և քանդման
ՇՄՍՏԿ	Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՄՀ	Պետություն-մասնավոր համագործակցություն

ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՈԱՄԱ	Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն
ՎՉԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՎԹՉ	Վճարիր թափածի չափով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀԿ	Տարանջատ հավաքման կենտրոն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՕԹԸՀ	Օրգանական թափոնների ընտրովի հավաքում
HDPE	High-density polyethylene (Բարձր խտության պոլիէթիլեն)
PET	Polyethylene terephthalate (Պոլիէթիլեն տերեֆտալատ)
PP	Polypropylene (Պոլիպրոպիլեն)

Չեկույցին հղում տեղադրելու համար

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն (2020): ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: Հայաստանի ամերիկյան համալսարան և «LIFE» հիմնադրամ:

Նախագծի կայք

<https://ace.aua.am/waste/wga>

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Պատկեր 1** - Թափոնների կայուն կառավարման օգուտները
- Պատկեր 2** - Թափոնների հիերարխիա
- Պատկեր 3** - Կենցաղային թափոնների գոյացումը մեկ շնչի հաշվով՝ ըստ տարիների (կգ/մարդ տարեկան)
- Պատկեր 4** - Վտանգավոր թափոնների հոսքը (առանց կենցաղայինի)
- Պատկեր 5** - Թափոնների հոսքը 2016-2018 թվականներին
- Պատկեր 6** - Հայաստանում թափոնների վերաբերյալ տվյալների հավաքման սխեմա
- Պատկեր 7** - ՀՀ օրենսդրական շրջանակի կառուցվածքը
- Պատկեր 8** - Թափոնների կառավարման ներկա ինստիտուցիոնալ շրջանակը Հայաստանում
- Պատկեր 9** - ՀՀ մարզերում 2018 թ.-ին հավաքված աղբահանության վճարներ (մլրդ դրամ)
- Պատկեր 10** - Աղբահանության և սանիտարական մաքրման ծախսերը ՀՀ մարզերում 2018 թ.-ին (միլիարդ դրամ)
- Պատկեր 11** - Թափոնների կառավարման և սանիտարական մաքրման ծախսերի դիմաց հավաքված վճարների մասնաբաժինը (ըստ մարզերի)
- Պատկեր 12** - Գանձված բնապահպանական հարկերը թափոնակուտակիչներում տեղադրված թափոնների համար (մլն ՀՀ դրամ)
- Պատկեր 13** - Մուտքի վճար և բնապահպանական հարկ ոչ վտանգավոր կենցաղային թափոններ աղբավայրում տեղադրելու համար, 2013 թ. (Եվրո տոննայի համար):
- Պատկեր 14** - Միացյալ Թագավորությունում աղբավայրում թափոններ տեղադրելու բնապահպանական հարկի դրույքաչափերն ու արդյունավետությունը՝ սկսած տվյալ հարկի ներդրման պահից:
- Պատկեր 15** - Արտադրական թափոններից և այլ վնասակար նյութերից հողի պահպանություն (միլիոն ՀՀ դրամ)
- Պատկեր 16** - Հողերի ռեկուլտիվացիայի ծախսեր (միլիոն ՀՀ դրամ)
- Պատկեր 17** - Բնապահպանության հիմնական արտադրական միջոցների հիմնավերանորոգման ծախսերն ըստ բնապահպանության ոլորտների, 2018 թ. (միլիոն ՀՀ դրամ)
- Պատկեր 18** - Աղբատարների թիվը համայնքներում
- Պատկեր 19** - Համայնքներում աղբատարների թիվն ըստ տեսակների
- Պատկեր 20** - ԵՄ 28 երկրներում կենսազանգվածի տարեկան արտադրության 10-ամյա միջինը՝ ըստ հողին առնչվող ոլորտների

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աղյուսակ 1** - Բնածին վտանգների ռիսկեր ունեցող տարածքներ
- Աղյուսակ 2** - Հայաստանի Հանրապետության հիմնական ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ցուցանիշները, Համաշխարհային բանկ
- Աղյուսակ 3** - Հայաստանի Հանրապետության ՀՆԱ, Համաշխարհային բանկ
- Աղյուսակ 4** - Հայաստանի ՀՆԱ-ի արտադրության հաշիվն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2018 թ.
- Աղյուսակ 5** - Առողջապահական ռիսկերի հանգեցնող գործոններ
- Աղյուսակ 6** - Թափոնների ընդհանուր գոյացումը՝ ըստ վտանգավորության դասի և տարիների (1000 տ/տարի)
- Աղյուսակ 7** - Կենցաղային թափոնների գոյացումը՝ ըստ վտանգավորության դասի և տարիների (1000 տ/տարի)
- Աղյուսակ 8** - Հայաստանում թափոնների բաղադրությանն անդրադարձող ուսումնասիրություններ
- Աղյուսակ 9** - Կոշտ թափոնների կառավարման հիմնական ուղղությունների՝ ծրագրով (N-65Ա) սահմանված աջակցող գործողությունների ամփոփ նկարագրություն
- Աղյուսակ 10** - Հայաստանում ԱՊԸ համակարգերի ներդրման միջոցառումների 2018-2021 թվականների ծրագիր
- Աղյուսակ 11** - ՀԸԳՀ-ի՝ կոշտ թափոնների կառավարմանն առնչվող դրույթների ամփոփ նկարագրություն
- Աղյուսակ 12** - Հայաստանի մասնակցությունը թափոնների կառավարմանն առնչվող միջազգային համաձայնագրերին
- Աղյուսակ 13** - Հայաստանի կողմից ստորագրված՝ բնապահպանությանն առնչվող միջպետական համաձայնագրեր
- Աղյուսակ 14** - Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկում մուտքերի քանակն ըստ վտանգավորության դասի (N 430-Ն)
- Աղյուսակ 15** - Ֆինանսավորման աղբյուրներն ըստ կոշտ թափոնների կառավարման ոլորտների
- Աղյուսակ 16** - Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը մինչև 2021 թ.
- Աղյուսակ 17** - Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը 2021 թվականից հետո
- Աղյուսակ 18** - ԿԿԹ-ից ստացված տարբեր տեսակի կոմպոստներում ծանր մետաղների պարունակությունը և ԵՍ պահանջները (մգ/կգ չոր նյութի մեջ)
- Աղյուսակ 19** - Գյուղատնտեսական թափոնների անաերոբային մշակման օգուտները
- Աղյուսակ 20** - Գոմաղբից բիոգազի արտադրության տեսական ներուժ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ----- 1
- ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ----- 3
- ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ----- 4
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ----- 5
- ՍԱՆՐԱՄԱՍՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ----- 7
- ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ----- 11
- ԱՄՓՈՓԱԳԻՐ----- 12
- 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----- 13
 - 1.1 Թափոնների հիերարխիան որպես առաջնորդող սկզբունք----- 15
 - 1.2 Ծրագրի նպատակները----- 17
- 2 ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ----- 20
 - 2.1 Երկրի բնութագիր----- 20
 - 2.2 Տեղեկատվություն և տվյալներ----- 33
 - 2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգեր----- 41
 - 2.4 Օրենսդրություն և իրավակարգավորումներ----- 52
 - 2.5 Ինստիտուցիոնալ շրջանակ----- 71
 - 2.6 Ֆինանսական մեխանիզմներ----- 85
 - 2.7 Ենթակառուցվածք----- 97
 - 2.8 Թափոնների կառավարման պրակտիկաները Հայաստանում----- 110
 - 2.9 Իրազեկության առկա մակարդակ----- 118
- 3 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՑԵՐ----- 122
 - 3.1 Օրենսդրական և ռազմավարական բացեր----- 122
 - 3.2 Ինստիտուցիոնալ բացեր----- 130
 - 3.3 Ֆինանսական մեխանիզմների բացեր----- 136
 - 3.4 Տեխնոլոգիական և ենթակառուցվածքային բացեր----- 138
- 4 ԶԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ----- 144
 - 4.1 Առաջարկություններ օրենսդրության և ռազմավարությունների վերաբերյալ----- 145
 - 4.2 Առաջարկություններ ինստիտուտների վերաբերյալ----- 150
 - 4.3 Առաջարկություններ ֆինանսական մեխանիզմների վերաբերյալ----- 155
 - 4.4 Առաջարկություններ տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների վերաբերյալ----- 156
- ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ----- 159
 - Ա 1 Համակողմանի լավագույն փորձ----- 160
 - Ա 2 ԿԿԹԿ ռազմավարությունների լավագույն փորձ----- 167
 - Ա 3 ԿԿԹ հավաքման լավագույն փորձ----- 178
 - Ա 4 Թափոնների մշակման լավագույն փորձ----- 181
 - Ա 5 Թափոնների կառավարման բնապահպանական ազդեցությունների վերահսկողություն----- 189
- ՀԱՎԵԼՎԱԾ Բ – ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ԶՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ----- 202
 - ՀՀ օրենքներ----- 202
 - ՀՀ ենթաօրենսդրական ակտեր----- 202
- ՀԱՎԵԼՎԱԾ Գ – ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ----- 204
- ՀԱՎԵԼՎԱԾ Դ – ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ և ԽՈՐՀՐԴՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ----- 205

ՀԱՎԵԼՎԱԾ Ե – ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ----- 208

Հաղորդակցություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ Հայաստանում ԱՊԸ համակարգի ներդրման գործընթացի առնչությամբ ----- 208

Հաղորդակցություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ Հայաստանի կրթական համակարգում թափոնների կառավարման վերաբերյալ թեմաներ ներառող դասընթացների և ծրագրերի առնչությամբ ----- 211

Հաղորդակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ անապահով ընտանիքներին օգնելու նպատակով օգտագործված իրերի հավաքագրման ծրագրերի առնչությամբ - 217

ՀՂՈՒՄՆԵՐ ----- 222

ՄԱՆՐԱՄԱՍՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**----- 1
- ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ**----- 3
- ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ**----- 4
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** ----- 5
- ՄԱՆՐԱՄԱՍՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** ----- 7
- ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ** ----- 11
- ԱՄՓՈՓԱԳԻՐ** ----- 12
- 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ----- 13
 - 1.1 Թափոնների հիերարխիան՝ որպես ուղենշային սկզբունք----- 15
 - 1.2 Ծրագրի նպատակները ----- 17
- 2 ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**----- 20
 - 2.1 Երկրի բնութագիր** ----- 20
 - 2.1.1 Աշխարհագրական բնութագիր ----- 20
 - 2.1.2 Տնտեսական բնութագիր----- 22
 - 2.1.3 Սշակութային բնութագիր----- 23
 - 2.1.4 Առողջապահական բնութագիր ----- 25
 - 2.1.5 Բնապահպանական բնութագիր----- 26
 - 2.1.6 Թափոնների կառավարման բնութագիր----- 27
 - 2.1.7 Առանցքային ազգային գերակայություններ----- 31
 - 2.2 Տեղեկատվություն և տվյալներ** ----- 33
 - 2.2.1 ՀՀ վիճակագրական կոմիտե ----- 33
 - 2.2.2 Ռազմավարություններում և հետազոտություններում առկա հասանելի տվյալներ----- 38
 - 2.2.3 Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություններ ----- 39
 - 2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգեր** ----- 41
 - 2.3.1 ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիր ----- 42
 - 2.3.2 ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն ----- 43
 - 2.3.3 ՀՀ գյուղի և գյուղատնտեսության՝ 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն ----- 44
 - 2.3.4 Մաքուր արտադրության հայեցակարգ ----- 45
 - 2.3.5 Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն ----- 46
 - 2.3.6 Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳԳ) ----- 48
 - 2.4 Օրենսդրություն և իրավակարգավորումներ** ----- 52
 - 2.4.1 ՀՀ Սահմանադրություն և թափոններին վերաբերող միջազգային համաձայնագրեր----- 54
 - 2.4.2 ՀՀ օրենքը թափոնների մասին (ՀՕ-159-Ն) ----- 56
 - 2.4.3 ՀՀ օրենքը աղբահանության և սանիտարական մաքրման մասին (ՀՕ-237-Ն) ----- 57
 - 2.4.4 ՀՀ օրենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (ՀՕ-110-Ն)----- 57
 - 2.4.5 ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն) ----- 57
 - 2.4.6 ՀՀ օրենք լիցենզավորման մասին (ՀՕ-193)----- 58
 - 2.4.7 ՀՀ օրենք տեղական ինքնակառավարման մասին (ՀՕ-337) ----- 58
 - 2.4.8 ՀՀ օրենք բնապահպանական վերահսկողության մասին (ՀՕ-82-Ն)----- 59
 - 2.4.9 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր ----- 59
 - 2.4.10 Վտանգավոր թափոններին վերաբերող իրավական ակտեր ----- 60
 - 2.4.11 Զուլթային նյութերի, յուղերի և հատուկ հեղուկների տեխնիկական կանոնակարգ----- 64
 - 2.4.12 Փաթեթավորման թափոններին վերաբերող իրավական ակտեր----- 64
 - 2.4.13 Հիմնական դերակատարների իրավունքներն ու պարտականությունները----- 65
 - 2.4.14 Թափոնների սահմանումը և տեսակները ----- 65

2.4.15	ԵՏՄ անդամակցությունից բխող փաստաթղթեր	67
2.4.16	Քաղաքականությունների և օրենսդրության առանցքային թերություններ	68
2.5	Ինստիտուցիոնալ շրջանակ	71
2.5.1	ՀՀ կառավարություն	73
2.5.2	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	73
2.5.3	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	74
2.5.4	ՀՀ առողջապահության նախարարություն	75
2.5.5	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	76
2.5.6	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	76
2.5.7	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ	76
2.5.8	Տեղական ինքնակառավարման մարմիններ	77
2.5.9	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	79
2.5.10	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (ԱԱՏԱ)	80
2.5.11	«Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ	80
2.5.12	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	81
2.5.13	Մասնավոր լաբորատորիաներ	81
2.5.14	ՀՀ վիճակագրական կոմիտե	82
2.5.15	Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ	82
2.6	Ֆինանսական մեխանիզմներ	85
2.6.1	Աղբահանության վճար	87
2.6.2	Բնապահպանական հարկ	90
2.6.3	Ֆինանսական մեխանիզմների առանցքային թերություններ	95
2.7	Ենթակառուցվածք	97
2.7.1	Կոշտ կենցաղային թափոնների գործածում	97
2.7.2	Կենսաբանական թափոնների մշակման ենթակառուցվածք	103
2.7.3	Վտանգավոր բժշկական թափոններ	107
2.7.4	Այլ վտանգավոր թափոններ	107
2.7.5	Շինարարության և քանդման (Շ/Ք) թափոններ	108
2.7.6	Առանցքային ենթակառուցվածքային թերություններ	109
2.8	Թափոնների կառավարման պրակտիկաները Հայաստանում	110
2.8.1	Կանխում և կրճատում	110
2.8.2	Վերօգտագործում (նախապատրաստում վերօգտագործման համար)	110
2.8.3	Վերամշակում (կյուլթի օգտահանում)	112
2.8.4	Էներգիայի օգտահանում (թափոնից էներգիա)	115
2.8.5	Տեսակավորում և տեսակավորված հավաքում	115
2.8.6	Հավաքում, տեղափոխում, տեղադրում	117
2.9	Իրազեկության առկա մակարդակ	118
2.9.1	Հանրային իրազեկություն	119
2.9.2	Բնապահպանական դասընթացներ	119
2.9.3	Թափոնների կառավարումը ֆորմալ կրթությունում	120
2.9.4	Առողջապահական հաստատություններում վտանգավոր թափոնների վերաբերյալ իրազեկվածություն	120
2.9.5	Թափոնների ռեսուրսների շտեմարան	121
3	ԹՎՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՑԵՐ	122
3.1	Օրենսդրական և ռազմավարական բացեր	122
3.2	Ինստիտուցիոնալ բացեր	130
3.3	Ֆինանսական մեխանիզմների բացեր	136
3.4	Տեխնոլոգիական և ենթակառուցվածքային բացեր	138
4	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	144
4.1	Առաջարկություններ օրենսդրության և ռազմավարությունների վերաբերյալ	145
4.1.1	Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում	145
4.1.2	Բ. Կառավարման բարելավում	146
4.2	Առաջարկություններ ինստիտուտների վերաբերյալ	150

- 4.2.1 Ա. Մշտադիտարկում, տվյալներ և տեղեկատվություն ----- 150
- 4.2.2 Բ. Կառավարման կարողություն ----- 151
- 4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ ----- 152
- 4.3 Առաջարկություններ ֆինանսական մեխանիզմների վերաբերյալ ----- 155**
- 4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում ----- 155
- 4.4 Առաջարկություններ տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների վերաբերյալ ----- 156**
- 4.4.1 Ա. Շինարարական ենթակառուցվածքներ ----- 156
- 4.4.2 Բ. Աղբավայրեր ----- 157

ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ ----- 159

- ԳԼԽԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- 159
- Ա 1 Համակողմանի լավագույն փորձ ----- 160**
- ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- 160
- Ա 1.1 Թափոնների հիերարխիա ----- 160
- Ա 1.2 Չրո-թափոն ----- 161
- Ա 1.3 Թափոնի ավարտի չափորոշիչ ----- 162
- Ա 1.4 Ինտեգրված թափոնների կառավարման ռազմավարություններ ----- 163
- Ա 1.5 Թափոնների կառավարման կենսացիկլի գնահատում ----- 163
- Ա 1.6 Տնտեսական գործիքներ ----- 165
- Ա 1.7 Արտադրողի պատասխանատվության ընդլայնում ----- 165
- Ա 2 ԿԿԹԿ ռազմավարությունների լավագույն փորձ ----- 167**
- ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- 167
- Ա 2.1 Ծախսերի ուղենշում ----- 167
- Ա 2.2 Թափոնների մշտադիտարկում ----- 168
- Ա 2.3 Վճարիր-թափածի-չափով (ՎԹՉ) սխեմաներ ----- 168
- Ա 2.4 Ըստ կատարողականի պայմանագրեր ----- 168
- Ա 2.5 Իրազեկման բարձրացում ----- 169
- Ա 2.6 Թափոնների հարցով խորհրդատվական ցանց ----- 170
- Ա 2.7 Տնային և համայնքային կոմպոստացում ----- 171
- Ա 2.8 Թափոնների կրճատման ծրագրեր ----- 172
- Ա 2.9 Ապրանքների և թափոնների վերօգտագործումը խթանող սխեմաներ ----- 173
- Ա 2.10 Տուրիզմի ռազմավարություն ----- 173
- Ա 3 ԿԿԹ հավաքման լավագույն փորձ ----- 178**
- ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- 178
- Ա 3.1 ԿԿԹ հավաքման ռազմավարություն ----- 178
- Ա 3.2 Միջհամայնքային համագործակցություն (ՄՀԳ) փոքր քաղաքապետարանների միջև ----- 179
- Ա 3.3 Տարանջատ հավաքման կենտրոններ (ՏՀԿ) ----- 180
- Ա 3.4 Թափոնների հավաքման լոգիստիկ օպտիմալացում ----- 180
- Ա 3.5 Զիչ արտանետող աղբատարներ ----- 181
- Ա 4 Թափոնների մշակման լավագույն փորձ ----- 181**
- ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- 181
- Ա 4.1 Օրգանական թափոնների կոմպոստացում ----- 181
- Ա 4.2 Օրգանական թափոնների անաէրոբ մշակում ----- 183
- Ա 4.3 Թղթի թափոններ ----- 183
- Ա 4.4 Ապակե թափոններ ----- 184
- Ա 4.5 Փաթեթավորման թափոններ ----- 185
- Ա 4.6 Թեթև փաթեթավորման թափոններ ----- 185
- Ա 4.7 Խոշոր եզրաչափերի թափոններ ----- 186
- Ա 4.8 Կենցաղային մարտկոցներ ----- 187
- Ա 5 Թափոնների կառավարման բնապահպանական ազդեցությունների վերահսկողություն ----- 189**
- ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- 189
- Ա 5.1 Ընդհանուր բնապահպանական բնութագրի բարելավում ----- 189
- Ա 5.2 Մշտադիտարկում ----- 194
- Ա 5.3 Մթնոլորտի աղտոտում ----- 195
- Ա 5.4 Աղմուկ և թրթիռներ ----- 197
- Ա 5.5 Ջրի աղտոտում ----- 197

Ա 5.6 Արտակարգ պատահարներից և վթարներից առաջացած արտանետումներ-----199

Ա 5.7 Նյութերի արդյունավետություն -----200

Ա 5.8 Էներգաարդյունավետություն -----200

Ա 5.9 Փաթեթվածքի վերօգտագործում -----200

ՀԱՎԵԼՎԱԾ Բ – ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ ----- 202

ՀՀ օրենքներ----- 202

ՀՀ ենթաօրենսդրական ակտեր ----- 202

ՀԱՎԵԼՎԱԾ Գ – ԶԱՅԱՍԱՆՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱԶԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ ----- 204

ՀԱՎԵԼՎԱԾ Դ – ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ և ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՅԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ----- 205

 Անհատական հարցազրույցներ-----205

 Հանդիպումներ թափոնների կառավարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ -----205

 Բազմաշահառու կողմերի հետ խորհրդատվություն-----207

ՀԱՎԵԼՎԱԾ Ե – ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ----- 208

 Հաղորդակցություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ Հայաստանում ԱՊԸ համակարգի ներդրման գործընթացի առնչությամբ ----- 208

 Հաղորդակցություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ Հայաստանի կրթական համակարգում թափոնների կառավարման վերաբերյալ թեմաներ ներառող դասընթացների և ծրագրերի առնչությամբ----- 211

 Հաղորդակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ անապահով ընտանիքներին օգնելու նպատակով օգտագործված իրերի հավաքագրման ծրագրերի առնչությամբ - 217

ՀՂՈՒՄՆԵՐ ----- 222

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետների թիմի կողմից՝ Շվեդիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ իրականացվող շվեդ-հայկական SDG փորձագետների փոխանակման ծրագրի շրջանակում և շվեդական գործընկերների՝ «Life Foundation»-ի և «Miljö & Avfallsbyrå AB»-ի փորձագիտական աջակցությամբ:

Հեղինակներ

Հարություն Ալպետյան, գլխավոր հետազոտող, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, Հայաստան
Լուսինե Նալբանդյան, ազգային փորձագետ, «ՕՌՎԱԿՈ» ՓԲԸ, Հայաստան
Օլիմպիա Գեղամյան, ազգային փորձագետ, Երևանի պետական համալսարան, Հայաստան
Նարինե Ավետյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գրախոսներ

Ալեն Ամիրխանյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն, Հայաստան
Էվա Սվենսոն Միրին, փորձագետ, Միլավ, Շվեդիա
Սանդրա Լինդբլոմ, փորձագետ, Միլավ, Շվեդիա
Արտակ Խաչատրյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի թափոնների հաշվառման, դասակարգման բաժին

Ծրագրի համակարգում

Թերիզ Ռոուզենբլադ, ծրագրի ղեկավար, «LIFE Foundation», Շվեդիա
Տաթևիկ Վարդանյան, դրամաշնորհների և ծրագրերի ղեկավար, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, Հայաստան

Այլ հեղինակներ և գրախոսներ

Թիմս իր երախտագիտությունն է հայտնում սույն ուսումնասիրության բոլոր մյուս հեղինակներին և գրախոսներին՝ իրենց կարևոր վերլուծություններով և մեկնաբանություններով հաշվետվության բովանդակությունը հարստացնելու համար: Շնորհակալություն Արթուր Գրիգորյանին (Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի նախկին ղեկավար), Անահիտ Ալեքսանդրյանին (ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն), Նունե Բակունցին (ՀՀ առողջապահության նախարարություն), Նելլի Բաղդասարյանին (ՀՀ վիճակագրական կոմիտե), Հռիփսիմե Սկրտչյանին («Էկո ադբ» ՀԿ) և Սոֆյա Մանուկյանին (անկախ հետազոտող):

Պետական շահակիցներ

Ծրագրի նպատակն է եղել հայ և շվեդ փորձագետների օգնությամբ ՀՀ կառավարության որոշում կայացնողներին տրամադրել անկախ փորձագիտական խորհրդատվություն՝ կապված կոշտ թափոնների կառավարման քաղաքականության, ռազմավարության և շրջանաձև տնտեսության սկզբունքների վրա հիմնված ճանապարհային քարտեզի մշակման հետ: Թիմը ցանկանում է շնորհակալություն հայտնել պետական բոլոր շահակիցներին իրենց համագործակցության և բաց լինելու համար, մասնավորապես ՀՀ վարչապետի աշխատակազմին, թափոնների կառավարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական աշխատանքային խմբին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Շրջակա միջավայրի նախարարությանը և Առողջապահության նախարարությանը:

ՔՀԿ և մասնավոր ոլորտի շահակիցներ

Շնորհակալություն ենք հայտնում նաև ուսումնասիրության մեկնարկի աշխատաժողովից ի վեր ակտիվորեն ներգրավված քաղաքացիական հասարակության և մասնավոր ոլորտի բոլոր ներկայացուցիչներին:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հաշվետվությունը ներկայացնում է շվեդական կողմի ֆինանսավորմամբ իրականացված Հայաստանի թափոնների կառավարման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները՝ նպատակ ունենալով օգնելու երկրին շարժվել դեպի այս ոլորտի առավել կատարելագործված և ավելի կայուն կառավարում, ինչպես նաև աջակցել անցմանը դեպի ավելի շրջանաձև տնտեսության: Ուսումնասիրությունը մասնավորապես գնահատել է ԵՄ հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հետ համապատասխանության մասով Հայաստանում առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը:

Ուսումնասիրությունը ներառում է ընթացիկ իրավիճակի գնահատական, առկա բացերի վերլուծություն և առաջարկություններ՝ հիմնված բազմաշահառու խորհրդատվական գործընթացի վրա: Ուսումնասիրությունն անդրադառնում է կոշտ թափոնների 8 հոսքերի, մասնավորապես կենցաղային, գյուղատնտեսական, վտանգավոր բժշկական, վտանգավոր, շինարարության և քանդման, արդյունաբերական, էլեկտրական, էլեկտրոնային և ավտոմոբիլային թափոններին:

Ընթացիկ իրավիճակի, ինչպես նաև ոլորտում առկա բացերի գնահատումն իրականացվել է՝ «Թափոնների կառավարման ազգային ռազմավարությունների ուղեցույցներ»-ից (UNEP 2013 թ.) օգտվելով:

Բացերի վերլուծությունը և ներկայացվող առաջարկություններն ունեն 4 ուղղություն՝ օրենսդրական և կանոնակարգող շրջանակ, ինստիտուցիոնալ շրջանակ, ֆինանսական մեխանիզմներ և ենթակառուցվածքներ ու տեխնոլոգիաներ:

Հաշվետվությունը նաև ծավալուն անդրադարձ է կատարում թափոնների կառավարման ոլորտում լավագույն միջազգային փորձին, որտեղ ամփոփ ներկայացվում են տարբեր ապացուցողական հենք ունեցող քաղաքականություններ և տեխնոլոգիաներ: Այս տեղեկատվությունը կարող է օգտակար լինել թե՛ քաղաքականություն մշակողների, թե՛ թափոնների կառավարում իրականացնող տեղական իշխանությունների համար, իսկ ընդհանրապես հաշվետվությունը կարող է օգտակար լինել շատերի համար՝ պետական աշխատողներից, տեղական իշխանություններից և տեխնոկրատներից մինչև հետազոտողներ և մամուլ:

Որպես հաջորդ քայլ՝ առաջարկում ենք նախաձեռնել Հայաստանում կոշտ թափոնների կառավարման քաղաքականության և ռազմավարության երկխոսության գործընթաց՝ հաշվի առնելով սույն ուսումնասիրության հիմնական արդյունքները, ինչպես նաև կոշտ թափոնների ոլորտում Հայաստանում իրականացվող այլ աշխատանքները: Քաղաքականության և ռազմավարության երկխոսության գործընթացը պետք է ընդգրկի մեծ թվով շահագրգիռ կողմերի, ներառյալ ներկայացուցիչների առանցքային նախարարություններից, համայնքապետարաններից, դոնորներից, միջազգային ֆինանսական հաստատություններից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և, ըստ անհրաժեշտության, նաև այլ ոլորտներից:


1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ աշխարհում երկրները ստիպված են ամերեսվել կոշտ թափոնների աճող ծավալների մարտահրավերին: Սրա համար անհրաժեշտ են թափոնների կառավարման արդյունավետ ազգային քաղաքականություններ, ինչպես նաև դրանք իրականացնելու կարողություններ, առանց որոնց դժվար կլինի, եթե ոչ անհնար, չեզոքացնել առաջացող բացասական հետևանքները: Առանց դրանց նաև դժվար կլինի, եթե ոչ անհնար, ստանալ այն օգուտները, որ բերում է կոշտ թափոնների պատշաճ կառավարումը:

Ինչպես ցույց է տրված պատկեր 1-ում, թափոնների պատշաճ կառավարումը տալիս է բազմաթիվ օգուտներ, այդ թվում՝ տնտեսական, հանրային առողջության, սոցիալական և բնապահպանական ձեռքբերումներ: Տնտեսությունը կարող է շահել աշխատատեղերի ստեղծման, զբոսաշրջության վրա դրական ազդեցության, տեխնոլոգիական նորարարությունների, ռեսուրսարդյունավետության, էներգիայի արտադրության, սնուցիչ կյուլթերի օգտահանման (ինչպիսիք են ֆոսֆորն ու ազոտը), հումքային կյուլթերի պահպանման, թափոնների կառավարման ծախսարդյունավետության և հողի առավել արդյունավետ օգտագործման արդյունքում:

Հանրային առողջության ասպարեզում առաջացող օգուտները ներառում են առողջապահական ռիսկերի նվազեցումը և հիվանդությունների ավելի արդյունավետ վերահսկումը, առողջապահական ռիսկերի կրճատումը հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման միջոցով: Բնապահպանական օգուտները ներառում են ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, վտանգավոր թափոններով աղտոտվածության նվազեցումը, ջրի և հողի աղտոտվածության կրճատումը, հողի առավել արդյունավետ կառավարումը և հումքային կյուլթերի պահպանությունը: Ինտեգրված թափոնների կառավարումը ենթադրում է ավելի շատ քաղաքացիական մասնակցություն և ներդրում քաղաքային զարգացման գործում, գոհունակության բարձր մակարդակ մատուցվող ծառայություններից և երկրի կամ քաղաքի ավելի մեծ հեղինակություն:

- Աշխատատեղերի ստեղծում
- Դրական ազդեցություն զբոսաշրջության վրա
- Տեխնոլոգիական նորարարություն
- Ռեսուրսարդյունավետություն
- Էներգիայի արտադրություն
- Հումքային նյութերի պահպանություն
- Հողի առավել արդյունավետ օգտագործում
- Ընդհանուր թափոնների կառավարման բարելավված ծախսարդյունավետություն



Պատկեր 1 - Թափոնների կայուն կառավարման օգուտները

Հայաստանը գտնվում է թափոնների կառավարման ոլորտում մեծ բարեփոխումների նախաշեմին: Երկրում առաջընթաց գրանցելու համար Էական նշանակություն են ունենալու համաշխարհային փորձի և նորարարությունների մասին տեղեկություններն ու դրանց ուսումնասիրությունը: Այն հատկապես կօգնի վերը նշված օգուտներից շատերը քաղելու հարցում:

Դիսկուրս ծավալելու նպատակով սույն ուսումնասիրության մեջ ներկայացնում ենք քննարկումներ և առաջարկություններ քաղաքականության առանցքային հասկացությունների, այդ թվում՝ թափոնների հիերարխիայի, շրջանաձև տնտեսության, թափոնների ինտեգրված կառավարման և այլ հարցերի վերաբերյալ: Նման առաջադեմ հասկացություններ պարունակող մոտեցումների որդեգրումը կնպաստի, որ երկիրն այս առումով ճիշտ ուղի բռնի:

Թափոնների կառավարման ոլորտի բարեփոխումները նաև Հայաստանի կառավարության բարեփոխումների օրակարգում են՝ նպատակ ունենալով ԵՄ–Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակում մոտենալու ԵՄ չափանիշներին և նպաստելու կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) առումով Հայաստանի հանձնառության կատարմանը: Այս երկու ռազմավարական հանձնառությունների դեպքում էլ բարձր գերակայություն է համարվում ռեսուրսների և թափոնների պատշաճ կառավարումը:

Սակայն նոր մոտեցումների որդեգրմանը զուգահեռ հաճախ առաջանում են նոր մարտահրավերներ, որոնց թվում են միջոլորտային քաղաքականություններ մշակելը, բազմաբնույթ պետական գերատեսչություններից միմյանց հետ շարունակական հիմունքներով համագործակցել պահանջելը: Մեկ այլ մարտահրավեր է իրատեսական և գործնական ծրագրերի և ներդրումների ապահովումը տեղական համայնքների համար, որտեղ հաճախ չկա բավարար փորձ և գիտելիք թափոնների կառավարման ժամանակակից պրակտիկայի վերաբերյալ: Սույն հաշվետվության մեջ ներկայացված բացերից և առաջարկություններից շատերը վերաբերում են համանման մարտահրավերների:

1.1 Թափոնների հիերարխիան՝ որպես ուղենշային սկզբունք


Թափոնների կառավարման տարբերակների առաջնահերթությունը թափոնների վերաբերյալ եվրոպական քաղաքականության մեջ ներառվել է 1975 թ.-ին¹. այն այժմ հայտնի է որպես ԵՄ թափոնների կառավարման շրջանակային դիրեկտիվի [xxxii] մեջ սահմանված *թափոնների հիերարխիա* եզրույթ: Գնալով՝ ավելի շատ կառավարություններ են որդեգրում թափոնների հիերարխիան որպես հիմնարար ուղենշային սկզբունք՝ թափոնների կառավարման իրենց ազգային քաղաքականությունները մշակելու կամ բարելավելու համար:

Թափոնների հիերարխիան սահմանում է թափոնների նվազեցման և կառավարման քայլերի առաջնահերթությունը և սովորաբար ներկայացվում է դիագրամի տեսքով (տե՛ս պատկեր 2): Գլխիվայր պատկերված բուրգը նշանակում է, որ քաղաքականության ամենանախընտրելի քայլը թափոնների գոյացման կանխումն է: Հաջորդ նախընտրելի քայլը թափոնների գոյացման կրճատումն ու այն նվազագույնի հասցնելն է վերօգտագործման, նորոգման և վերօգտագործման համար այլ նախապատրաստական աշխատանքների միջոցով: Նյութերի օգտահանումը հաջորդ նախընտրելի գործողությունն է, որին հետևում են օգտահանման այլ տարբերակներին միտված քայլերը, ինչպիսիք են, օրինակ, թափոններից էներգիա և սևուցիչ նյութեր ստանալը: Եթե էներգիան օգտահանվում է այնպիսի գործընթացների արդյունքում, ինչպիսիք են այրումը, պիրոլիզը կամ աղբավայրում գազի կորզումը, ապա այն նույնպես պատկանում է հիերարխիայի այս մակարդակին: Վերջին և ամենաքիչ ցանկալի տարբերակը թափոնների հեռացումն է այն պարագայում, երբ կանխումը, վերօգտագործումն ու օգտահանումն այլևս հնարավոր չեն: Հեռացումը նշանակում է կամ թափոնների պահպանում պատշաճ կառուցված և կառավարվող աղբավայրերում (ըստ անհրաժեշտության՝ պատշաճ մշակում իրականացնելուց հետո), կամ դրանց կիզումը՝ առանց էներգիայի օգտահանման:²

Թափոնների հիերարխիան սահմանում է հայեցակարգային շրջանակ, որն ամբողջովին համահունչ է շրջանաձև տնտեսության սկզբունքներին: Երկու մոտեցումներն էլ խորհուրդ են տալիս արտադրության մեջ նյութերի գործածումը և թափոնները նվազեցնելու, արտադրանքի դիմացկունությունը երկարացնելու և պիտանիության ավարտ ունեցող ապրանքների նյութական օգտահանման մակարդակը մեծացնելու նպատակով վերանայել արտադրանքի և ծառայության դիզայնը:

Թափոնների հիերարխիայի որդեգրումը և դրա ինտեգրումը տարբեր ազգային քաղաքականությունների և ռազմավարությունների մեջ պետք է առաջնահերթ ուղղություն դառնա Հայաստանի կառավարության համար, ինչը և առաջարկվում է սույն հաշվետվության հաջորդող բաժիններում և գլուխներում:

¹ 1975/442/EEC ԵՄ թափոնների կառավարման շրջանակային դիրեկտիվ
² Թափոնների հիերարխիայի մասին լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Ա 1.1 Թափոնների հիերարխիա



Պատկեր 2 - Թափոնների հիերարխիա

1.2 Ծրագրի նպատակները

Սույն ուսումնասիրության նպատակն է օգնել երկրին շարժվել դեպի ոլորտի կատարելագործված և ավելի կայուն կառավարում և աջակցել անցմանը դեպի ավելի շրջանաձև տնտեսության: Ուսումնասիրությունը մասնավորապես գնահատել է Հայաստանի օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հետ համապատասխանության մասով: Հայաստանում կոշտ թափոնների կառավարման բարելավումը պարտադիր պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների կիրառմամբ՝

1. մարդու առողջության պաշտպանություն և պահպանում,
2. շրջակա միջավայրի պաշտպանություն, բարելավում և պահպանում,
3. բնական ռեսուրսների ողջամիտ և արդյունավետ օգտագործում,
4. շրջանաձև տնտեսության սկզբունքների որդեգրում,
5. թափոնների հիերարխիայի կիրառում (դիրեկտիվ 2008/98/EC),
6. Էներգաարդյունավետության բարձրացում,
7. Ներմուծվող ռեսուրսներից Հայաստանի կախվածության նվազեցում:

Հատկանշական է, որ թափոնների հիերարխիայի առանձին բաղադրիչներ, մասնավորապես թափոնների կանխարգելումը, նվազեցումը և օգտահանումը, առկա են Հայաստանի օրենսդրության և ռազմավարությունների մեջ, սակայն դրանց պատշաճ առաջնահերթություն չի տրվել: Թափոնների կառավարման քաղաքականություններ մշակելու ընթացքում թափոնների հիերարխիան պետք է դառնա ընդհանուր հայեցակարգ և հիմնարար սկզբունք:

«Աղտոտողը վճարում է» սկզբունքի թերի իրականացումը հանգեցնում է քաղաքացիների և կազմակերպությունների շրջանում ցածր պատասխանատվության, ծախսերի կիսատ վերականգնման, այդ թվում՝ թափոնների բացասական ազդեցություններին առնչվող ծախսերի մասով: Չափազանց կարևոր է սահմանել ծախսերի ամբողջական վերականգնման մեխանիզմներ՝ համաձայն «աղտոտողը վճարում է» և «արտադրողի պատասխանատվության ընդլայնում» սկզբունքների:

Աղբավայրերում թափոններ տեղադրելուց խուսափելն ունի առաջնային նշանակություն շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև վտանգավոր թափոնները պատշաճ մշակելու և տնտեսապես արժեքավոր թափոնները վերամշակելու առումով՝ ըստ թափոնների հիերարխիայի մոտեցման: Հաշվի առնելով երկրում չվերահսկվող աղբավայրերի թիվն ու պայմանները՝ այս հարցին պետական ծրագրի մակարդակով անդրադառնալու էական անհրաժեշտություն կա:

Աղբավայրերում տեղադրվող թափոնների կրճատման արդյունքում ստացվող ամենամեծ բնապահպանական, տնտեսական և սոցիալական օգուտները առաջին հերթին հնարավոր կլինեն այն դեպքում, երբ վերամշակման ենթակա թափոնները, այդ թվում՝ կենսաքայքայման ենթակա թափոնները, պլաստիկ, մետաղե, ապակե և թղթային թափոններն առանձնացվեն աղբյուրի մոտ:

Տեսակավորված հավաքումը նաև կարևոր է վտանգավոր թափոնների տարանջատման և վնասազերծման առումով: Զաղաքային թափոններում պարունակվող վտանգավոր թափոնները (օր.՝ տնային տնտեսություններում, շինարարություններում, արդյունաբերության մեջ կամ տարբեր ծառայություններում առաջացող թափոններ) դեռևս շարունակում են տեղադրվել երկրի տարբեր աղբավայրերում: Թափոնների տեսակավորված հավաքումը նաև հնարավորություն կտա արդյունավետ կառավարելու աղբավայրերում տեղադրման ենթակա թափոնների սկզբնական (մեխանիկական և այլն) մշակումն ու վնասազերծումը:

Քաղաքային միջավայրում առաջացող թափոնների զգալի մասը կենսաքայքայման ենթակա թափոններ են: Այդպիսի թափոնների տեղադրումն աղբավայրերում հանգեցնում է չափազանց մեծ բացասական հետևանքների, ներառյալ ջերմոցային գազերի արտանետումների, ստորերկրյա և մակերևութային ջրերի, հողի և մթնոլորտի աղտոտվածության: Հաշվի առնելով այն փաստը, որ աղբավայրերը Հայաստանում գործում են առանց նեխաջրերի և գազերի համար նախատեսված վերահսկման և կառավարման համակարգերի, կենսաքայքայման ենթակա թափոններն աղբավայրերում չտեղադրելու օգուտներն ավելի տեսանելի են դառնում:

Երկրում թափոնների օգտահանման մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է գնահատել առկա կարողություններն ու կարիքները, ինչպես նաև երկրում առկա կոշտ թափոններից ստացվող նյութերի, էներգիայի և սնուցիչ նյութերի իրական ներուժը: Հայաստանում վերամշակող ընկերություններից շատերը նշում են, որ կա մուտքային նյութերի սակավություն, և առկա է տնտեսական ու ֆինանսական խթանների անհրաժեշտություն իրենց գործունեությունը բարելավելու համար: Թափոնների օգտահանման և մշակման կայանների համար անհրաժեշտ է ապահովել ֆինանսական խթաններ՝ միևնույն ժամանակ ուժեղացնելով նրանց գործունեության նկատմամբ բնապահպանական վերահսկողությունը:

Անհրաժեշտ է տեղական մակարդակում հզորացնել կոշտ թափոնների կայուն կառավարման կարողությունները, ներառյալ թափոնների կառավարումը և աղբավայրերի գործունեության ու կառավարման պլանավորումը: Կարևոր է, որ տեղական իշխանությունները և համայնքները ներգրավվեն պլանավորման գործընթացում:

Տվյալների հասանելիությունն ու վստահելիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել հաշվետվությունների ներկայացման միասնական համակարգ, որը կընդգրկի թափոնների կառավարման բոլոր փուլերը՝ կանխարգելում, կրճատում, արտադրություն, տարանջատում, հավաքում, վերամշակում, տեղադրում աղբավայրում կամ հեռացում: Սահմանված նպատակներին հասնելու և դեպի շրջանաձև տնտեսության անցումն արագացնելու համար պետք է զարգացվեն երկրի տարբեր տնտեսական ոլորտների միջև տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև համակողմանի համակարգումը:

Տվյալների բարձր որակը, արժանահավատությունն ու համապատասխանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել վիճակագրության միասնական համակարգը և ազգային վիճակագրական մեթոդաբանությունները, ինչպես նաև ներդնել տվյալների գնահատման համակարգ: Թափոնների կառավարման վերաբերյալ վստահելի տվյալների հավաքումն էական նշանակություն ունի քաղաքականությունների մշակման և իրականացման, ինչպես նաև ենթակառուցվածքների պատշաճ պլանավորման առումով:

Հայաստանում կա կոշտ թափոնների ծավալների և բաղադրության պարբերական ուսումնասիրման համակարգի, այդ թվում՝ կանոնակարգող հենքի, ֆինանսական մեխանիզմների և մեթոդաբանության ազգային ստանդարտի ներդրման անհրաժեշտություն, որը կապահովի տվյալների արժանահավատությունն ու համապատասխանությունը ԵՄ ստանդարտներին:

Վերը նշված կետերը հաշվի առնելով՝ քաղաքականության և ռազմավարության երկխոսության հետագա գործընթացի համար առաջարկում ենք մի քանի առաջնահերթ ուղղություններ՝

- թափոնների հիերարխիայի որոշեցում,
- ԱՊԸ-ի և «աղտոտողը վճարում է» սկզբունքի խթանում՝ որպես լիարժեք ծախսածածկման գործիքներ,
- աղբավայրերի ազգային ծրագրի մշակում,

- տեղական թափոնների կառավարման պլանների մշակում,
- տնտեսական գործիքների մշակում,
- տեսակավորված թափոնների հավաքման խթանում,
- վտանգավոր թափոնների գործածման/հեռացման ենթակառուցվածքների բարելավում,
- օրենսդրական շրջանակի կատարելագործում,
- ինստիտուցիոնալ շրջանակի բարելավում,
- կենսաբանական թափոնների և սնուցիչ նյութերի ներուժի օգտագործում,
- ներգրավում կոշտ թափոնների քաղաքականությանը վերաբերող երկխոսության գործընթացում:

2 ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.1 Երկրի բնութագիր
- 2.2 Տեղեկատվություն և տվյալներ
- 2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգեր
- 2.4 Օրենսդրություն և իրավակարգավորումներ
- 2.5 Ինստիտուցիոնալ հենք
- 2.6 Ֆինանսական մեխանիզմներ
- 2.7 Ենթակառուցվածք
- 2.8 Հայաստանում թափոնների կառավարման պրակտիկաներ
- 2.9 Իրազեկության առկա մակարդակ

Սույն վերլուծության համար որպես մեթոդաբանություն օգտագործվել է *Guidelines for National Waste Management Strategies (UNEP, 2013)* ուղեցույցի 4.1 գլխում առկա հարցաշարը: Առկա իրավիճակը վերլուծվել է կոշտ թափոնների 8 հոսքերի համար՝ կենցաղային, գյուղատնտեսական, վտանգավոր բժշկական, վտանգավոր, շինարարության և քանդման, արդյունաբերական, էլեկտրական և էլեկտրոնային, ավտոմոբիլային: Ծրագրի շրջանակներում չի ուսումնասիրվել Հայաստանում ռադիոակտիվ և հանքարդյունաբերության թափոնների կառավարումը: Վերլուծությունն ամփոփվել է 13 ենթազուխներում, որոնցից յուրաքանչյուրը, ընդհանուր անդրադարձից բացի, հատուկ դեպքերում անդրադառնում է նաև թափոնների առանձին հոսքերին:

2.1 Երկրի բնութագիր

ԲԱԾՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.1.1 Աշխարհագրական բնութագիր
- 2.1.2 Տնտեսական բնութագիր
- 2.1.3 Մշակութային բնութագիր
- 2.1.4 Առողջապահական բնութագիր
- 2.1.5 Բնապահպանական բնութագիր
- 2.1.6 Թափոնների կառավարման բնութագիր
- 2.1.7 Առանցքային ազգային գերակայություններ

Սույն բաժնում քննարկվում են Հայաստանը բնութագրող այն հիմնական գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն ազգային մակարդակով թափոնների կայուն կառավարման ռազմավարություն մշակելիս:

2.1.1 Աշխարհագրական բնութագիր

Հայաստանի Հանրապետության տարածքը 29,743 քառ. կմ է, միջին բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ (Երկրի տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1,000-2,500 մ բարձրության վրա): Երկրի տարածքի 71.6%-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Հայաստանը սակավանտառ երկիր է, նրա տարածքի միայն 10.4%-ն է անտառածածկ: Երկրում միջին ջերմաստիճանը հունվարին -2.3°C է, հունիսին՝ +16.3°C: Տեղումների քանակը՝ 652.6 մմ:

2018 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թիվը ընթացիկ հաշվառմամբ (2011 թ.-ի մարդահամար) կազմել է 2,972,732 մարդ: Էթնիկ կազմը՝ հայեր (98,1%), եզդիներ, ռուսներ, ասորիներ, ուկրաինացիներ, քրդեր, հույներ, հրեաներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ (ըստ ՀՀ 2011 թ.-ի մարդահամարի արդյունքների): Կրոնը՝ քրիստոնեություն (Հայ առաքելական եկեղեցի), որը

դավանում է բնակչության մեծամասնությունը: Հայաստանը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում և ենթակա է տարբեր վտանգների ազդեցության: Աշխարհում հայտնի բնական վտանգներից երկրին հատուկ են շուրջ 110 տեսակի վտանգներ: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանը բարդ ռելիեֆ ունեցող երկիր է՝ կտրուկ լեռնաշղթաներով, դաշտավայրերով և խիստ մասնատված բարձրության մեծ տատանումներով տարածքով: Երկրի տարածքի 76.5% գտնվում է ծովի մակերևույթից 1,000-2,500 մ բարձրության վրա: Ամենացածր վայրը ծովի մակերևույթից մոտ 350 մ է, իսկ ամենաբարձր վայրը՝ 4,096 մ: Փաստորեն երկրի փոքրիկ տարածքում բարձրությունների տարբերությունը շուրջ 3,500 մ է, որով էլ պայմանավորված է բնական վտանգների բարձր մակարդակը:

Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Երկրի տարածքի մեկ երրորդը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են, որտեղ բնակվում է երկրի ազգաբնակչության 15%-ը:

Բնածին վտանգների տեսանկյունից երկրի տարածքի 100%-ը ենթակա է ուժեղ երկրաշարժերի, 3%-ը՝ սողանքների (ավելի քան 3,000 սողանքային հատված, որոնցից 300-ը՝ 6 բնակավայրերում), 30%-ը՝ սելավների և ջրհեղեղների, 0.5%-ը՝ փլուզումների ու քարաթափումների, 12%-ը՝ ցրտահարությունների, 15%-ը՝ երաշտի, 17%-ը՝ կարկտահարման ազդեցությունների և այլն: (աղյուսակ 1)

Բնածին վտանգ	Ռիսկի գոտի (%՝ իբրև երկրի ողջ տարածքի մաս)
Ուժեղ երկրաշարժեր	100%
Սելավներ և ջրհեղեղներ	30%
Կարկուտներ	17%
Երաշտ	15%
Ցրտահարություններ	12%
Սողանք (ավելի քան 3,000 սողանքի գոտիներ, որոնցից 300-ը՝ վեց համայնքներում)	3%
Փլուզումներ ու քարաթափումներ	0.5%

Աղյուսակ 1 - Բնածին վտանգների ռիսկեր ունեցող տարածքներ

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության աշխարհագրական բնութագիրը: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/file/doc/99472363.pdf>

Երկրում ուրբանիզացման մակարդակը բարձր է: Հայաստանի բնակչության 64%-ը բնակվում է քաղաքային, իսկ 36%-ը՝ գյուղական բնակավայրերում: Լեռնային ռելիեֆը և բազմազան կլիմայական պայմանները բացասաբար են ազդում աղբահանության աշխատանքների վրա: Դրանք հանրապետության որոշ բնակավայրերի տրանսպորտային հասանելիության հետ կապված դժվարություններ են ստեղծում, ինչն էլ ավելի սուր է արտահայտվում ճմռան ամիսներին: Տարածված են նաև սելավները, որոնք շրջակա միջավայրում կոշտ թափոնների տարածման պատճառ կարող են դառնալ: Ելնելով որոշ համայնքների հեռավորությունից կամ սակավ բնակեցվածությունից՝ հեռավոր և նոսր բնակեցված համայնքների կոշտ թափոնների կառավարումը բավական ծախսատար է և չի իրագործվում (S02): Մյուս կողմից այս խոչընդոտը կարող է մղել համայնքներին տեղական մակարդակում կառավարելու և վերամշակելու (կոմպոստացում, կենսազազի արտադրություն) օրգանական թափոնները:

2.1.2 Տնտեսական բնութագիր

Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) մաքսային միության անդամ է 2015 թ. -ի հունվարից, իսկ արդեն 2017 թ. -ի նոյեմբերին երկիրը Եվրոպական միության հետ ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): Երկրի տնտեսության գերիշխող ճյուղերն են հանքարդյունաբերությունը (ՀՆԱ-ի 3.1%), շինարարությունը, արդյունաբերությունը, ծառայությունները (այդ թվում՝ մանրածախ առևտուր, տեղեկատվություն և հաղորդակցություն, ֆինանսներ, զբոսաշրջություն) և գյուղատնտեսությունը: Հայաստանի հիմնական տնտեսական գործընկերներն են ԵՄ-ն, Ռուսաստանը և նախկին խորհրդային երկրները, Չինաստանը, Իրանը, ԱՄՆ-ն, Կրաստանը և Թուրքիան: Հայաստանը զգալի օտարերկրյա օգնություն է ստանում ԵՄ-ից և ԱՄՆ-ից: Երկրի տնտեսության մեջ կարևոր դեր են խաղում նաև անհատների կողմից իրականացվող փոխանցումները: Աղյուսակ 2-ը և աղյուսակ 3-ը ներկայացնում են Հայաստանի հիմնական տնտեսական ցուցանիշները 2019 թ. -ի ապրիլի դրությամբ, իսկ աղյուսակ 4-ում պատկերված է երկրի՝ 2018 թ. -ի ՀՆԱ-ն՝ ըստ ոլորտների:

Ցուցանիշ	1990	2000	2010	2018
Բնակչություն, ընդամենը (միլիոն)	3.54	3.07	2.88	2.95
Բնակչության աճ (տարեկան %)	0	-0.6	-0.4	0.2
Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից (տարի)	68	71	73	75
Մակերես (հազար կմ²)	29.7	29.7	29.7	29.7
Բնակչության խտություն (մարդ տարածքի 1 կմ² հաշվով)	124.3	107.8	101.1	103.7
Աղքատության մակարդակ՝ ըստ միջազգային աղքատության գծի (բնակչության %)	35.8	25.7
Աղքատության մակարդակ՝ ըստ 1.90 ԱՄՆ դոլար օրական աղքատության գծի (2011 ՉՀԴ) (բնակչության %)	..	19.3	1.9	1.4
ՀԱԱ, Atlas մեթոդ (ընթացիկ ԱՄՆ դոլար) (միլիարդ)	1.06	2.03	9.99	12.48
ՀԱԱ մեկ շնչի հաշվով, Atlas մեթոդ (ընթացիկ ԱՄՆ դոլար)	310	660	3,470	4,230
ՀԱԱ, ՉՀԴ (ընթացիկ միջազգային ԱՄՆ դոլար) (միլիարդ)	8.28	7.34	19.83	30.87
ՀԱԱ մեկ շնչի հաշվով, ՉՀԴ (ընթացիկ միջազգային ԱՄՆ դոլար)	2,340	2,390	6,890	10,460

Աղյուսակ 2 - Հայաստանի Հանրապետության հիմնական ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ցուցանիշները, Համաշխարհային բանկ

Աղբյուր՝ <https://www.worldbank.org/en/country/armenia/overview#3>

Ցուցանիշ	1990	2000	2010	2018
ՀՆԱ, (ընթացիկ ԱՄՆ դոլար) (միլիարդ)	2.26	1.91	9.26	12.43
ՀՆԱ աճ (տարեկան %)	-11.7	5.9	2.2	5.2
Գնաճ, ՀՆԱ դեֆլյատոր (տարեկան %)	79.4	-1.4	7.8	2.6
Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն, ձկնային տնտեսություն (ՀՆԱ-ի %)	18	14
Արդյունաբերություն, ներառյալ շինարարություն (ՀՆԱ-ի %)	28	25
Արտադրանքի և ծառայությունների արտահանում (ՀՆԱ-ի %)	35	23	21	38
Արտադրանքի և ծառայությունների ներկրում (ՀՆԱ-ի %)	46	51	45	53
Համախառն կապիտալի ձևավորում (ՀՆԱ-ի %)	47	18	26	22
Եկամուտներ՝ առանց դրամաշնորհների (ՀՆԱ-ի %)	22.6	22.5
Չուտ պարտք՝ վերցրած (+) և տրված (-) (ՀՆԱ-ի %)	-5	-4.1

**Աղյուսակ 3 - Հայաստանի Հանրապետության ՀՆԱ, Համաշխարհային բանկ
Աղբյուր՝ <https://www.worldbank.org/en/country/armenia/overview#3>**

Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	%-ով ՀՆԱ-ի նկատմամբ
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաները)	10.6
ՖՄԱՉԾ-ն (ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները)	-1.9
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	13.7
Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	17.5
Շինարարություն	6.8
Առևտուր և ծառայություններ	53.3

**Աղյուսակ 4 - Հայաստանի ՀՆԱ-ի արտադրության հաշիվն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2018 թ.
Աղբյուր՝ https://www.armstat.am/file/article/sv_01_19a_112.pdf**

2.1.3 Մշակութային բնութագիր

Հատկապես տոն օրերին (Սուրբ Զատիկ, Վարդավառ և այլն) խիստ աճում են աղբի առաջացման ծավալները, ինչն առավելապես տեսանելի է շրջակա բնական միջավայրում:

Շատ գյուղական համայնքներում դեռևս առկա է «ջուրն ամեն ինչ կտանի» ավանդույթը, որի արդյունքում կենցաղային և գյուղատնտեսական թափոնների որոշ մասը թափվում է գետերն ու առուները (տե՛ս նկար 1, 2, 3 և 4):³ Գյուղական համայնքներում լայն տարածում ունի գոմաղբը չորացնելու և որպես վառելիք օգտագործելու ավանդական գործելակերպը: Օրգանական թափոնների այս տեսակ գործածումը թեև լուծում է որոշ էներգետիկ հարցեր, սակայն նվազեցնում է գոմաղբը որպես օրգանական պարարտանյութ օգտագործելու հնարավորությունը: Նաև մեծ տարածում ունի դաշտերում բուսական մնացորդների, խոզանի այրման ավանդույթը, որն իրականացվում է մոլախոտերի դեմ պայքարի նկատառումով: Այն, սակայն, շատ մեծ վնասակար ազդեցություն է թողնում հողի վերին բերրի շերտի վրա:

Օրգանական թափոնների, մասնավորապես գոմաղբի, բուսական ու սննդային մնացորդների և պահածոյացման, յուղերի թորման և գինու արտադրության ժամանակ առաջացող վերամշակման արգասիքների կոմպոստացման մշակույթը դեռևս նոր է և զարգացած չէ գյուղացիական տնտեսությունների շրջանում: Նշված թափոնների որոշ տեսակներ հիմնականում ենթարկվում են մասնակի վերամշակման և վերօգտագործման, որոշ բուսական մնացորդներ կեր են ծառայում կենդանիների համար, իսկ կենդանիների գոմաղբի մի մասը վեր է ածվում վառելիքի, մի մասն էլ ոչ ամբողջությամբ օգտագործվում է որպես պարարտանյութ:

Ինչպես խորհրդային պետություններից շատերում, Հայաստանում նույնպես ավելի ավագ սերունդները հիշում են առկա կյուրերի օգտահանման և արտադրանքի վերօգտագործման խորհրդային ժամանակների պրակտիկան: Խմիչքների ապակե շշերը և այլ ապակե տարաները, թերթերն ու ամսագրերը, ինչպես նաև մետաղյա առարկաները սովորաբար ընդունվում էին վերամշակման որոշակի ստանդարտ փոխհատուցման դիմաց: Նույնը վերաբերում է բազմակի օգտագործման կտորներին և գնումներ կատարելու ցանցավոր պայուսակներին, որոնք 90-ականների կեսերին արագորեն փոխարինվեցին մեկանգամյա օգտագործման ցելոֆանե տոպրակներով: Երկիրը կարող է լավ նախագծված և համակարգված հանրային իրազեկման և կարողությունների զարգացման ծրագրերի միջոցով արդյունավետ կերպով վերականգնել այս պրակտիկան:

³ Լուսանկարները՝ «Էկո աղբ» ՀԿ-ի:



Նկար 1 - Գետի և անտառի աղտոտում



Նկար 2 - Գետի և անտառի աղտոտում



Նկար 3 - Գյուղի գետի մաքրման աշխատանքների ժամանակ



Նկար 4 - Զրատար Արարատում

2.1.4 Առողջապահական բնութագիր

Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների թերի կառավարումը առողջապահական մեծ ռիսկեր է առաջացնում համայնքների համար, ինչը հիմնականում պայմանավորված է ստորև՝ Աղյուսակ 5-ում ներկայացված գործոններով:

#	Գործոն	Ռիսկ
1	Հանրապետությունում առկա է 300-ից ավել ⁴ աղբավայր և աղբանոց, որտեղ տեղադրված աղբը հիմնականում չի ծածկվում, այն մշտապես այրվում է և հասանելի է կենդանիների ու մարդկանց համար:	Օդի աղտոտում (մեթանի, դիօքսիդների և այլ թունավոր գազերի արտանետում) Կենդանիների միջոցով հիվանդությունների և վարակների տարածում
2	Ոչ մի աղբավայր կամ աղբանոց չունի կեղտաջրերի (leachate) հավաքման համակարգ:	Ստորգետնյա ջրերի աղտոտում Հողերի աղտոտում Հիվանդությունների և վարակների տարածում
3	Հանրապետությունում առկա բոլոր աղբավայրերում և աղբանոցներում չվերահսկվող եղանակներով տեղադրվում է վտանգավոր թափոններ պարունակող չտեսակավորված աղբ (կենցաղային կամ արտադրական):	Ստորգետնյա ջրերի աղտոտում Հողերի աղտոտում
4	Համայնքներում աղբահանության համար նախատեսված աղբամանները հիմնականում բաց են, չունեն կափարիչ:	Կենդանիների ու միջատների միջոցով հիվանդությունների և վարակների տարածում Օդի աղտոտում
5	Կենցաղային թափոնների աղբամաններից կամ աղբանոցներից կորզված օգտակար առարկաների ուղղակի վերօգտագործում՝ առանց համապատասխան ախտահանման (չվնասված պլաստիկ ու ապակե շշեր, արկղեր, գրքեր և այլն)	Առարկաների միջոցով հիվանդությունների և վարակների տարածում
6	Գյուղատնտեսական թափոնների (այդ թվում նաև դաշտերում օգտագործված և դեն նետված պարարտանյութերի պլաստիկ կոնտեյներների) այրում	Օդի աղտոտում (մեթանի, դիօքսիդների և այլ թունավոր գազերի արտանետում)

Աղյուսակ 5 - Առողջապահական ռիսկերի հանգեցնող գործոններ
Աղբյուր՝ Սույն գեկույցի հեղինակների՝ տարբեր աղբյուրներից հավաքած տվյալներ:

Նշված գործոնները վտանգում են առաջին հերթին հարակից համայնքների, բայց և ողջ հանրապետության բնակչության կյանքն ու առողջությունը: Գյուղատնտեսական թափոնների անկայուն կառավարումը ևս առաջ է բերում մի շարք բնապահպանական և առողջապահական խնդիրներ, մասնավորապես.

- անձրևաջրերով և ձնհալի ջրերով լվացված և հեռացված ագրոքիմիկատները մուտք են գործում ջրային ավազաններ և աղտոտում դրանք՝ հարուցելով առողջական խնդիրներ.
- սխալ վերափաթեթավորմամբ (հյուլերի և ջրի շշերում վերափաթեթավորված) վաճառվող թունաքիմիկատները սխալմամբ խմում են երեխաները, ինչն անդառնալի մահացու էլք է ունենում:

⁴ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 2019 թ.-ի հոկտեմբերի տվյալներ:

2.1.5 Բնապահպանական բնութագիր

Կոշտ թափոնների կառավարումն առավել կայուն դարձնելու նպատակով պետք է հաշվի առնվեն մի շարք բնապահպանական գործոններ, ինչպիսիք են աղբավայրերի, պեստիցիդների պահման վայրերի և թափոնների վերամշակման օբյեկտների տեղադրումը այնպիսի զգայուն միջավայրերի մոտակայքում, ինչպիսիք են ջրային ավազանները կամ բնության հատուկ պահպանվող տարածքները:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից յուրաքանչյուրն առանձին իր կանոնադրության շրջանակներում անդրադառնում է թափոնների հիմնահարցին: Մասնավորապես Սևան ազգային պարկի կանոնադրությունը նախատեսում է ռելիեֆային գոտու տարածքում կենցաղային, արդյունաբերական և քիմիական թափոններով տարածքի աղտոտման բացառում, իսկ տնտեսական գոտու տարածքում արգելված է վտանգավոր և կենցաղային կոշտ թափոնների մշակումը, վերամշակումը, օգտահանումը, վնասագերծումը և թաղումը (921-Ն):

Հայաստանում հատուկ պահպանվող տարածքները կազմում են երկրի տարածքի 13%-ը:⁵ Զաղաքաշինության նախարարի № 321-Ա հրամանի համաձայն՝ երկրում աղբավայրեր կարող են տեղակայվել միայն արգելոցների, հանգստյան տների և նման օբյեկտների սանիտարական պահպանության գոտիներից դուրս: Ըստ աղբավայրերի նախագծման և շահագործման կարգավորման՝ աղբավայրեր կարող են տեղակայվել ջրաղբյուրների, մակերևութային ջրերի, բնության արգելոցների, առողջարանների և այլ նման օբյեկտների սանիտարական պահպանման գոտիներից դուրս տարածքներում, ստորերկրյա ջրերի աղտոտումը բացառող բնական պաշտպանվածությամբ տարածքներում, ձորակներում (321-Ա): Սանիտարական գոտու սահմանը նախատեսված է ջրառից առնվազն 30 մետրից ոչ պակաս հեռավորության վրա, ինչը կարող է տարբեր լինել, օրինակ, պաշտպանված (30մ) և չպաշտպանված (50մ) ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքերում:

Ջրատարների սանիտարապահպանական շերտագծի սահմաններում պետք է բացակայեն գրունտային ջրերի և հողի աղտոտման աղբյուրները: Արգելվում է ջրատարների անցկացումը աղբավայրերի տարածքներով (առողջապահության նախարարի N803 հրաման):

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված ջրային համակարգերում, այդ թվում՝ ոռոգման ջրանցքներում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտիներում աղբամուղներից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից դուրս աղբ թափելու համար:

Գյուղատնտեսական թափոններ

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումը Եապես փոխում է նյութերի կենսաբանական շրջապտույտը, որն իր հերթին փոխում է մակերեսային և խորքային ջրերի վիճակը՝ առաջ բերելով տոքսիկ նյութերով ջրային ավազանի աղտոտում և Էվտրոֆիկացում: Մակերեսային հոսքերով գյուղատնտեսական օրգանական թափոններից, մասնավորապես գոմաղբից, գոմաղբահեղուկից սննդատարրերի (N, P, K, S, Ca, Mg և այլն) լվացումն ու հեռացումը առաջ է բերում կենսածին նյութերով հողերի աղքատացում և արգելակում ազոտէկոհամակարգերի նորմալ գործելակերպը: Այս երևույթը նկատվում է ինչպես Սևանա լճի, այնպես էլ մի շարք այլ ջրամբարների ափամերձ տարածքներում, ինչն առաջ է բերում Էկոլոգիական լուրջ լարվածություն: Մերձափնյա ռեստորանների ու հյուրանոցների կոյուղաջրերը նույնպես թափվում են գետեր և Սևանա լիճ՝ առաջացնելով համանման վտանգներ:

⁵ Հայաստանի բնական հուշարձանների և հատուկ պահպանվող տարածքների օկայն ատլասը հասանելի է ՀԱՀ Ցակրբեան բնապահպանական կենտրոնի կայքէջում՝ <https://ace.aua.am/hy/gis-and-remote-sensing/maps/natural-monuments/>

Ձորերին կից կառուցված անասնագոմերից գոմաղբն ու գոմաղբահեղուկն անմիջապես թափվում են ձոր, գետ, որի վառ օրինակն առկա է Օշական գյուղում: Տե՛ս Նկար 5 - Օշականում գտնվող անասնագոմից թափոններն ուղիղ լցվում են ձորը:



Նկար 5 - Օշականում գտնվող անասնագոմից թափոններն ուղիղ լցվում են ձորը:

Գյուղատնտեսական գործունեության ընթացքում գոյանում են նաև այլ ոչ օրգանական թափոններ՝ մասնավորապես թունաքիմիկատների օգտագործված պլաստիկ տարրեր, պարարտանյութերի պարկեր, որոնք հայտնվում են դաշտերում և դառնում աղտոտման պատճառ:


2.1.6 Թափոնների կառավարման բնութագիր

Հայաստանում, ինչպես ամենուր, բազմաթիվ են մարդու գործունեության հետևանքով առաջացած աղբի խնդիրները՝ սկսած աղբի քանակից ու դրա կրճատումից մինչև աղբի հավաքումը, վնասագերծումը և օգտահանումը: Երկրում կոշտ թափոնների առաջացման ծավալները հիմնականում պայմանավորված են բնակչության թվով, տնտեսական մակարդակով, կլիմայով և բնակչության ապրելակերպով:

Ընդհանուր առմամբ Հայաստանի հասարակության մեջ դեռևս ցածր է իրագրեցվածությունը թափոնների կրճատման, տեսակավորման, վերամշակման մշակույթի և պրակտիկաների կարևորության առումով: Բացի այդ, ցածր է կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծառայությունների մակարդակը, ինչն առաջացնում է սոցիալական, բնապահպանական և ընդհանուր սանիտարական խնդիրներ: Առկա ազգային ռազմավարությունն իր գործողությունների ծրագրով իրականացվում է թերի և դանդաղ, հիմնականում ֆինանսական ու վարչական ռեսուրսների սակավության պատճառով: Մինչ այժմ կատարված աշխատանքները մակերեսային են և չեն ներառում հասարակության բոլոր շերտերին, ինչպես նաև երբևէ չեն իրականացվել հանրապետության ողջ տարածքով:

6 Լուսանկարը՝ Լուսինե Նալբանդյանի:

Ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների՝ մոնիցինգայալ թափոնների տարեկան առաջացումը մեկ բնակչի հաշվով իր բարձրագույն արժեքն է ունեցել 2013 և 2014 թվականներին՝ հասնելով 271 կգ-ի, որը 57% տոկոսով ցածր է նույն տարիների ԵՄ անդամ 28 պետությունների միջին ցուցանիշներից՝ 478կգ/մարդ⁷ (տե՛ս Պատկեր 3). 2018 թ. -ին աղբավայրեր է տեղափոխվել 493.9 հազար տոննա կոշտ կենցաղային թափոն:⁸




Պատկեր 3 - Կենցաղային թափոնների գոյացումը մեկ շնչի հաշվով՝ ըստ տարիների (կգ/մարդ տարեկան)
Աղբյուր՝ ԱՐՄՍՏԱՏՐԱՆԿ.ԱՄ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armstatbank.am/>

Պատկեր 4-ը ցույց է տալիս Հայաստանում առկա վտանգավոր թափոնները՝ ըստ դրանց առաջացման, գործածման, մշակման, հեռացման, հեռացման այլ վայրերում տեղադրման, այլ կազմակերպություններ փոխադրման և օգտագործման տվյալների: Պատկերը ցույց է տալիս, որ թեև թափոնների տեղադրումը աղբավայրերում բավականին կայուն է, տարիների ընթացքում այլ կազմակերպություններ փոխադրված թափոնների ծավալները զգալիորեն տարբերվում են: Դեռևս հայտնի չէ, թե ինչ է տեղի ունենում այլ կազմակերպություններ փոխադրված թափոնների հետ: Թափոնների **օգտագործված** խումբը (նշվում է պատկեր 2-ում և 3-ում) ներառում է թափոնը գոյացնող կազմակերպությունում ներքին վերօգտագործված վտանգավոր թափոնների ծավալները:


⁷ Աղբյուր՝ <https://ec.europa.eu/eurostat/web/products-eurostat-news/-/DDN-20190123-1>

⁸ Աղբյուր՝ Թափոնների կառավարումը 2018 թվականին, ՀՀ վիճակագրական կոմիտե: Հասանելի է https://www.armstat.am/file/article/sv_06_19a_5220.pdf




Պատկեր 4 - Վտանգավոր թափոնների հոսքը (առանց կենցաղայինի)
Աղբյուր՝ ԱՐՄՏՍԱԲԱՆԿ.ԱՄ, 2018 Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armstatbank.am/>


2016



2017



2018



Պատկեր 5 - Թափոնների հոսքը 2016-2018 թվականներին
Աղբյուր՝ ԱՐՄՍՏԱՏՔԱՆԿ.ԱՄ, 2018 Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armstatbank.am/>

2.1.7 Առանցքային ազգային գերակայություններ

Կոշտ թափոնների կառավարման ռազմավարության հիմնական ուղղությունները Էապես կախված են երկրի կարիքներից և որդեգրած քաղաքականության հիմնական առաջնահերթություններից: Թափոնների կառավարումը անբաժան մասն է բազմաթիվ ազգային գերակայությունների և ռազմավարությունների, որոնք վերաբերում են ոչ միայն շրջակա միջավայրին, այլ նաև այնպիսի ոլորտների, ինչպիսիք են զբոսաշրջությունը և էներգետիկան, գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը:

2019 թ. -ի հուլիսին ՀՀ կառավարության կողմից ներկայացված Հայաստանի ռազմավարական զարգացման շրջանակը՝ «Հայաստանի փոխակերպման ռազմավարություն 2050»-ը, սահմանում է մեզանպատակներ,⁹ որոնցից մի քանիսն ուղիղ առնչություն ունեն թափոնների կառավարման հետ: Ընտրված մեզանպատակներն են՝

1. ԱՐԴՅՈՒՄԱՎԵՏ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԶՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
2. ՎԵՐԱԿԱՆՔՆԵՐՈՒ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԷՆԵՐԳԻԱ
3. ԲԻՉՆԵՍԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻՉ ՀԱՅԱՍՏԱՆ
4. ՄԱՔՈՒՐ ԵՎ ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ

2015 թ. -ին Հայաստանը նախաձեռնեց կայուն զարգացման նպատակների (ԿՉՆ-ներ) ազգայնացման և իրականացման մասնակցային գործընթաց,¹⁰ որոնցից մի քանիսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներառում են թափոնների կառավարման առնչվող հարցեր: Ընտրված ԿՉՆ-ները հետևյալն են՝

- ԿՉՆ 7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն.
- ԿՉՆ 12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ.
- ԿՉՆ 13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:

Թափոնների կառավարման առնչվող հարցերը նաև արտացոլված են առանցքային ազգային ռազմավարություններում և միջազգային համաձայնագրերում, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ կառավարության 2019 թ. -ի ծրագիրը, ՀՀ 2016-2025 թթ. -ի տարածքային զարգացման ռազմավարությունը [ii], ՀՀ 2017-2036 թթ. -ի կոշտ թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը [iii], մաքուր արտադրության հայեցակարգը [vi], ՀՀ և ԵՄ միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) [ix], որոնք քննարկվում են ազգային ծրագրերին, ռազմավարություններին և հայեցակարգերին վերաբերող գլուխ 2.3-ում:

Ստորև ներկայացվում է տարբեր ծրագրերում և ռազմավարական փաստաթղթերում արտացոլված այն հիմնական ազգային գերակայությունների ընդհանուր նկարագրությունը, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ կոշտ թափոնների կառավարման ռազմավարության և քաղաքականությունների մշակման ընթացքում:

1. Մարդու առողջության վրա կոշտ թափոնների՝ բացասական և վտանգավոր ազդեցության կրճատումը և վերացումը թիրախավորող քաղաքականություն, որի համար մի շարք միջոցառումներ են նախատեսված այնպիսի տարբեր փաստաթղթերում, ինչպիսիք են 2019 թ. -ի

⁹ Այս խնդրի շուրջ մանրամասներ հասանելի են հետևյալ կայքէջում՝ <https://www.gov.am/en/news/item/9554/>

¹⁰ ԿՉՆ-երի իրագործման վերաբերյալ մանրամասները հասանելի են հետևյալ (անգլերեն) զեկույցում “SDG Implementation Voluntary National Review (VNR) Armenia”, https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia_VNR_2018.pdf

ՀՀ կառավարության ծրագիրը [i] և Հայաստանի Հանրապետության՝ 2016-2025 թթ. -ի տարածքային զարգացման ռազմավարությունը [ii]:

2. Կանաչ տնտեսությունը և կայուն զարգացման նպատակները խթանող քաղաքականության մշակում և իրականացում:
3. Ջրային ռեսուրսների տնտեսման ժամանակակից մեթոդների կիրառում, ինչպես նաև ջրային ռեսուրսների գերօգտագործումը կանխելու միջոցով դրանց կառավարման արդյունավետության բարձրացումը թիրախավորող քաղաքականության իրականացում:
4. Կենսաբազմազանության պաշտպանության և կենսաբանական անվտանգության ապահովման քաղաքականության իրականացում [i]:
5. Չբուսաշրջության, ինչպես նաև զբոսաշրջությանն առնչվող հարցերի ներուժ ունեցող այլ ենթալորտների զարգացման քաղաքականություն [i]:
6. Քաղաքականություն՝ միտված բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը, ինչի վրա կարող է մեծապես ազդել կոշտ թափոնների կառավարումը, ինչպես նաև թափոնների հեռացման, հավաքման, փոխադրման, տեղադրման, վերամշակման և վնասագերծման տեխնոլոգիաների արդիականացումը. այս ամենի արդյունքում կարող են ստեղծվել բազմաթիվ աշխատատեղեր: Սա նաև կարևոր է երկրում աղքատության կրճատման առումով:
7. Էներգետիկ անվտանգության ապահովման և այլընտրանքային Էներգիայի ռեսուրսների խթանման, այդ թվում՝ կենսազանգվածի օգտագործման համակարգի զարգացումը, ինչը որոշիչ նշանակություն ունի երկրի Էներգետիկ անկախությունն ապահովելու հարցում:
8. Հողօգտագործման արդյունավետության բարձրացում և օրգանական գյուղատնտեսության զարգացում: Այս երկու ոլորտների կայուն զարգացումը ապահովում է գյուղատնտեսության ոլորտում արտադրված օրգանական թափոնների պատշաճ կառավարումը և վերադարձը գյուղատնտեսական Էկոհամակարգերին (կոմպոստացման միջոցով):

2019 թ. -ի Կառավարության ծրագրի գործողությունների պլանն ուրվագծում է թափոնների կառավարման հարցում երկրի որդեգրած գլխավոր ուղղությունը՝ ընդգծելով դրա կարևորությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, առողջապահությունը և շինարարությունը: Թափոնների կառավարման հարցում միջոլորտային մոտեցում ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ թափոնների կառավարմանն առնչվող հարցեր ներառեն ոչ միայն ուղղակիորեն այդ ոլորտին առնչվող ռազմավարությունները և քաղաքականությունները, այլ նաև այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Էներգետիկ անվտանգության և զբոսաշրջության զարգացման ռազմավարությունները: Էներգետիկ ոլորտը կարող է շահել թափոնից Էներգիա ստացող այնպիսի լուծումներով, ինչպիսիք են կենսազազը, բիոկառելիքը, թափոններից ստացված վառելիքի արտադրությունը, աղբակիզումը և պիրոլիզը:

2.2 Տեղեկատվություն և տվյալներ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.2.1 ՀՀ վիճակագրական կոմիտե
- 2.2.2 Ռազմավարություններում և հետազոտություններում առկա տվյալներ
- 2.2.3 Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություններ

Կոշտ թափոնների կայուն կառավարումը Էապես կախված է տեղեկատվության և տվյալների հասանելիությունից և դրանց ճշգրիտ լինելուց: Ուսումնասիրությունների հիման վրա ստացված վիճակագրական տվյալները անկյունաքարային նշանակություն ունեն ռազմավարության բովանդակությունը կազմելու և հետագա քայլերը որոշելու համար, մինչդեռ անճշտությունները, թերի տվյալներն ու տեղեկատվությունը Էապես դժվարացնում են թափոնների կայուն կառավարման մշակումը:

Երկրում կոշտ թափոնների առաջացման ու դրանց հետագա գործածման վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվում և զեկուցվում է անկանոն, ինչի հիմնական պատճառը ֆինանսավորման և տեխնոլոգիական հագեցվածության պակասն է: Մեկ այլ խնդիր է ուսումնասիրություններում և մշտադիտարկումներում կիրառվող մեթոդների թափանցիկությունն ու հետևողականությունը:

2.2.1 ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՀ վիճակագրական կոմիտեի առաքելությունն է մշակել, արտադրել և տարածել պաշտոնական վիճակագրություն հանրային օգտագործման համար: ՀՀ ՎԿ հիմնական գործառնություններն են.

- վիճակագրական ծրագրերին համապատասխան իրականացնում է պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունը և տարածումը.
- պետական խորհրդի կողմից սահմանված մեթոդների, ընտրանքի և անցկացման կարգին համապատասխան իրականացնում է ընտրանքային հետազոտություններ.
- օրենքով սահմանված կարգով իրականացնում է համատարած հաշվառումները.
- պետական խորհրդի կողմից սահմանված վիճակագրական փաստաթղթերի միջոցով հավաքում է վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ վարչական ռեգիստրներից).
- վարում է վիճակագրական, այդ թվում՝ բիզնես ռեգիստրներ.
- վարում է վիճակագրական տվյալների շտեմարաններ.
- հավաքում է անհրաժեշտ վիճակագրական տվյալներ քաղաքացիներից նրանց կենսապայմանների, սոցիալ-ժողովրդագրական վիճակի, տնային տնտեսությունների և այլնի վերաբերյալ.
- օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին իրականացնում է Վիճակագրական տեղեկատվության հավաքման ծրագիրը.
- կնքում է համագործակցության պայմանագրեր, փոխըմբռնման հուշագրեր, ընդունում է համատեղ հրամաններ այլ պետությունների պաշտոնական վիճակագրություն իրականացնող մարմինների, միջազգային կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով.
- պետական խորհրդի կողմից սահմանված կարգով պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համար սահմանում է համակարգված տարածման քաղաքականությունը՝ թափանցիկ ընթացակարգերով ազգային վիճակագրական համակարգում կիրառման համար, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության տարածման համար մեկ ընդհանուր տերմինաբանությունը.

- համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ամբողջ գործունեությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի.
- օրենքով սահմանված կարգով քննում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

ՀՀ վիճակագրական կոմիտեն (Արմստատ) հասանելի է դարձնում հանրապետությունում հետևյալ տվյալները՝

1. թափոնների առաջացումը՝ ըստ ցուցանիշների և ըստ տարիների,
2. թափոնների առաջացումը՝ ըստ գործունեության տեսակների, վտանգավորության դասերի և տարիների,
3. դեպի աղբավայրեր փոխադրված թափոնների քանակը,
4. վտանգավոր թափոնների (առանց կենցաղային թափոնների) շարժը՝ ըստ ցուցանիշների և տարիների,
5. բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները (օր.՝ աղբավայրերի հարկ),
6. հիմնական ակտիվների (օր.՝ վերամշակման օբյեկտներ և այլն) կապիտալ վերանորոգման ծախսերը:

Թերություններ

Թափոնների վերաբերյալ Վիճակագրական կոմիտեի ներկայացրած տվյալները հաճախ վստահելի չեն դրանց ձեռքբերման աղբյուրների և մեթոդաբանության պատճառով: Օրինակ՝ աղբավայրեր փոխադրված թափոնների ծավալների մասին տվյալները համայնքապետարանները տրամադրում են Վիճակագրական կոմիտեին: Այս ծավալները հաշվարկվում են՝ ոչ թե հիմնվելով կշեռքներից ստացված տվյալների, այլ բեռնատարների ծավալների վրա: Թափոնների հավաքման մեքենաների տարբեր տեսակները (կոմպակտավորում իրականացնող և սովորական բեռնատարները), ինչպես նաև թափոնների տարբերվող խտությունը թույլ են տալիս միայն ունենալ փոխադրված թափոնների մասին մոտավոր գնահատականեր, որոնք այնուհետև վերածվում են կոնկրետ կշռի:

Բացի այդ, տվյալների ձեռքբերման և մշակման ինստիտուցիոնալ շրջանակը հաճախ բազմաթիվ անճշտություններ է թույլ տալիս: Պատկեր 5-ը ներկայացնում է կոշտ թափոններին վերաբերող տվյալների ձեռքբերման, մշակման և ներկայացման առկա ինստիտուցիոնալ շրջանակը: Թափոնների վերաբերյալ տվյալները ձեռք են բերվում տարբեր աղբյուրներից 4 տարբեր գործակալությունների կողմից, և չկա դրանց մշակման, վերլուծման, տարածման և հրապարակման որևէ հաջորդականություն: Տվյալների շուրջ հստակ պրոտոկոլների և տվյալների փոխանակման գործիքների բացակայության պատճառով հավաքված տվյալների տարածումն ու փոխանակումը գործակալությունների միջև իրականացվում է անկազմակերպ ու բարդ եղանակով, ինչը թափոնների կառավարումն ու որոշումների կայացումը բոլոր մակարդակներում դարձնում է անարդյունավետ:

Տվյալների ներկայացման ձևաչափը տարբերվում է՝ սկսած թղթային ձևերից մինչև MS Excel ֆայլեր: Առաջարկվում է թափոններին վերաբերող բոլոր տվյալները հավաքել և մշակել մեկ կենտրոնացված առցանց (համացանցային կայքով) գործիքի միջոցով, որը հնարավորություն կտա հետևելու և ստանալու թափոնների վերաբերյալ տվյալներ: Դա կապահովի, որ պետական մարմինները թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկությունները տրամադրեն հանրությանը: Այս պահանջը պետք է նաև վերաբերի թափոնների հետ գործ ունեցող մասնավոր բիզնեսներին և կապալառուներին:

Եվրոպական միության վիճակագրական գրասենյակը՝ Եվրոստատը, 2016 թ. -ին մշակել է «Կենցաղային թափոնների վերաբերյալ տվյալների հավաքման ուղեցույց», [xiii] որն ուղենշային տեղեկություններ է

տրամադրում կենցաղային թափոնների շրջանակի վերաբերյալ, դրա նպատակն է հավաքել կենցաղային թափոնների առաջացման և մշակման մասին տարեկան տվյալները:

Թափոնների ներկայացվածության առումով անհամապատասխանություններ կան նաև վտանգավորության դասակարգումների միջև: Աղյուսակ 6-ը ցույց է տալիս 2019 թ. -ին ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացրած թափոնների ծավալները երկրում թափոնների ընդհանուր գոյացման մասով՝ ըստ վտանգավորության դասակարգումների: Ինչպես երևում է, առաջինից մինչև հինգերորդ դասակարգումների սյունակներում նշված թվերի գումարը չի համապատասխանում ընդհանուրի տակ նշվածին: Փոխարենը ընդհանուրի տակ նշված թվերն ավելի մեծ են: Այս թվերի տարբերությունը համապատասխանում է Վիճակագրական կոմիտեի ներկայացրած կենցաղային թափոնների ծավալներին (աղյուսակ 7):

Վտանգավորության դաս	2013	2014	2015	2016	2017	2018
I դաս (1000 տ/տարի)	-	-	-	0.03	0.01	-
II դաս (1000 տ/տարի)	0.09	0.02	0.04	0.02	0.03	-
III դաս (1000 տ/տարի)	41.10	37.53	35.23	95.35	2.09	4.30
IV դաս (1000 տ/տարի)	19.34	21.17	27.00	20.37	41.80	36.70
V դաս, ոչ վտանգավոր (1000 տ/տարի)	49,262.55	46,453.21	47,276.24	55,045.63	59,578.53	67,105.20
Ընդամենը (1000 տ/տարի)	49,840.77	47,029.63	47,831.31	55,661.13	60,116.40	67,616.10

Աղյուսակ 6 - Թափոնների ընդհանուր գոյացումը՝ ըստ վտանգավորության դասի և տարիների (1000 տ/տարի)
Աղբյուր՝ ԱՐՄՍՏԱՏԲԱՆԿ.ԱՄ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armstatbank.am/>

Վտանգավորության դաս	2013	2014	2015	2016	2017	2018
I դաս (1000 տ/տարի)	-	-	-	-	-	-
II դաս (1000 տ/տարի)	-	-	-	-	-	-
III դաս (1000 տ/տարի)	-	-	-	-	-	-
IV դաս (1000 տ/տարի)	-	-	-	-	-	-
V դաս, ոչ վտանգավոր (1000 տ/տարի)	-	-	-	-	-	-
Քաղաքային ծառայություններ ընդամենը (1000 տ/տարի)	517.69	517.70	492.80	499.73	493.92	469.90


Աղյուսակ 7 - Կենցաղային թափոնների գոյացումը՝ ըստ վտանգավորության դասի և տարիների (1000 տ/տարի)
Աղբյուր՝ ԱՐՄՍՏԱՏԲԱՆԿ.ԱՄ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armstatbank.am/>

Ըստ վտանգավորության աստիճանի դասակարգվող թափոնների ցանկի համաձայն՝ չտեսակավորված կենցաղային և առևտրային թափոններն ունեն վտանգավորության 4-րդ դաս: Քանի որ մինչև 2019 թ. -ը երկրում կենցաղային կոշտ թափոնները հավաքվել են առանց տեսակավորման, ապա դրանք պետք է հաշվառված և նշված լինեին որպես 4-րդ դասի վտանգավորության թափոններ, մինչդեռ աղյուսակ 6-ը ցույց է տալիս, որ դրանք դասակարգված չեն, ինչը հակասում է շրջակա միջավայրի նախարարի N 342-Ն հրամանին (2006 թ. հոկտեմբերի 26):

Թափոնների մասին օրենքը (ՀՕ-159) սահմանում է թափոնների կադաստրը, ինչը ներառում է «թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրը» և «թափոնների

հեռացման վայրերի ռեեստրը», ինչը չի ներառում թափոնների հավաքման և փոխադրման կազմակերպությունները: Այսպիսով, երկրում աղբահանություն իրականացնող օպերատորները տվյալներ չեն տրամադրում հավաքված և աղբավայրերում տեղադրված թափոնների մասին: Այս տեղեկությունը հիմնվում է մոտավոր ծավալային գնահատականների վրա, որոնք ՀՀ վիճակագրական կոմիտեին են ներկայացվում համայնքների կողմից: Թափոնների այս կադաստրն ու ռեեստրը պետք է ներառեն թե՛ վտանգավոր թափոնները և թե՛ ոչ վտանգավոր թափոնները, սակայն փաստացի պարունակում են միայն վտանգավոր թափոնների մասին տեղեկություններ:

Հայաստանում թափոնների վերաբերյալ տվյալների հավաքման սխեմա



Պատկեր 6 - Հայաստանում թափոնների վերաբերյալ տվյալների հավաքման սխեմա Աղբյուր՝ Տարբեր աղբյուրներից հավաքած տվյալներ

2.2.2 Ռազմավարություններում և հետազոտություններում առկա հասանելի տվյալներ

Թափոնների կառավարմանն առնչվող հետազոտական փաստաթղթերի ու հաշվետվությունների համապարփակ ցանկը հասանելի է ՀԱՀ Ցակրբեան բնապահպանական կենտրոնի՝ թափոնների ռեսուրսների շտեմարանում:¹¹

Հասանելի տեղեկատվության շարքին են դասվում նաև առանձին պետական մարմինների, ինչպես, օրինակ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված ռազմավարություններն ու ծրագրերը: ՀՀ մարզերում և Երևանում թափոնների կառավարման պատկերն ըստ համայնքների և ըստ բնակչության, ինչպես և աղբահանության վրա ծախսված միջոցները, աղբահանության վճարի դրույքաչափերը, աղբահանության համար հավաքված գումարներն ըստ տարիների հասանելի են ՀՀ բոլոր մարզպետարանների պաշտոնական կայքերում:

Հանրապետության ողջ տարածքում առկա աղբավայրերի քարտեզագրման նախաձեռնություն է եղել մի քանի կազմակերպությունների կողմից, մասնավորապես.

1. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, Առողջապահության նախարարությունը և «Տրանսպրոյեկտ» ընկերությունը 2017 թվականին հավաքել են տվյալներ և ստեղծել աղբավայրերի առցանց քարտեզ, որը մինչև 2019 թվականի ապրիլ ամիսը հասանելի էր <http://map.transproject.am> հասցեով:
2. «Հետք» ինտերնետային թերթը 2015 թվականին իրականացրել է Տավուշի մարզում աղբահանության ուսումնասիրություն և ստեղծել 23 աղբավայրերի քարտեզ: Հետազոտությունը հասանելի է <https://hetq.am/hy/article/62141> հասցեով:
3. Ասիական զարգացման բանկը ֆինանսավորել է աղբավայրերի քարտեզագրումը Սյունիքի մարզում:
4. 2019 թ. -ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀԱՀ Ցակրբեան բնապահպանական կենտրոնի հետ համատեղ իրականացրել է Հայաստանում թափոնների գործածման քարտեզի և տվյալների բազայի մշակման պիլոտային ծրագիր: Զարտեզները և ծրագրի վերջնարդյունքները հասանելի են <https://ace.aua.am/waste/whm/> հղումով:

ՀՀ կառավարության 2006 թվականի N 500-Ն որոշման համաձայն՝ սահմանվել է թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման կարգը: Ռեեստրի վարման հիմնական նպատակը թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների մասին տեղեկատվության հավաքումը, վերլուծումը, մշակումն ու պահպանումն է:

ՀՀ բնապահպանության նախարարի 2002 թվականի N 112-Ն հրամանը «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը և «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևը հաստատելու մասին:¹²

Թերություններ

¹¹ Թափոնների ռեսուրսների շտեմարանը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://wri-ace.aua.am/research-and-policy-papers/>

¹² Հրամանի հայերեն տարբերակը հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18980>

Թեև տեղեկատվությունը խիստ կարևոր է թափոնների կայուն կառավարման քաղաքականության մշակման համար, դեռևս լուրջ անհրաժեշտություն ներկայացնող հսկայական տեղեկատվություն բացակայում է: Մասնավորապես բացակայում է հանրապետության բոլոր բնակավայրերում գոյացող և աղբանոցներում առկա աղբի քանակի և տեսակի վերաբերյալ տեղեկատվությունը:

Չի կատարվում աղբանոցների պարբերական գույքագրում և մշտադիտարկում, բացակայում են վերահսկողական մեխանիզմները, ինչի արդյունքում անհնար է կանխել տարերայնորեն ձևավորվող աղբանոցների առաջացումը: Գոյացող աղբի նորմերը, որ գործում են խորհրդային ժամանակներից մինչ օրս, և որոնց միջոցով ևս հնարավոր է գնահատել հանրապետությունում գոյացող թափոնների ծավալները, արդիական չեն և չեն տալիս ճշգրիտ պատկեր:

2010 թ. -ին Հայաստանի Հանրապետությունը ներգրավվել է Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության կողմից և Եվրոստատի, Եվրոպական հանձնաժողովի Շրջակա միջավայրի գլխավոր տնօրինության և ԵՄ համատեղ հետազոտական կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրում՝ մշակելու ԵՀԳԳ համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգ (ՀԲՏՀ): Ծրագրի նպատակն է ԵՀԳԳ երկրներում տարածել համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգի սկզբունքները և զարգացնել համապատասխան մարմինների՝ բնապահպանական տեղեկատվության կառավարման և հաշվետվությունների ներկայացման կարողությունները: Առաջարկվում է, որ ՀԲՏՀ-ն ընդլայնվի և ներառի նաև տեղեկություններ Հայաստանի կոշտ թափոնների վերաբերյալ:

2.2.3 Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություններ

Գոյացած թափոնների քանակի և բաղադրության մասին տվյալների առկայությունն Եական նշանակություն ունի երկրում թափոնների հաջողված կառավարում իրականացնելու տեսանկյունից: Տվյալների այս առկայությունը նաև ենթադրում է պարբերականություն, հետևողականություն և ճշգրտություն: Երեք տարին մեկ տարբեր սեզոնների ընթացքում միևնույն մեթոդաբանության կիրառմամբ 3-4 թեստերի կատարումը և թափոնների քանակի ու բաղադրության ուսումնասիրություն իրականացնելը համարվում է լավագույն պրակտիկա: Սա ծախսատար գործողություն է, որը պահանջում է ֆինանսական, տեխնիկական և մարդկային կարողություններ, ինչպես նաև համագործակցություն համայնքապետարանների հետ և նրանց աջակցությունը:

2000 թ. -ից Հայաստանում իրականացված ութ ծրագրերը ներառել են թափոնների քանակի և բաղադրության վերլուծություն՝ որպես ծրագրի մաս կամ դրա հիմնական նպատակ: Բոլոր այս վերլուծություններն իրականացվել են տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ, երկրի տարբեր հատվածներում և տարբեր սեզոնների ընթացքում, ուստի և արդյունքները միմյանց հետ համադրելի չեն:

Ամենավերջին վերլուծությունն իրականացվել է 2019 թ. -ի ամռանը Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից Հայաստանի կառավարության հետ համագործակցությամբ՝ «Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն»¹³ ծրագրի շրջանակում: Կոշտ կենցաղային թափոնների թեստեր են արվել 6 վայրում (Երևան, Արարատ, Կապան, Հրազդան, Վանաձոր և Գյումրի)՝ նպատակ ունենալով ձեռք բերելու ներկայացուցչական ընտրանք ողջ երկրի համար: Թեստերի իրականացման համար կիրառվել է ԵՄ-ում օգտագործվող (մասնավորապես Շվեդիայում) մեթոդաբանություն, որը հարմարեցվել է հայկական համատեքստին (տե՛ս աղյուսակ 8):

¹³ Տեսնել ավելին՝ <https://wqcs-ace.aua.am>

#	Չեկույցի վերնագիր	Չեղինակ (ներ)	Տարի	Ուսումնասիրության տարածք
1	Environmental Performance Review Armenia [xxii]	UN	2000	Յրագրան, Երևան
2	Municipal Solid Waste Management in Armenia: Current Trends and Steps Forward [xxiii]	Georgi Arzumanyan	2004	Երևան
3	Composition of Solid Waste in the Berd Municipal Dump in Tavush Marz, Armenia [xxiv]	Patricia Butler	2007	Բերդ (Տավուշ)
4	Advisory Study on the Municipal Solid Waste Management in Yerevan [xxv]	FICHTNER	2008	Երևան
5	Recycling of Household Waste in Armenia: Personnel training, data collection including waste analyses, recommendations for waste management actions [xxvi]	Bundesumweltsministerium	2010	Վանաձոր, Սևան, Էջմիածին, Թալին, գ. Մխչյան
6	Կոտայքի մարզի Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր -ԲՍՈԼ –ՈՏԱ Նախագիծ [xxvii]	COWI A/S	2010	Յրագրան, գ. Կոտչոր, գ. Ահպուրակ
7	Qualitative Analysis of Municipal Solid Waste in Armenia, Croatia, Cyprus, F.Y.R.O.M. and Ukraine – Methodology and Results [xxviii]	Enviroplan S.A	2015	Երևան
8	Waste Diversion Concept Note (Yerevan Solid Waste Assignment) [xxix]	Enviroplan S.A	2016	Երևան
9	Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն [xxx]	Բոլագեն	2019	Երևան, Յրագրան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Կապան

Աղյուսակ 8 - Հայաստանում թափոնների բաղադրությանն անդրադարձող ուսումնասիրություններ¹⁴
Աղբյուր՝ Տարբեր աղբյուրներից հավաքած տվյալներ

Երկրում հետազայում իրականացվելիք քանակի և բաղադրության վերլուծությունների հաջորդականությունն ու համադրելիությունն ապահովելու նպատակով առաջարկվում է ընդունել թափոնների քանակի և բաղադրության վերլուծության համընդհանուր տեխնիկական ուղեցույց: (Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս 4.2.1 *Քաղաքականության առաջարկություններ Ա. Մշտադիտարկում, տվյալներ և տեղեկատվություն*):

¹⁴ Ուսումնասիրություններից շատերի զեկույցները հասանելի են առցանց: Տե՛ս **Error! Reference source not found.** բաժինը կամ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի թափոնների ռեսուրսների շտեմարանը՝ <https://wri-ace.aua.am/research-and-policy-papers/>

2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգեր

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.3.1 ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիր
- 2.3.2 ՀՀ 2017-2036 թվականների կոշտ թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն
- 2.3.3 ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ.-ի կայուն զարգացման ռազմավարություն
- 2.3.4 Մաքուր արտադրության հայեցակարգ
- 2.3.5 Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն
- 2.3.6 Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

Հայաստանի ողջ տարածքում թափոնների գործածության, այդ թվում՝ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում, պետական քաղաքականության մշակումը և իրականացման համակարգումը կատարվում է ՀՀ կառավարության կողմից, իսկ տեղական մակարդակում թափոնների գործածությունը,¹⁵ աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպումը կատարվում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: ՀՀ օրենսդրությամբ բոլոր մարզերում և համայնքներում նախատեսված է իրավակարգավորումների ընդհանուր մեխանիզմ և միասնական շրջանակ:

Փաստացի յուրաքանչյուր համայնք ինքն է որոշում իր վարչական տարածքում աղբահանության կազմակերպման գործընթացները, աղբի հեռացման և տեղադրման վայրերը: Սակայն կոշտ թափոնների կառավարման տեղական պլանավորման վերաբերյալ մեղմ պահանջներն ու ստանդարտները անբավարար կարողությունների հետ միասին հանգեցնում են թափոնների կառավարման ոչ կայուն կամ ցածրորակ իրականացման կամ, ինչպես շատ համայնքների դեպքում, ընդհանրապես աղբահանության ծառայության բացակայության:

Կառավարության կողմից ընդունված ռազմավարական հայեցակարգերից ու փաստաթղթերից շատերը երբեք ամբողջությամբ չեն իրականացվել անբավարար վարչական կարողությունների, ռեսուրսների, ինչպես նաև որդեգրած մոտեցումները խթանելու, այդ հարցում հետևողական լինելու և սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ քաղաքական կամքի բացակայության պատճառով (օր.՝ ստորև քննարկվող Մաքուր արտադրության հայեցակարգը): Նույն պատճառներով թղթի վրա են մնացել միջազգային խորհրդատուների և կազմակերպությունների աջակցությամբ մշակված մի քանի ռազմավարություններ և ճանապարհային քարտեզներ: Նման օրինակներից է 2013 թ. -ի ռազմավարական հաշվետվությունը Հայաստանում կոշտ թափոնների կառավարման ճանապարհային քարտեզի և երկարաժամկետ ներդրումային ծրագրի մասին, որը մշակվել էր Ասիական զարգացման բանկի կողմից:¹⁶ Նշված հաշվետվության մեջ առաջարկվող մոտեցումներից և լուծումներից մի քանիսը ներառվել են ՏԿԵՆ կողմից մշակված ՀՀ 2017-2036 թթ.-ի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության մեջ: Վերջինս, սակայն, հիմնականում կենտրոնացել է երկրում թափոնների հավաքման, փոխադրման և հեռացման կարողությունների բարելավման վրա՝ մինչև սահմանակ սահմանելով բավականին ցածր թիրախներ թափոնների տեսակավորման և օգտահանման համար (մինչև 2036 թ. -ը բաժանորդները պետք է տեսակավորեն գոյացող թափոնների 20%-ը):

¹⁵ Այստեղ հղում է արվում «Թափոնների մասին» ՀՀ օրենքի հետևյալ սահմանմանը՝ «գործողություններ, որոնք ուղղված են թափոնների հավաքմանը, փոխադրմանը, տեղադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասագերծմանը և թաղմանը»:

¹⁶ Ձեկույցը հասանելի է ներբեռնման համար հետևյալ հղումով՝ <http://www.mtad.am/files/docs/1496.pdf>

Ընդհանուր առմամբ շատ մեծ ջանք է թափվել կոշտ կենցաղային թափոնների վրա՝ անտեսելով այլ թափոնային հոսքերը, ինչպիսիք են գյուղատնտեսական, արդյունաբերական, Շ/Զ, քիմիական, ավտոմոբիլային, էլեկտրոնային և այլ էական նշանակության թափոններ, օրինակ՝ մարտկոցները և յուղերը: Բացի այդ, չկա մշակված առանձին ռազմավարություն կամ ծրագիր, որն ազգային մակարդակում անդրադառնում է երկրի աղբանոցներին: Այս հարցը մանրամասն քննարկվում է «Աղբանոցներ և աղբավայրեր» գլխում:

ՀՀ կառավարության 2019 թ. -ի ծրագրում և Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում (ՀԸԳՀ) սահմանված նպատակներն ու գործողություններն ընդհանուր անդրադարձ են կատարում վերը նշված հարցերից մի քանիսին, սակայն անհրաժեշտ է ունենալ ավելի համապարփակ ռազմավարական մոտեցում կոշտ թափոնների բոլոր հոսքերի վերաբերյալ՝ հիմնված թափոնների հիերարխիայի և շրջանաձև տնտեսության սկզբունքների վրա, ըստ որոնց՝ աղտոտողները թե՛ ֆինանսական, թե՛ իրավական առումով պատասխանատվություն են կրում իրենց առաջացրած հետևանքների համար: Հաջորդ բաժիններում քննարկվում է նշված ծրագրերից և ռազմավարական փաստաթղթերից մի քանիսը:

2.3.1 ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիր

2019 թ. -ի փետրվարին հրապարակված ծրագիրը սահմանում է երկրի բնապահպանական կառավարման ընդհանուր ուղղությունները՝ հատկապես կենտրոնանալով քիմիական նյութերի և թափոնների (ներառյալ հանքարդյունաբերական թափոնների) բնապահպանական առումով արդյունավետ կառավարման վրա: Զաղաքացիների համար հարմար և Էկոլոգիապես անվտանգ կենսապայմաններ ապահովելու և շրջակա միջավայրի ու հանրային առողջության վրա կոշտ կենցաղային թափոնների բացասական (վտանգավոր) ազդեցությունները նվազեցնելու նպատակով ծրագիրը նախատեսում է հետևյալը՝

- միջազգային ստանդարտներին համապատասխանող թափոնների կառավարման համակարգ հիմնելու ինստիտուցիոնալ շրջանակ.
- թափոնների կառավարման ծախսերի վերականգնում՝ թափոնների հավաքման վճարի բարելավված գանձման և ոլորտում ավելի արդյունավետ պայմանագրերի կնքման և իրավական շրջանակի միջոցով.
- թափոնների հեռացման և վերամշակման ծրագրերի իրականացում միջազգային հաստատությունների հետ համագործակցությամբ:

Ծրագրի հիման վրա (N65-Ա) ՀՀ կառավարությունը մշակել է գործողությունների պլան (N650-Լ), որը հրապարակվեց 2019 թ. -ի մայիսին: Այդուհանդերձ 9-ը ցույց է տալիս կոշտ թափոնների կառավարման հիմնական ուղղությունների աջակցող գործողությունները, որոնք սահմանված են ծրագրում:

#	Գործողություն և արդյունք	Ժամկետ
95.1	«Զիմիական կյուբերի մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Հունիս 2020
95.4	Թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում (նպատակաուղղված այդ թափոնների առաջացման կանխարգելմանը կամ կրճատմանը, վերամշակմանը և օգտահանմանը)	Օգոստոս 2019
97.1	Բնապահպանության նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում	Նոյեմբեր 2020
97.3	Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մշտադիտարկման դիտացանցերի արդիականացում	Նոյեմբեր 2022
97.5	Շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում	Սեպտեմբեր 2023
99.1	Տնտեսական մեխանիզմների կիրառման միջոցով պլաստիկ թափոնների ծավալների կրճատում, մասնավորապես մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների ծավալների կտրուկ կրճատում	Հունիս 2019
102.1	Կրթության բոլոր մակարդակներում Էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացում	Դեկտեմբեր 2020
102.2	Ոչ ֆորմալ Էկոլոգիական կրթության համակարգի զարգացում հանրային իրազեկման մեխանիզմների կիրառմամբ	2022-2023
226.2	ՀՀ բնակավայրերում աղբահանության ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքման մակարդակի բարձրացում	Սեպտեմբեր 2020
226.3	Աղբահանության համակարգի ռազմավարության մշակում (Հանրապետության բոլոր բնակավայրերում գոյացող աղբի հավաքման, հեռացման և անվնաս տեղադրման կամ վերամշակման ապահովման նպատակով)	Օգոստոս 2019

Աղյուսակ 9 - Կոշտ թափոնների կառավարման հիմնական ուղղությունների՝ ծրագրով (N-65Ա) սահմանված աշակցող գործողությունների ամփոփ նկարագրություն

Թերություններ

Ծրագիրը և գործողությունների պլանը հստակ չեն ընդգծում տնտեսական խթանների կիրառման անհրաժեշտությունը, որի նպատակը կլինեք թափոնների հիերարխիայի իրականացումը, բնապահպանական առումով թափոնների արդյունավետ և ռեսուրսների կայուն կառավարումը: Ավելին, որևէ անդրադարձ չկա շրջանաձև տնտեսությանը:

2.3.2 ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն

Նպատակները և ակնկալվող վերջնարդյունքները

1. Ռազմավարության հիմնական նպատակն է [iii] Հայաստանի ողջ տարածքում ստեղծել ԵՄ չափանիշներին համապատասխան կենցաղային թափոնների կառավարման ինտեգրված համակարգ, որը բնակչությանը և ձեռնարկություններին (այսուհետ՝ օգտատերեր) կտրամադրի տեխնիկապես, ֆինանսապես և բնապահպանական առումով ծախսարդյունավետ ծառայություններ:

ԿԿԹ կառավարման ազգային համակարգը բաղկացած կլինի մարզային ԿԿԹ կառավարման ենթահամակարգերից, որոնք կհամապատասխանեն նույն չափորոշիչներին և սկզբունքներին: Համակարգի ինտեգրված բնույթը կապահովի համապատասխանությունը թափոնների կառավարման տեխնոլոգիաներին (հավաքում, փոխադրում, պահում, հեռացում և հետո նաև վերամշակում), իսկ

կառավարման համակարգը կգործի կայուն ֆինանսական, ինստիտուցիոնալ և իրավական շրջանակի հիման վրա:

2. Ռազմավարության իրականացման վերջնարդյունքները.

- 1) ՀՀ ամբողջ տարածքը կսպասարկի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի թիվ 2008/98/ԼՇ, 1994թ. դեկտեմբերի 20-ի թիվ 94/62/ԼՇ և խորհրդի 1999թ. ապրիլի 26-ի թիվ 1999/31 դիրեկտիվների պահանջներին (այսուհետ միասին՝ ԵՄ չափանիշներին) բավարարող ԿԿԹԿ համակարգ, որը կներառի աղբահանությունը և աղբավայրերի շահագործումը:
- 2) ԿԿԹԿ համակարգը բաղկացած կլինի սահմանափակ թվով տարածաշրջանային ենթահամակարգերից (ոչ ավելի քան 10 տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի շահագործում և ենթահամակարգի համայնքներում աղբահանության իրականացում) և կսպասարկի հանրապետության տարածքի 100%:
- 3) Կհավաքվի Հայաստանի Հանրապետությունում գոյացող աղբի առնվազն 95%:
- 4) Բաժանորդները կտեսակավորեն իրենց կողմից առաջացված աղբի մինչև 20%:
- 5) Նոր համակարգի ներդրմանը զուգընթաց կփակվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող աղբավայրերը (եթե նրանց արդիականացումը դիտվի ոչ նպատակահարմար):
- 6) Մասշտաբի Էֆեկտի շնորհիվ, կապահովվի աղբահանության հնարավոր նվազագույն դրույքաչափը: Ռազմավարության իրականացումը չի պահանջի ՀՀ օրենսդրությամբ սահմանված աղբահանության վճարի առավելագույն դրույքաչափի փոփոխություն:
- 7) Մասշտաբի Էֆեկտի շնորհիվ նաև կմեծանա համակարգի գրավչությունը մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար՝ աղբահավաքման արժեշղթայի յուրաքանչյուր օղակում (աղբահանությունից մինչև աղբավայրի շահագործում կամ աղբի վերամշակում):
- 8) Էապես կնվազի մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը: Աղբից մաքրված լանդշաֆտը կբարձրացնի Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը:

Թերություններ

Թեպետ այս ռազմավարությունն ուրվագծում է այնպիսի կարևոր ուղղություններ, որոնցից է, օրինակ, բոլոր համայնքներին ժամանակակից աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններով ապահովելը, շատ քիչ ուշադրություն է դարձված երկրում թափոնների տեսակավորված հավաքմանն ու վերամշակմանը: 2036 թ. -ի համար սահմանված նպատակը պահանջում է, որ թափոն արտադրողները տեսակավորեն գոյացած թափոնների մինչև 20%-ը, ինչը շատ փոքր թիվ է մոտ 20 տարի ժամանակահատվածի համար, եթե համեմատում ենք, օրինակ, ԵՄ անդամ երկրների համար ԵՄ հանձնաժողովի սահմանած միջին թիրախների հետ:¹⁷ Բացի այդ, ռազմավարությունը չի անդադառնում կենսաբանական թափոնների ինդրին:

2.3.3 ՀՀ գյուղի և գյուղատնտեսության՝ 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն

Ռազմավարությունը [Error! Reference source not found.] 2010-2020 թթ.-ի համար սահմանում է գյուղատնտեսությունն ու գյուղական զարգացումը թիրախավորող պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Փաստաթուղթը ներառում է գյուղատնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները: Ռազմավարությունը նաև սահմանում է գյուղատնտեսական ոլորտի գերակայությունները, ինչպես նաև

¹⁷ ԵՄ թիրախների հետ ծանոթանալու համար տե՛ս *Դեպի շրջանաձև տնտեսություն: Չոր թափոն ծրագիր հանուն Եվրոպայի*: Հայերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://wga-ace.aua.am/hy/deliverables/>

ցանկալի մասնագիտացումներն ու ռացիոնալ բաշխվածությունը՝ պայմանավորված շուկայական գործոններով, որոնք պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, դոնորների, ներդրողների և գործարար կազմակերպությունների համար կարող են ծառայել որպես առավել նպատակային ուղենիշներ:

Ուզմավարությունը հաշվի է առնված ՀՀ կառավարության կայուն զարգացման ծրագրում և ապահովում է երկրում գյուղատնտեսական բարեփոխումների ընդլայնման շարունակականությունը՝ միաժամանակ անդրադառնալով միգրացիայի և գյուղական աղքատության կրճատմանը:

Թերություններ

Փաստաթուղթը որևէ կերպ չի անդրադառնում գյուղատնտեսական թափոնների կառավարման խնդրին, մինչդեռ ռազմավարության 11-րդ կետի ենթանպատակների իրականացումը ենթադրում է գյուղատնտեսական թափոնների կայուն կառավարում, մասնավորապես շրջակա միջավայրի և բնական լանդշաֆտների պահպանություն, ագրոտուրիզմի և օրգանական գյուղատնտեսության զարգացում:

2.3.4 Մաքուր արտադրության հայեցակարգ

ՀՀ կառավարության՝ 2011 թ. -ի № 49 արձանագրային որոշումը հղում է կատարում Մաքուր արտադրության հայեցակարգին՝ [vi] որպես ՀՀ 2014-2025 թթ. -ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը կարգավորող իրավական շրջանակներից մեկի, որը պետք է նպաստի հետևյալի իրականացմանը.

- թափոնների անվտանգ կառավարում,
- Էկոլոգիապես մաքուր արտադրության ներդրում,
- շրջակա միջավայրի աղտոտվածության խնդրի համալիր լուծում:

Առավել մաքուր արտադրությունը ենթադրում է հումքային նյութերի և Էներգիայի առավել արդյունավետ օգտագործում, թունավոր և վտանգավոր նյութերի բացառում, ինչպես նաև թափոնների գոյացման և աղտոտվածության կանխարգելում աղբյուրի մոտ: Մաքուր արտադրության փիլիսոփայությունը շեշտը դնում է արտադրության և ծառայությունների՝ շրջակա միջավայրի վրա թողած բացասական ազդեցությունների նվազեցման վրա կյանքի ցիկի ողջ ընթացքում՝ հումքային նյութերի ձեռքբերումից մինչև գործածություն և վերջնական հեռացում:

Հայեցակարգը նախատեսում է հետևյալը՝

1. Էկոլոգիապես մաքուր և քիչ քանակի թափոններ արտադրող տեխնոլոգիաների կազմակերպման սկզբունքներ,
2. արտադրության՝ «զրո թափոն» գործընթացների և տեխնոլոգիաների պահանջներ,
3. հումքային նյութերի և Էներգետիկ ռեսուրսների համար սահմանվող պահանջներ քիչ քանակի թափոն կամ զրո թափոն առաջացնող արտադրության կազմակերպման գործում,
4. պատրաստի ապրանքներին վերաբերող պահանջներ,
5. մաքուր արտադրության ապահովմանը միտված միջոցառումներ,
6. արդյունաբերական կազմակերպության կողմից մաքուր արտադրության սկզբունքների ներդրումից ակնկալվող հիմնական օգուտներ:

Մաքուր արտադրության հայեցակարգի նպատակն է նվազեցնել արտադրության և ծառայությունների բացասական ազդեցությունները նրանց ողջ կյանքի ցիկի ընթացքում՝ նյութերի ստացումից մինչև սպառում և հեռացում, ինչը ներառում է.

- 1) նյութերի, ջրի և Էներգիայի օգտահանման հիմնական ծախսերի նվազեցում,
- 2) թափոնների գոյացման կանխարգելում,
- 3) վտանգավոր նյութերի կամ գործընթացների նվազեցում կամ դրանցից խուսափում,

- 4) բնապահպանական ցուցանիշների բարելավում,
- 5) արտադրողականության բարելավում,
- 6) թափոնների կառավարման ծախսերի նվազեցում,
- 7) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կրճատում,
- 8) համաշխարհային շուկայում մրցունակության բարձրացմանը նպաստող միավոր ծախսի կրճատում,
- 9) աշխատանքային պայմանների բարելավում,
- 10) այլ արդյունաբերական ճյուղերից և մարդածին գործողություններից գոյացած թափոնների վրա հիմնված արտադրության զարգացում:

2.3.5 Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն

2018 թ. -ի ապրիլի 12-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը: ԱՊԸ հիմքում ընկած ռազմավարության համաձայն՝ արտադրողը կամ ներմուծողը տվյալ առարկայի արտադրության (ներմուծման) սկզբնական փուլում նախատեսում է այդ արտադրատեսակի (ապրանքի) օգտագործման վերջնական փուլում առաջացող բնապահպանական ազդեցությունները կանխարգելող (կամ բացասական ազդեցությունները չեզոքացնող) միջոցառումներ և կրում է վարչական և ֆինանսական պատասխանատվություն նշված բացասական ազդեցությունների վերացման համար: ԱՊԸ համակարգի նպատակները հետևյալն են.

- 1. թափոնների գոյացման կանխարգելում,
- 2. թափոնների քանակի նվազեցում դրանց առաջացման աղբյուրի մոտ,
- 3. վերամշակում՝ որպես երկրորդային հումքային նյութեր,
- 4. վերամշակում՝ որպես երկրորդային էներգետիկ ռեսուրս,
- 5. թաղում աղբավայրերում (թափոնների կառավարման ամենաքիչ նախընտրելի մեթոդ):

ԱՊԸ համակարգի ներդրման հիմնական երկարաժամկետ նպատակը բնապահպանական պահանջները բավարարող արտադրության խթանումն է, ինչը կօգնի կանխել շրջակա միջավայրի աղտոտումը և նվազեցնել բնական ռեսուրսների գործածությունը արտադրության բոլոր ցիկլերում, ինչպես նաև կրճատել թափոնների վերամշակման ծախսերը:

Ակնկալվում է, որ ռազմավարությունը կիրականացվի երկու հիմնական փուլով, իսկ ընդհանուր համակարգի ներդրումը նախատեսվում է իրականացնել 2021 թ. -ի ավարտին՝ հետևյալ հերթականությամբ՝

- 1. համապատասխան իրավական շրջանակի (2018-2021) մշակում,
- 2. ԱՊԸ համակարգի ներդրում և զարգացում, այդ թվում՝
 - փաթեթավորման և պիտակավորման համակարգի մշակում և ներդրում,
 - թափոնների տարանջատման և տեսակավորված հավաքման մասին հանրային իրազեկման արշավների մշակում և իրականացում,
 - ընկերությունների և սպառողների ծախսերի գնահատման ֆինանսական ուսումնասիրությունների, ինչպես նաև այլ ուսումնասիրությունների իրականացում:

Ադյուսակ 10-ը ներկայացնում է ռազմավարության Հավելված 2-ում ներկայացված գործողությունների պլանով սահմանված չորս միջոցառումները:

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1. «Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի ներկայացում ՅՅ կառավարության աշխատակազմ	ՅՅ շրջակա միջավայրի նախարարություն ՅՅ Էկոնոմիկայի նախարարություն	Դեկտեմբեր 2018
2. ՅՅ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի ներկայացում ՅՅ կառավարության աշխատակազմ	ՅՅ շրջակա միջավայրի նախարարություն ՅՅ Էկոնոմիկայի նախարարություն ՅՅ ֆինանսների նախարարություն ՅՅ պետական եկամուտների կոմիտե	Դեկտեմբեր 2019
3. «Օգտահանման ենթակա, շահագործման համար ոչ պիտանի ապրանքների (ներառյալ փաթեթվածքների) ցանկը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում ՅՅ կառավարության աշխատակազմ	ՅՅ շրջակա միջավայրի նախարարություն ՅՅ Էկոնոմիկայի նախարարություն ՅՅ պետական եկամուտների կոմիտե ՅՅ Էներգետիկայի նախարարություն (2019 թվականից ՅՅ ՏԿԵ նախարարության մաս է)	Դեկտեմբեր 2020
4. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՅՅ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացում ՅՅ կառավարության աշխատակազմ	ՅՅ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՅՅ շրջակա միջավայրի նախարարություն	Նոյեմբեր 2021

Աղյուսակ 10 - Հայաստանում ԱՊԸ համակարգերի ներդրման միջոցառումների 2018-2021 թվականների ծրագիր

Համաձայն ՅՅ շրջակա միջավայրի նախարարության տված տեղեկության¹⁸ հաշվի առնելով այն, որ.

- Հայաստանում այժմ առկա չեն ԱՊԸ համակարգերի ներդրման համար անհրաժեշտ մշակման, վերամշակման, օգտահանման և հեռացման, ինչպես նաև հավաքման և փոխադրման կարողություններ, և
- ըստ 2017 թ. -ի նոյեմբերի 24-ին ՅՅ և ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ)՝ Հայաստանն ունի «աղտոտող վճարում է» և «արտադրողի ընդլայնված պատասխանատվություն» սկզբունքների համաձայն ծախսերի ամբողջական վերականգնման մեխանիզմ սահմանելու պարտավորություն,

գործողությունների ծրագրի միջոցառումները համարվել են ժամանակային առումով ոչ տեղին և ոչ նպատակահարմար (ինչն ամրապնդվում է ՅՅ վարչապետի՝ 08.01.2019 N 02/24.10/8 հրամանով) և այդպիսով կիրականացվեն ՀԸԳՀ-ով պահանջվող գործողությունների պլանի և ժամանակացույցի շրջանակներում (տե՛ս աղյուսակ 12):

Ենթադրությունը, որ Հայաստանը ներկայումս չունի ԱՊԸ համակարգերի ներդրման համար անհրաժեշտ մշակման, վերամշակման, օգտահանման և հեռացման, ինչպես նաև տեսակավորված հավաքման և փոխադրման կարողություններ, լիարժեք հիմնավորված չէ: Երկրում կան կոշտ թափոնների օգտահանման և մշակման ոլորտում ներգրավված ավելի քան քառասուն ընկերություններ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Թափոնների օգտահանման և մշակման կայանները Հայաստանում): Այս ընկերությունների կարողություններից որոշները մանրամասն քննարկվում են ենթակառուցվածքների մասին 2.7 գլխում և Հայաստանում թափոնների կառավարման պրակտիկային անդրադարձող 2.8 գլխում:

¹⁸ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը 2019 թվականի հոկտեմբերի 4-ին հարցում է ուղարկել ՅՅ շրջակա միջավայրի նախարարություն՝ պարզելու ԱՊԸ գործընթացների կարգավիճակը:

Այնուամենայնիվ, դեռևս կա երկրում թափոնների հավաքման, օգտահանման և մշակման կարողությունների վերաբերյալ լրացուցիչ վերլուծության անհրաժեշտություն: Հետևաբար ԱՊԸ-ի որդեգրումը պահանջելու է այս կարողությունների գնահատում կոնկրետ տեսակի թափոնների համար՝ ընտրված ըստ սպառման ոչ ենթակա այն ապրանքների նախնական ցանկի, ներառյալ փաթեթավորման, որոնք ենթակա են օգտահանման (տե՛ս ԱՊԸ գործողությունների պլանի գործողություն 3):

2.3.6 Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) ՀՀ և ԵՄ միջև ստորագրվել է 2017 թ. -ի նոյեմբերի 24-ին: Ադյուսակ 11-ը ներկայացնում է համաձայնագրի հավելվածներում ներառված այն որոշ դրույթների ամփոփ նկարագրությունը, որոնք վերաբերում են կոշտ թափոնների կառավարմանը:¹⁹

¹⁹ Ժամանակացույցին առնչվող հավելվածը մտնում է ուժի մեջ ՀԸԳՀ-ի ստորագրման պահից՝ 2017 թ. -ի նոյեմբերի 24-ից, և հասանելի է հետևյալ հղումով՝ https://eur-lex.europa.eu/resource.html?uri=cellar:60b9829d-a1f1-11e7-a56f-01aa75ed71a1.0015.02/DOC_2&format=PDF

* Գործողության իրականացման ժամանակացույցը կիրառելի է ՀԸԳՀ-ի ուժի մեջ մտնելու ժամկետից՝ 2017 թ. -ի նոյեմբերի 24-ից:

Ոլորտ/Տիրույթ	Դիրեկտիվ	Դիրեկտիվի՝ կիրառման ենթակա դրույթներ	Ժամանակացույց*
<p>Բնապահպանական տեղեկատվության մատչելիություն</p>	<p>Եվրոպական խորհրդարանի և խորհրդի՝ 2003 թ. -ի հունվարի 28-ի 2003/4/EC դիրեկտիվը բնապահպանական տեղեկատվության մատչելիության և խորհրդի 90/313/EEC դիրեկտիվն անվավեր ճանաչելու մասին</p>	<p>Ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/մարմինների ձևավորում:</p> <p>Գործուն մեխանիզմների սահմանում, որոնց շրջանակում բնապահպանական տեղեկատվությունը հասանելի է դառնում հանրությանը և համապատասխան այլ կողմերի՝ որպես բացառություն (հոդված 3 և 4):</p> <p>Ապահովել, որ հանրային իշխանությունները բնապահպանական տեղեկատվությունը հասանելի դարձնեն հանրության համար (հոդված 3(1)):</p> <p>Սահմանել բնապահպանական տեղեկատվություն չտրամադրելու կամ միայն մասամբ տրամադրելու մասին որոշումները ուսումնասիրելու ընթացակարգեր (հոդված 6):</p> <p>Հանրությանը բնապահպանական տեղեկատվություն տրամադրելու համակարգի հիմնում (հոդված 7)</p>	<p>2 տարի</p>
<p>Հանրային մասնակցություն</p>	<p>Եվրոպական խորհրդարանի և խորհրդի՝ 2003 թ. -ի մայիսի 26-ի 2003/35/EC դիրեկտիվը նախատեսում է շրջակա միջավայրին վերաբերող որոշակի պլանների և ծրագրերի կազմման և փոփոխությունների հարցում հանրային մասնակցության ապահովում՝ հանրային մասնակցությանը և արդար դատաքննության իրավունքին վերաբերող դիրեկտիվների մասով (դիրեկտիվ 85/337/EEC և 96/61/EC)</p>	<p>Ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/մարմինների ձևավորում:</p> <p>Հանրությանը տեղեկատվություն տրամադրելու մեխանիզմի սահմանում (հոդված 2(2)(a) և 2(2)(d)):</p> <p>Հանրային խորհրդակցության մեխանիզմի սահմանում (հոդված 2(2)(b) և 2(3))</p> <p>Հանրային մեկնաբանություններն ու կարծիքները որոշումների կայացման գործընթացում հաշվի առնելու մեխանիզմի սահմանում (հոդված 2(2)(c)):</p> <p>Հանրության (այդ թվում՝ ՀԿ-ների) համար ողջամիտ ժամկետներում արդյունավետ և մատչելի արդարադատության ապահովում վարչական և դատական համակարգերում (հոդված 3(7) և հոդված 4(4), շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և աղտոտվածության ինտեգրված կանխարգելում և վերահսկում):</p>	<p>2 տարի</p>
<p>Բնապահպանական</p>	<p>Եվրոպական խորհրդարանի և</p>	<p>Ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/մարմինների ձևավորում</p>	<p>5 տարի</p>

<p>պատասխանատվություն</p>	<p>Խորհրդի՝ 2004 թ. -ի ապրիլի 21-ի դիրեկտիվ բնապահպանական պատասխանատվության մասին՝ կապված շրջակա միջավայրի վնասների կանխարգելման և շտկման հետ (փոփոխություններով)</p>	<p>Շրջակա միջավայրին (ջուր, հող, պաշտպանվող տեսակներ և բնական միջավայրեր) հասցված վնասների կանխարգելմանը և շտկման ուղղված կանոնների և ընթացակարգերի սահմանում հիմնված «աղտոտողը վճարում է սկզբունքի վրա» (հոդված 5, 6 և 7, հավելված III)</p>	8 տարի
		<p>Վտանգավոր աշխատանքային գործողությունների համար խիստ պատասխանատվության սահմանում (հոդված 3(1) և հավելված III)</p>	7 տարի
		<p>Օպերատորների համար կանխարգելման և շտկման պարտավորությունների միջոցառումների սահմանում, այդ թվում՝ պատասխանատվության ծախսեր (հոդված 5, 6, 7, 8, 9 և 10)</p>	7 տարի
		<p>Ազրակիր անձանց, այդ թվում՝ բնապահպանական ՀԿ-ների համար բնապահպանական վնասի դեպքում իրավասու մարմիններից գործողությունների, ներառյալ անկախ ուսումնասիրության կատարման պահանջ ներկայացնելու մեխանիզմների սահմանում (հոդված 12 և 13)</p>	5 տարի
<p>Թափոնների կառավարում</p>	<p>Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թ.-ի նոյեմբերի 19-ի դիրեկտիվ 2008/98/EC թափոնների և որոշ դիրեկտիվներ անվավեր ճանաչելու մասին</p>	<p>Ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/մարմինների ձևավորում</p> <p>Հինգ քայլ պարունակող թափոնների հիերարխիայի և թափոնների կանխարգելման ծրագրերին համապատասխան թափոնների կառավարման պլանների մշակում (գլուխ V)</p>	4 տարի
		<p>Ամբողջական ծախսածածկման մեխանիզմի հիմնում՝ համաձայն «աղտոտողը վճարում է» և «արտադրողի պատասխանատվության ընդլայնում» սկզբունքների (հոդված 14)</p>	6 տարի
		<p>Հեռացման կամ օգտահանման գործունեություն ծավալող հիմնարկների/նախաձեռնությունների համար թույլտվությունների համակարգի սահմանում՝ հատուկ պարտավորություններ նախատեսելով վտանգավոր թափոնների կառավարման համար (գլուխ IV):</p> <p>Սահմանել թափոնների հավաքում և փոխադրում իրականացնող հիմնարկների և նախաձեռնությունների ռեեստր (գլուխ IV):</p>	4 տարի
<p>Աղբավայրեր</p>	<p>Խորհրդի՝ 1999 թ.-ի ապրիլի 26-ի դիրեկտիվ 1999/31/EC թափոններն աղբավայրերում տեղադրելու մասին,</p>	<p>Ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/մարմինների ձևավորում</p> <p>Աղբավայրերի տեղանքների դասակարգում (հոդված 4)</p> <p>Աղբավայրեր փոխադրվող կենսաքայքայվող կենցաղային թափոնների ծավալների կրճատման ազգային ռազմավարության մշակում (հոդված 5)</p>	3 տարի

	(փոփոխություններով)	Դիմելու և թույլտվություն ստանալու համակարգի և թափոնների ընդունման ընթացակարգերի սահմանում (հոդված 5-ից 7, 11, 12 և 14)	
		Աղբավայրերի շահագործման, փակման և փակմանը հաջորդող գործընթացների փուլերում վերահսկման և մշտադիտարկման սահմանում (հոդված 12 և 13)	
		Գործող աղբավայրերի բարելավման պլանների սահմանում (հոդված 14)	6 տարի
		Ծախսերի սահմանման մեխանիզմի հիմնում (հոդված 10)	3 տարի
		Ապահովել, որ համապատասխան թափոնը աղբավայրում տեղադրվելուց առաջ վնասագերծվի (հոդված 6):	6 տարի

Աղյուսակ 11 - ՀԸԳՀ-ի՝ կոշտ թափոնների կառավարմանն առնչվող դրոյթների ամփոփ նկարագրություն

Ստորև բերված են ՀԸԳՀ շրջանակում թափոնների կառավարման վերաբերյալ Հայաստանի ստանձնած պարտավորությունները, որոնք ներկայացված են որպես սահմանված ժամանակահատվածում իրականացման ենթակա նպատակներ.

- մինչև 2020 թ. -ը ունենալ հանրությանը բնապահպանական տեղեկություններ տրամադրող համակարգ.
- մինչև 2021 թ. -ը մշակել աղբավայրերում տեղադրվող կենսաքայքայվող կենցաղային թափոնների քանակի կրճատման ազգային ռազմավարություն.
- մինչև 2021 թ. -ը սահմանել վերահսկողության և մշտադիտարկման ընթացակարգեր աղբավայրերի շահագործման, փակման և հետագա խնամքի փուլերում.
- մինչև 2021 թ. -ը ստեղծել դիմումների և թույլտվությունների համակարգ և մշակել թափոնների ընդունման (աղբավայրերում) ընթացակարգեր.
- մինչև 2022 թ. -ը կազմել թափոնների կառավարման պլաններ՝ թափոնների հիերարխիայի հիև գայների և թափոնների կանխարգելման ծրագրերի համաձայն.
- մինչև 2023 թ. -ը ստեղծել թափոնների հավաքում և փոխադրում իրականացնողների և գործողությունների ռեեստր.
- մինչև 2024 թ. -ը ստեղծել ամբողջական ինքնաձախսածածկման մեխանիզմ՝ համաձայն «աղտոտողը վճարում է» և «արտադրողի ընդլայնված պատասխանատվություն» սկզբունքների.
- մինչև 2024 թ. -ը սահմանել գոյություն ունեցող աղբավայրերի բարելավման պլաններ.
- մինչև 2024 թ. -ը հիմնել համակարգ, որն ապահովում է համապատասխան թափոնի մշակումը նախքան դրա տեղադրումն աղբավայրում.
- մինչև 2025 թ. -ը օպերատորների համար սահմանել պարտավորություններ՝ ձեռնարկելու անհրաժեշտ կանխարգելման և վերականգնման միջոցառումներ, ներառյալ պատասխանատվություն ծախսերի համար.
- մինչև 2025 թ. -ը խիստ պատասխանատվություն սահմանել վտանգավոր աշխատանքային գործողությունների համար:

2.4 Օրենսդրություն և իրավակարգավորումներ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.4.1 ՀՀ սահմանադրություն և թափոններին վերաբերող միջազգային համաձայնագրեր թվականի ծրագիր
- 2.4.2 ՀՀ օրենք թափոնների մասին (ՀՕ159-Ն)
- 2.4.3 ՀՀ օրենք աղբահանության և սանիտարական մաքրման մասին (ՀՕ-237-Ն)
- 2.4.4 ՀՀ օրենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (ՀՕ-110-Ն)
- 2.4.5 ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն)
- 2.4.6 ՀՀ օրենք լիցենզավորման մասին (ՀՕ-193)
- 2.4.7 ՀՀ օրենք տեղական ինքնակառավարման մասին (ՀՕ-337)
- 2.4.8 ՀՀ օրենք բնապահպանական վերահսկողության մասին (ՀՕ-82-Ն)
- 2.4.9 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր
- 2.4.10 Վտանգավոր թափոններին վերաբերող իրավական ակտեր
- 2.4.11 Քսուքային կյուրերի, յուղերի և հատուկ հեղուկների տեխնիկական կանոնակարգ
- 2.4.12 Փաթեթավորման թափոններին վերաբերող իրավական ակտեր
- 2.4.13 Հիմնական դերակատարների իրավունքներն ու պարտականությունները
- 2.4.14 Թափոնների սահմանումը և տեսակները
- 2.4.15 ԵՏՄ անդամակցությունից բխող փաստաթղթեր
- 2.4.16 Զաղաքականությունների և օրենսդրության առանցքային թերություններ

Թափոնների վերաբերյալ հայկական օրենսդրությունը ներառում է ավելի քանի հիսուն օրենք²⁰ և թափոնների կառավարմանն առնչվող ենթաօրենսդրական ակտեր: Հայաստանը ստորագրել է թափոններին առնչվող ավելի քան 10 միջազգային պայմանագիր և համաձայնագիր: Պատկեր 6-ը ստորև ներկայացնում է ՀՀ օրենսդրական շրջանակի ընդհանուր կառուցվածքը: Սույն բաժինն անդրադառնում է ներպետական օրենսդրության ընդհանուր շրջանակին՝ նշելով միայն առանցքային կարգավորումները: Ինստիտուցիոնալ շրջանակին վերաբերող 2.5 գլխում քննարկվում են առանցքային պետական մարմինների կարողություններն ու լիազորությունները:

Թափոններին առնչվող օրենսդրության պարզեցումն ու արդիականացումը ԵՄ համար առաջնային նպատակ է եղել՝ 2008 թ.-ից սկսած: Տարբեր օրենսդրությունների ներդաշնակեցումը, ինչպես նաև օրենսդրության կիրարկման ներդաշնակեցումը եվրոպական մակարդակում սահմանվել է որպես գործողությունների առաջնահերթ նպատակ հատկապես այն պատճառով, որ ներդաշնակեցումը ներառում է օրենսդրությունը պարզեցնելու հնարավորություն:

²⁰ Հայաստանում թափոնների կառավարմանն առնչվող օրենսդրական ակտերի թարմացված ցանկը հասանելի է ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի թափոնների ռեսուրսների շտեմարանում (<https://wri-ace.aua.am/hy/legislation>)



Պատկեր 7 - ՀՀ օրենսդրական շրջանակի կառուցվածքը
Աղբյուր՝ Սույն զեկույցի հեղինակների կողմից տարբեր աղբյուրներից հավաքված տվյալներ

2.4.1 ՀՀ Սահմանադրություն և թափոնների վերաբերող միջազգային համաձայնագրեր

ՀՀ Սահմանադրության 10-րդ և 12-րդ հոդվածներում սահմանվում են բնական ռեսուրսների օգտագործման պայմանները: Մասնավորապես.

Հոդված 10. Սեփականության երաշխավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:
2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:
2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Սահմանադրությունը որևէ դրույթ չի պարունակում ներկա և ապագա սերունդների՝ առողջ և կայուն շրջակա միջավայրում բնակվելու իրավունքի մասին:

Հայաստանը թափոնների կառավարմանն առնչվող 10 միջազգային համաձայնագրերի կողմ է: Այդուհանդերձ 12-ում նշված են այդ համաձայնագրերի անուններն ու վավերացման տարեթվերը:

#	Համաձայնագիր	Վավերացման տարի
1	Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին 1979 թվականի նոյեմբերի 13-ի կոնվենցիա	1997
2	Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Հավելված 1)	1998
3	Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին Բազելյան կոնվենցիա	1999
4	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին Յելսինկյան կոնվենցիա	1997
5	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին Ռոտերդամի կոնվենցիա	2004
6	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա	2004
7	Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին համատեղ կոնվենցիա	2013
8	Սևիլի վերաբերյալ Միևմատայի կոնվենցիա	2017
9	Էլեկտրոնային և Էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների գործածության ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիր	2018
10	«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» Եվրասիական տնտեսական միության համաձայնագիր	2015

11	«Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր:	2010
----	--	------

Աղյուսակ 12 - Հայաստանի մասնակցությունը թափոնների կառավարմանն առնչվող միջազգային համաձայնագրերին
Աղբյուր՝ Սույն զեկույցի հեղինակների կողմից տարբեր աղբյուրներից հավաքված տվյալներ

#	Համաձայնագիր	Վավերացման տարի
1	Համաձայնագիր ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բնագավառում համագործակցության մասին	1997
2	Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության բնապահպանական վարչության միջև բնապահպանական համագործակցության վերաբերյալ	2001
3	Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Տաջիկստանի Հանրապետության բնապահպանության նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին	2003
4	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Սիրիայի Արաբական Հանրապետության շրջակա միջավայրի հարցերով պետական նախարարության միջև բնապահպանության ոլորտում համագործակցության մասին՝ համաձայնագիր	2009
5	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Լատվիայի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության նախարարության միջև բնապահպանության ոլորտում համագործակցության մասին	2009
6	Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև շրջակա միջավայրի բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր	2011

Աղյուսակ 13 - Հայաստանի կողմից ստորագրված՝ բնապահպանությանն առնչվող միջպետական համաձայնագրեր
Աղբյուր՝ Տարբեր աղբյուրներից հավաքած տվյալներ

2.4.2 ՀՀ օրենքը թափոնների մասին (ՀՕ-159-Ն)

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-159) սահմանված են թափոնների գործածության ոլորտում ՀՀ կառավարության, բնապահպանության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի, առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները (ՀՀ «Թափոնների մասին» օրենքի՝ համապատասխանաբար 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներ, ՀՕ-159-Ն):

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է թափոնների հավաքումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը, հեռացումը և ծավալի նվազեցումը, ինչպես նաև իրավական և տնտեսական հիմքերը՝ կանխելու թափոնների բացասական ազդեցությունը մարդու առողջության և միջավայրի վրա: Օրենքը սահմանում է թափոնների կառավարման բնագավառում պետական քաղաքականությունը, ինչպես նաև թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել են ավելի քան 40 ենթաօրենսդրական ակտեր:

Թերություններ

«Թափոնների մասին» օրենքում բացակայում է *թափոնների հիերարխիա* (ԹՀ) հասկացությունը և դրա սահմանումը: Թեպետ այն պարունակում և խթանում է թափոնների հիերարխիայի բոլոր բաղադրիչները, սակայն հստակ չի նշում ԹՀ մոտեցման համար այդքան կարևոր առաջնահերթությունների հաջորդականությունը: Սա մասնավորապես վերաբերում է *կենսաբանական թափոն, թափոնի տնօրինող, առանձին հավաքում, բարձրորակ վերամշակում, ցածրորակ վերամշակում, միջնորդ, վերավաճառող* եզրույթներին: Շրջանաձև տնտեսության, ինչպես նաև վերամշակման ենթակա նյութերի տեսակների սահմանումները օրենքում տեղ չեն գտել:

«Հինգքայանոց թափոնների հիերարխիայի և թափոնների կանխարգելման ծրագրերի համաձայն թափոնների կառավարման պլանների պատրաստման» մասին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) պահանջների կատարման նպատակով անհրաժեշտ է լինելու *թափոնների հիերարխիա* եզրույթը ներառել օրենքում:

Օրենքը խթանում է «գրո թափոն», «ավելի քիչ թափոն» և ռեսուրսարդյունավետ տեխնոլոգիաներ, սակայն չի ընդգծում գրո թափոն և ավելի քիչ թափոն գոյացնող սպառումը խթանելու անհրաժեշտությունը: Չի խթանվում նաև թափոնների տեսակավորումը՝ որպես նյութերի ամենարդյունավետ օգտահանման նախապայման:

Թեպետ «Թափոնների մասին» օրենքի 23-րդ հոդվածը խթաններ է սահմանում կազմակերպությունների կողմից թափոնների գոյացման կրճատմանը նպաստող տեխնոլոգիաների ներդրման համար, չկա որևէ իրավական ակտ, որը սահմանում է նշված արտոնությունների համար դիմելու և դրանք ստանալու ընթացակարգը:

Վերոնշյալ 23-րդ հոդվածը ներառում է որոշակի կոնցեպտուալ անորոշություններ՝ կապված այն բանի հետ, թե որ կազմակերպություններն են իրավասու ստանալ արտոնություններ: Հոդվածի հետևյալ մասը՝ «... թափոնների գոյացման նվազեցմանն ուղղված տեխնոլոգիաներ ներդնող կազմակերպությունները, որոնք թափոններ են օգտահանում արտադրանքի արտադրման ընթացքում, իրականացնում են դրանց հավաքումը, պահեստավորումը, արտադրամասերի շինարարությունը...», շփոթ է առաջացնում թափոնների նվազեցման և մշակման տարբեր պրակտիկաների մասով:

Բացի այդ, 23-րդ հոդվածը չի մասնավորեցնում նշված արտոնությունների տեսակները՝ հարկային արտոնություն, ներմուծման արտոնություն, կանաչ սակագին և այլն:

2.4.3 ՀՀ օրենքը աղբահանության և սանիտարական մաքրման մասին (ՀՕ-237-Ն)

Օրենքը սահմանում է ՀՀ կառավարության, ինչպես նաև աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում համապատասխան պետական լիազոր մարմնի իրավասությունները: Օրենքը նաև սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական սկզբունքները, վճարողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աղբահանության վճարների դրույքները: Օրենքում առկա հասկացությունների ցանկում կարևոր դեր և նշանակություն է հատկացվում *թափոն* հասկացությանը:

Թերություններ

Օրենքը սահմանում է միայն օպերատորին վերաբերող պատասխանատվության դրույթներ ոչ պատշաճ աղբահանության համար, ըստ որի՝ 50,000 ՀՀ դրամ տուգանք կգանձվի յուրաքանչյուր ոչ պատշաճ կատարման համար, իսկ համայնքի ավագանին (ղեկավարը կամ այլ իրավասու անձ կամ կազմակերպություն) պատասխանատու է օպերատորի կողմից պատշաճ աղբահանության իրականացումը վերահսկելու համար:

2.4.4 ՀՀ օրենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (ՀՕ-110-Ն)

Օրենքում նշվում է, որ թափոնների գործածության ոլորտներին առնչվող հիմնարար փաստաթղթերը ենթակա են գնահատման և փորձաքննության, որոնց ընթացքում դիտարկվում են թափոնների բաղադրությունը, վտանգավորության մակարդակը, մշակումը, փոխադրումը, վնասագրեծումը, պահումը, փաթեթավորումը, թաղումը և պահպանումը: Այն սահմանում է գնահատման և փորձաքննության երեք կատեգորիա՝ A, B և C:

Թափոնների կառավարման ոլորտում գնահատման և փորձաքննության են ենթակա A կատեգորիային պատկանող հետևյալ գործողությունները՝

- վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, հեռացում, վնասագրեծում, տեղադրում և թաղում,
- աղբավայրերի կամ կենցաղային թափոնների վերամշակման օբյեկտների ստեղծում՝ 15,000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներին սպասարկելու կամ օրական առնվազն 10 տոննա թափոն ընդունելու համար և/կամ կենցաղային թափոնների վերամշակման իրականացում:

«Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» հրամանով (ՀՀ կառավարության որոշում N430-Ն) տնային տնտեսություններից և կազմակերպությունների տարածքներից հավաքվող չտեսակավորված կոշտ կենցաղային թափոնները սահմանվում են որպես 4-րդ կարգի վտանգ ունեցող թափոններ: Սակայն ո՛չ աղբահանություն իրականացնողները, ո՛չ էլ համայնքներում աղբավայրերի օպերատորները չեն անցնում օրենքով պահանջված ՇՄԱԳ-ը կամ փորձագիտական քննությունը:

2.4.5 ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն)

Հոդված 162-ը սահմանում է, թե ովքեր են բնապահպանական հարկ վճարողները.

1. ...
2. Հատուկ հատկացված տեղերում (թափոնների տեղաբաշխման տեղեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ, շինություններ, արդյունաբերական

հրապարակներ, պոչամբարներ, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասեր)՝

- (1) ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում այդ թափոններն առաջացնողները,
- (2) արտադրության և/կամ սպառման թափոնների պահման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում այդ թափոններն առաջացնողները,
- (3) արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում այդ թափոններն առաջացնողները կամ տեղադրողները, բացառությամբ սույն մասի 4-րդ կետում նշված դեպքերի,
- (4) «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ աղբահանության իրականացման արդյունքում ֆիզիկական անձանց առաջացրած կենցաղային թափոնների տեղադրման համար բնապահպանական հարկ վճարողներ են համարվում, նույն օրենքի համաձայն, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորները:

Նշված օրենքի հոդված 170-ը սահմանում է բնապահպանական հարկի դրույքաչափերը ընդերքօգտագործման, արտադրության և/կամ սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում (թափոնների տեղաբաշխման տեղեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ և/կամ շինություններ) տեղադրելու կամ պահելու համար, ինչը քննարկվում է նաև *աղբավայրերի հարկերին* վերաբերող 2.11.2 կետում:

2.4.6 ՀՀ օրենք լիցենզավորման մասին (ՀՕ-193)

Սույն օրենքը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում (հոդված 13) օրենքը սահմանում է լիցենզավորման պահանջ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության համար: Լիցենզավորման գործընթացը կարգավորվում է վտանգավոր թափոնների հետ աշխատանքների համար լիցենզիայի տրամադրման մասին նորմերով (N 121-Ն):

Ինչպես ՇՄԱԳ-ի կամ փորձագիտական քննության դեպքում, լիցենզավորում է պահանջվում բնակելի վայրերից և կազմակերպությունների բնակելի հատվածներից չտեսակավորված կոշտ կենցաղային թափոնների համար, որոնք սահմանված են որպես 4-րդ դասի վտանգավորության թափոններ «Ըստ վտանգավորության աստիճանի դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» հրամանով (ՀՀ կառավարության որոշում N 430-Ն): Այդուհանդերձ, ո՛չ կենցաղային թափոններ հավաքող կազմակերպությունները, ո՛չ էլ համայնքներում աղբավայրերի օպերատորները չեն անցնում օրենքով պահանջվող լիցենզավորման գործընթաց:

2.4.7 ՀՀ օրենք տեղական ինքնակառավարման մասին (ՀՕ-337)

Օրենքը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում, ինչպես նաև տալիս է աղբահանության վճարների սահմանումը: *ՏԻՄ մարմինների* իրավասություններն ու պարտականությունները մանրամասն քննարկվում են ՏԻՄ մասին 2.5.8 կետում:

2.4.8 ՀՀ օրենք բնապահպանական վերահսկողության մասին (ՀՕ-82-Ն)

Օրենքի Հոդված 22-ը սահմանում է բնապահպանական վերահսկողության հիմնական ուղղութիւնը ստորև յուևները, որոնցից մի քանիսը՝ թափոնների կառավարման ոլորտին վերաբերող, բերում ենք ստորև.

1) մթնոլորտային օդի պահպանություն.

...ե) բնակավայրերում արտադրական, կենցաղային թափոնների և մթնոլորտը փոշիով, վնասակար գազերով ու գարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող թափոնների պահեստավորման կամ դրանց այրման սահմանափակումների, պահանջների պահպանումը,

2) ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն.

...ե) ջրային ռեսուրսների վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի,

աղբյուրների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրման պահանջների կատարումը,

3) հողերի պահպանություն.

ա) հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանումն ու բնապահպանական միջոցառումների կատարումը:

4)...

5)...

6) վտանգավոր նյութեր և արտադրության ու սպառման թափոններ.

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում վտանգավոր նյութերի և արտադրության ու սպառման թափոնների (բացառությամբ՝ ռադիոակտիվ) գործածության՝ առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման (թափոնի երկրորդային օգտագործում), հեռացման, վնասագերծման, շրջակա միջավայրում դրանց տեղադրման և թաղման համար սահմանված նորմերի պահպանումը,

բ) վտանգավոր նյութերն ու թափոնները Հայաստանի Հանրապետությունից արտահանման, Հայաստանի Հանրապետություն դրանց ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման համար սահմանված պահանջների պահպանումը:

2.4.9 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր

Կառավարության՝ 2007 թ.-ի հոկտեմբերի 4-ի №1161-Ն որոշումը սահմանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը, այդ թվում՝

1. սպառման թափոնների հեռացում՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +5°C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր
2. ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինսեկցիայի (պայքար միջատների դեմ) և դեռատիզացիայի (պայքար կրծողների դեմ) իրականացում՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ
3. ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրում՝ առնվազն երկու օրը մեկ անգամ

Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ազդեցությունները կանխարգելելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 2009 թ.-ի դեկտեմբերի 22-ի № 25-Ն հրամանը սահմանում է բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային

անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները N2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը:

Հրամանը սահմանում է աղբամուղեր ունեցող շենքերում թափոնների հավաքման, պահման և հեռացման նորմերը, թափոնների ժամանակավոր պահման կոնտեյներների տեսակներն ու չափերը և դրանց տեղադրումը տարբեր վայրերում: Ավելին, կոնտեյներները պետք է ունենան կափարիչներ և բեռնարկղի միայն երկու երրորդը կարող է լցված լինել թափոնով: Հրամանը նաև սահմանում է սպառման թափոնների փոխադրման, ինչպես նաև կոնտեյներների, աղբատար մեքենաների և թափոնների հավաքման խցերի ախտահանման նորմերը: Սակայն, վերոնշյալ նորմերը չեն պահպանվում: ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգիրքը լրացվել է 2018 թ.-ի մայիսին և ավելի խիստ պատիժներ ու պատասխանատվություն է սահմանվել աղբը չնախատեսված վայրերում թափելու համար: Տուգանքները տարբերվում են ըստ թափոնների քանակի և տեսակի (հոդված 43.1):

ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկ (N 342-Ն)

ՀՀ կառավարության՝ 2006 թ.-ից կիրարկվող N 342-Ն որոշումը ներկայացնում է երկրում արտադրվող թափոնների ցանկը: Թափոնները թվարկված են ըստ 13-նիշանոց ծածկագրի, անվանման և ծագման: Տես Նկար 6-ում բերված ՀՀ-ում գոյացող արտադրական (ներառյալ՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկի առաջին էջը:

Էջ 1		
Հավելված ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրաճանի		
ՑԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՑԱՑՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՈՍԱՆ ԹՎՓՈՆՆԵՐԻ		
Ծածկագիր	Թափոնների անվանումը	Ծագումը
1000000000000	ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՎՓՈՆՆԵՐ /ԲՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ/	
1100000000000	Սննդամթերքի և համային հատկանիշներ ունեցող մթերքների արտադրության թափոններ	
11100000 00 00 0	Սննդամթերքի արտադրության թափոններ	

Նկար 6 – ՀՀ-ում գոյացող արտադրական (ներառյալ՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկի առաջին էջը
Աղբյուր՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=100155>

2.4.10 Վտանգավոր թափոններին վերաբերող իրավական ակտեր

Լիցենզավորման գործընթացը կարգավորվում է վտանգավոր թափոնների գործածության համար թույլտվության տրամադրման մասին նորմերով (N 121-Ն): ՀՀ Լիցենզավորման մասին օրենքը սահմանում է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման կարգը և պահանջները: Ներկայումս տրվող լիցենզիան անհրաժեշտության դեպքում պարունակում է ներդիրներ համապատասխան գործունեության տեսակների մասին:

Թերություններ

Թեև լիցենզավորման գործընթացն ունի բարդ ընթացակարգ, սակայն պետք է նկատի ունենալ, որ այն ձեռք է բերվում առանց ժամկետի, այսինքն՝ տրվում է անժամկետ: Պրակտիկայում էլ չեն կիրառվում օրենքով նախատեսված հիմքերով դրանց կասեցման կամ դադարեցման դեպքերը: Ասվածի վառ ապացույցն այն փաստն է, որ ոչ մի ընկերություն դեռևս չի գրկվել լիցենզիայից:

Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ (N 430-Ն)

Ըստ բնապահպանության նախարարի՝ 2006թ. -ի № 430-Ն հրամանագրի՝ Հայաստանում թափոնները դասակարգվում են ըստ վտանգավորության հետևյալ աստիճանների՝ 1, 2, 3, 4 և 5: Ամենավտանգավոր թափոնները առաջին աստիճանի վտանգավորության թափոններն, իսկ 5-րդ աստիճանի թափոնը ոչ վտանգավոր թափոն է համարվում:

Ըստ վտանգավորության աստիճանի դասակարգված թափոնների ցանկը համադրելի է Բազելի կոնվենցիայի և ՏՀԶԿ-ի համապատասխան ցանկերի հետ: Բացի այդ, Հայաստանն ընդունել է Ներմուծման համար արգելվող թափոնների ցանկ, և թափոնները դասակարգում է ըստ վտանգավորության 4 տարբեր մակարդակների՝ գումարած ոչ վտանգավոր թափոններ: Գույքագրման նպատակով ընդունվել է համապատասխան ենթաօրենսդրական ակտ, ըստ որի թափոններ գոյացնող բոլոր կազմակերպությունները պարտավոր են ներկայացնել տարեկան հաշվետվություններ թափոնների քանակի, աղբավայրեր ուղարկված թափոնների ծավալի, ինչպես նաև ըստ թափոնների վտանգավորության տարբեր մակարդակների կատարված վճարումների մասին:

2019թ. -ի նոյեմբեր ամսվա դրությամբ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը ներառում էր 845 տվյալ: Այդուհանդերձ 10-ն ամփոփում է այդ ցանկը՝ նշելով կոնկրետ թափոնի և իր վտանգավորության աստիճանին համապատասխանող տվյալների թիվը: Կատարված մուտքերից 27-ը առաջին դասի վտանգավորության թափոններ են, 56-ը՝ երկրորդ, 300-ը՝ երրորդ և 462-ը՝ չորրորդ, որը ներառում է նաև չտեսակավորված կենցաղային թափոններ բնակելի տարածքներից (մուտք 91100100 01 00 4) և կազմակերպությունների բնակելի հատվածներից (մուտք 91200400 01 00 4):

Վտանգավորության դաս	Թափոնների թիվ
1-ին դաս (առավել վտանգավոր)	27
2-րդ դաս	56
3-րդ դաս	300
4-րդ դաս (նվազ վտանգավոր)	462
Ընդհանուր	845

Աղյուսակ 14 - Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկում մուտքերի քանակն ըստ վտանգավորության դասի (N 430-Ն)

Թափոնների անձնագիր

Բնապահպանության նախարարի 2006 թվականի N 19-Ն հրամանով հաստատվել է թափոնի անձնագրի օրինակելի ձևը: Ընդ որում, թափոն առաջացնողը պետք է հայտարարի. «հետազոտությունների միջոցով պարզել եմ, որ տվյալ թափոնը պարունակում է միայն վերոհիշյալ թունավոր բաղադրիչները՝ նշված տոկոսներով, որի պատճառով այդ թափոնը իմ կողմից դասակարգվել է որպես վտանգավորության ___ դասի թափոն: Հայտարարում եմ, որ իմ կողմից տրամադրված տեղեկությունները հավաստի են և ճշգրիտ»:

Վտանգավոր բժշկական թափոններ

Բժշկական թափոնների կառավարման ոլորտը կարգավորվում է Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններով ու նորմերով: Սույն սանիտարական կանոններով և նորմերով սահմանվում են առողջապահական և այլ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած վտանգավոր բժշկական թափոնների, բացառությամբ՝ բժշկական ռադիոակտիվ թափոնների, գործածությանը (դրանց գոյացման կանխարգելմանը, հավաքմանը, ժամանակավոր պահմանը, վնասազերծմանը, ոչնչացմանը, փոխադրմանը և թաղմանը) ներկայացվող սանիտարական ու հակահամաճարակային պահանջները:

Ընդ որում, տարբեր են բժշկական թափոնների վնասազերծման ուղղված պահանջներն ըստ առաջացման ծավալների: 30 օրվա ընթացքում գոյացած վտանգավոր բժշկական թափոնների ընդհանուր քաշը որոշում է, թե արդյոք կազմակերպությունը մեծ քանակություն և առաջացնող է (ամսական 50 կգ կամ ավելի) թե՞ փոքր քանակություն և առաջացնող (ամսական մինչև 50 կգ): Եթե առողջապահական կազմակերպությունը կարող է նվազեցնել իր վտանգավոր բժշկական թափոնների քանակությունը մինչև 50 կգ/ամիս՝ թափոնների ըստ տեսակների ճշգրիտ տարանջատման և թափոնների ծավալի նվազեցման ճիշտ ընտրված մեթոդի միջոցով, ապա այն կարող է վերադասակարգվել որպես փոքր քանակ առաջացնող առողջապահական կազմակերպություն:

«Դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի N05 Ն հրաման (1 փետրվարի 2013 թ.)²¹

Սույն կարգի համաձայն դեղատներում կամ դեղատնային կրպակներում առաջացող բժշկական թափոններ են՝ օգտագործման համար ոչ պիտանի՝

- 1) դեղերը
- 2) դեղանյութերը
- 3) բժշկական նշանակության ապրանքները:

«Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը», մշակված եվրոպական դիրեկտիվների և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա, հաստատվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 2009 թ.-ի դեկտեմբերի 29-ի N^o 321-Ա հրամանով:

Այդ ապրանքները հաշվառվում են որպես բժշկական թափոն դրանք խոտանվելուց հետո, եթե՝

1. լրացել է դրանց պիտանիության ժամկետը
2. հայտնաբերվել է դեղի փաթեթավորման, պիտանի, տարողության ամբողջականության խախտում, դեղի փչացման նշաններ (ձևի, գույնի, թափանցիկության և այլ հատկանիշների փոփոխություն)
3. ստացվել է տեղեկատվություն կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքում պարզվել է դեղի կամ դեղանյութի կամ բժշկական նշանակության ապրանքի որակի անհամապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ են հավաքվել Հայաստանի Հանրապետությունում արտադրված դեղերը:

Կազմակերպությունում բժշկական թափոնների հաշվառման նպատակով իրականացվում է ներքին մշտադիտարկում:

²¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=84564>

Դեղերի պիտանիության ժամկետները լրանալուց առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու յուրաքանչյուր դեպքը հայտնաբերելիս՝ անմիջապես, պատասխանատու անձը գրավոր տեղեկացնում է կազմակերպության տնօրենին: Կազմակերպության տնօրենը երկօրյա ժամկետում կազմակերպում է պիտանիության ժամկետն անց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի խոտանումը՝ իր լիազորությունների շրջանակում ընդունված իրավական ակտով ստեղծված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը բաղկացած է տվյալ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ երեք աշխատակիցներից: Հանձնաժողովը կազմում է դեղատներում կամ դեղատնային կրպակներում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության ապրանքների խոտանման արձանագրություն՝ Դեղերը խոտանվելուց և խոտանման արձանագրության կազմումից անմիջապես հետո պատասխանատու անձի կողմից կատարվում է բժշկական թափոնների հաշվառում: Բժշկական թափոնները հաշվառումից հետո մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչնչացման գործընթացը պատասխանատու անձի կողմից տեղավորվում և պահվում են ժամանակավոր պահման համար նախատեսված պարկում կամ բեռնարկղում:

Թերություններ

Չնայած այն բանին, որ վտանգավոր թափոնների գործածությանն առնչվող նորմերը և կարգավորումները համեմատաբար լավ են մշակված, այնուհանդերձ ողջ երկրում չկա վտանգավոր թափոնների համար (օր.՝ սնդիկ պարունակող լամպեր կամ ջերմաչափեր, մարտկոցներ և այլն) գեթ մեկ ԷՀԿ (Էկոլոգիապես համահունչ կառավարում) օբյեկտ: Չկա որևէ հրաման կամ իրավական ակտ, որը սահմանում է նման օբյեկտի նախագծման ու շինարարության հարցերը: 2019 թ. -ի սեպտեմբերի դրությամբ չկար որևէ հրաման կամ իրավական ակտ՝ սահմանող այնպիսի ԷՀԿ օբյեկտի նախագծում և շինարարություն, որը կկարողանար ընդունել 1-ին դասի վտանգավորության թափոններ և առնվազն կատարել տեսակավորում:

Բացի այդ, որոշ տեսակի վտանգավոր թափոններ, ինչպիսիք են այկալային, ցինկ-ածխածնային և լիթիումային մարտկոցները, կենցաղային թափոնների խառը հոսքի հետևանքով հայտնվում են աղբավայրերում, մինչդեռ դրանք կարող են այդտեղ չհասնել ընդամենը համայնքապետարանների կողմից ներդրվող և իրականացվող պարզունակ, ոչ ծախսատար տարանջատված հավաքման համակարգերի և տեսակավորման օբյեկտների միջոցով: Պատշաճ կազմակերպման դեպքում թափոնային մարտկոցների հավաքումն ու փոխադրումը ցածր ռիսկ պարունակող գործողություն է, մինչդեռ խառը թափոնների հետ դրանց չվերահսկվող աղբահանման հետևանքով առաջացող բնապահպանական և առողջապահական ռիսկերն ու ազդեցությունները զգալիորեն բարձր են:

Շատ եվրոպական համայնքներ օգտագործում են ողջ քաղաքի տարածքում տեղադրված հատուկ տարաներ՝ Մարտկոցների մասին դիրեկտիվում սահմանված ԵՄ նորմերի համաձայն մարտկոցներ հավաքելու նպատակով:²² (Թափոնային մարտկոցների կառավարման լավագույն փորձերի մասին ավելին իմանալու նպատակով տե՛ս *Հավելված Ա. Կենցաղային մարտկոցների թափոններ*):

Պատճառներից մեկը, թե ինչու Հայաստանում նման համակարգեր չեն գործում, այն է, որ թափոնային մարտկոցները դասակարգվում են որպես 4-րդ դասի վտանգավորության թափոններ, որոնց փոխադրումն ու պահպանումը, ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի (ՂՕ-193), ենթակա է հատուկ թույլտվության: Բացի այդ, կենցաղային մարտկոցների պահպանման համար գանձվում է նաև բնապահպանական հարկ:

²² ԵՄ դիրեկտիվներ Directive 2006/66/EC of the European Parliament and of the Council of 6 September 2006 on batteries and accumulators and waste batteries and accumulators and repealing Directive 91/157/EEC (Text with EEA relevance)
Հասանելի են հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A32006L0066>

2.4.11 Զսուքային կյուբերի, յուղերի և հատուկ հեղուկների տեխնիկական կանոնակարգ

ՀՀ կառավարության՝ 2015 թ.-ի № 546 որոշումը քսուքային կյուբերի, յուղերի և հատուկ հեղուկների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին:²³

Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են քսուքային կյուբերի, յուղերի և հատուկ հեղուկների (այսուհետ՝ արտադրանք), բանեցված քսուքային կյուբերի, յուղերի և հատուկ հեղուկների, ինչպես նաև բանեցված արտադրանքի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի նկատմամբ պահանջներ՝ մարդու կյանքի և առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանական ու բուսական աշխարհի կյանքի և (կամ) առողջության պահպանության, սպառողներին թյուրիմացության մեջ զգող գործողությունների կանխարգելման, ինչպես նաև ռեսուրսների խնայողության նպատակներով:

Թույլատրվում է արտադրանքի ներմուծում, շուկայահանում և շրջանառություն, եթե հավաստված է դրա համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

Սույն տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակով քսուքային կյուբերը, յուղերը և հատուկ հեղուկները նույնականացվում են փաստաթղթերի համաձայն, որոնք և կարող են լինել տեխնիկական փաստաթղթերը, և (կամ) որակի անձնագրերը, և (կամ) փորձարկումների արձանագրությունները, և (կամ) մատակարարման պայմանագրերը, և (կամ) մասնագրերը, և (կամ) պիտակները, և (կամ) համառոտ բնութագրերը և արտադրանքը բնութագրող այլ փաստաթղթեր:

Այս կարգավորումն արգելում է թափոնային յուղերի և քսուքային կյուբերի հետ կատարել հետևյալ գործողությունները.

- i. Լցնել ջրամբարների մեջ, հողի վրա կամ կոյուղի
- ii. Փոխադրումն ու տեղադրումն արտադրական և կենցաղային թափոնների համար նախատեսված աղբավայրերում
- iii. Խառնումը բենզինի, գազի, յուղի և դիզելային վառելիքների հետ՝ Էներգիայի աղբյուր հանդիսացող վառելիքի ստացման նպատակով (բացառությամբ լիազոր պետական մարմինների կողմից նման թույլտվություն ունեցող կազմակերպությունների)
- iv. Խառնում հալոգենային օրգանական միացություններ պարունակող արտադրանքների հետ
- v. Օգտագործումը շինարարության մեջ որպես ոչ կաչուն հեղուկներ

2.4.12 Փաթեթավորման թափոններին վերաբերող իրավական ակտեր

ՀՀ կառավարության 2006 թվականի 28 սեպտեմբերին N 1544-Ն որոշումով հաստատվել է փաթեթվածքից և փաթեթավորումից գոյացած թափոնների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը.²⁴

- 1. ...
- 2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են այն միջոցները, որոնք ուղղված են փաթեթավորման թափոնների գոյացման կանխմանը, թափոնների կրկնակի օգտագործման ու վերաշրջանառության հնարավորությանը, բազմաշրջանառու փաթեթվածքի օգտագործմանը, թափոնների վերամշակման նոր եղանակների կիրառմանը և թափոնների վերջնական օգտահանման ծավալների կրճատմանը:
- 3. Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում բժշկական սարքերի սպառողական փաթեթվածքների, դեղագործական ապրանքների, պեստիցիդների և ագրոքիմիական կյուբերի, քիմիական կյուբերի (ռեակտիվների), ճառագայթաակտիվ կյուբեր և

²³ Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97859>

²⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28433>

տարրեր պարունակող արտադրանքի, բերանի խոռոչի հիգիենայի միջոցների փաթեթվածքների վրա:

2.4.13 Հիմնական դերակատարների իրավունքներն ու պարտականությունները

Աղբահանության ծառայություն մատուցողներ

Աղբահանության ծառայություն մատուցողների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են պայմանագրային սկզբունքներով՝ համաձայն հանրապետությունում գործող նորմերի: Թեպետ սահմանված նորմերը պետք է վերանայվեն և գնահատվեն դրանց կայունության տեսանկյունից, կա նաև անհրաժեշտություն, որպեսզի տեղական իշխանությունները բարելավեն կարողությունները կայուն հանրային գնումների, պայմանագրերի կառավարման և կայուն բնապահպանական կառավարման ոլորտում:

Աղբահանության վճար վճարողներ

Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքներն են՝

1. ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից կատարվող վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը կատարված հաշվարկների հետ.
2. ծանոթանալ իրենց կողմից կատարվող վճարի չափին և հաշվարկներին, ինչպես նաև տեղեկություններ ստանալ իրենց կատարած վճարումների մասին.
3. օրենքով սահմանված կարգով բողոքարկել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման իրեն վերաբերող գործողությունները.
4. համայնքից, օպերատորից կամ կազմակերպությունից պահանջել աղբահանությունը կազմակերպողի պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու հետևանքով սեփական միջոցների հաշվին կատարած աղբահանության ծախսերի հատուցում:

Աղբահանության վճար վճարողների պարտականություններն են՝

1. օրենքով սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը.
2. խոշոր եզրաչափի աղբի գոյացման դեպքում պատվիրել նշված աղբի՝ համապատասխան կոնտեյներով փոխադրումը.
3. աղբը պահել և թափել դրա համար սահմանված կամ նախատեսված վայրերում:

2.4.14 Թափոնների սահմանումը և տեսակները

Ըստ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանում կան արտադրության²⁵ (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ՝ արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: Այս սահմանումը տարբերվում է Թափոնների մասին ԵՄ շրջանակային դիրեկտիվի²⁶ 3-րդ հոդվածի սահմանումից, որում *թափոն* է համարվում ցանկացած նյութ կամ առարկա, որը տնօրինողը նետում է, մտադիր է կամ պարտավոր է նետել:

²⁵ Սույն գեկույցում օգտագործվում են թե՛ արտադրական թափոն, թե՛ արդյունաբերական թափոն հասկացությունները: Երկու տարբերակներն էլ լայնորեն օգտագործվում են ՀՀ օրենսդրության տարբեր թարգմանություններում:

²⁶ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ և ԽՈՐՀՐԴԻ՝ 2008 թ.-ի նոյեմբերի 19-ի 2008/98/EC դիրեկտիվը թափոնների, ինչպես նաև որոշ դիրեկտիվների անվավեր ճանաչման մասին հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32008L0098>

«Թափոնների մասին» նույն օրենքն անդրադառնում է *Կոշտ կենցաղային թափոններին*²⁷ նկարագրելով դրանք որպես սպառման թափոնների տեսակներ, որոնք առաջանում են բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից սպառման ընթացքում, ինչպես նաև ապրանքներ, որոնք անձնական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից օգտագործման ընթացքում կորցրել են իրենց սպառողական հատկությունները: Կոշտ կենցաղային թափոնների խմբին են պատկանում նաև այն թափոնները, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում և կազմով նման են բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից սպառման ընթացքում առաջացող թափոններին: Կոշտ կենցաղային թափոնների այս կատեգորիան միանգամայն համադրելի է ԵՄ թափոնների ցանկում²⁷ նշված *մուկիցիպալ կոշտ թափոնների* և ԵՄ տարածքում գործող ազգային շատ այլ օրենսդրություններում առկա նկարագրության հետ: Ոչ կենցաղային միջավայրերում գոյացած թափոնների դեպքում *կենցաղային* տերմինի կիրառումը կարող են շփոթել հատկապես մեկ այլ՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում նշվող *կենցաղային աղբ* սահմանման հետ (ՀՕ-237-Ն, 08.23.2011):

Ըստ վերջինի՝ *աղբը* բաղկացած է կենցաղային աղբից, ոչ կենցաղային աղբից և խոշոր եզրաչափերի աղբից.

1. կենցաղային աղբ. մարդու կողմից սպառման և/կամ կենսագործունեության հետևանքով առաջացող թափոնները,
2. ոչ կենցաղային աղբ՝
 - արտադրական աղբ՝ արտադրության և արտադրական և (կամ) սպառման թափոններ, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում,
 - շինարարական աղբ՝ քաղաքաշինական գործունեության ընթացքում առաջացող, շինարարական վերանորոգման, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացող թափոններ,
3. խոշոր եզրաչափերի աղբ՝ մարդու կենսագործունեության հետևանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող արտադրության և սպառման թափոններ, որոնք, հաշվի առնելով դրանց ֆիզիկական հատկությունները (ներառյալ չափը, ծավալը կամ քաշը), անհնար է հավաքել, պահել կամ փոխադրել կենցաղային աղբի համար նախատեսված՝ սովորաբար կիրառվող տեխնիկական միջոցներով:

Այս դասակարգման մեջ կենցաղային աղբը և ոչ կենցաղային աղբը անհամատեղելի են, իսկ խոշոր եզրաչափերի աղբը համընկնում է նշված երկուսի հետ, ինչը նույնպես շփոթ է առաջացնում:

Բնապահպանության նախարարի N 342-Ն հրամանը (հոկտեմբեր, 2006 թ.) սահմանում է Հայաստանում գոյացող արտադրական (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը, իսկ նույն տարում ստորագրված N 430-Ն հրամանը սահմանում է վտանգավոր թափոնների ցանկն ըստ վտանգավորության աստիճանի: Ինչպես արդեն նշվել է, վտանգավորության աստիճանն է Հայաստանում թափոնների դասակարգման հիմքը: Թափոնները դասակարգվում են ըստ 5 կատեգորիաների, որից առաջին 4-ը համարվում են վտանգավոր թափոններ, իսկ 5-րդ կատեգորիայի թափոնը համարվում է ոչ վտանգավոր թափոն:

²⁷ Դիրեկտիվ 2008/98/EC-ի հոդված 7-ում նշվող թափոնների ցանկը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/eli/dec/2000/532/2015-06-01>

Թերութիւններ

Նշված շրջանակի օրենքներում, այդ թվում՝ Թափոնների և որոշ դիրեկտիվներ ուժը կորցրած ճանաչելու մասին 2008/98/EC դիրեկտիվում, առկա չեն մի շարք կարևոր սահմանումներ: Այդ տերմիններն ու նրանց սահմանումները հետևյալն են.

- թափոնների հիերարխիա (քայլերի առաջնահերթություն թափոնների կանխարգելման և կառավարման գործում. կանխարգելում, նախապատրաստում վերօգտագործման, վերամշակման և այլ օգտահանման էներգիայի ստացման համար և վերջում՝ հեռացում),
- կենսաբանական թափոն (պարտեզների և այգիների՝ կենսաքայքայման ենթակա թափոն, տնային տնտեսությունների, ռեստորանների, սննդի ծառայություն մատուցողների և առևտրային օբյեկտների սննդային և խոհանոցային թափոններ և համանման թափոններ սննդի վերամշակման օբյեկտներից),
- թափոն տնօրինող (թափոնը գոյացնողը կամ այն ֆիզիկական/իրավաբանական անձը, որը տնօրինում է թափոնը),
- վերավաճառող (թափոնը հետագայում վաճառելու նպատակով գնող, ներառյալ այն վերավաճառողները, որոնք չեն տնօրինում թափոնը),
- միջնորդ (թափոնների օգտահանումը կամ հեռացումը այլոց համար իրականացնող միջնորդները, ներառյալ նրանք, ովքեր չեն տնօրինում թափոնը),
- տարանջատված հավաքում (թափոնի հավաքում, որի ընթացքում թափոնային հոսքերն ըստ տեսակի և բնույթի պահվում են առանձին՝ կոնկրետ մշակման աշխատանքի նպաստելու նպատակով),
- վերօգտագործում (ցանկացած գործողություն, որի արդյունքում արտադրանքը կամ դրա բաղադրիչ մասերը, որոնք թափոն չեն, նորից օգտագործվում են իրենց սկզբնական նպատակով),
- վերօգտագործման նախապատրաստում (ստուգման, մաքրման կամ նորոգման օգտահանման գործողություններ, որոնք արդյունքում թափոն դարձած արտադրանքը կամ դրա բաղադրիչ մասերը պատրաստվում են վերօգտագործման՝ առանց որևէ նախնական մշակում իրականացնելու):

2.4.15 ԵՏՄ անդամակցությունից բխող փաստաթղթեր

Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2015 թ.-ին:²⁸

Այս համաձայնագիրը սահմանում է Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների, այդ թվում՝ մեքենաների տեղափոխմանն առնչվող մաքսային գործառնությունների ընթացակարգերը:

Մաքսային միության տարածքից ներկրման և դեպի Մաքսային միության տարածք արտահանման համար արգելված առարկաների թվում նշված է նաև հետևյալը.

- վտանգավոր թափոններ, որոնք արգելված է ներկրել, և/կամ որոնց ներկրման և/կամ արտահանման ժամանակ կիրառվում են տեղափոխման սահմանափակումներ (1.3.).
- սև և գունավոր մետաղների թափոնների և ջարդոնների ներկրման և/կամ արտահանման ժամանակ կիրառվում են քանակական սահմանափակումներ (2.1.).

²⁸ Համաձայնագիրը հայերեն հասանելի է հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95220>

- թանկարժեք մետաղների հումք, թանկարժեք մետաղների ջարդոններ և թափոններ, թանկարժեք քարերի հանածոներ և հումքային նյութեր, ինչպես նաև թանկարժեք մետաղներ պարունակող հանքաքար, որոնք արտահանումը արգելվում է Մաքսային միության կողմից (2.2.):

2017 թ.-ի հունիսին ուժի մետ է մտել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագիրը:²⁹

Սույն համաձայնագիրը համահունչ է Բազելյան կոնվենցիայով նախատեսված միջազգային պարտավորությունների սկզբունքներին, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց կամ որպես անհատ ձեռներեց գրանցված ֆիզիկական անձանց, որոնք իրականացնում են թափոնների անդրսահմանային տեղափոխություն անդամ պետությունների միջև առևտուր իրականացնելու համատեքստում:

Ըստ համաձայնագրի՝ թափոնների անդրսահմանային տեղափոխում կարող է իրականացվել՝ հիմնվելով եզրակացության (գրավոր թույլտվություն) վրա, որը տրամադրվում է լիազոր մարմնի կողմից, և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատված ձևանմուշի վրա: Եզրակացությունը (գրավոր թույլտվություն) դիմողին տրամադրվում է անդամ երկրների օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամանակահատվածում:

2.4.16 Զաղաքականությունների և օրենսդրության առանցքային թերություններ

Երկրի՝ ոլորտին վերաբերող քաղաքականության և օրենսդրության մեջ թափոնների հիերարխիան չի խրախուսվում

Ընդհանուր առմամբ ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրական շրջանակում և քաղաքականություններում բացակայում են թափոնների հիերարխիայի և այլ կարևոր գործոնների սահմանումները: Գնումներին, ինչպես նաև լիցենզավորմանը վերաբերող օրենսդրությունը և կարգավորումները չեն պարունակում կանաչ գնումների և թափոնների հիերարխիայի մոտեցման մասին դրույթներ:

Կա թափոնների հիերարխիայի մոտեցումը և թափոնների կանխարգելումը թե՛ ազգային, թե՛ տեղական մակարդակում խթանող ազգային քաղաքականությունների պակաս: Չկան թափոնների հիերարխիայի պահանջներին համահունչ նախաձեռնությունները խթանող արդյունավետ տնտեսական մեխանիզմներ (Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս 3.1 Օրենսդրական և ռազմավարական բացեր):

Թափոնների առանձնացումը ՀՀ օրենսդրությամբ չի խրախուսվում

Թեպետ «Թափոնների մասին» օրենքը համայնքի ղեկավարի լիազորությունների թվում սահմանում է, որ համայնքի ղեկավարն «աջակցում է համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանը», որևէ կարգավորման մեջ առկա չեն հստակ պահանջներ կամ արդյունավետ նյութական օգտահանման նպատակով թափոնների տեսակավորված հավաքումը որպես նախապայման դիտարկելու խրախուսում: Չկա նաև պահանջ՝ մշակելու թափոնների կառավարման պլաններ, որոնք կարող էին ներառել աղբյուրի մոտ թափոնների տեսակավորում իրականացնելու պարտավորություն: Սա այն դեպքում, երբ աղբավայրերում տեղադրվող կենսաքայքայման ենթակա կենցաղային թափոնների քանակը նվազեցնելու մասին ազգային ռազմավարության մշակումը ՀՀԳՀ պահանջներից է:

Թափոնների կառավարման տեղական (համայնքային կամ մարզային) ռազմավարությունների պակաս

Կա ընդամենը մի քանի դեպք, երբ համայնքը մշակել է կոշտ թափոնների կառավարման ռազմավարություն կամ պլան: Սրանք այն դեպքերն են, երբ որևէ միջազգային կամ տեղական կազմակերպություն իրականացնում է ծրագիր, որը պահանջում է ունենալ համանման պլան: Սովորաբար թափոնների կառավարման հարցը ներառված է համայնքների տարեկան ծրագրերում և

²⁹ Համաձայնագիրը հայերեն հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124799>

գործողությունների պլաններում, սակայն դրանք միայն անդրադառնում են թափոնների հավաքման և հեռացման խնդիրներին՝ առանց ուշադրություն դարձնելու թափոնների կանխարգելման, տեսակավորման և օգտահանման հարցերին: Թափոնների կառավարման պլանների մշակումը, համաձայն հինգբայանոց թափոնների հիերարխիայի սկզբունքի և թափոնների կանխարգելման ծրագրերի, ՀԸԳՀ պահանջներից է:

Թափոնների առանձին հոսքերի վերաբերյալ կարգավորումների բացակայություն

ՀՀ օրենսդրությունը պարունակում է կարգավորումներ թափոնային յուղերի, քսանյութերի, շինարարական և քանդման թափոնների, բժշկական թափոնների և վտանգավոր քիմիական նյութերի վերաբերյալ: 2019 թ. -ի ծրագրում ՀՀ կառավարությունը հանձնառություն է ստանձնում մշակելու թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումներ՝ միտված արտադրական, գյուղատնտեսական, բժշկական և Շ/Ք թափոնների հոսքերի կանխարգելմանն ու վերամշակմանը: Սակայն չկան առանձին կարգավորումներ կամ գոնե արտահայտված ցանկություն՝ մշակելու հայեցակարգային մոտեցումներ կոշտ թափոնների այնպիսի հոսքերի համար, ինչպիսիք են էլեկտրական թափոնները, կյանքի ավարտ ունեցող մեքենաները, թափոնային կուտակիչները, կենդանական թափոնները և դրանցից ստացված արտադրանքը, կենսաքայքայման ենթակա թափոնները:

Չկան աղբավայրերի մասին պատշաճ տեխնիկական ուղեցույցներ

Թափոնների Էկոլոգիապես մաքուր կառավարման համակարգի նախապայմաններից մեկը աղբավայրերի պատշաճ և վերահսկվող նախագծումը, շահագործումը, պահպանումը, փակումը և փակմանը հաջորդող խնամքի իրականացումն է, որոնց համար անհրաժեշտ են համապատասխան կարգավորումներով սահմանվող որակյալ տեխնիկական ուղեցույցներ և նորմեր: Հայաստանում կա մոտ 300 աղբավայր, որոնց մեծ մասը ենթակա է փակման, ինչի իրականացումը պահանջում է տեխնիկական ուղեցույց. այն, սակայն, բացակայում է: Բացի այդ, ՀԸԳՀ պահանջների մի մասը նաև վերաբերում է աղբավայրերի շահագործման, փակման և փակմանը հաջորդող խնամքի գործընթացներում վերահսկման և մշտադիտարկման ընթացակարգերի սահմանմանը, ինչպես նաև գործող աղբավայրերի բարելավման պլանների ստեղծմանը:

Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրության ընդհանուր տեխնիկական ուղեցույցի բացակայություն

Գոյացած թափոնների քանակի և բաղադրության մասին տվյալների հասանելիությունը կարևոր է երկրում թափոնների հաջողված կառավարում իրականացնելու համար: Այս տվյալների հասանելիությունը, սակայն, նշանակում է դրանց տրամադրման պարբերականություն, հետևողականություն և ճշգրտություն: Սկսած 2000 թ. -ից՝ Հայաստանում իրականացված ութ ծրագրեր ներառել են թափոնների քանակի և բաղադրության վերլուծության բաղադրիչներ՝ որպես ծրագրի մաս կամ որպես տվյալ ծրագրի հիմնական նպատակ: Բոլոր վերլուծություններն իրականացվել են՝ օգտագործելով տարբեր մեթոդաբանություններ, իրականացվել են երկրի տարբեր վայրերում և տարբեր եղանակների ընթացքում: Այսպիսով, արդյունքները համադրելի չեն միմյանց հետ:

Վտանգավոր թափոնների ԷՀԿ օբյեկտների մասին օրենքների և կարգավորումների բացակայություն

Թեպետ վտանգավոր թափոնների գործածությանը վերաբերող նորմերն ու կարգավորումները համեմատաբար լավ են մշակված, ողջ երկրում դեռևս չկա գեթ մեկ ԷՀԿ (Էկոլոգիապես մաքուր կառավարում) օբյեկտ վտանգավոր թափոնների համար (օր.՝ սնդիկ պարունակող լամպեր և ջերմաչափեր, մարտկոցներ և այլն): Չկա որևէ հրաման կամ իրավական ակտ, որը սահմանում է նման օբյեկտի նախագիծը կամ շինարարությունը: 2019 թ. -ի սեպտեմբեր ամսվա դրությամբ չի եղել որևէ հրաման կամ իրավական ակտ, որը կսահմաներ առաջին դասի վտանգավորության թափոնների գոնե պահպանում իրականացնող ԷՀԿ օբյեկտի նախագծման ու շինարարության պահանջները:

Թափոնը գոյացնողի սահմանափակ պատասխանատվություն

Ընդհանուր առմամբ, համաձայն ՀՀ օրենսդրության, թափոնը գոյացնողը պատասխանատու չէ թափոնի համար այն թափոնների գործածությամբ զբաղվող մեկ այլ ընկերության հանձնելուց հետո: Այսպիսով, եթե հավաքված թափոնը ոչ պատշաճ կերպով է գործածվում (ապօրինի նետում կամ հեռացման այլ եղանակ) այն հավաքող ընկերության կողմից, ապա թափոնը գոյացնողը որևէ պատասխանատվություն չի կրում: Պատասխանատվություն կրում է միայն թափոնը գործածող ընկերությունը: Արդյունքում որևէ պատասխանատվություն չկրելով թափոնի վերջնական վնասագերծման համար՝ այն գոյացնողները կարող են ընտրել թափոններ հեռացնող ընկերությունների՝ հիմնվելով ոչ թե դրանց հեղինակության կամ այլ տվյալների, այլ պարզապես ծառայության գնի վրա: Կարգավորումները չեն մանրամասնում, թե որ դեպքերում է թափոնի սկզբնական արտադրողը պատասխանատու այն վնասագերծելու ողջ շղթայի համար, կամ որ դեպքերում կարող են թափոնը գոյացնողը և թափոնը տնօրինողը կիսել պատասխանատվությունը կամ այն փոխանցել թափոնների կառավարման շղթայում գործող դերակատարներին: Այս հարցը թափոնների կառավարման շղթայի յուրաքանչյուր փուլում սերտորեն առնչվում է թափոնի սեփականատիրության հարցին, ինչը բավական անորոշ է ՀՀ օրենսդրությունում:

Այս բացը լրացնելու համար պահանջվում է անդրադառնալ ՀԸԳՀ պահանջներին, ըստ որոնց՝ պետք է սահմանել շրջակա միջավայրին պատճառվող վնասի կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված կանոններ և ընթացակարգեր՝ հիմնված «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա, ինչպես նաև խիստ պատասխանատվություն սահմանել վտանգավոր աշխատանքային գործունեության համար:

Բացահայտված բացերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ քննարկվում են *օրենսդրական և նազմավարական բացերին անդրադարձող 3.1* կետում, իսկ համապատասխան քաղաքականությանը վերաբերող առաջարկությունները ներկայացվում են 4.1 կետում (*Առաջարկություններ օրենսդրության և նազմավարությունների վերաբերյալ*):



2.5 Ինստիտուցիոնալ շրջանակ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.5.1 ՀՀ կառավարություն
- 2.5.2 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- 2.5.3 ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
- 2.5.4 ՀՀ առողջապահության նախարարություն
- 2.5.5 ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
- 2.5.6 ՀՀ քաղաքաշինության կոմիտե
- 2.5.7 ՀՀ տարածքային կառավարման մարմիններ
- 2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ
- 2.5.9 ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
- 2.5.10 Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (ԱԱՏՄ)
- 2.5.11 «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
- 2.5.12 «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
- 2.5.13 Մասնավոր լաբորատորիաներ
- 2.5.14 ՀՀ վիճակագրական կոմիտե
- 2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ

Այս բաժնում քննարկվում է Հայաստանի թափոնների կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, ներկայացվում են ոլորտում ներգրավված հիմնական դերակատարներն իրենց լիազորություններով և գործառույթներով, այդ թվում՝ պետական կառավարման լիազոր մարմինները, մարզային իշխանությունները և տեղական ինքնակառավարման մարմինները: Ոլորտի քաղաքականության մշակումը ղեկավարվում է ՀՀ կառավարության կողմից, իսկ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունները, ինչպես նաև մարզային իշխանությունները մասնակցում են թափոններին առնչվող քաղաքականության մշակմանը: Վերոնշյալ երեք նախարարությունները մշակում են ազգային ծրագրեր և պլաններ և ապահովում դրանց իրականացումը: Մարզային իշխանությունները և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) իրականացնում են այդ քաղաքականությունները և ազգային ծրագրերն ու պլանները մարզային և տեղական մակարդակում: ՏԻՄ-երը պատասխանատու են համայնքներում մունիցիպալ թափոնների հավաքման, հեռացման և սանիտարական մաքրման ծառայությունների ապահովման համար: Վտանգավոր նյութերին առնչվող արտակարգ պատահարների դեպքում (քիմիական նյութերի, մեծ քանակությամբ թունավոր և վարակիչ նյութերի արտահոսք) վտանգավոր թափոնների հետ աշխատանքների ապահովումն ու պատշաճ վերահսկումն իրականացվում է արտակարգ իրավիճակների նախարարության կողմից: Մյուս բոլոր դեպքերում վտանգավոր թափոնների (այդ թվում՝ բժշկական, Շ/Բ, արտադրական, կապարային մարտկոցների, սնդիկի, թռչնաղբի և այլ թափոններ) գործածությունն իրականացվում է լիցենզավորված ընկերությունների կողմից: Պատկեր 6-ը ներկայացնում է այս պահին երկրում առկա թափոնային կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը:

Հայաստանում թափոնների կառավարման ինստիտուցիոնալ կառուցակարգ



Պատկեր 8 - Թափոնների կառավարման ներկա ինստիտուցիոնալ շրջանակը Հայաստանում Աղբյուր՝ Սույն զեկույցի հեղինակների կողմից տարբեր աղբյուրներից հավաքված տվյալներ

2.5.1 ՀՀ կառավարություն

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-159) սահմանված թափոնների գործածության ոլորտում ՀՀ կառավարության իրավասություններն են՝

- ա) թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը.
- բ) թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության համակարգումը.
- գ) սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման, թափոնների հավաքման և օգտահանման խթանման տնտեսական մեխանիզմների ապահովումը.
- դ) թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման կարգի սահմանումը.
- ե) վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգի սահմանումը.
- զ) վտանգավոր և արգելված թափոնների ցանկերի սահմանումը.
- է) թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման կարգի սահմանումը.
- ը) վնասազերծված և օգտահանման ոչ ենթակա թափոնների տեղադրման օբյեկտների ստեղծման ապահովումը.
- թ) թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը.

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-237-Ն) սահմանված աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում ՀՀ կառավարության իրավասություններն են՝

1. աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացման համակարգումը.
2. աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության համակարգումը.
3. աղբահանության ժամանակակից տեխնոլոգիաների, թափոնների հավաքման, տեսակավորման, տեղափոխման, պահպանման, անվտանգ հեռացման մեխանիզմների ներդրումը.

ՀՀ Վարչապետի 2018 թվականի 1310-Ա հրամանով ստեղծվել է հանրապետական մակարդակով «ՀՀ-ում կոշտ կենցաղային թափոնների, աղբահանման և աղբի մշակման աշխատանքները համակարգող» աշխատանքային խումբ, որի 22 անդամները ներկայացնում են տարբեր գերատեսչություններ:

2.5.2 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-237-Ն) սահմանված աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

1. մասնակցությունը աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում պետական քաղաքականության ձևավորմանը.
2. աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում տարածքային նշանակության նպատակային ծրագրերի կազմումը.
3. աղբահանության ծառայությունների բարելավմանն ուղղված ծրագրերի մշակումը և համակարգումը.
4. աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը.
5. չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացման (լիկվիդացման) աշխատանքների համակարգումը.

6. կոշտ կենցաղային թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության մասնակցությունը:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրությամբ (727-L) թափոնների գործածության ոլորտում սահմանված են հետևյալ գործառույթները՝

1. միջազգային նորմերին համապատասխան աղբահանության համակարգի ներդրման ապահովումը.
2. ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման արդյունավետ, համակարգված և միասնական քաղաքականության մշակումը.
3. ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման արդյունավետ սխեմաների, աղբավայրերի շահագործման և աղբահանության պայմանագրային դաշտի բարելավման առաջարկների մշակում.
4. կոշտ կենցաղային թափոնների վերամշակման համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացումը.
5. ՀՀ բնակավայրերում կլիմայի փոփոխության ազդեցությունների նվազեցմանն ու հարմարվողականությանն ուղղված աշխատանքների իրականացումը:

2.5.3 ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-159) սահմանված թափոնների գործածության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

- ա) մասնակցությունը թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության ձևավորմանը.
- բ) թափոնների գործածության ոլորտում նպատակային ծրագրերի կազմումը.
- գ) թափոնների պետական հաշվառման իրականացումը.
- դ) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար թափոնների տեղադրման սահմանաքանակների հաստատումը.
- ե) վտանգավոր և արգելված թափոնների ցանկերի կազմումը.
- զ) ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի սահմանումը.

Ե) վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրումների թույլտվությունների տրամադրման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

ը) թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի վերաբերյալ համաձայնություն տալը.

թ) թափոններ առաջացնողների կազմած՝ թափոնների անձնագրերի համաձայնեցումը.

ժ) թափոնների գոյացման ծավալների վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումը.

ժա) օրենքով սահմանված կարգով թափոնների գոյացման, մշակման, օգտահանման, տեղադրման և հեռացման ժամանակ պոլիգոնների, համալիրների, շինությունների և այլ հատուկ հատկացված վայրերի կամ օբյեկտների շինարարության, վերակառուցման և շահագործման նախագծային փաստաթղթերի ու համալիր ծրագրերի պետական բնապահպանական փորձաքննության իրականացումը.

ժբ) թափոնների պետական կադաստրի վարումը.

ժգ) սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումն այլ գերատեսչությունների հետ.

ժդ) թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների կազմման, վարման, ինչպես նաև մոնիտորինգի (մշտադիտարկում) իրականացումը.

ժե) թափոնների գործածության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը և իր իրավասության սահմաններում գերատեսչական իրավական ակտերի ընդունումը.

ժզ) թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության և թափոնների անդրսահմանային փոխադրման հարցերով միջազգային պայմանագրերի կնքումը.

ԺԵ) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա իրավասու պետությունների հետ թափոնների գործածության ոլորտում տեղեկությունների փոխանակումը.

ԺԵ.1) թափոններ գոյացնող, վերամշակող և օգտահանող օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և ռեեստրի վարման գրքի ձևերի հաստատումը.

ԺԵ.2) թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկի և ռեեստրի վարման գրքի ձևերի հաստատումը.

ԺԵ.3) թափոնների անձնագրի օրինակելի ձևի հաստատումը.

ԺԵ.4) թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաշվարկի օրինակելի ձևի հաստատումը.

ԺԵ.5) Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկի հաստատումը.

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կանոնադրությամբ թափոնների գործածության ոլորտում սահմանված են հետևյալ գործառույթները՝

1. շրջակա միջավայրի վիճակի, ինչպես նաև թափոնների հեռացման վայրերի մշտադիտարկման իրականացումը.
2. քիմիական նյութերի, թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումն ու իրականացումը.
3. ՀՀ տարածքում արտադրվող, օգտագործվող քիմիական նյութերի և առաջացող արտադրական (այդ թվում՝ ընդերքօգտագործման) ու սպառման թափոնների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգումը.
4. թափոնների գոյացման և դրանց վնասակար ազդեցության նվազեցման քաղաքականության մշակումն ու իրականացումը, շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից թափոնների շահավետ օգտահանման, օգտագործման աստիճանակարգության քաղաքականության մշակումը և իրականացումը.
5. թափոնների պետական հաշվառումը, թափոնների անձնագրերի համաձայնեցումը, թափոնների պետական կադաստրի, գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծումը և վարումը, թափոնների տեղադրման սահմանաքանակների հաստատումը:

2.5.4 ՀՀ առողջապահության նախարարություն

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

- ա) թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակումը և թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական և հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակումը և դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
- բ) թափոնների բացասական ներգործությունից մարդու առողջության պաշտպանության միջոցառումների գերակա ուղղությունների մշակումը և դրանք Հայաստանի Հանրապետության կառավարություն և ներկայացնելը.
- գ) թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի սահմանման վերաբերյալ համաձայնություն տալը.

դ) թափոններից ստացվող արտադրանքի նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջների սահմանումը և հիգիենիկ եզրակացության տրամադրումը.

ե) ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի կազմմանը մասնակցելը.

ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրությամբ (728-L) թափոնների գործածության ոլորտում սահմանված են հետևյալ գործառնությունները՝

1. բնակչության հանրային իրազեկության և առողջապահական կրթության ծրագրերի մշակումը և իրականացման նկատմամբ դիտարկումը.
2. առողջապահական համակարգի և բնակչության առողջության վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունն ու գնահատումը:

2.5.5 ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը չի սահմանում թափոնների հետ ուղղակիորեն առնչվող որևէ իրավասություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա վերաբերում է արտակարգ իրավիճակներում իրենց պարտականություններին և պատասխանատվության ոլորտին: Գործնականում նախարարությունը բավականին լայն խորհրդատվություն է տրամադրում այնպիսի դեպքերում, ինչպիսիք են կոտրված սնդիկային ջերմաչափերը, ֆոսֆոր պարունակող լուսային սարքերի թափոնները և այլ համանման դեպքեր:

2.5.6 ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կանոնադրությամբ սահմանված են հետևյալ գործառնությունները.

1. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացումը, քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը
2. կառուցապատման զարգացման պայմանների ապահովումը.
3. քաղաքների Էկոլոգիական վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցմանը նպատակաուղղված, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացման տարածական զարգացման ծրագրերի մշակումը:

2.5.7 ՀՀ տարածքային կառավարման մարմիններ

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-159) թափոնների գործածության ոլորտում տարածքային կառավարման մարմինների սահմանված իրավասություններն են՝

- ա) մասնակցություն թափոնների գործածության ոլորտի պետական քաղաքականության ձևավորմանը.
 - բ) մասնակցություն թափոնների գործածության ոլորտի պետական ծրագրերի կազմմանը.
 - գ) թափոնների գործածության ոլորտում իրենց վարչական տարածքի սահմաններում տարածքային նշանակության ծրագրերի կազմումը և դրանց իրականացման համակարգումը.
 - դ) իրենց վարչական սահմաններում թափոնների տեղադրման վայրերի լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված թույլտվություններ տալը.
 - ե) իրենց վարչական տարածքի սահմաններում սանիտարական մաքրման սխեմաների կազմումը և աղբահանության նկատմամբ հսկողության իրականացումը.
 - զ) թափոնների գոյացման, մշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի գրանցամատյանների կազմումը և վարումը.
- իրենց վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը).

թ) իրենց վարչական տարածքի սահմաններում ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության ներգրավման կազմակերպումը.

2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՀ Սահմանադրության համաձայն ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-159) սահմանված թափոնների գործածության ոլորտում համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում`

- ա) իրականացնում է հսկողություն աղբահանման նկատմամբ.
- բ) կազմում է տարածքների սանիտարական մաքրման սխեմաները.
- գ) իրականացնում է չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը).
- դ) կազմակերպում է ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցությունը.
- ե) աջակցում է համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-337) 43-րդ հոդվածի համաձայն` աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպումը համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունն է: Համայնքի ղեկավարի և ավագանու` աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառի լիազորությունները նախատեսված են նաև Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքով:

Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը:

Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում` աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին` պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Ընդ որում, աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը («Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենք):

ՀՀ Կառավարության «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» որոշման (1161-Ն) № 1161-N of October 4, 2007 համաձայն բազմաբնակարանային շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար պարտադիր իրականացման են ենթակա հետևյալ միջոցառումները և աշխատանքները`

1. սպառման թափոնների հեռացում` առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +50 °C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում` ամեն օր...:
2. ...

Պետք է արձանագրել, որ ստեղծված իրավիճակում համայնքներին ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունը ստեղծում է ճիսկեր, որ որոշ համայնքներ անբարեխղճորեն են իրականացնում իրենց լիազորություններն աղբահանության բնագավառում:

Հայաստանում աղբահանության իրականացումը, ինչպես նաև աղբահանության դրույքաչափի սահմանումը, աղբահանության իրականացման կարգի հաստատումը գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տիրույթում: Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են

համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով կամ արտաբյուջետային հաշվից: Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը կամ օպերատորները: Օպերատորին աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով:^{30,31}

Աղբահանության վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Աղբահանության դրույքաչափերը սահմանում է համայնքի ավագանին և ՀՀ օրենսդրությամբ առավելագույն դրույքաչափը սահմանված է ամսական 400 ՀՀ դրամ մեկ բնակչի համար կամ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ: Աղբահանության վարձավճարները հանրապետության համայնքներում կազմում են ամսական 50-ից 300 դրամ/մարդ: Աղբահանությունը ՀՀ համայնքներում իրականացնում են կա՛մ համայնքային ձեռնարկությունները, կա՛մ համայնքներում գործող մասնավոր հատվածը: Հայաստանի տարածքում ԿԿԹ հավաքումն իրականացվում է 501 համայնքներից միայն 446-ում: 55 գյուղական համայնքներ չեն չունեն թափոնների հավաքման ծառայություն: Վերջին 1.5 տարվա ընթացքում առաջընթաց է նկատվել համայնքային բյուջեներում աղբահանության վճարների և եկամտի միջոցների ներգրավման ուղղությամբ: Համայնքային բյուջեներում հստակ առանձնացվում են աղբահանության և սանիտարական մաքրման ծախսերը, ինչպես նաև աղբահանության վարձավճարների հավաքագրման եկամուտները: Այնուամենայնիվ աղբահանության համակարգը ներկայումս ինքնաբավ չէ, ուստի աղբահանությունը համայնքներում կատարվում է մասամբ ՀՀ պետական սուբսիդիաների հաշվին:

Տեղական ինքնակառավարման առանցքային թերություններ

Շատ համայնքներ խնդիրներ են ունենում կապված թափոնների գործածության և սանիտարական մաքրման հարցում պայմանագրերի կառավարման հետ: Մարտահրավերները նույնիսկ ավելի մեծ են ՀԱԳ պայմանագրի դեպքում, երբ նախագծման, կառուցման և շահագործման տեղերները պահանջում են գործունեության հիմնական ցուցանիշների սահմանում և մշտադիտարկում՝ շինարարության չափանիշների, ներդրման գումարների, մատուցված ծառայությունների, ինչպես նաև վթարների դեպքում պատշաճ միջոցառումներ ձեռնարկելու համար:

Մի քանի համայնքապետարանների հետ իրականացված հարցազրույցները ցույց տվեցին, որ աղբահանության օպերատորներն ունեն պատրաստվածության ցածր մակարդակ և չունեն տեխնիկական ուղեցույց թափոնների կառավարման համակարգերի և ենթակառուցվածքների (աղբարկղեր, աղբատար մեքենաներ, աղբավայրեր և այլն) կայուն շահագործում իրականացնելու համար, ինչը հանգեցնում է թափոնների կառավարման համակարգերի կյանքի ցածր տևողության և բարձր ծախսերի: Մասնավորապես, ոչ պատշաճ շահագործման պատճառով անվավոր աղբարկղերի կյանքի տևողությունը անիվների վնասման արդյունքում նվազում է՝ մինևույն ժամանակ բարձրացնելով անարդյունավետության մակարդակը և սպասարկման ժամանակը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-193) պահանջում է, որ վտանգավոր թափոններ վերամշակող, վնասագերծող, փոխադրող և տեղադրող ընկերություններն ունենան ՀՀ կառավարության կողմից տրամադրված թույլտվություն և անցնեն համապատասխան փորձաքննություն և հավատարմագրում:

³⁰ Կայուն հանրային գնումների համար տե՛ս <http://www.sustainable-procurement.org/sector-watch/?c=search>
³¹ Սկանդինավյան երկրներում շրջանաձև հանրային գնումների համար տե՛ս հետևյալ ուղեցույցը՝ <https://norden.diva-portal.org/smash/get/diva2:1092366/FULLTEXT01.pdf>

Համաձայն «Թափոնների մասին» օրենքի (ՀՕ-159) և ըստ վտանգավորության աստիճանի դասակարգվող թափոնների ցանկի (N 430-Ն)՝ չտեսակավորված կենցաղային թափոններն ունեն 4-րդ դասի վտանգավորություն, ինչը պետք է պահանջի, որ կենցաղային թափոն փոխադրող և աղբավայրում տեղադրող ցանկացած օպերատոր ունենա լիցենզիա իր գործունեության համար: Իրականում երկրում գործող աղբահանման ոչ մի ընկերության այդպիսի թույլտվություն չունի:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-110-Ն) նշում է, որ հետևյալ գործունեության տեսակները ենթակա են և կատեգորիայի գնահատման և փորձաքննության.

- Վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, վերամշակում, հեռացում, վնասագերծում, տեղադրում, թաղում
- 15,000 և ավելի բնակչության սպասարկման համար կամ օրական 10 տոննա և ավելի աղբ ընդունող աղբավայրերի կազմակերպում և/կամ կենցաղային թափոնների վերամշակում

Թեև բնակելի տարածքներից և կազմակերպությունների բնակելի հատվածներից գոյացող չտեսակավորված կենցաղային թափոնները համարվում են 4-րդ դասի վտանգավորության թափոններ, ոչ աղբահանող ընկերությունները, ոչ էլ համայնքներում աղբավայրերի օպերատորները չեն անցնում ՀՀ օրենքով պահանջվող ՇՄԱԳ կամ փորձաքննության գործընթաց:

2.5.9 ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությամբ թափոնների գործածության ոլորտում սահմանված են հետևյալ լիազորությունները.

- 1) մթնոլորտային օդի պահպանություն՝
 - ...գ. բնակավայրերում արտադրական, կենցաղային թափոնների և մթնոլորտը փոշիով, վնասակար գազերով ու զարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող թափոնների պահեստավորման կամ դրանց այրման սահմանափակումների, պահանջների պահպանում,
- 2) ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն՝
 - ...ե. ջրային ռեսուրսների վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբյուրների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրման պահանջների կատարում,
- 3) հողերի օգտագործում և պահպանություն՝
 - ա. հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից, դեգրադացիայից կամ հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանում ու բնապահպանական միջոցառումների կատարում,
- 4) կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն՝
 - ...ժա. անտառներն արտադրական և կենցաղային կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, քիմիական նյութերով և թափոններով աղտոտելը կանխարգելող սահմանափակումների պահպանում,
- 5) վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ՝
 - ա. վտանգավոր նյութերի ու թափոնների՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանման, Հայաստանի Հանրապետություն դրանց ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման համար սահմանված պահանջների պահպանում,
 - բ. թափոնների գոյացման և տեղադրման նորմատիվային պահանջների կատարում,
 - գ. թափոնների անձնագրավորման և ռեեստրի վարման կարգի պահանջների կատարում,
 - դ. թափոնների պետական հաշվառման վարման կանոնների կատարում.

2.5.10 Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (ԱԱՏՄ)

ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը սահմանում է ԱԱՏՄ հետևյալ հիմնական պարտականությունները.

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական սպասարկման, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ու աշխատողների առողջության պահպանման անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը,
- ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը,
- կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական սպասարկման, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ու աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ոլորտներում:

ԱԱՏՄ կանոնադրությունը չի սահմանում թափոնների հետ ուղղակիորեն կապ ունեցող որևէ պարտականություններ, նպատակներ կամ իրավասություններ, սակայն դրանց մեծ մասը, հատկապես սանիտարական տեսչական ստուգման և վերահսկման մասով, ներառում են թափոնների հետ առնչվող հարցեր:

ԱԱՏՄ-ն պատասխանատու է բժշկական հաստատություններում ԱՀԿ-ի վարակների կանխարգելման և վերահսկման գնահատման գործիքի միջոցով առողջապահական վտանգավոր թափոնների անվտանգ գործածությունն ապահովելու համար: Սակայն, ինչպես նշվում է հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ներկայացուցիչների կողմից, կա ԱԱՏՄ-ի մշտադիտարկման և վերահսկման կարողություններն ընդլայնելու անհրաժեշտություն:

2.5.11 «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ

«Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» (ՇՄՄՏԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը (N 31-Ա, 02.01.2017) սահմանում է կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակները հետևյալ կերպ՝

- շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով.
- շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի մասին տեղեկատվությունը բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարանում ներբեռնումն ու շտեմարանի վարումը.
- թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ու թափոնների դասակարգչի կազմման համար ուսումնասիրության իրականացումը, ինչպես նաև թափոնների օգտագործման ու վնասագերծման սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների մասին տվյալների հավաքումն ու վերլուծումը.
- շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մասին տվյալների հավաքագրման ու վերլուծության հիման վրա համապատասխան համակարգչային շտեմարանների (բազա) ստեղծումը և վարումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանն այդ շտեմարաններում պարունակվող տեղեկությունների տրամադրումը և ստացումը:

ՇՄՍՏԿ կանոնադրությունը սահմանում է նաև կազմակերպության խնդիրները, որոնցից մի քանիսն առնչվում են թափոնների հետ.

- 1) ...
- 5) մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների, ջրաէկոհամակարգերի, ջրային ռեսուրսների ծախսի, որակական ու քանակական հատկությունների, բաղադրության, քիմիական ու ռադիոակտիվ նյութերով և թափոններով աղտոտվածության, ինչպես նաև ջրային ռեսուրսների վիճակը վատթարացնող այլ ազդեցությունների ու երևույթների դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը
- 6) հողերի աղտոտվածության վիճակի ու որակական փոփոխությունների և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների ու երևույթների դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը
- 7) թափոնների և դրանց հեռացման վայրերի դիտարկումները և ուսումնասիրությունների իրականացումը, բացասական ազդեցությունները ներկայացնելը

2.5.12 «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Սույն տեսչական մարմնի կանոնադրությամբ թափոնների գործածության ոլորտում սահմանված են հետևյալ գործառույթները.

1. տնտեսավարող սուբյեկտների կողմից (բացառությամբ սննդամթերքի և ոչ պարենային արտադրանքի անվտանգության բնագավառների օրենսդրության պահանջների) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ու սանիտարահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների նկատմամբ վերահսկողության իրականացումը,
2. վարակիչ, մասնագիտական (պրոֆեսիոնալ) ու զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների առաջացման ու դրանց տարածման պատճառների և պայմանների բացահայտումը (հայտնաբերումը) և դրանց կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը,
3. վերահսկողության շրջանակներում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով նմուշառումը և գործիքային չափումների իրականացումը,
4. ՀՀ տարածքում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ կարանտին սահմանելու մասին որոշման ընդունման վերաբերյալ իրավասու մարմիններ առաջարկություն ներկայացնելը,
5. օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարգադրագիր տալը, ախտահանման, միջատների կամ կրծողների ոչնչացման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ վարակիչ հիվանդությունների օջախներում, որտեղ առկա են վարակիչ, այդ թվում՝ մակաբուծային հիվանդությունների առաջացման և տարածման համար պայմաններ:

2.5.13 Մասնավոր լաբորատորիաներ

2019թ. -ի դեկտեմբեր ամսվա դրությամբ երկրում կա փաստացի գործող 32 հավատարմագրված թեստային լաբորատորիա, որոնց մեծ մասը (20-ից ավել) մասնավոր են: Ըստ «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի՝ սկսած 2012թ. -ի դեկտեմբերից թեստային լաբորատորիաներին հավատարմագրող միակ մարմինը Հավատարմագրման ազգային մարմին ՊՈԱԿ-ն է:³²

³² Տեսնել ավելին՝ <http://www.armnab.am/>

2.5.14 ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՀ վիճակագրական կոմիտեին մանրամասն քննարկվում է «2.2. Տեղեկատվություն և տվյալներ» գլխում:

2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ

Հատվածականություն թափոնների կառավարման համար պատասխանատու հիմնական գերատեսչությունների միջև

Երկրի թափոնների կառավարման ոլորտում ներգրավված հիմնական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների արդյունքում ակներև դարձավ որոշակի մակարդակի ինստիտուցիոնալ հատվածականության առկայությունը: Թափոնների մասին շրջանակային օրենքներով սահմանվող իրավասություններն ու պարտականությունները վերաբերում են ոչ թե կոնկրետ հոսքային թափոններին, այլ թափոններին ընդհանրապես, և այդ պատճառով առկա է երկու կամ ավելի պետական գերատեսչությունների գործառնությունների համընկնում: Միայն որոշակի դեպքերում են այդ կազմակերպությունների իրավասություններն ու պարտականությունները մանրամասն սահմանվում թափոնների վտանգավորության աստիճանի հետ կապված: Հատվածականությունը հատկապես նկատելի է, երբ խնդիրը վերաբերում է այնպիսի գործողությունների իրականացմանը, ինչպիսիք են մշտադիտարկումը, տվյալների հավաքումը, լիցենզավորումը, թույլտվությունների տրամադրումն ու կիրարկումը:

Միջազգային փորձում ընդունված պրակտիկա է, երբ շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը (ՇՄԴԳ) կամ համանման որևէ մարմին իրականացնում է կանոնակարգման, կիրարկման, լիցենզավորման, թույլտվությունների տրամադրման և տվյալների հավաքման գործառնություններ, մինչդեռ քաղաքականությունների մշակումը վերապահվում է թափոնների կառավարման գործում ներգրավված հիմնական նախարարություններին, իսկ ստուգումների և կիրարկումն ապահովելու իրավասությունը վերապահվում է պետական տեսչություններին: Նման կազմակերպությունները սովորաբար թեթևացնում են այդ ամենն իրականացնելու բավարար ռեսուրսներ և կարողություններ չունեցող նախարարությունների տարբեր բաժինների և պետական գերատեսչությունների ծանրաբեռնվածությունը: Նման կազմակերպության ստեղծումը պետք է դիտարկվի որպես վերը նշված հատվածականության խնդրի լուծումներից մեկը:

Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման, մշակման, հաշվետվությունների կազմման և տարածման ոչ պատշաճ մեխանիզմներ

Ինչպես քննարկվում է «2.2 Տեղեկատվություն և տվյալներ» գլխում, թափոնների մասին տվյալները ստացվում են չորս կազմակերպությունների տարբեր աղբյուրներից, և առանցքային պետական գերատեսչություններում որևէ կերպ չի համակարգվում այդ տվյալների մշակումը, վերլուծումը և տարածումը: Հավաքված տվյալների տարածումն ու փոխանակումը պետական կազմակերպությունների միջև վատ կազմակերպված և բարդ գործընթաց է հիմնականում հստակ պրոտոկոլների և տվյալների փոխանակման գործիքների բացակայության պատճառով, ինչը թափոնների կառավարումն ու դրա վերաբերյալ որոշումների կայացումը անարդյունավետ է դարձնում բոլոր մակարդակներում:

Ձեռքբերման, մշակման և հաշվետվությունների կազմման համար ոչ բավարար ինստիտուցիոնալ շրջանակ

Ըստ օրենքի՝ թափոնների պետական կադաստրը ներառում է «թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրները» և «թափոնների հեռացման վայրերի ռեեստրները»: Այն, սակայն, չի ներառում թափոններ հավաքող և փոխադրող կազմակերպություններին: Այսպիսով, երկրում կոշտ կենցաղային թափոնների օպերատորները հավաքված և աղբավայրերում տեղադրված թափոնների մասին տվյալները չեն ներկայացնում կադաստր: Այս տեղեկությունները միայն համայնքապետարանների կողմից տրամադրվում են Վիճակագրական կոմիտեին՝ հիմնվելով մոտավոր ծավալային

գնահատականների վրա: Թեև թափոնների ռեեստրը պետք է ներառի տեղեկություններ թե՛ վտանգավոր, թե՛ ոչ վտանգավոր թափոնների վերաբերյալ, փաստացի ներառվում են միայն վտանգավոր թափոններին վերաբերող տվյալներ:

Լաբորատոր թեստավորման ոչ բավարար կարողություններ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և Շրջակա միջավայրի նախարարության Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոնի հետ խորհրդակցական հանդիպումները և հարցազրույցները վեր հանեցին դժգոհություններ՝ կապված երկրում առկա լաբորատոր թեստավորման օբյեկտների մատչելիության հետ: Վերը նշված պետական կազմակերպությունները հաճախ ստիպված են օգտագործել Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի՝ ավելի լավ վիճակում գտնվող թեստավորման օբյեկտները: Բացի այդ, լաբորատորիաներում թափոնների և արտանետումների, մասնավորապես կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ-ներ)՝ նոր ԿՕԱ-ների և ոչ կանխամտածված կերպով առաջացված ԿՕԱ-ների անալիզի համար տեխնիկական սարքավորումները թույլ են:

Թափոնների ապօրինի տեղադրումը վերահսկելու աղքատիկ կարողություններ

Թափոնների չվերահսկվող հեռացումն ամենակարևոր խնդիրներից է բոլոր թափոնային հոսքերի համար: Գյուղատնտեսական թափոնները հաճախ նետվում են ձորերն ու գետերը, իսկ կենցաղային թափոնները, մեքենաների կմախքները, արդյունաբերական թափոններն ու մեծ ծավալի Շ/Ք թափոններ տեղադրվում են ճանապարհների կողային հատվածներում: Սրա պատճառը հիմնականում Ընդերքի և բնապահպանության տեսչական մարմնի անբավարար կարողություններն են, այդ թվում՝ թափոնների ապօրինի տեղադրման բացահայտման և վերահսկման տեխնիկական թույլ հնարավորությունները:

Մշտադիտարկումն ու վերահսկումը հավանաբար երկրի թափոնների կառավարման ոլորտի ամենաթույլ կողմերն են: Դրա պատճառները հիմնականում պայմանավորված են թափոնների զոյացման և այլ համապատասխան ցուցանիշների վերաբերյալ վստահելի թվերի պարբերական ձեռքբերման նպատակով տվյալների հավաքման վատ մեխանիզմներով (այդ թվում՝ մեթոդաբանությունների), ինչպես նաև վատ զարգացած ենթակառուցվածքներով. այդպիսիք են աղբավայրերում տեղադրվող՝ թափոնները կշռող սարքերը, թափոնների ապօրինի տեղադրումը վերահսկող տեսախցիկների և այլ սարքավորումների բացակայությունը: Լաբորատորիաներում թափոնները և արտանետումները վերլուծելու անբավարար կարողությունները նույնպես բարդացնում են թափոնների կառավարման ոլորտում մշտադիտարկման և վերահսկման իրականացումը:

Կենցաղային թափոնների հավաքման համար անհրաժեշտ ՇՄԱԳ-ի, թույլտվությունների և լիցենզիաների հետ կապված թերություններ

Տնային տնտեսություններից և կազմակերպությունների բնակելի հատվածներից հավաքվող չտեսակավորված կոշտ կենցաղային թափոնները «Ըստ վտանգավորության դասակարգվող թափոնների ցանկը հաստատելու մասին» հրամանով համարվում են 4-րդ դասի վտանգավորության թափոններ (ՀՀ կառավարության որոշում N 430-Ն): Հետևաբար դրա փոխադրումը (և ցանկացած այլ գործածություն) պահանջում է լիցենզավորում, թույլտվության տրամադրում և ՇՄԱԳ-ի կամ փորձաքննության ընթացակարգերի անցկացում: Ո՛չ աղբահանություն իրականացնող օպերատորները, ո՛չ էլ աղբավայրերի օպերատորները համայնքներում չեն անցնում օրենքով պահանջվող վերոնշյալ ընթացակարգերը:

Բացի այդ, աղբավայրերի մեծ մասը սեփականության իրավունքով պատկանում է համայնքներին, սակայն շատ համայնքներ օգտվում են մասնավոր ընկերությունների սեփականություն հանդիսացող աղբավայրերից: Համայնքների առնվազն 10%-ը շահագործում է աղբավայրեր, որոնք առաջացել են արհեստականորեն՝ առանց որևէ հրամանի կամ որոշման:

Ներդրողների հետ հարաբերվելու թույլ ինստիտուցիոնալ շրջանակ

2019 թ. -ի հոկտեմբեր ամսվա դրությամբ առկա է եղել ներդրողներին առնչվող ինստիտուցիոնալ կարողությունների սակավություն: Շատ ներդրողներ փորձում են կապեր ստեղծել քաղաքական գործիչների և կառավարության հետ՝ նպատակ ունենալով երաշխիքներ ստանալու իրենց բիզնեսների համար: Սա հանգեցնում է ինստիտուցիոնալ քառսի և օտարերկրյա ներդրողների շրջանում վատ համբավ ստեղծում երկրի համար:

Վերամշակման ենթակա նյութերից արժեք ստանալու վերաբերյալ գիտելիքների և կարողությունների պակաս

Համայնքների և տեղական իշխանությունների շրջանում իրազեկվածության ցածր մակարդակը, գիտելիքների, կարողությունների և մոբիլիզացիայի պակասը հանգեցնում է վերամշակման ենթակա նյութերի (հիմնականում պլաստմասե, ապակե, թղթե և մետաղե նյութեր) արժեքի կորստի, որն իրականում կարող էր միջոցներ ստեղծել թափոնների գործածության համար: Հաշվի առնելով երկրի ներսում վերամշակման ենթակա նյութերի (հատկապես պլաստմասե, ապակե, մետաղե և թղթե նյութերի համար) համեմատաբար բարձր պահանջարկը՝ համայնքները կարող են շահել թափոնների տարանջատված հավաքումից:

Բացահայտված բացերի մասին լրացուցիչ մանրամասները քննարկվում են «3.2 *Ինստիտուցիոնալ բացեր*» գլխում, իսկ համապատասխան քաղաքականության վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են «4.2 *Առաջարկություններ ինստիտուցիոնալ հարցերի վերաբերյալ*» գլխում:

2.6 Ֆինանսական մեխանիզմներ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.6.1 Աղբահանության վճար
- 2.6.2 Բնապահպանական հարկ
- 2.6.3 Թափոնների վերաբերող ծախսեր
- 2.6.4 Ֆինանսական մեխանիզմների առանցքային թերություններ

Երկրի կոշտ թափոնների կառավարման ոլորտի ֆինանսավորումը կարող է դիտարկվել ըստ հետևյալ ոլորտների (տե՛ս աղյուսակ 14)՝

- թափոնների հավաքման և հեռացման ծառայություններ,
- ենթակառուցվածքային ներդրումներ՝ ուղղված վերամշակման կարողությունների զարգացմանը,
- վերօգտագործման հնարավորություններ,
- հետազոտություն և ուսումնասիրություններ,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության վերացում,
- կանխարգելում և նվազեցում (պատասխանատու սպառում):

ԿԹ կառավարման ոլորտ	Ֆինանսավորման աղբյուր
Աղբահանության ծառայություններ	Աղբ գոյացնողների կողմից վճարված աղբահանության վճարներ, պետական սուբսիդիաներ, ՊՄՀ
Թափոնների մշակման կարողությունների ենթակառուցվածքային ներդրումներ	Բիզնեսներ, միջազգային կազմակերպություններ
Հետազոտություններ և ուսումնասիրություններ	ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ, համալսարաններ, գիտահետազոտական հաստատություններ
Բնապահպանական ազդեցության վերացում	Բնապահպանական վճարներ և հարկեր, միջազգային բանկեր, ֆինանսական և այլ կազմակերպություններ
Կանխարգելում և կրճատում (պատասխանատու սպառում)	ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ

Աղյուսակ 15 - Ֆինանսավորման աղբյուրներն ըստ կոշտ թափոնների կառավարման ոլորտների

Ընդհանրապես Հայաստանում կայուն թափոնների կառավարման տնտեսական ներուժը թերազնահատված է: Թափոնը որպես ռեսուրս դիտարկելը առաջնահերթություն չի համարվել տարբեր քաղաքականությունների հայեցակարգերում: Սա վերաբերում է ինչպես սննդային և էներգետիկ օգտահանման ներուժ ունեցող օրգանական թափոններին, այնպես էլ վերօգտագործման և նյութական օգտահանման ներուժ ունեցող ոչ օրգանական թափոններին:

«Աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացումը շատ թույլ մակարդակի վրա է երկրում, հատկապես երբ հարցը վերաբերում է ծախսերի ամբողջական վերականգմանը: Բնակելի և առևտրի ոլորտները մեծ դժվամություն են ցուցաբերում թափոնների էկոլոգիապես մաքուր կառավարման դիմաց վճարելու համար, որի պատճառով վնասագերծման և հեռացման ծախսերը չեն ներառվում վճարի մեջ: Օգտահանման համար պատասխանատու ենթակառուցվածքները թերզարգացած են, ինչը նույնպես հանգեցնում է արժեքի կորստի: Ինչպես նկարագրվում է հաջորդ բաժնում (2.9.1), կոշտ կենցաղային

Թափոնների կառավարման ծախսերը միայն մասնակիորեն վերականգնվում են աղբահանության վճարների միջոցով, որոնց գումարվում են սուբսիդիաներ տեղական բյուջեներից: Բնապահպանական հարկերը, մասնավորապես 2.9.2-ում քննարկվող աղբավայրերի հարկերը ուղղվում են պետական բյուջե:

Լավագույն փորձը ցույց է տալիս, որ «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացման հնարավոր ուղիները շատ բազմազան են և կարող են, ի թիվս այլնի, ներառել հետևյալը գործիքները, որոնք մանրամասն քննարկվում են «Ֆինանսավորման և խթանման համակարգեր կոշտ կենցաղային թափոնների կառավարման համար. տիպային ուսումնասիրություններ» գլխում.³³

- ՓՈՓՈԽԱԿԱՆ ԳԱՆՁՄԱՆ (օր.՝ «վճարի թափածի չափով») սխեմաներ
 - Վճարի ըստ պարկի (Բելգիա)
 - Ըստ քաշի վճարման սխեմաներ (Դանիա)
 - Բնակարանների համար գործող քաշի և ծավալի վրա հիմնված համակարգեր (Գերմանիա)
 - Պիտակավորված պարկերի սխեմաներ (Իտալիա)
 - Ըստ տոպրակի վճարման սխեմաներ (Իտալիա)
 - Ծավալի և կշռի համատեղության վրա հիմնված սխեմաներ (Լյուքսեմբուրգ)
 - Զաշի հիման վրա գործող սխեմա (Շվեդիա)
- ԱՐՏԱԴՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ
 - Մարտկոցների հավաքման սխեմաներ
 - Չպատվիրված փոստային նամակների գործածության համակարգեր (Ֆրանսիա, Բելգիա)
 - Թղթերի և մանրաթելերի մասին պայմանագիր (Նիդեռլանդներ)
- ԹՎՓՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՌՎԱՐՄԱՆ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԽԵՄԱՆԵՐ
 - Կենցաղային խոշոր և մանր էլեկտրական ապրանքների հավաքում (Բելգիա)
 - Ներկերի վերօգտագործման համայնքային սխեմաներ (ՄԹ)
- ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՄՈՂ ՍԽԵՄԱՆԵՐ
 - Մնացորդային թափոնի հարկ վալոնիայում (Բելգիա)
 - Տեղական հանրային ծառայությունների պայմանագրեր (ՄԹ)
- ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾՈՒՄ ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԹԱՆՈՂ ՍԽԵՄԱՆԵՐ
 - Այլումինե տարաների ընդունման ապարատներ (Հունաստան)
 - Տնային պայմաններում կոմպոստացման խթանում (Շվեդիա)
- ԱՅԼ ՍԽԵՄԱՆԵՐ /օր.՝ ընկերությունների միջև մրցակցության համադրում/

Բացի այդ, իրազեկվածության, գիտելիքի և կարողությունների պակասը համայնքների և տեղական իշխանությունների շրջանում հանգեցնում է վերամշակման ենթակա նյութերի (հիմնականում պլաստմասե, ապակե, թղթե և մետաղե) արժեքի կորստի. սրանք սովորաբար չեն օգտագործվում ֆինանսներ ստեղծելու համար: Հաշվի առնելով տեղական պահանջարկի առկա մակարդակը՝ համայնքները կարող են շահել պլաստմասե իրերի առանձին հավաքումից, որոնք այնուհետև կարող են ուղղակիորեն վաճառվել վերամշակման օբյեկտներին:

³³ Չեկոյցը հասանելի է ներբեռնման համար հետևյալ հղումով՝ https://ec.europa.eu/environment/waste/studies/pdf/financingmunicipalwaste_management.pdf

2.6.1 Աղբահանության վճար

Կոշտ կենցաղային թափոններ

Ըստ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ աղբահանության վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Աղբահանության վճարը սահմանվում է համայնքի ավագանու կողմից: Աղբահանության վճարը սահմանվում է վերոնշյալ օրենքի 14-րդ հոդվածով և կարող է կազմել ամսական առավելագույնը 400 դրամ յուրաքանչյուր բնակչի հաշվով կամ կարող է սահմանվել ըստ բնակելի շենքի կամ բնակարանի մակերեսի՝ առավելագույնը 25 դրամ/քմ հաշվարկով:

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և/կամ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.
 - i. հաշվառված անձանց քանակի հիման վրա՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և/կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսունից մինչև չորս հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ կամ
 - ii. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար հինգից մինչև քսանհինգ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝ հետևյալ դրույքաչափերով.
 - i. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ.
 - ii. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, ինչպես նաև տարբեր գործառնություններ իրականացնող հանրային շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.
 - iii. վարչակառավարչական, արդյունաբերական և արտադրական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ.
 - iv. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտական, հետազոտական և այլ նման շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.
 - v. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է տնտեսական գործառնությունների առավելագույն դրույքաչափի հիման վրա:

3. Ոչ կենցաղային աղբի աղբահանության համար վճարը սահմանվում է հետևյալ կերպ.
 - i. ըստ ծավալի՝ 3,000 ՀՀԴ մեկ խորանարդ մետր աղբի համար կամ
 - ii. ըստ զանգվածի՝ 10,000 ՀՀԴ մեկ տոննա աղբի համար:


4. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են համայնքի ավագանու՝ օրենքով սահմանած կարգով՝ սույն հոդվածի 1-ինից 3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

5. Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել սույն հոդվածի 1-ինից 3-րդ մասերով սահմանված դրույքաչափեր՝ հաշվի առնելով աղբի գոյացման վայրի (անշարժ գույքի) նպատակային կամ գործառնական նշանակությունը:


Աղբահանության վճարների հավաքման և գրանցման անբավարար մակարդակը զգալիորեն նվազեցնում է աղբահանության և համակարգի արդիականացման համար հասանելի միջոցները: Համայնքները պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում սուբսիդիաների տեսքով, որոնց մի մասը ծախսվում է աղբահանության և սանիտարական մաքրման վրա: 2019 թ.-ի համայնքային բյուջեների պլանավորման ընթացքում աղբահանության մասով եկամուտներն աճել են, սակայն մյուս կողմից նվազել են ծախսերը:

Համայնքային բյուջեներում ֆինանսներ են հատկացվում աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման համար: Եթե համայնքում նաև առկա է աղբավայր, ապա միջոցներ են հատկացվում դրա շահագործման համար: Համայնքային բյուջեների միայն 30 տոկոսն է առաջանում տեղում, իսկ մնացած մասը հատկացվում է ՀՀ պետական բյուջեից [ii]:

2018 թ.-ին Հայաստանի մարզերը հավաքել են ընդհանուր առմամբ 2.08 միլիարդ դրամ (1.4 մլրդ վճարվել է ֆիզիկական անձանց կողմից և 673.4 մլն դրամ՝ իրավաբանական անձանց կողմից) աղբահանության ծառայությունների դիմաց (տե՛ս պատկեր 9): Սակայն երկրում աղբահանության և սանիտարական մաքրման ընդհանուր ծախսերը կազմել են 4.74 մլրդ դրամ (3 մլրդ դրամ աղբահանության համար և 1.74 մլրդ դրամ սանիտարական մաքրման համար, ինչպես ցույց է տրված պատկեր 10-ում):




Պատկեր 9 - ՀՀ մարզերում 2018 թ.-ին հավաքված աղբահանության վճարներ (մլրդ դրամ)
Աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված տվյալներ, 2019 թ.



Պատկեր 10 - Աղբահանության և սանիտարական մաքրման ծախսերը ՀՀ մարզերում 2018 թ.-ին (միլիարդ դրամ)
Աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված տվյալներ, 2019 թ.

Այսպիսով, հավաքված վճարները կազմում են ծառայությունների ծախսերի միայն 70%-ը: Պատկեր 10-ը ցույց է տալիս Հայաստանի մարզերում աղբահանության ծառայությունների ծախսերի մեջ հավաքված վճարների մասնաբաժինը:



Պատկեր 11 - Թափոնների կառավարման և սանիտարական մաքրման ծախսերի դիմաց հավաքված վճարների մասնաբաժինը (ըստ մարզերի)
Աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված տվյալներ, 2019 թ.

Վտանգավոր թափոններ

Վտանգավոր թափոններ առաջացնող կազմակերպությունը լիցենզավորված ընկերությանը վճարում է այդ թափոնների հավաքման, փոխադրման, վնասագերծման և հեռացման համար: Բժշկական հաստատությունների համար վտանգավոր թափոնների հեռացման ծառայությունը միջինը կազմում է 450-650 ՀՀԴ մեկ կգ թափոնի դիմաց՝ կախված գոյացած թափոնների վայրից և քանակից: Բժշկական թափոններ մշակող կազմակերպությունները նաև եկամուտ են ստանում կոսմետիկական ապրանքների խանութներից ժամկետանց արտադրանք ընդունելով:

2.6.2 Բնապահպանական հարկ

Աղբավայրերի հարկը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված է որպես բնապահպանական հարկ: ՀՀ հարկային օրենսգրքի 170-րդ հոդվածում նշված հատուկ հատկացված տեղերում (թափոնների տեղաբաշխման վայրեր, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ և/կամ շինություններ) հանքարդյունաբերական, արտադրական և/կամ սպառողական թափոնների տեղադրման կամ պահպանման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը ներկայացվում են պատկեր 15-ում: 2017 թ. -ին աղբավայրերում տեղադրված թափոնների դիմաց վճարված հարկերը կազմել են 72.6 մլն ՀՀԴ, իսկ նույն տարում ՀՀ-ում արտադրված և վաճառված և շրջակա միջավայրին վնաս հասցնող ապրանքների դիմաց վճարված հարկերը կազմել են 458.1 մլն ՀՀԴ, որը կազմել է ընդհանուր բնապահպանական հարկերի 42.1%-ը:

Հատկանշական է, որ թեպետ խառը (չտեսակավորված) կենցաղային թափոնները համարվում են չորրորդ դասի վտանգավորության թափոններ, քանի որ, ի թիվս այլ վտանգավոր նյութերի, պարունակում են մարտկոցներ, դյուրավառ նյութեր, վարակիչ առարկաներ, օպերատորի կողմից այդ թափոնների տեղադրումը աղբավայրերում չի հարկվում այնպես, ինչպես չորրորդ դասի վտանգավորության թափոնի տեղադրումը (1,500 ՀՀԴ/կգ): Տեսակավորված և չտեսակավորված սպառման թափոնների աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող օպերատորները վճարում են տարբերվող բնապահպանական հարկ՝ 60 ՀՀԴ/կգ: Այս բացառությունը սխալ խթան է կենցաղային թափոնների տեսակավորման պրակտիկայի տեսանկյունից:

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույքաչափը մեկ տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	48,000
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	24,000
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	4,800
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ (բացառությամբ ֆիզիկական անձանց առաջացրած չտեսակավորված սպառման թափոնների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների)	1,500
Ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների և ֆիզիկական անձանց առաջացրած տեսակավորված սպառման թափոնների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների)	600
Ֆիզիկական անձանց առաջացրած տեսակավորված և չտեսակավորված սպառման թափոնների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների համար	60

Աղյուսակ 16 - Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույքաչափերը մինչև 2021 թ.

Աղբյուր՝ ՀՀ հարկային օրենսգրքը


Հարկ է նշել, որ բնապահպանական հարկի արտոնությունները սահմանող ՀՀ հարկային օրենսգրքի 172-րդ հոդվածը նշում է, որ արտադրության և/կամ սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու և/կամ պահելու համար բնապահպանական հարկից ազատվում են ֆիզիկական անձինք՝ սպառման թափոնների համար: Սկսած 2021 թ. -ի հունվարի մեկից՝ հատուկ հատկացված տեղերում և արտադրական վայրերում արտադրական թափոնների և/կամ սպառման թափոնների (բացի ընդերքօգտագործման թափոններից) մեկանգամյա պահպանման համար բնապահպանական հարկը հաշվարկվելու է հարկման բազայի նկատմամբ աղյուսակ 16-ում ներկայացված դրույքաչափերով:

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	Դրույթաչափը մեկ տոննայի համար (դրամ)
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62,400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31,200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6,240
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ (բացառությամբ ֆիզիկական անձանց առաջացրած չտեսակավորված սպառման թափոնների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող օպերատորների)	1,950
Ոչ վտանգավոր թափոններ	780

Պղյուղ 17 - Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական հարկի դրույթաչափերը 2021 թվականից հետո

Աղբյուր՝ ՀՀ հարկային օրենսգիրք

Աղբավայրերում տեղադրված թափոնների, այդ թվում՝ վտանգավոր թափոնների համար հավաքված բնապահպանական հարկերը 2013-2018 թթ. -ի կտրվածքով ներկայացված են պատկեր 11-ում: Ներկայացված ժամանակահատվածում տարեկան միջին ցուցանիշը կազմել է 74.4 մլն ՀՀԴ:



Պատկեր 12 - Գանձված բնապահպանական հարկերը թափոնակուտակիչներում տեղադրված թափոնների համար (մլն ՀՀ դրամ)

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, 2018 թ.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2202>


Աղբավայրի հարկը և մուտքի վճարը Եվրոպական միությունում դարձել են շատ տարածված տնտեսական գործիքներ՝ միտված աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցման ԵՄ և ազգային թիրախների իրականացմանը: Պատկեր 14-ը ցույց է տալիս ԵՄ անդամ երկրներում և տարածքներում 2013 թ. -ի դրությամբ ոչ վտանգավոր կենցաղային թափոններն օրենքով ընդունված կարգով աղբավայրերում տեղադրելու դիմաց գանձվող վճարները (մուտքի վճար և աղբավայրի հարկ): Տվյալները հրապարակվել են Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության կողմից:³⁴ Հարկերի դրույթաչափերը տարբերվում են ողջ ԵՄ տարածքում. Լիտվայում սահմանված 3 եվրո/տոննա վճարից մինչև 100 եվրո/տոննա՝ Բելգիայում: ԵՄ աղբավայրերի հարկերի և արգելքների մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Թափոնից Էներգիա ստացող եվրոպական կայանների կոնֆեդերացիայի (ԹԵԵԿԿ/CEWEP)՝ 2012 թ. -ին հրապարակված զեկույցը:³⁵

³⁴ Աղբյուր՝ <https://www.eea.europa.eu/data-and-maps/figures/typical-charge-gate-fee-and/>

³⁵ Landfill taxes and bans, 2012, CEWEP. Հասանելի է՝ <http://www.cewep.eu/wp-content/uploads/2017/12/Landfill-taxes-and-bans-overview.pdf>


Միացյալ Թագավորությունում 1996 թ. -ին ներդրված աղբավայրերի հարկը նպաստել է աղբավայրերում տեղադրվող թափոնների քանակի կտրուկ նվազմանը. 20 տարվա ընթացքում տարեկան 50 մլն տոննա տեղադրվող թափոնից ցուցանիշը նվազել է մինչև տարեկան 10 մլն թափոն, իսկ աղբավայրերի հարկը աճել է մեկ տոննայի դիմաց գանձվող 5 եվրո վճարից մինչև 94.21 եվրո/տոննա (տե՛ս պատկեր 13): Բացի այդ, ՄԹ-ում հավաքված աղբավայրերի հարկերը մուտք են արվում «Աղբավայրերի համայնքների հիմնադրամ» (ԱՀՀ)՝ հողի ռեկուլտիվացիա և վերականգնում իրականացնող ծրագրեր ֆինանսավորելու նպատակով:³⁶

³⁶*Landfill Tax in the United Kingdom*, 2017. Institute for European Environmental Policy. [xx] Հասանելի է՝ <https://ieep.eu/uploads/articles/attachments/e48ad1c2-dfe4-42a9-b51c-8fa8f6c30b1e/UK%20Landfill%20Tax%20final.pdf?v=63680923242>



Պատկեր 13 - Մուտքի վճար և բնապահպանական հարկ ոչ վտանգավոր կենցաղային թափոններ աղբավայրում տեղադրելու համար, 2013 թ. (Եվրո տոննայի համար):

Աղբյուր՝ Landfill taxes and bans, 2012, CEWEP. Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.cewep.eu/wp-content/uploads/2017/12/Landfill-taxes-and-bans-overview.pdf>




Պատկեր 14 - Միացյալ Թագավորությունում աղբավայրում թափոններ տեղադրելու բնապահպանական հարկի դրույքաչափերն ու արդյունավետությունը՝ սկսած տվյալ հարկի ներդրման պահից:

Աղբյուր՝ Landfill Tax in the United Kingdom, 2017 Institute for European Environmental Policy. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ieep.eu/uploads/articles/attachments/e48ad1c2-dfe4-42a9-b51c-8fa8f6c30b1e/UK%20Landfill%20Tax%20final.pdf?v=63680923242>
Թափոններին վերաբերող ծախսեր

Ստորև ներկայացված գրաֆիկները պատկերում են Հայաստանում թափոնների կառավարմանն առնչվող ծախսերը 2013-2018 թթ. -ի ընթացքում՝ ներկայացված ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:³⁷ Ըստ կարգավորման՝ այս տվյալների հաղորդումը պարտադիր է այն իրավաբանական անձանց, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք շահագործում են վերամշակման օբյեկտներ կամ իրականացնում են բնապահպանական գործունեություն և տեղեկացված են հաշվետվություններ ներկայացնելու պարտավորության մասին:³⁸

Պատկեր 16-ը ներկայացնում է վերոնշյալ հաշվետու կազմակերպությունների կատարած ծախսերը հողերի ռեկուլտիվացիայի, ներառյալ հողի վերին շերտի փոխադրման և պահպանման համար, ինչպես նաև այլ գործառնական ծախսեր՝ բացառությամբ ռեկուլտիվացիայի համար արված կապիտալ ներդրումների, իսկ պատկեր 17-ը ցույց է տալիս հիմնական ակտիվների տարեկան միջին արժեքները՝ 2013-2018 թթ. -ի ընթացքում թափոնների մշակում, վնասագերծում և ոչնչացում իրականացնող այն կայանների և օբյեկտների կապիտալ վերանորոգման համար, որոնք հիմնական ակտիվներ են:



Պատկեր 15 - Արտադրական թափոններից և այլ վնասակար նյութերից հողի պահպանություն (միլիոն ՀՀ դրամ) Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2018 թ. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2202>


Պատկեր 16-ից երևում է, որ արդյունաբերական թափոններից և այլ վտանգավոր նյութերից հողերի պաշտպանության վրա հաշվետու կազմակերպությունների կողմից կատարվող ծախսերը 2013-2018 թթ. -ին կտրուկ նվազել են: Հատկանշական է, որ 2015 թ. -ից սկսած՝ կտրուկ նվազումը կապված է ընկերության կողմից ընդհանրապես ծախսերի կրճատման հետ, թեպետ մյուս կազմակերպություններին կամ մասնավոր ընկերություններին թափոնների գործածության համար (փոխադրում դեպի աղբավայրեր, մշակման կամ հեռացման օբյեկտներ) կատարված վճարումները մնացել են նույնը, ինչը կազմել է ընդհանուր ծախսերի մոտ 90%-ը: Այնուհանդերձ, թույլ բնապահպանական վերահսկողության պատճառով

³⁷ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2018 թ.: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2202>


³⁸ Որոշումը և հաշվետվության ձևը հասանելի են հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=16228>

դեռևս հայտնի չէ՝ արդյո՞ք այլ ընկերությունների փոխադրած թափոնները հայտնվում են աղբավայրերում կամ թափոնակուտակիչներում, թե՞ ոչ:

Ինչպես քննարկվում է «Ընթացիկ ծրագրեր կենցաղային թափոնների կառավարման ոլորտում» վերնագրով բաժնում, առկա է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից ֆինանսավորվող սանիտարական աղբավայրի կառուցման և թափոնների հավաքման ենթակառուցվածքների երկու ծրագիր, որոնց գործողությունների շրջանակում նաև ներառվելու են մարզերում գոյություն ունեցող որոշ աղբավայրերի փակման աշխատանքներ: Նման ներդրումային ծրագրերը Հայաստանում աղբավայրերի փակման և հողի ռեկուլտիվացում իրականացնելու ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են:



Պատկեր 16 - Հողերի ռեկուլտիվացիայի ծախսեր (միլիոն ՀՀ դրամ)
Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Ծրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, 2018 թ. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2202>



Պատկեր 17 - Բնապահպանության հիմնական արտադրական միջոցների հիմնավերանորոգման ծախսերն ըստ բնապահպանության ոլորտների, 2018 թ. (միլիոն ՀՀ դրամ)
Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Ծրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, 2018 թ.: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2202>

2.6.3 Ֆինանսական մեխանիզմների առանցքային թերություններ

Աղբահանության ցածր վճարը չի բավարարում լիարժեք ինքնածախսաձածկմանը
 Հայաստանում աղբահանության դիմաց վճարը չափազանց ցածր է: Անարդյունավետ է նաև թե՛ բնակիչներից, թե՛ կազմակերպություններից վճարների գանձման մեխանիզմը: Եվ այս երկուսը միասին հանգեցնում են ծախսերի ոչ ամբողջական վերականգնման:

Այդ ամենից բացի՝ թափոնների կառավարման գործունեության ծախսերը չեն ներառում թափոնի կյանքի ողջ տևողության ընթացքում առաջացող ծախսերը, օրինակ՝ աղբավայրի կառավարմանը և փակմանը հաջորդող խնամքի, բնապահպանական, վերականգնման և այլ ծախսերը, այլ ընդամենը ընդգրկում են վառելիքի, աղբատար մեքենաների և աղբարկղերի պահպանման ծախսերը: Այս ծախսերն արտացոլված չեն աղբահանության վճարի մեջ:

Չտեսակավորված կոշտ կենցաղային թափոններն աղբավայրերում տեղադրելու համար չափազանց ցածր բնապահպանական հարկ

2019 թ. -ի դեկտեմբեր ամսվա դրությամբ մեկ տոննա ԿԿԹ-ի տեղադրումն աղբավայրում, ըստ ՀՀ հարկային օրենսգրքի, արժե 60 ՀՀԴ: Այս չափազանց ցածր բնապահպանական հարկը սխալ խթան է դառնում կենցաղային թափոնների տեսակավորման համար: Համեմատության համար նշենք, որ աղբավայրերի հարկերը ԵՄ տարածքում ոչ վտանգավոր կոշտ կենցաղային թափոնների համար տատանվում են 3 եվրո/տոննայից (Լիտվա) մինչև 100 եվրո/տոննա (Բելգիա):

Թափոնների կառավարման գործառնական ծախսերի ոչ պատշաճ սահմանում

Թափոնների կառավարման գործունեության համար սահմանված ծախսերը չեն ներառում թափոնի կյանքի ողջ տևողության ընթացքում առաջացող ծախսերը, օրինակ՝ աղբավայրի կառավարման և փակմանը հաջորդող խնամքի, բնապահպանական, վերականգնման աշխատանքների և այլ ծախսեր, այլ ընդամենը ներառում են վառելիքի, աղբատար մեքենաների և աղբարկղերի պահպանման ծախսերը: Այս ծախսերը չեն արտացոլվում աղբահանության վճարի մեջ:

«Աղտոտողը վճարում է» սկզբունքի գործիքներն ամբողջապես չեն կիրարկվում ծախսերի ամբողջական վերականգնման համար

«Աղտոտողը վճարում է» և արտադրողի պատասխանատվության ընդլայնման սկզբունքների համաձայն՝ ծախսերի ամբողջական վերականգնման մեխանիզմի սահմանումը ՀԸԳՀ համաձայնագրի պահանջներից է: Ինչպես արդեն քննարկվել է ֆինանսական գործիքներին վերաբերող բաժիններում, թափոնների հավաքման վճարն ու աղբավայրերի հարկերը «աղտոտողը վճարում է» սկզբունքի՝ Հայաստանում գործող միակ գործիքներն են, որոնք, սակայն, անարդյունավետ են իրականացվում:

Վերամշակման ենթակա նյութերի կորսված արժեք գիտելիքի և նվազագույն կարողությունների բացակայության պատճառով

Թափոնների օգտահանման օբյեկտների կողմից տարեկան ընդունվում են մոտ 2,000 տոննա վերամշակման ենթակա պլաստմասե նյութեր (հիմնականում PET և PP տեսակի): Վերամշակվող մետաղե և ապակյա նյութերի ծավալների մասին տվյալներ առկա չեն: Այս նյութերի մեծ մասի հավաքումն իրականացվում է թափոնակուտակիչներից ոչ ֆորմալ կերպով, մինչդեռ համայնքները հոգում են այս նյութերը հավաքելու և դրանք համապատասխան վայրեր փոխադրելու ծախսերը: Համայնքների ծախսերը կարող են գոնե մասնակիորեն վերականգնվել այն դեպքում, եթե իրականացվի արժեքավոր նյութերի տեսակավորված հավաքում: Այս առումով լուծման ենթակա մեկ այլ հարց է թափոնների սեփականատիրության խնդիրը, ինչի վերաբերյալ օրենսդրության մեջ կա անորոշություն:

Բացահայտված բացերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասները քննարկվում են «3.3 Ֆինանսական մեխանիզմների բացեր» գլխում, իսկ համապատասխան քաղաքականության առաջարկությունները ներկայացված են «4.3 Ֆինանսական մեխանիզմների առաջարկներ» բաժնում:

2.7 Ենթակառուցվածք

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածում
- 2.7.2 Կենսաբանական թափոնների մշակման ենթակառուցվածք
- 2.7.3 Վտանգավոր բժշկական թափոններ
- 2.7.4 Այլ վտանգավոր թափոններ
- 2.7.5 Շինարարության և քանդման (Շ/Ք) թափոններ
- 2.7.6 Առանցքային ենթակառուցվածքային թերություններ

2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածում

ԿԿԹ հավաքում և հեռացում

Միայն մի քանի մեծ քաղաքներ ունեն աղբատար բեռնատարներ, որոնք բաց թափքով են և ենթադրում են թափոնների մեխանիկական բեռնում: Աղբահանության ոլորտի տեխնիկական հագեցվածությունը շատ աղքատ է՝ բացառությամբ մի քանի համայնքների:

ՀՀ մարզերում, ըստ գույքագրված տեխնիկական հագեցվածության, 2018 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ առկա են 774 աղբատար մեքենաներ, որոնցից 204-ը՝ տոփանման հնարավորությամբ, և 11,868 աղբամաններ՝ 0.3, 0.7 լ: Ըստ տեխնիկական կարողությունների գույքագրման՝ 2018 թ.-ի նոյեմբեր ամսվա դրությամբ Հայաստանի մարզերում առկա է եղել 774 աղբատար մեքենա, որոնցից 204-ը՝ կոմպակտավորման մեխանիզմով, ինչպես նաև 11,868 աղբարկղ (0.3-0.7լ): Համայնքների մոտ 75%-ն ունի միայն մեկ աղբ հավաքող մեքենա, ինչը ուշացած աղբահանման ռիսկեր է պարունակում, քանի որ մեքենան կարող է անսարք լինել: Համայնքների մոտ 11%-ն իր տրամադրության տակ բեռնատարներ չունի: Բացի այդ, երկրում առկա աղբատար մեքենաների ավելի քան 60 տոկոսը բաց թափքով բեռնատարներ են, ինչը լրացուցիչ մեխանիկական աշխատանք է պահանջում և աղբահանությունը դարձնում անարդյունավետ և ծախսատար (տե՛ս պատկերները ստորև): Հին բեռնատարների վատ վիճակը հաճախ հանգեցնում է մեքենաների՝ երկար ժամանակով շարքից դուրս գալուն՝ այդպիսով նվազեցնելով մեքենաների գործունեության ընդհանուր տևողությունը և ծառայության որակը (տե՛ս պատկեր 18):

2014 թվականից Երևան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնում էր մասնավոր «Սանիտեք» ընկերությունը, որը շուրջ 10 մլն եվրո ներդրումներ է կատարել՝ ձեռք բերելով նոր տեխնիկա և 1,100 լ անվավոր փակ կոնտեյներներ:³⁹ 2017 թ.-ի ավարտին աղբարկղերի մեծ մասը վնասվել էր (անիվները ջարդվել էին, կափարիչները չէին գործում), իսկ բեռնատար մեքենաների մի մասն արդեն շարքից դուրս էր եկել, ինչի հետևանքով տեղի էր ունենում աղբահանության ուշացում, և բնակիչներից ստացվում էին բողոքներ: 2019 թ.-ին աղբահանության արդեն ավելի վատացմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը հիմնեց իր սեփական քաղաքային ընկերությունը՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկը:


³⁹ Հարկ է նշել, որ վնասված կամ շարքից դուրս եկած կոնտեյներները փոխարինվում էին նույնատիպ նորերով, մինչդեռ 2018 թվականից ի վեր կոնտեյներների հիմնական մասը կոտրված է՝ առկա են մեծ անցքեր, չկա կափարիչ, կոտրված են անիվները: Միայն 2019 թվականից սկսած՝ ընկերությունը վերսկսեց շարքից դուրս եկած կոնտեյներների մասնակի փոխարինումը նորերով, որոնք, սակայն, ի տարբերություն նախորդների՝ չունեն կափարիչը ոտքով բացելու հնարավորություն, ինչը մասամբ պատճառ է դառնում, որ օգտվողները բաց թողնեն կափարիչը:

ՀՀ մարզերում աղբը աղբամաններից բեռնատարներ է բարձրվում հիմնականում բահերի միջոցով: 2018-2019 թթ.-ին ԵՄ աջակցությամբ, ինչպես նաև ՀՀ համայնքներին սուբվենցիայի տրամադրման պետական ծրագրի շրջանակներում, հիմնականում խոշորացված համայնքներում ձեռք են բերվել աղբատար մեքենաներ և աղբամաններ: Շատ գյուղական համայնքներում, սակայն, ինչպես, օրինակ, Ապարան համայնքի Թթու Ջուր և Ջորագլուխ գյուղերում, անբարեկարգ ճանապարհի պատճառով աղբահանություն ընդհանրապես չի կատարվում: Փոխարենը տեղացիները այրում են կենցաղային աղբը կամ թափում գյուղից դուրս եկող առուների, գետակների մեջ կամ ստեղծում համայնքի օգտագործման համար նոր աղբանոցներ դրանց համար չնախատեսված վայրերում:

Համայնքում աղբարկղերի թվի, տեսակի և դրանց տեղադրման վայրերի սահմանումը հաճախ պայմանավորվում է աղբատարների առկա թվով, ֆինանսական սահմանափակումներով և նախկին փորձով: Սակայն աղբարկղերի թարմացումը պետք է առավել ընդգրկուն ռազմավարական պլանավորման մաս կազմի, որտեղ կլինեն հստակ թիրախներ և գործունեության ցուցանիշներ, ինչպիսիք են հավաքման, վերամշակման ծավալներն ու սպասարկման ժամանակը: Տեղական իշխանությունները նման պլաններ չեն մշակում ու կիրառում և վերջում ստիպված են լինելու գումարներ ծախսել՝ միայն ելնելով ընթացիկ կարիքներից:


Աղբարկղերի՝ ոչ պատշաճ տեսակի ու ոչ բավարար քանակով գնումը և դրանք սխալ վայրերում տեղադրելը հանգեցնում է սպասարկման ժամանակի ու աշխատանքի ծավալի մեծացման և ընդհանրապես ցածր որակի աղբահանության ծառայության: Թափոնների չափից շատ կուտակման պատճառ կարող է լինել աղբարկղերի սխալ քանակի և չափի ընտրությունը: Շատ մեծ աղբարկղերը կարող են վնասել աղբատար բեռնատարներին, իսկ կափարիչներ չունեցողները հասանելի են դառնում կենդանիների համար:

Բացի դրանից՝ չկա որևէ համայնք, որը քաղաքացիներին հատկացնում է հատուկ վայրեր իրենց կենցաղային իրերը (շինարարական նյութեր, կենցաղային էլեկտրական ապրանքներ, կահույք կամ խոշոր եզրաչափերի այլ թափոններ) անվճար և տեսակավորված եղանակով թողնելու համար: Արդյունքում կոշտ կենցաղային թափոններ կամ շինարարական թափոններ հավաքող կապալառուները հաճախ ստիպված են լինում լրացուցիչ ծառայություն մատուցել՝ հավաքելով աղբարկղերի մոտակայքում թողնված խոշոր եզրաչափերի առարկաները:



Պատկեր 18 - Աղբատարների թիվը համայնքներում

Աղբյուր՝ Համայնքապետարանների կողմից տրամադրված տվյալներ «Թափոնների գործածման քարտեզագրում» Նախագծի շրջանակներում, որն իրականացվել է 2019 թվականին ՏԿԵ Նախարարության և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից: Նախագծի կայքը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://whm-ace.aua.am/hy/>



Պատկեր 19 - Համայնքներում աղբատարների թիվն ըստ տեսակների

Աղբյուր՝ Համայնքապետարանների կողմից տրամադրված տվյալներ «Թափոնների գործածման քարտեզագրում» Նախագծի շրջանակներում, որն իրականացվել է 2019 թվականին ՏԿԵ Նախարարության և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից: Նախագծի կայքը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://whm-ace.aua.am/hy/>

Թերություններ

- i. Թափոններ հավաքող մեքենաների աղբատիկ կարողություններ
- ii. Կոշտ կենցաղային թափոնների համար նախատեսված աղբարկղերի ոչ պատշաճ քանակ, տեսակ և տեղադրում
- iii. Վերամշակման ենթակա նյութերի տեսակավորված հավաքման համար ենթակառուցվածքի բացակայություն: Շատ փոքր թվով համայնքներ են միջազգային ծրագրերի օգնությամբ տեղադրել պլաստմասե շէրի համար նախատեսված առանձին աղբարկղեր, որոնք այս պահին չեն օգտագործվում դրանց ոչ հետևողական հավաքման պատճառով:
- iv. Սննդի կամ այլ օրգանական թափոնների առանձին հավաքման համար ենթակառուցվածքի բացակայություն:
- v. Շատ համայնքներ օգտագործում են աղբատար խողովակներ և բունկերային համակարգեր:
- vi. Չկան նախատեսված վայրեր, որտեղ քաղաքացիները կարող են թողնել որոշակի առարկաներ (այժմ ավելի ու ավելի շատ է քննարկվում):

Գոյացած թափոնների քանակի մասին տեղեկատվությունը կարևոր է թափոնների կառավարման արդյունավետ պլանավորման համար: Պատշաճ ճշգրտությամբ նման տեղեկատվության կանոնավոր տրամադրումը պահանջում է աղբավայրերում տարրական ենթակառուցվածքների առկայություն, ինչպիսիք են կամրջի տեսքով ավտոմոբիլային կշեռքները կամ փոխանցման կայանները, որտեղ յուրաքանչյուր աղբատար մեքենա կշռվում է և գրանցվում: Ավտոմոբիլային կշեռքները պետք է հասանելի լինեն բոլոր համայնքների ԿԿԹ օպերատորների համար:

Վերոնշյալ թերությունները երկրում նպաստում են ընդհանուր առմամբ ոչ կայուն, անարդյունավետ և ցածրորակ աղբահանության ծառայությունների իրականացմանը, այդ թվում՝

- որոշ համայնքներում չկա աղբահանության ծառայություն, ինչը հանգեցնում է թափոնների ոչ պատշաճ հեռացման պրակտիկայի՝ թափոնների թաղում կամ բացօթյա այրում:
- շատ համայնքներում իրականացվում է անկանոն կամ ուշացած աղբահանություն:
- կոշտ թափոնների՝ չափազանց աշխատատար հավաքում:
- չափազանց ժամանակատար հավաքում:

Աղբանոցներ և աղբավայրեր

Հանրապետությունում առկա աղբանոցները չեն համապատասխանում միջազգային կամ որևէ տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշի և բացառապես աղբի կուտակման վայր են: Աղբանոցների տարածքները նախապես չեն նախագծվել և հիմնականում դրանք տարերայնորեն ձևավորվել են տարիների ընթացքում:

Հանրապետության ոչ մի աղբանոցում առկա չէ միջնաշերտ կամ մեկուսիչ շերտ (liner) և չի կատարվում առաջացող մեթան գազի կորզում: Բացառություն է կազմում Երևանի Նուբարաշեն աղբավայրը, որի մի հատվածում ճապոնական «Շիմիցու» կորպորացիան տեղադրել է գազի կորզման համակարգ: Աղբանոցները չունեն ժամանակակից պահանջները բավարարող կեղտաջրերի (leachate) հավաքման որևէ համակարգ (տե՛ս ստորև՝ «Նուբարաշենի աղբավայրը Երևանում»):

Աղբանոցները/թափոնների կուտակման վայրերը չունեն նեխաջրերի հավաքման ժամանակակից համակարգ, ինչպես նաև աղբ ընդունելու պատշաճ ենթակառուցվածքներ: Աղբանոցները չունեն անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում են՝ հիմնականում առանց տոփանման: Շատ աղբանոցներում մշտապես դիտարկվում են ինքնաբուխ, ինչպես նաև մարդածին բռնկումներ: Աղբանոցները հիմնականում ցանկապատված և առանձնացված չեն և հասանելի են կենդանիների ու մարդկանց համար: Աղբանոցներում բացակայում են նաև մեքենաների անիվների լվացման սարքավորումները, ինչի

պատճառով աղբի տեղափոխման մեքենաներն աղբանոցներից դուրս են գալիս կեղտոտ անիվներով: Բացի այդ, աղբանոցների մեծ մասն ունի չափազանց վատ մուտքային ճանապարհներ, որոնք մեծ վնաս են հասցնում աղբատար մեքենաներին:

Երևանի Նուբարաշեն աղբավայր

Այս աղբավայրի հիմնական շահագործողը Երևանի քաղաքապետարանն է, որը 2018 թվականի դրությամբ աղբավայրի մասին զեկուցել է հետևյալը:

2009 թ.-ի մարտի 10-ին Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիցու» կորպորացիայի հետ կնքել է համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսազազի հավաքման ծրագրի վերաբերյալ: Ծրագրի իրականացման տևողությունը 16 տարի է: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների՝ պետք է իրականացվի 512 հազար տոննա CO₂ գազին համարժեք արտանետումների կրճատում: Ծրագրի ֆինանսավորումը բոլոր տարիների ընթացքում, ինչպես նաև համակարգի պահպանման և շահագործման ծախսերը կիրականացնի ճապոնական կողմը: Կառույցը հանձնվել է հայկական կողմին որպես սեփականություն, շահագործումն իրականացնում է «Նոր բարեկարգում» ՓԲԸ-ն:⁴⁰

Գազը ստացվում է մոտ 8 հեկտար տարածքից: Ծրագրով նաև նախատեսվել էր 1.7 մեգավատտ հզորությամբ էլեկտրակայանի ստեղծում, սակայն այժմ կորզված գազը պարզապես այրվում է ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու նպատակով:

2019 թ. -ի դեկտեմբերին Երևանի քաղաքապետարանը ցանկապատել է աղբավայրի ողջ տարածքը, ինչպես նաև տեղադրել է անցակետ՝ չվերահսկվող տեղադրումը կանխարգելելու նպատակով: Բացի այդ, ստեղծվել է նաև մեքենաների անիվների լվացման վայր: Այս ավանդական միջոցառումները ձեռնարկվել են՝ բարեփոխելու աղբավայրերի պայմանները նախքան դրանց փակումը և վերականգնումը՝ նախատեսված Երևանի կոշտ թափոնների ծրագրի շրջանակում (տե՛ս հաջորդ բաժինը):

⁴⁰ Մեքենաները վերցված է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքից՝ <https://www.yerevan.am/am/communal-services/>

Կոշտ կենցաղային թափոնների աղբահանության ընթացիկ նախագծեր

Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների կառավարման ծրագիր

Տեխնիկատնտեսական հետազոտությունների արդյունքներով 2016 թվականից սկսվել է ՎՉԵԲ-ի աջակցությամբ հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրի կառուցման ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական տարածքում կառուցել նոր սանիտարական աղբավայր, որը կսպասարկի ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերը: Նախատեսվում է նաև երկու մարզերի բոլոր բնակավայրերում ներդնել եվրոպական նորմերին համապատասխանող աղբահանության համակարգ, այդ թվում՝ կառուցել 2 փոխաբեռման կայան, ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկա, աղբատար մեքենաներ և աղբամաններ: Ծրագիրը նախատեսված է ավարտել 2020 թվականի վերջին:⁴¹

Երևանի կոշտ թափոնների ծրագիր

ՎՉԵԲ-ի աջակցությամբ Երևան քաղաքի աղբահանության համակարգի ներդրման ծրագրով նախատեսվում է Նուբարաշենում տարածաշրջանային աղբավայրի կառուցում, որը կսպասարկի Երևանի, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի և ՀՀ Արմավիրի մարզերի՝ Երևանին մոտ գտնվող քաղաքային և գյուղական համայնքները: Նախատեսվում է նաև փակել և կոնսերվացնել գոյություն ունեցող Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերը:⁴²

Կոշտ կենցաղային թափոնների աղբահանության չիրականացված նախագծեր

- Գերմանական զարգացման բանկի (KfW) աջակցությամբ իրականացվել է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի բնակավայրերում եվրոպական նորմերին համապատասխան աղբահանության համակարգի ներդրման և սանիտարական աղբավայրի (Ղուրսալի) կառուցման ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, սակայն ծրագիրը չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
- Ասիական զարգացման բանկի (ԱՉԲ) աջակցությամբ իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի աղբահանության համակարգի ներդրման ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, որով առաջարկվում է մարզի բոլոր բնակավայրերում ներդնել միջազգային նորմերին համապատասխանող աղբահանության համակարգ և կառուցել սանիտարական աղբավայր (Բենիամին), սակայն ծրագիրը չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
- Ասիական զարգացման բանկի (ԱՉԲ) աջակցությամբ իրականացվել է ՀՀ Սյունիքի մարզի աղբահանության համակարգի ներդրման ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, որով առաջարկվում է մարզի բոլոր բնակավայրերում ներդնել միջազգային նորմերին համապատասխանող աղբահանության համակարգ և կառուցել սանիտարական աղբավայր (Չատին), սակայն ծրագիրը չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

⁴¹ Տե՛ս ծրագրի պաշտոնական էջը՝ <https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395271526518&d=Mobile&pagename=EBRD%2FContent%2FContentLayout>

⁴² Տե՛ս ծրագրի պաշտոնական էջը՝ <https://www.ebrd.com/work-with-us/projects/esia/yerevan-solid-waste-project.html>

2.7.2 Կենսաբանական թափոնների մշակման ենթակառուցվածք

Լուսակերտ Բիոգազ Փլանթ

Օրգանական թափոնների կառավարման կարևոր մոդել է Լուսակերտ Բիոգազ Փլանթ կայանը՝ առաջին այսպիսի գործարանը, որը զբաղվել է թռչնաբուժական կենդանական թափոնների կառավարման համակարգի բարելավմամբ: Այս ծրագիրը չունի իր նախադեպը Հայաստանում և Կովկասում, այն բազմաթիվ առումներով ուղեցույց պետք է լիներ նմանատիպ հետագա ծրագրերի համար: Կայանը գործունեությունը սկսել է 2008 թվականին և աշխատել է մինչև 2014 թվականը: Կայանի գործունեությունը կասեցվել է հիմնականում հումքի, CO₂-ից վաճառքի եկամուտների պակասի և ցածր սակագնի հետևանքով:

Համայնքային կենսագազի կայաններ

«Շեն» ԲՀԿ-ի կողմից իրականացվող «Համապարփակ աջակցություն Հայաստանի լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացման համար» ծրագրի շրջանակում Գեղարքունիքի մարզի Արեգունի (40 մ³), Գեղամասար (250 մ³) և Փամբակ (40 մ³) համայնքներում կառուցվել են բիոգազի կայաններ: Արեգունի և Գեղամասար համայնքների բիոգազի կայանները թողարկման փուլում են, Փամբակ համայնքինը՝ կառուցման: Բիոգազի կայաններին կից գործում են չորանոցներ: Եվս 3 բիոգազի կայան նախատեսված է կառուցել Սիսիանի տարածաշրջանի 3 համայնքներում: Միջինը 1 տոննա չոր գոմաղբը հումք է 20 մ³ գազի համար:

ՕՌՎԱԿՕ որդակոմպոստացման գործարան

2011 թվականից երկրում գործում է օրգանական թափոնների կառավարմամբ զբաղվող հայ-նորվեգական «ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ-ն,⁴³ որը զբաղվում է կոմպոստացմամբ և որդակոմպոստացմամբ՝ վերամշակելով սնկարտադրության օգտագործված կոմպոստ, գոմաղբ և այլ տեսակի օրգանական թափոններ: Գործարանում ներկայումս աշխատում է 20 մարդ: Գործարանն աշխատում է իր պոտենցիալի փոքր մասով և համապատասխան ենթակառուցվածքների, պահանջարկի առկայության դեպքում հնարավոր է մեծացնել արտադրական ծավալները: Կազմակերպությունը նաև կարող է ՀՀ ողջ տարածքում ստեղծել օրգանական թափոնների կառավարման դուստր գործարաններ, որոնք կզբաղվեն բոլոր տեսակի օրգանական թափոնների (ներառյալ կենսաքայքայվող օրգանական թափոնները, որոնք միախառնված են ԿԿԹ-ի հետ) կառավարմամբ և վերամշակմամբ:

Կոմպոստացում

2019 թ. -ի աշնանը Երևանի քաղաքապետարանը մեկնարկել է փոքրամասշտաբ կոմպոստացման պիլոտային ծրագիր, որի շրջանակում կոմպոստացման օբյեկտները կընդունեն և կմշակեն քաղաքի այգիներից, փողոցային ծառերից և պուրակներից ստացվող օրգանական թափոններ: Նախատեսվում է նաև ներառել օրգանական խոհանոցային թափոններ, որոնք առանձին կհավաքվեն հանրային հաստատություններից, այդ թվում՝ մանկապարտեզներից, դպրոցներից և համալսարաններից:

Եական է, որ աղբյուրի մոտ առանձնացումը կարևոր նախապայման է պարարտանյութի ստացման նպատակով կենսաթափոնների գործածումը դիտարկելիս: Առյուսակ 11-ը ներկայացնում է տարբեր տեսակի կոշտ կենցաղային թափոններում ծանր մետաղների պարունակությունը՝ համեմատած ԵՄ իրավական պահանջների հետ:

Ծանր մետաղ	ԿԿԹ կոմպոստ (1)	ԿԿԹՕՖ կոմպոստ (2)	Կենսաթափոնների կոմպոստ (3)	ԵՄ ստանդարտ
------------	-----------------	-------------------	----------------------------	-------------

⁴³ Մանրամասների համար տե՛ս <https://orwaco.am>

Cd	9	2	0.8	1.5
Cu	530	150	35	150
Ni	80	40	9	75
Pb	830	400	85	150
Zn	1600	800	140	400

Աղյուսակ 18 - ԿԿԹ-ից ստացված տարբեր տեսակի կոմպոսիտներում ծանր մետաղների պարունակությունը և ԵՄ պահանջները (մգ/կգ չոր նյութի մեջ)

Աղբյուր՝ Veeken, Adrie & Hamminga, P. & Mingshun, Zhang. (2006). «Կենցաղային կոշտ թափոնների կայունության բարելավում Չինաստանում՝ աղբյուրի մոտ առանձնացված հավաքման և օրգանական ֆրակցիայի կենսաբանական մշակման միջոցով: Նորարարական բնապահպանական կառավարում և կայուն զարգացում» [xviii]

Աղյուսակում ներկայացված սյունակները ներկայացնում են հետևյալը.

- 1) ԿԿԹ կոմպոստացում – ստացվում է խառը կերպով հավաքված ԿԿԹ-ից. կոմպոստը (օրգանական ֆրակցիան) մեխանիկական եղանակով առանձնացվում է կոմպոստացումից հետո:
- 2) ԿԿԹՕՖ – ստացվում է խառը կերպով հավաքված ԿԿԹ-ից, իսկ օրգանական ֆրակցիան մեխանիկական եղանակով առանձնացվում է նախքան կոմպոստացումը:
- 3) Կենսաթափոնների կոմպոստ – ստացվում է ԿԿԹ-ի օրգանական ֆրակցիայից, որն առանձին հավաքվում է աղբյուրի մոտ նախքան կոմպոստացումը:

Աղյուսակը հստակ ցույց է տալիս, որ խառը կոշտ կենցաղային թափոններից ստացված ԿԿԹ կոմպոստում ծանր մետաղների պարունակությունը գերազանցում է ԵՄ ստանդարտների սահմանները: ԿԿԹՕՖ կոմպոստը չի համապատասխանում ԵՄ ստանդարտներին՝ բացառությամբ նիկելի պարունակության մակարդակի, և ծանր մետաղների պարունակության առումով միայն աղբյուրի մոտ առանձնացված ԿԿԹ-ից ստացված կոմպոստն է համապատասխանում ԵՄ ստանդարտներին և ենթակա է գործածման որպես պարարտանյութ:

Դիտարկումներ Հայաստանում կենսազազի շուրջ քաղաքականության մասին

Քաղաքականության համակողմանի շրջանակի շնորհիվ Հայաստանում կենսազազի արտադրությունը կարող է ֆինանսական և բնապահպանական օգուտներ բերել հատկապես երկրի գյուղական համայնքներին: Այս օգուտները թվարկված են աղյուսակ 19-ում: Դրանք մասնավորապես ներառում են ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, քիմիական պարարտանյութերը օրգանական պարարտանյութերով փոխարինելը, ֆերմերների համար ծախսերի կրճատումը և լրացուցիչ եկամուտը, Էլեկտրաէներգիայի և ջեռուցման կայուն հասանելիությունը և համայնքներն ու գյուղական տնտեսությունները հզորացնող և հմուտ աշխատուժ պահանջող աշխատատեղերի ստեղծումը: Թեպետ կենսազազի արտադրության իրականացումը կարող է հսկայական օգուտ բերել, անհրաժեշտ են նաև օրենսդրական կարգավորումներ, որոնք կերաշխավորեն այս օգուտները և կկանխեն գյուղական համայնքների և շրջակա միջավայրի շահագործումը:

Բնապահպանական	Ֆինանսական	Սոցիալական
<ul style="list-style-type: none"> • Ջերմոցային գազերի կրճատում և օդի որակի բարելավում • Ջրի որակի բարելավում ճահճացման նվազեցման հաշվին • Հողի և վնասատուների հետ կապված խնդիրների նվազում • Ապահովում է ոչ քիմիական ծագման պարարտանյութ • Վառելիքայտի գործածման նվազեցումը կարող է կանխել անտառահատումները 	<ul style="list-style-type: none"> • Փոխադրման և հեռացման ծախսերի նվազում • Հոսանքի ծախսերի նվազում • Եկամտի հնարավորություններ գիյի և պարարտանյութի վաճառքի միջոցով • Եկամտի աճ պարարտանյութի միջոցով ավելի շատ մշակաբույսերի արտադրության արդյունքում 	<ul style="list-style-type: none"> • Էլեկտրական հոսանքի և ջեռուցման աղբյուրի մատչելիություն • Աշխատատեղերի ստեղծում • Հմուտ աշխատուժի շատացում • Սանիտարական վիճակի և հանրային առողջության բարելավում

Աղյուսակ 19 - Գյուղատնտեսական թափոնների անաերոբային մշակման օգուտները

2017 թ. -ին իրականացված իրագործելիության գնահատումները [xix] ցույց են տվել, որ կենսազազի ունեցած ներուժը կարող է խոշոր ներդրում լինել Հայաստանի էներգետիկ ոլորտում:⁴⁴ Երբ հաշվում ենք միայն 100 գլխից ավել խոշոր եղջերավոր անասունների տնտեսություններից, միջինը 50,000 գլուխ թռչնաբուծական խոշոր ֆերմաներից և ավելի քան 10 հեկտար տարածքով ջերմոցներից ստացվող թափոնները, պոտենցիալ արտադրվող էներգիայի ծավալը կազմում է 216,469 մեգավատտ, իսկ կենսազազի արտադրությունը՝ 412 միլիոն խմ, ինչը հավասար է Ռուսաստանից Հայաստան տարեկան ներկրվող բնական գազի 20%-ին:⁴⁵ Սա չի ներառում այլ տեսակի ընտանի կենդանիներից՝ այծերից և խոզերից ստացվող պոտենցիալ էներգիան: Սա նաև չի ներառում կենսազազի ստացման փոքր ռեակտորներ օգտագործող առանձին տնային տնտեսություններից ստացվող պոտենցիալ էներգիան:

	Խոշոր եղջերավոր անասուն	Խոզ	Թռչնաբուծություն	Ընդհանուր
Հայաստանի Հանրապետություն, ընդհանուր	655,771	175,549	3,814,205	
Թափոնների գոյացում (տ)	5,901,939	579,311	310,370	
Կենսազազի միջին արտադրություն (խմ/տ)	62	9	130	
Էլէներգիայի արտադրություն (կվժ/տ)	134	20	283	
Կենսազազի արտադրություն (խմ)	365,920,218	5,213,799	40,348,100	411,482,117
Էլէներգիայի արտադրություն (կվժ)	790,859,826	11,586,220	87,834,710	890,280,756

Աղյուսակ 20 - Գոմաղբից բիոգազի արտադրության տեսական ներուժ, 2017 թ.

Աղբյուր՝ Հայաստանում գյուղատնտեսական թափոններից էներգիա ստանալու ներուժի ու հնարավորությունների տեխնիկատնտեսական գնահատում, ՄԱԶԾ 2017 թ. [xix]

Հայաստանն ունի բնական գազի գործածման ընդգրկուն ենթակառուցվածքներ տրանսպորտի, ջեռուցման, Էլեկտրաէներգիայի համար: Այս պատճառով Եական առաջնահերթություն է գնահատել երկրում արտադրվող կենսազանգվածի բոլոր տեսակներից, այդ թվում՝ կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական թափոնների հոսքերում պարունակվող օրգանական թափոններից, ինչպես նաև անտառային կենսազանգվածից էներգիայի և սնուցիչ կյութերի օգտահանման պոտենցիալը: Պատկեր 9-ը ներկայացնում է ԵՄ 28 երկրներում կենսազանգվածի տարեկան արտադրության 10-ամյա միջինը հողի


⁴⁴ Feasibility assessment of Agricultural Waste to energy Potential and Opportunities for Armenia, 2017. Ձեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ http://nature-ic.am/Content/announcements/10538/FS_Biogas%20Potential_final.pdf

⁴⁵ Աղբյուր՝ «Գազպրոմ Արմենիա» <https://armenia.gazprom.com/press/news/2019/10/5/>

հետ կապ ունեցող ոլորտների համար՝ վերցված ԵՄ Համատեղ հետազոտական կենտրոն գիտական հարի (EU JRC Science Hub) [xii] «Կենսազանգվածի արտադրությունը, առաջարկը, գործածություններն ու հոսքերը Եվրոպական միությունում: Ինտեգրված գնահատման առաջին արդյունքները» զեկույցից: Կենսազանգի արտադրությունը հասնում է մինչև 1,466 մեգատոննա չոր կյուլթի, որից 30%-ը մնացորդային արտադրությունն է:

Գյուղատնտեսական կենսազանգված

Բերքի արտադրություն՝ 514 Մտ



Խոզանի արտադրություն՝ 442 Մտ



Անտառային կենսազանգված

Փայտի արտադրություն՝ 510 Մտ



Պատկեր 20 - ԵՄ 28 երկրներում կենսազանգվածի տարեկան արտադրության 10-ամյա միջինը՝ ըստ հողին առնչվող ոլորտների **Աղբյուր**՝ Կենսազանգված. արտադրությունը, առաջարկը, գործածությունն ու հոսքերը ԵՄ-ում: Ինտեգրված գնահատման առաջին արդյունքները, 2018 թ. [xii]

Կենսաբանական թափոնների մշակման ենթակառուցվածքների ամփոփ նկարագրություն

- Չկան սննդի առանձին հավաքման համար նախատեսված ենթակառուցվածքներ:
- Ոչ բավարար ենթակառուցվածքներ գյուղատնտեսական թափոնների (մշակաբույսերի մնացորդներ, գոմաղբ և այլն) հավաքման համար:
- Ենթակառուցվածքների և վերահսկման բացակայության հետևանքով օրգանական թափոնները տեղադրվում են աղբավայրերում կամ բնության գրկում:
- Օրգանական թափոնների աերոբ կամ անաերոբ մշակման ենթակառուցվածքները ներառում են.
 - Լուսակերտ Բիոգազ Փլանթ գործարանը՝ թռչնաղբի մշակմամբ (ներկայումս չի գործում),
 - Գեղարքունիքի երեք գյուղերում գործող փոքրամասշտաբ կենսազանգի գործարաններ՝ գոմաղբի օգտագործմամբ,
 - ՕՈՎԱԿՎՈ-ն, որը սնկարտադրության թափոնները և գոմաղբն օգտագործում է որդերի միջոցով ստացվող կոմպոստի և կենսահումուսի արտադրության համար:

2.7.3 Վտանգավոր բժշկական թափոններ

Բժշկական հաստատությունների մեծ մասը տեղակայված է Երևանում, թեպետ նման հաստատություններ առկա են ողջ երկրի տարածքում: Վտանգավոր բժշկական թափոնների հետագա փոխադրումը, պահպանումը, վնասագերծումը, վերամշակումը և տեղադրումն իրականացվում է լիցենզավորված ընկերությունների կողմից, մինչդեռ թափոնների մնացած մասն ընդգրկվում է կոշտ կենցաղային թափոնների տեղային աղբահանության մեջ:

Հանրապետությունում գործում է բժշկական թափոններ վնասագերծող երկու ընկերություն՝ Էջմիածնում գտնվող «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» կենսաբանական թափոնների ոչնչացման գործարան և Երևանում գտնվող «Էկոպրոտեկտ» ՍՊԸ: Վերջիններս ունեն տարածաշրջանային գործունեության ոչ պաշտոնական բաշխվածություն: Վերը նշված կազմակերպություններից յուրաքանչյուրն ունի 3-ական հատուկ մեքենա, որ կահավորված են 4-5°C աստիճան սառեցնող սառնարաններով: Բժշկական թափոնների հավաքման պարբերականությունը բժշկական հաստատություններից ամռանը 24 ժամ է, իսկ ձմռանը՝ առավելագույնը 72 ժամը:

Համաձայն «Էկոպրոտեկտ» ՍՊԸ -ի տրամադրած տվյալների՝ 250 կգ բժշկական թափոնների կիզումից գոյանում է 50 գրամ մոխիր, կիզումն իրականացվում է 1,200-1,500°C ջերմաստիճանում: Այրման արգասիք հանդիսացող մոխիրը թաղվում է սահմանված պահանջներին համապատասխան կառուցված հորում, համապատասխան խորության վրա՝ հետևելով համապատասխան պահանջներին: Ընկերությունը ամսական ոչնչացնում է մոտ 8-10 տոննա բժշկական՝ միայն այրման ենթակա թափոն և ունի մոտ 800 կնքված պայմանագիր, ներառյալ դեղատների հետ պայմանագրերը: Հանրապետության բոլոր բժշկական հաստատությունները պարտավորված են և ունեն պայմանագիր վնասագերծում իրականացնող լիցենզավորված որևէ կազմակերպության հետ:

Կարևոր է նշել, որ նշված երկու ընկերությունների տեղակայվածությունը Երևանում և Էջմիածնում կարող է ռիսկային դարձնել հեռավոր համայնքներում վտանգավոր բժշկական թափոնների պատշաճ կառավարումը՝ պատճառ դառնալով տեղային լուծումների կիրառման (անօրինական այրում, թաղում և այլն):

2.7.4 Այլ վտանգավոր թափոններ

2019 թ. -ի հոկտեմբեր ամսվա դրությամբ երկրում առկա չէր որևէ հատուկ աղբավայր վտանգավոր թափոնների (հատկապես ամենաբարձր՝ առաջին դասի վտանգավորության թափոնների համար) համար, ինչը հանգեցնում է թափոնների չվերահսկվող հեռացման և կուտակման: Հազվագյուտ դեպքերում թափոններ գոյացնողները, որոնք, պատասխանատու վարք դրսևորելով, փորձում են գտնել վտանգավոր թափոնների հեռացման պատշաճ ուղիներ, ստիպված են լինում պահպանել այդ թափոնները՝ անսալով պատկան մարմինների խնդրանքին: Արդյունքում սնդիկ և այլ վտանգավոր նյութեր պարունակող առարկաները հայտնվում են աղբավայրերում: Բացի այդ, չկա որևէ ֆինանսավորում առաջին դասի վտանգավորության թափոնների, օրինակ՝ սնդիկ պարունակող լամպերի և այլ առարկաների վնասագերծման համար:

Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և ԿՕԱ-ներով վարակված տեղանքների ախտազերծում⁴⁶

2015 թ. -ի ապրիլին ՄԱԶԾ Հայաստանը մեկնարկեց «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և քիմիկատների կայուն կառավարման շրջանակներում կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ-ներ/POP's) աղտոտված տարածքների հարցերի լուծում» ծրագիրը, որը միտված էր հետևյալին.

- Հեռացնել առաջնահերթ ԿՕԱ պեստիցիդների թափոնները Նուբարաշենի աղբավայրից, ապահովել տեղում մնացորդային աղտոտման մեկուսացումը, տեղանքի կայունացումն ու վերականգնումը՝ տեղանքի անվտանգությունն ամրապնդելով պատշաճ ինստիտուցիոնալ լուծումներով, որոնք ապահովում են մատչելիության արդյունավետ սահմանափակումներ, մշտադիտարկում և հողի հետագա օգտագործման վերահսկում: Այս ամենն իրականացնել իրագել հանրության աջակցության առկայության դեպքում:
- Չարգացնել Կոտայքի վտանգավոր թափոնների կառավարման հանրապետական օբյեկտը՝ զինված անվտանգ պահպանման և հիմնական ենթակառուցվածքներով, ինչը թույլ կտա ներդնել վտանգավոր թափոնների մշակման և հողի վերականգնման տեխնոլոգիաներ:
- Հայաստանից հեռացնել բոլոր բարձր առաջնահերթության ԿՕԱ պեստիցիդները, չափազանց բարձր կոնցենտրացիաներով թափոնները և ժամկետանց թունաքիմիկատների պաշարները:
- Ինստիտուցիոնալ և կանոնակարգող կարողությունների մշակում քիմիական կյուլթերի արդյունավետ կառավարում իրականացնելու համար:

2.7.5 Շինարարության և քանդման (Շ/Ք) թափոններ

Շ/Ք թափոնների աղբավայրեր

Հայաստանում շատ համայնքներ Շ/Ք համար նախատեսված աղբավայրերը շահագործում են կենցաղային թափոնների համար նախատեսված աղբավայրերի հետ միասին: Օրինակ՝ Երևանի քաղաքապետի 30.06.2016 թ.-ի թիվ 2391-Ա որոշման համաձայն՝ շինարարական աղբի տեղադրման համար 10 հա մակերեսով հողամաս է առանձնացվել Սպանդարյան արդյունաբերական հանգույցի խճաքարերի արտադրության քարհանքից առաջացած անօգտագործելի տարածքից, ինչպես նաև տրվել է թույլտվություն աղբավայրը շահագործող ընկերությանը:⁴⁷

Բացի հատուկ հատկացված խաղավայրերից՝ շինարարական և քանդման թափոնները նաև ապօրինի և կամայականորեն թափվում են այլ վայրերում, այդ թվում՝ գետերում, ձորերում, լճված արտադրական տեղամասերում, կոշտ կենցաղային թափոնների համար նախատեսված վայրերում և այլն:

Հայաստանում մինչ օրս գործում է Շ/Ք թափոնները կենցաղային կոշտ թափոնների համար նախատեսված աղբարկղերում կամ դրանց մերձակայքում դնելու պրակտիկա: Երևանում Շ/Ք թափոնների հավաքում իրականացնող ընկերության տրամադրած տվյալների համաձայն՝ ամսական մոտ 2,000 խորանարդ մետր Շ/Ք թափոններ են հավաքվում և տեղափոխվում աղբավայր: Բացի այդ, օպերատորը նաև հավաքում է խոշոր եզրաչափերի թափոնները, որոնք բնակիչները պարզապես թողնում են կենցաղային թափոնների համար նախատեսված աղբարկղերի մոտ:

⁴⁶ Նախագծի նկարագրությունը անգլերեն հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/environment_and_energy/elimination-of-obsolete-pesticide-stockpiles-and-addressing-pops.html

⁴⁷ Գրամանի պաշտոնական կայքէջը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.yerevan.am/am/mayors-decisions/2391-a-3/>

2.7.6 Առանցքային ենթակառուցվածքային թերություններ

Հայաստանն ընդհանուր առմամբ արդյունավետ թափոնների կառավարում իրականացնելու համար ունի թույլ ենթակառուցվածքներ, ներառյալ

- աղբատար մեքենաների ոչ բավարար կարողություններ,
- ԿԿԹ աղբարկղերի անբավարար քանակ, տեսակներ և տեղադրում,
- տեսակավորված հավաքման համար ենթակառուցվածքների, այդ թվում՝ թափոնների տեսակավորված տեղադրման համար հատկացված վայրերի բացակայություն,
- շատ համայնքներ օգտագործում են աղբատար խողովակներ և բունկերային համակարգեր,
- սանիտարական աղբավայրերի և վտանգավոր թափոնների համար նախատեսված հատուկ աղբավայրերի բացակայություն,
- աղբավայրերում նվազագույն սարքավորումների (ցանկապատ, դարպաս, ավտոմոբիլային կշեռքներ և այլն) բացակայություն,
- դեպի առկա աղբավայրերից մեծ մասը տանող ճանապարհները վատ վիճակում են:

Բացահայտված բացերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ քննարկվում են «3.4 Տեխնոլոգիական և ենթակառուցվածքային բացեր» բաժնում, իսկ համապատասխան քաղաքականության առաջարկությունները ներկայացված են «4.4 Առաջարկություններ տեխնոլոգիայի և ենթակառուցվածքների վերաբերյալ» բաժնում:

2.8 Թափոնների կառավարման պրակտիկաները Հայաստանում

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.8.1 Կանխում և կրճատում
- 2.8.2 Վերօգտագործում (նախապատրաստում վերօգտագործման համար)
- 2.8.3 Վերամշակում (սյուլթի օգտահանում)
- 2.8.4 Էներգիայի օգտահանում (թափոնից Էներգիա)
- 2.8.5 Տեսակավորում և տեսակավորված հավաքում
- 2.8.6 Հավաքում, տեղափոխում, տեղադրում

2.8.1 Կանխում և կրճատում

Պլաստիկ տոպրակներ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը մշակել է ծրագիր՝ միտված մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների սպառման կրճատմանը: Թափն քաղաքն այս առումով ընտրվել է որպես պիլոտային քաղաք: Ընթացքի մեջ են երկտեղ աղբարկղերի տեղադրումը, պլաստիկ շշերի վերամշակումը, ինչպես նաև Թափն քաղաքի աղբավայրի ցանկապատման և վերանորոգման աշխատանքները: Այս քաղաքականությունը մեկնարկել է մեկ համայնքում, որից հետո փորձ է արվելու այն տարածել ողջ մարզի, իսկ հետագայում՝ երկրի վրա:

Բժշկական թափոններ

«Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ ու նորմեր փաստաթղթում հատուկ գլուխ նվիրված է թափոնների ծավալի կրճատման առաջնահերթությանը, ըստ որի՝ հաստատությունը պետք է գնահատի վտանգավոր քիմիական թափոնների քանակի կրճատման հնարավորությունները հետևյալ հերթականությամբ. առաջնահերթություն է տրվում ծագման նվազեցմանը, որին հետևում է պաշարի օգտահանումը և կրկնակի օգտագործումը, վերամասագերծումը և վերջնական վնասագերծումը: Նկարագրվում են նաև վտանգավոր քիմիական թափոնների ծավալի կրճատմանը վերաբերող գանազան առաջարկություններ:

Արտադրական թափոններ

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) 2015 թ.-ին նախաձեռնել է «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» (ՌԱՄԱ) մեկամյա ծրագիր, որի նպատակն էր բարելավել թիրախային արդյունաբերական ոլորտների ՓՄՁ-ների բնապահպանական գործունեությունը և ռեսուրսների արդյունավետությունը, ներառյալ թափոնների կրճատումը մասնավորապես գյուղատնտեսական /սննդի, քիմիական և շինարարական սյուլթերի արտադրության ոլորտներում:⁴⁸

2.8.2 Վերօգտագործում (նախապատրաստում վերօգտագործման համար)⁴⁹

Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտներում տարածված է մի շարք արտադրատեսակների վերօգտագործումը թե՛ վերանորոգման, և թե՛ անմիջական օգտագործման միջոցով:

⁴⁸ Ծրագրի մասին մանրամասները հասանելի են հետևյալ հղումով՝ <http://recp.am/http-recp-am-about-project-2/?lang=hy>

⁴⁹ Այստեղ վերօգտագործումը նշանակում է արտադրատեսակի բազմակի օգտագործում՝ ըստ իր նախնական նշանակության:

Շինարարություն

Վերօգտագործվող հիմնական նյութերն են շենքերի ու շինությունների ապամոնտաժումից առաջացող քարերը, դռներն ու պատուհանները, կտուրների ծածկերը և այլ նյութեր, որոնք հնարավոր է օգտագործել ըստ իրենց նախնական նշանակության:

Կահույք

Մեծ եզրաչափերի թափոնների վերօգտագործման լավ օրինակ է «Նորոգի» ռեսուրսային կենտրոնը, որը բացվել է 2018 թվականին Եվրոպական միության աջակցությամբ՝ «Հաբիթաթ ֆոր Յյուլենիթի Արմենիա» հիմնադրամի «Հայաստանում կենսապայմանների բարելավում» ծրագրի շրջանակում: Կենտրոնը որպես նվիրատվություն ստացած կահույքն ու կենցաղային իրերը վերանորոգելուց հետո մատչելի գներով դնում է վաճառքի ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար:⁵⁰

Ավտոպահեստամասեր

Վերանորոգման միջոցով բազմակի վերօգտագործման վառ օրինակ է ավտոմոբիլային ոլորտը, որտեղ մեծ տարածում ունի մի շարք փոխարինող մասերի վերանորոգումը, օրինակ՝ արգելակային (արգելակման կոճակներ ու սկավառակներ, ամորտիզատորներ և այլն):

Ներկի տարաներ

Գյուղական համայնքներում ներկերի պլաստիկ տարաները վերօգտագործվում են տնային տնտեսություններում՝ որպես ջրի կամ կաթի տարաներ, ինչն իսկապես կարող է բարձր առողջապահական ռիսկեր առաջացնել:

Պլաստիկ և ապակե շշեր

Գյուղական համայնքներում դրանք հաճախ այրում են տաքացման նպատակով՝ պատճառաբանելով, որ շատ ավելի արագ ու լավ է այրվում, քան փայտը, և ավելի շատ ջերմություն է տալիս:

Տարածված է նաև պլաստիկ և ապակե շշերի որոշակի վերօգտագործման անվերահսկելի, սանիտարական նորմերին չհամապատասխանող գործունեություն:

Դրանք հիմնականում հավաքվում են աղբամաններից, առանձին մարդկանց կամ կազմակերպությունների կողմից, հանձնվում ապակու ընդունման կետերում, լվացվում 5-10 դրամով և վերավաճառվում 15 դրամով՝ օգտագործելով գինու, դոշաբի և վաճառքի ենթակա այլ ապրանքների համար:

Էլեկտրական թափոններ

Նորոգված էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, լվացքի մեքենաների, փոշեկուլների, արդուկների, ջրատաքացուցիչների, օդորակիչների և խոհանոցային սարքերի՝ միքսերների, բլենդերների, տոստերների, ջեռոցների և այլնի համար առկա են լավ զարգացած ենթակառուցվածքներ և շուկա: Կան մի քանի առցանց հարթակներ օգտագործված, սակայն նորոգված և շուկայում հայտնված էլեկտրական սարքավորումների համար: Օրինակ՝ sarnaran.am⁵¹ հարթակը մասնագիտացած է վերանորոգված և մատչելի գներով (մինչև 90,000 դրամ) վաճառվող սառնարանների և սառցարանների հարցում:

2019 թ. -ի դրությամբ Հայաստանում չի եղել ազգային կամ տեղական մակարդակով նախաձեռնված թափոնների կանխարգելման ծրագիր: Ազգային քաղաքականությունները պետք է ապահովեն նման ծրագրերի՝ միջազգային փորձին համահունչ իրականացումը՝ նպատակ ունենալով տնտեսական աճն ազատելու կոշտ թափոնների գոյացման՝ շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա թողած

⁵⁰ Կենտրոնի մասին մանրամասները հասանելի են հետևյալ հղումով՝ <http://www.norogi.am/hy/>

⁵¹ Տեսնել ավելին՝ <http://sarnaran.am/>

ազդեցությունից: Եվրոպական հանձնաժողովը 2012 թ. -ին մշակել է «Թափոնների կանխարգելման ծրագրի մշակում»⁵² ուղեկցային փաստաթուղթը, որի նպատակն է եղել ԵՄ անդամ երկրներին և շահագրգիռ այլ կողմերին օգնել օգտվել թափոնների կանխարգելման և ռեսուրսների արդյունավետ գործածման բազմաթիվ հնարավորություններից:

2.8.3 Վերամշակում (կյուլթի օգտահանում)

Ներածություն

Հայաստանում կոշտ թափոնների վերամշակման պրակտիկան գնալով ավելի լայն տարածում է ստանում, սակայն այդ մասին տեղեկատվության տարածումը թերի է, ինչի հետևանքով դեռևս կա այն թյուր կարծիքը, թե Հայաստանում թափոնները ընդհանրապես չեն վերամշակվում: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2019 թվականի դրությամբ Հայաստանում գործում են 20-ից ավելի կոշտ թափոններ վերամշակող ընկերություններ, որոնց թվում՝ թղթի վերամշակմամբ զբաղվող ավելի քան 10 կազմակերպություն, 5-ից ավել պլաստիկ, 3 ապակի, պոլիէթիլեն վերամշակող բազմաթիվ փոքր և միջին առևտրային տնտեսվարողներ:

Հաջորդիվ ներկայացվում են օգտահանմամբ զբաղվող 16 ընկերությունների հետ իրականացված հարցումների հիմնական արդյունքները:⁵³

Հարցում իրականացրած 16 ընկերություններից 12-ը նշում է կյուլթերի պակասի մասին: Թեպետ աղբավայրերում վերամշակման ենթակա կյուլթեր կան, ոչ բոլոր վերամշակման օբյեկտներն են կյուլթեր ընդունում այդ աղբյուրից: Նշված 16 ընկերություններից 10-ն են նաև թափոններ ընդունում աղբավայրերից: Ոչ ֆորմալ ուղորտի կողմից նշված աղբյուրից վերամշակման ենթակա կյուլթեր են մատակարարվում 16 ընկերություններից 8-ին, իսկ տեսակավորման քաղաքացիական նախաձեռնությունները վերամշակման ենթակա կյուլթեր են մատակարարում 16 ընկերություններից 12-ին: 9 ընկերություն ունի հավաքման սեփական ենթակառուցվածքը: Երեք ընկերություններ կյուլթերն արտահանում են թե՛ մշակված, թե՛ անմշակ վիճակում:

Մտավոր գնահատականներով Հայաստանում ամսական առաջանում է մոտ 350 տոննա PET տեսակի պլաստիկ շիշ, որից վերամշակվում է միայն 150-200 տոննա, այսինքն՝ 50%: Ակնհայտ է, որ թափոնների կառավարման արժեշղթայում թերի է այն օղակը, որը կապում է թափոն առաջացնողներին (բնակչություն և արտադրություն) և վերամշակող ընկերություններին: Կա նաև համագործակցություն վերամշակում իրականացնող որոշ ընկերությունների միջև: Օրինակ՝ 22եր վերամշակող PET ընկերությունը առանձնացնում է 22երի HDPE խցանները և դրանք մատակարարում այլ արտադրողների՝ այդպիսով ստեղծելով արտադրական համակցություն (սիմբիոզ):

Ինչպես արդեն նշվել է, օգտահանված կյուլթերի մեծ մասը՝ պլաստիկը, ապակին և մետաղները, հանվում են աղբավայրերից: Պղինձը, երկաթն ու այլուրից օգտահանվում են բաց այրման միջոցով երկրում գործող գրեթե բոլոր աղբավայրերում: Աղբավայրերից հավաքված վերամշակման ենթակա թափոնները փոխադրվում են վերամշակման օբյեկտներ աղտոտված վիճակում, որից հետո նախքան արտադրական

⁵² Չեկոյցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ec.europa.eu/environment/waste/prevention/pdf/Waste%20prevention%20guidelines.pdf>: Թափոնի կանխման վերաբերյալ այլ ԵՄ նախաձեռնությունների մասին մանրամասներ հասանելի են հետևյալ հղումով՝ <https://ec.europa.eu/environment/waste/prevention/index.htm>

⁵³ Թափոններից կյուլթի և էներգիայի օգտահանման գործունեությամբ զբաղվող ընկերությունների թարմացված ցանկը հասանելի է ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի Թափոնների ռեսուրսների շտեմարանում հետևյալ հղումով՝ <https://wri-ace.aua.am/hy/institutions/#private>

բոլոր փուլերն անցնելը լվացվում են հիմնականում ոչ բավարար սանիտարական պայմաններում՝ այդպիսով վերամշակման օբյեկտի բոլոր աշխատակիցներին ենթարկելով ամեն տեսակ ռիսկերի:

Վերամշակման օբյեկտները հաճախ հիմնվում են խոշոր ընկերությունների կողմից: Որոշ դպրոցներ, ինչպիսին Մեծ Մանթաշ գյուղի դպրոցն է, հավաքում են թղթե թափոնները, որոնք այնուհետև փոխանակում են զուգարանի թղթի հետ՝ այդպիսով կրճատելով համապատասխան ծախսերը: Սակայն զուգարանի թղթի արտադրության համար անհրաժեշտ նյութերի մի մասը հանվում է աղբավայրերից, իսկ վերամշակման գործընթացը չի անցնում որևէ ստուգում կամ վերահսկում, ինչը կարող է լուրջ առողջապահական ռիսկեր առաջացնել:

Հետազոտությունները ցույց են տվել, որ վերամշակող ընկերությունների հետ համատեղ գործողությունները, ինչպես նաև կառավարության կողմից որոշակի արտոնյալ պայմանների տրամադրումը կստեղծի ներկա իրավիճակը զգալիորեն բարելավելու հնարավորություն: Վերամշակող շատ ընկերություններ երբեք չեն լսել տեղական կամ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասին: Նրանց մեծ մասը առաջացել և գործել է իրավական համակարգից դուրս՝ փորձելով խուսափել տարբեր խոչընդոտներից:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նույնիսկ ցածր որակի պլաստիկ թափոնների վերամշակումը մրցունակ տնտեսական գործունեություն է: Օրինակ՝ վերամշակված պլաստիկից պատրաստված ծաղկամանի արժեքը 300-ից մինչև 950 դրամ է, մինչդեռ ներկրված նմանատիպ ծաղկամաններն արժեն 500-1,200 դրամ: Վերամշակված պլաստիկից պատրաստված սովորական օճառամանը արժե 70 դրամ, մինչդեռ նույն ներկրված ապրանքն արժե մոտ 160 դրամ:

Պլաստիկ

«Զինլենդ» ընկերությունն առաջիններից է, որ Հայաստանում զբաղվել է աղբի տեսակավորման և վերամշակման աշխատանքներով՝ հիմնադրվելով 2009 թ.-ին: Կնքված պայմանագրերի համաձայն՝ որոշ քաղաքներ իրենց կենցաղային աղբը հանձնում են «Զինլենդ»-ին վերամշակման համար: Ներկայումս գործարանը վերամշակում է PET տեսակի պլաստիկ շերտ՝ ստանալով մանրափաթիլներ: Ամսական վերամշակվում է մոտ 160 տոննա պլաստիկ շիշ: Ողջ արտադրանքը արտահանվում է: Գործարանը վերամշակված թղթից նաև արտադրում է ծալքավորման թուղթ և ծալքավոր սովարաթղթի արկղեր:

Հայաստանում վերամշակվում են PET, HDPE, PP, LDPE, PS և այլ տեսակի պլաստիկ նյութեր: HDPE, PP և PS տեսակները հումքային նյութ են դառնում դույլերի, կախիչների, ծաղկամանների և տեղական շուկայում առկա ավելի քան 20 այլ տեսակի արտադրանքի համար:

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում»⁵⁴ ծրագիրը, որն իրականացվում է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից, հնարավորություն է տալիս հավաքելու պլաստիկ նյութեր Հայաստանի հարավային մարզերից ընտրված 10 քաղաքներում և ծրագրի կողմից ստեղծված արհեստանոցում դրանք վերածելու ավագապոլիմերային հումքի և շինարարական սալիկների:

Ջերմոցների շինարարության մեջ օգտագործված մեծ քանակությամբ պոլիէթիլենային նյութեր վերամշակվում են մեկանգամյա և բազմակի օգտագործման պլաստիկ տոպրակների հետ, որոնք ի վերջո վերածվում են աղբի համար նախատեսված տոպրակների:

⁵⁴ Տեսնել ավելին՝ https://eeas.europa.eu/delegations/armenia/56768/node/56768_en/

Թուղթ/ստվարաթուղթ

ՀՀ-ում գործում են թղթի վերամշակմամբ զբաղվող ավելի քան 10 կազմակերպություններ, որոնք վերամշակում են ստվարաթուղթ, սպիտակ թուղթ և գրաֆիկական թղթի թափոններ փաթեթավորման ստվարաթուղթ, փաթեթավորման թուղթ, զուգարանի թուղթ և թղթե այլ ապրանքներ արտադրելու նպատակով: Ինդրահարույց է, սակայն, զուգարանի թղթի արտադրության ստուգումն ու վերահսկումը պահանջվող չափորոշիչներին համապատասխանելու առումով: Փոքր վերամշակման օբյեկտը վերամշակում է ամեն տեսակի թղթե թափոններ՝ փայտ ավելացնելու միջոցով դրանք վերածելով վառելիքային բրիկետների:

Ապակի

Ապակին վերամշակվում է տարբեր օբյեկտներում և ըստ գույների: Սպիտակ/թափանցիկ ապակին վերամշակվում է տարբեր տեսակի հուշանվերային շշի արձանիկներ պատրաստելու համար (կախված պատվերից), որոնք շշալցվում են ոչ միայն ավտոմատային խմիչքներ արտադրող տեղական օբյեկտներում, այլ նաև արտահանվում են միջազգային շուկա:

Կապար պարունակող մարտկոցներ

Հին մարտկոցներից կապարի օգտահանումը սովորաբար իրականացվում է փոքր օբյեկտների կողմից, ինչպիսիք են մարտկոցներ վաճառող և փոխող խանութները: Այս օբյեկտները կապարը վերամշակում են ինքնուրույն կամ հին մարտկոցները վաճառում են ընկերությունների, որոնք իրականացնում են վերամշակումը և ամենայն հավանականությամբ արտահանում դրանք: ՀՀ կառավարությունից մարտկոցներ վերամշակելու թույլտվություն ստացել է երեք ընկերություն՝

1. «Էդմետ» ՍՊԸ-ն 2015 թ.-ին ստացել է վտանգավոր թափոններ վերամշակելու, վնասագերծելու, պահելու, փոխադրելու և տեղադրելու (կապար պարունակող մարտկոցների պահպանում հետագա արտահանման համար) թույլտվություն:
2. «Մետեքսիմ» ՍՊԸ-ն 2016 թ.-ին ստացել է վտանգավոր թափոններ վերամշակելու, վնասագերծելու, պահելու, փոխադրելու և տեղադրելու (թթվային մարտկոցների հավաքում, պահում և փոխադրում, մետաղական ջարդոնների պահում և արտահանում) թույլտվություն:
3. «Մինասյան Ռիսայքլինգ Բոմփանի» ՍՊԸ-ն 2017 թ.-ին ստացել է վտանգավոր թափոններ վերամշակելու, վնասագերծելու, պահելու, փոխադրելու և տեղադրելու (սպառման ոչ ենթակա մեքենաների մարտկոցների հավաքում և ժամանակավոր պահում) թույլտվություն:

Ավտոմեքենայի թափք

Երկար տարիներ իրականացվել է շարքից դուրս եկած մեքենաների կմախքների չվերահսկվող տեղադրում ճանապարհների եզրերին, դաշտերում, ձորերում և այլ վայրերում: Երկրում կան մի քանի մետաղաձուլական ընկերություններ, որոնք կազմակերպում են նման թափոնների հավաքումը մետաղի օգտահանման նպատակով: Նման ընկերություններից է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում գտնվող «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն: Վերը նշված «Էդմետ» և «Մետեքսիմ» ընկերությունները նույնպես ընդունում են նման տեսակի թափոններ:

Կարևոր է նշել, որ վերոնշյալ կազմակերպությունների կողմից որոշ տեսակի կոշտ թափոնների վերամշակման գործունեության նկատմամբ հավանաբար պետք է իրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներ: Այս առումով անհրաժեշտ է մատնանշել Հայաստանում առկա բնապահպանական վերահսկման և մշտադիտարկման մեխանիզմների բոլոր թերություններն ու բացերը:

2.8.4 Էներգիայի օգտահանում (թափոնից Էներգիա)

Հանրապետությունում «աղբից Էներգիա» ստանալու պրակտիկան լայն տարածում չունի: Չկան կենցաղային թափոնների աղբակիզման օբյեկտներ, սակայն ինչպես նշվել է 2.7.1 բաժնում, երկրում կան օրգանական թափոններից բիոգազ օգտահանելու մի քանի նախադեպեր, և ինչպես քննարկվում է 2.7.2 բաժնում (*Կենսաբանական թափոնների մշակման ենթակառուցվածք*), Հայաստանում իրականացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, որոնք ներառել են կենսաբանական թափոնից Էներգիա ստացող ենթակառուցվածքներ՝

- «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» թռչնաբուժական թափոնների օգտահանման կայան,
- «Համապարփակ աջակցություն Հայաստանի լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացման համար» ծրագիր,
- «Գյուղական համայնքներում բիոգանգվածով ջեռուցման լուծումներ – «BioRuralHeating» ծրագիր,
- Գազի կորզման և այրման համակարգ Երևանի Նուբարաշեն աղբավայրում:

Ավելի փոքր մասշտաբով առկա են թափոնից Էներգիա ստանալու հետևյալ պրակտիկաները՝

- գոմաղբից մեթանի արտադրություն որոշ գյուղերում,⁵⁵
- կենսաբանական թափոններից որպես վառելիք օգտագործվող պելետի արտադրություն,⁵⁶
- ջեռուցման և խոհանոցում օգտագործման նպատակով չոր գոմաղբի այրում գյուղական վայրերում,
- շինարարական և քանդան թափոններից առանձնացված փայտյա թափոնների այրում,
- կենսազանգված (տերևներ, Էտման մնացորդներ) քաղաքներում,
- թղթե թափոնների այրում,
- գյուղական վայրերում, հատկապես սառը եղանակին խառը թափոնների այրում:

«ԱՄ-Եսկա» ընկերությունը պիրոլիզի միջոցով մշակում է անվաղողերի և յուղերի թափոնները վառելիք և տեխնիկական ածխածին ստանալու նպատակով: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից պատվիրված և ԱՄՆ ՄՉԳ կողմից ֆինանսավորված՝ 2019 թ.-ին իրականացված հետազոտությունն⁵⁷ ուսումնասիրել է պիրոլիզի և պլազմային գազացման կիրառելիությունը Հայաստանում ԿԿԹ մշակման համար:

Թերություններ

Հայաստանն այժմ ունի լավ զարգացած գազային ենթակառուցվածքներ: Ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի՝ 2014 թ. -ին Հայաստանի մեքենաների 77%-ն օգտագործում էր սեղմված բնական գազ (CNG), երկրում կար 334 գազալցակայան, և այդ տարում երկրում սպառվել էր ավելի քան 450 մլն խորանարդ մետր գազ:⁵⁸ Բնակելի ոլորտը նույնպես լայնորեն օգտագործում է բնական գազ ջեռուցման և խոհանոցում օգտագործելու նպատակով: Չնայած բնական գազի առկա առաջարկին և ենթակառուցվածքների, ինչպես նաև կենցաղային, գյուղատնտեսական և սննդային օրգանական թափոնների զգալի ծավալների առկայությանը՝ երկրում բիոգազի ներուժը դեռևս անտեսված է:

2.8.5 Տեսակավորում և տեսակավորված հավաքում

2018 թվականից Հայաստանում գործում են մի քանի ընկերություններ ու նախաձեռնություններ, որոնք իրականացնում են հիմնականում կոշտ կենցաղային աղբից պլաստիկ, ապակե և թղթե թափոնների

⁵⁵ Գյուղ Փամբակ, <https://hetq.am/hy/article/79179>

⁵⁶ Գյուղ Բասեն, <https://www.ecolor.org/en/news/energy/-/8841/>

⁵⁷ «Հայաստանում պիրոլիզի և պլազմային գազացման տեխնոլոգիաների կիրառելիության ուսումնասիրություն»՝ https://wri-ace.aua.am/files/2019/11/PG-feasibility-in-Armenia_EN.pdf

⁵⁸ Աղբյուր՝ <https://armenia-am.gazprom.com/press/news/2014/10/315/>

տարանջատված հավաքում վերամշակող ընկերություններին վաճառելու նպատակով: Այդ նախաձեռնություններից որոշները ունենում են ֆինանսական օժանդակություն միջազգային կազմակերպություններից, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԵՄ գրասենյակը, Եվրասիա հիմնադրամը, որոշները գործունեություն են ծավալում՝ հիմնվելով քաղաքացիական օժանդակության վրա: Նախաձեռնող կազմակերպությունների գործառնությունը, որպես կանոն, ծախսարդյունավետ չէ անգամ նշված ֆինանսական օժանդակության պայմաններում: Սրա հետևանքն այն է, որ, օրինակ, օգտվողները (անհատ կամ կազմակերպություն) այդ տարանջատված աղբահանության ծառայությունը ստանում են բաժանորդագրման տարեկան վճարի դիմաց, որը միջինը կազմում է 6,000-16,000 ՀՀ դրամ: Արդյունքում թափոն առաջացնողները, որոնք օգտվում են համայնքային աղբահանության վճարովի ծառայությունից, փաստացի կրկնակի են վճարում իրենց պլաստիկ, ապակե և թղթե թափոնների համար:

Որոշ համայնքներ իրականացնում են թափոնների որոշ տեսակների տարանջատում, օրինակ՝ պլաստիկ շշեր, ապակի, թուղթ և այլն: Սակայն դժվար է ասել, թե այս տարանջատումը ինչքանով է համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմերի պահանջներին: Օրինակելի վարքագիծ դրսևորող համայնք է Քանաքեռավանը, որտեղ տեղական ինքնակառավարման մարմնի հետ համատեղ բնակչությունն իրականացնում է աղբի տեսակավորման գործընթաց:

2019 թ. -ի ամռանը Երևան քաղաքը սահմանեց կենցաղային թափոնների ընդունման կետեր, որտեղ քաղաքացիները կարող են անվճար բերել և տեղադրել իրենց խոշոր եզրաչափերի և այլ տեսակի կենցաղային թափոնները՝ դրանք ընդհանուր մոնիցինգայալ թափոնների աղբարկղերում դնելու փոխարեն: Երկու թաղամասերում քաղաքային աղբահանության ծառայությունը մեկնարկել է մեծ սուպերմարկետներից և խանութներից ստվարաթղթի առանձնացված հավաքում իրականացնելու փորձական ծրագիր: Բացի այդ, Երևանի քաղաքապետարանը սկսել է մշակել քաղաքի 150 տարբեր վայրերում թափոնների տեսակավորման արկղեր տեղադրելու ծրագիր:

2011 թ.-ի փետրվարին ՄԱԶԾ-ն, ԱՄՆ ՄԶԾ-ի և հայկական «Էկո Ինջիներինգ» ՄԴԸ-ի հետ համագործակցությամբ Հայաստանի յոթ մարզերի 14 խոշոր քաղաքային համայնքներում մեկնարկեց «Պլաստիկ թափոնների հավաքում և վերօգտագործում» ծրագիրը,⁵⁹ որը սպասարկում է ավելի քան 330,000 մարդկանց: Ծրագրի մեկնարկից 18 ամիս անց թիրախավորված համայնքներն իրականացնում են ծրագրի սպասարկման տարածքներում գոյացող PET թափոնների ավելի քան 60 տոկոսի առանձնացում, մշակում և այնուհետև ուղարկում վերամշակման: Նման արդյունքը հնարավոր է դարձել PET վերամշակող ընկերությունների և տեղական համայնքապետարանների միջև հանրային-մասնավոր գործընկերության հավասարակշռված մոդելի կիրառման միջոցով: «Էկո Ինջիներինգ»-ի ղեկավար Հարությունը Պետրոսյանի խոսքով՝ երկրում տարեկան հեռացվում է մոտ 6,000 տոննա պլաստիկ թափոն: Ըստ նրա՝ գործունեության 12 ամսվա ընթացքում ընկերությունն արդեն վերամշակել է 1,000 տոննա պլաստիկ շիշ: Ծրագրի գործունեությունը դադարեց 2016 թ.-ին:

Թերություններ

- Թափոնների առանձնացման գործող նախաձեռնությունները կայուն չեն, կախված են դոնորային աջակցությունից և ունեն շատ ցածր ծածկույթ:
- Հավաքված վերամշակման ենթակա թափոնների մեծ մասը հանվում է աղբավայրերից և տեղափոխվում վերամշակման օբյեկտներ աղտոտված և կեղտոտ վիճակում:

⁵⁹ Տեսնել ավելին՝ http://www.am.undp.org/content/armenia/en/home/ourwork/povertyreduction/successstories/_collection-and-reuse-of-plastic-refusewaste-management-and-publ.html

- Սննդային և այլ օրգանական թափոնները (օր.՝ գյուղատնտեսական և ֆերմերային տնտեսությունների թափոններ), շատ փոքր բացառություններով, հիմնականում ուղարկվում են աղբավայրեր:
- Աղբավայրեր ուղարկված կոշտ կենցաղային թափոնները պարունակում են վտանգավոր նյութեր և առարկաներ, որոնք աղտոտում են հողը, ջուրը և մթնոլորտը:

2.8.6 Հավաքում, տեղափոխում, տեղադրում

Ներկայումս հանրապետության համայնքներում աղբահանությունն իրականացվում է կամ համայնքի, կամ համայնքներում գործող մասնավոր հատվածի միջոցով: 2018 թվականի դրությամբ հանրապետության 153 բնակավայրերում աղբահանության ծառայությունները մատուցվում են 33 մասնավոր ընկերությունների կողմից: Մասնավոր օպերատորների հետ կնքվում են կարճաժամկետ պայմանագրեր, դրանք ամբողջապես ֆինանսավորվում են սակագներից ստացված քիչ գումարով և պետական բյուջեից ստացվող դոտացիաներով: Միաժամանակ ներկայումս կանոնակարգվում են տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության ծառայության մատուցման պայմանագրերի կնքման գործընթացները:

Եթե 1.5 տարի առաջ Հանրապետության մարզերում առկա էին իրավաբանական անձանց/տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության ծառայությունների մատուցման միայն 8,800 կնքված պայմանագրեր, այժմ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ դրանց թիվը հասել է 19,000-ի և ավել: Ընդ որում, հստակեցվում են նաև պայմանագրերում նշված դրույքաչափերը՝ ըստ տնտեսվարող սուբյեկտի զբաղեցրած տարածքի և գործունեության նպատակային նշանակության:

Որպես դրական օրինակներ՝ նշենք Սևան ազգային պարկում և Դիլիջան ազգային պարկում իրականացվող աղբահանությունը: ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի ԿԿԹԿ ծրագրի (ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր)⁶⁰

Չրջանակներում նախատեսվում է Սևան ազգային պարկի տարածքում առաջացող թափոնները տեղափոխել ՀՀ Կոտայքի մարզ:

Թերություններ

Մի քանի համայնքապետարանների հետ իրականացված հարցումները ցույց տվեցին, որ աղբահանության օպերատորներն ունեն պատրաստվածության ցածր մակարդակ և չունեն թափոնների կառավարման համակարգերի և ենթակառուցվածքների (աղբարկղեր, աղբատար մեքենաներ, աղբավայրեր և այլն) կայուն շահագործման տեխնիկական ցուցումներ, ինչը հանգեցնում է համակարգերի կյանքի տևողության կրճատմանը և մեծ ծախսերի: Մասնավորապես ոչ պատշաճ շահագործման հետևանքով անվավոր աղբարկղերի օգտագործման ժամկետը կրճատվում է՝ միևնույն ժամանակ բարձրացնելով անարդյունավետության մակարդակը և թափոնների հավաքման վրա ծախսվող ժամանակը:

Շատ համայնքներ օգտագործում են աղբատար խողովակներ և բունկերային համակարգեր, որոնք մեծ խնդիրներ են առաջացնում՝ կապված դրանց կառավարման, հանրային առողջության և շրջակա միջավայրի հետ՝ չնայած այն բանին, որ օրենսդրությունը սահմանում է պարտադիր նորմեր բազմաբնակարան շենքերում ընդհանուր սեփականության պահպանման հարցերում: Աղբատար խողովակների համակարգը մեծացնում է թափոնների հավաքման վրա ծախսվող ժամանակը և ենթադրում ծավալուն մեխանիկական աշխատանք:

⁶⁰ Ծրագրի պաշտոնական կայքէջը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395271526518&d=Mobile&pagename=EBRD%2FContent%2FContentLayout>

Բացի մի քանի բացառություններից՝ համայնքների մեծ մասը կիրառում է թափոնների հավաքման անարդյունավետ համակարգեր, որոնք հանգեցնում են թափոնների հավաքման ծառայության անկանոն կամ ուշացած մատուցմանը, աշխատատար գործողությունների, հավաքման վրա ծախսվող ժամանակի և հաճախ նաև գործառնական ծախսերի մեծացմանը:

Բացի մի քանի բացառություններից՝ համայնքները չունեն տարրական գիտելիքներ և կարողություններ պարզ քայլերի իրականացման միջոցով աղբավայրերն առավել կայուն կերպով կառավարելու, այդ թվում՝ ճանապարհների կառավարում, հրդեհների վերահսկում, պատշաճ կոմպակտավորում և թաղում իրականացնելու համար:

2.9 Իրազեկության առկա մակարդակ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2.9.1 Հանրային իրազեկություն
- 2.9.2 Բնապահպանական դասընթացներ
- 2.9.3 Թափոնների կառավարումը ֆորմալ կրթությունում
- 2.9.4 Առողջապահական հաստատություններում վտանգավոր թափոնների վերաբերյալ իրազեկություն
- 2.9.5 Թափոնների ռեսուրսների շտեմարան

Հայաստանում կոշտ թափոնների վնասակար ազդեցությունների և պատշաճ կառավարման մասին իրազեկվածության բարձրացման անհրաժեշտություն կա ոչ միայն երկրի բնակչության հիմնական հատվածի համար, այլև կառավարական տարբեր մակարդակներում՝ գերատեսչական մարմիններից մինչև տեղական ինքնակառավարման մարմիններ:

Իրազեկման մակարդակը ցածր է հատկապես հետևյալ ոլորտներում՝

- առողջական ռիսկեր, բնապահպանական ռիսկեր,
- թափոնների կառավարման արժեքի թանկեր,
- աղտոտողը վճարում է սկզբունք,
- օրգանական թափոնների կոմպոստացում,
- աղբակիզման առավելություններ ու բացասական ազդեցություններ,
- պլաստիկ թափոնների վերամշակման ազդեցություններ,
- թափոնների կրճատման պրակտիկաներ,
- աղբանոցներում թափոնների բաց այրման ազդեցություններ,
- թափոնի առանձին տեսակների ազդեցություններ (պլաստիկ տոպրակ, մարտկոցներ):

Իրազեկման բարձրացման ծրագրեր երկրում իրականացվում են հիմնականում ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների համայնքային զարգացման ծրագրերի շրջանակներում, ինչը խիստ անկանոն ու անհամաչափ բնույթ ունի և բավարար չէ լայնամասշտաբ իրազեկման համար: ՀԿ-ները հիմնականում անդրադառնում են կոմպոստացման և աղբի տարանջատման թեմաներին՝ հատուկ շեշտադրելով դպրոցներում գործնական օրինակների մշակումն ու իրականացումը:

2.9.1 Հանրային իրազեկություն

Սկսած 2018 թվականի փետրվարից՝ «Էկո ադ» ՀԿ-ն⁶¹ իրականացնում է իրազեկման ակցիաներ բանուկ փողոցներում՝ տարանջատելով բնակիչների հավաքած՝ վերամշակման համար պիտանի թափոնները, ներգրավելով աշխատանքներում անցորդների, ուսանողների և դպրոցականների: Արդյունքում շատ քաղաքացիներ միանում են հենց բազմաբնակարան շենքերից: Ստանալով համապատասխան թույլտվություն քաղաքապետարանի կողմից՝ ակցիաներն իրականացվում են ամսվա մեջ 1-2 անգամ: Նմանօրինակ իրազեկման ակցիաներ իրականացվում են նաև ՀՀ տարբեր մարզերի գյուղերում: Սյունիքի մարզի Տաթև գյուղում իրականացվում է «Էկո գյուղ» նախագիծը, որի շրջանակում գյուղի բնակիչները յուրաքանչյուր կգ թափոնի դիմաց ստանում են միավորներ, որը հետագայում փոխանակում են պլաստիկից ու թղթից պատրաստված իրերի հետ՝ այդպիսով թեթևացնելով գյուղացու ծախսերը և ցույց տալով, որ թափոնները արժեքավոր են:

Վերոնշյալ ՀԿ-ն և «Սպիտակ ջուկատ» նախաձեռնությունը իրականացնում են շաբաթօրյակներ հանրային վայրերում՝ ներգրավելով բնակիչներին և թափված աղբը տեսակավորելով ու ուղարկելով վերամշակման: ISSD ՀԿ-ի կողմից իրականացվում են դասընթացներ տարբեր ուսումնական հաստատություններում, պետական հաստատություններում և տարբեր հանրային միջոցառումների ընթացքում:

«Մաքուր Հայաստան»⁶² նախաձեռնությունը գործում է 2017 թ. -ից. դրա նպատակն է բարելավել քաղաքների, գյուղերի, այգիների, ճանապարհների և այլ վայրերի մաքրությունը հանրային մասնակցության և իրազեկվածության բարձրացման միջոցով: Նախաձեռնությունը ողջ երկրում կազմակերպել է մի քանի շաբաթօրյակներ, ինչպես նաև 2018 թ. -ին մշակել է հեռախոսի հավելված, որը մարդկանց տեղեկացնում է աղտոտված վայրերի մասին՝ կիրառելով հանրային մասնակցության ԱՏՀ գործիքներ: «Մաքուր Հայաստան» նախաձեռնության⁶³ մեջ ներգրավված են 10,000 կամավորներ ՀՀ բոլոր մարզերից: Այն ինքնուրույն կազմակերպում է համաշխարհային մաքրության օրեր Հայաստանում՝ մաքրելով երկրի մոտ 300 տարածք, ներառյալ Սևանա լիճը:

2015 թ. -ի սեպտեմբերին ԵՄ-ն նախաձեռնեց և ֆինանսավորեց «Գյուղական համայնքների համար բիոզանգվածով ջեռուցման լուծումներ» ծրագիրը՝ միտված տեղական հանրային իրազեկվածության բարձրացմանը և ընդունմանը, կենցաղային ջեռուցման առումով կենսազանգվածի օգուտների խթանմանը և սոցիալական ձեռնարկությունների համար որոշումների կայացման այնպիսի գործիքների մշակմանը, որոնք կիրառվում են գյուղական վայրերում ջեռուցման նպատակով կենսազանգվածի կայուն արտադրության և գործածության համար:⁶⁴

2.9.2 Բնապահպանական դասընթացներ

2018 թ.-ին ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը ՄԱԶԾ աջակցությամբ մշակել է բնապահպանական ուսուցման նյութեր՝ նախարարություններում, պետական մարմիններում, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններում որոշում կայացնողների համար: Նշված ուսուցման նյութերի զգալի մասը վերաբերում է թափոնների կայուն կառավարմանը:⁶⁵

2015 թ.-ին ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) նախաձեռնեց «Առավել մաքուր արտադրություն և ռեսուրսների արդյունավետ օգտագործում» ծրագիրը, որի նպատակն էր

⁶¹ Տեսնել ավելին՝ <https://www.facebook.com/ecoaghb/>

⁶² Տեսնել ավելին՝ <https://www.facebook.com/cleanarmenia/>

⁶³ Տեսնել ավելին՝ <https://cleanuparmenia.org/>

⁶⁴ Տեսնել ավելին՝ <https://bit.ly/2p1gHRL>

⁶⁵ Տեսնել ավելին՝ <https://ace.aua.am/hy/projects/undp-environmental-education-training-modules/>

բարելավել թիրախավորված արդյունաբերական ոլորտների ՓՄՁ-ների բնապահպանական կատարողականը և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ներառյալ թափոնների կրճատումը, հատկապես գյուղատնտեսության/սննդի և քիմիական ու շինարարական նյութերի արտադրության ոլորտներում:⁶⁶

2016 թ. -ին ՄԱՉԾ Հայաստանը հիմնեց «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ծրագիրը, որի նպատակն էր հզորացնել Հայաստանի կարողությունները՝ օգտագործելու շրջակա միջավայրի վերաբերյալ կրթությունը և իրազեկվածության բարձրացումը որպես գործիքներ, որոնք կնպաստեն բնական ռեսուրսների կառավարման ոլորտում ներգրավված շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացմանը:⁶⁷

2.9.3 Թափոնների կառավարումը ֆորմալ կրթությունում

Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ուղարկված հարցման պատասխանի՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը միակ կրթական հաստատությունն է, որն ունի թափոնների կառավարմանն առնչվող դասընթացներ: Բակալավրի և մագիստրատուրայի համար մշակված դասընթացները ներառում են թեմաներ՝ կապված զրո թափոն տեխնոլոգիաների, ռադիոակտիվ և վտանգավոր թափոնների կառավարման, արդյունաբերական, կենցաղային և հանքարդյունաբերական թափոնների կառավարման և այլ թեմաների հետ:

Նման կրթական հաստատության մեկ այլ օրինակ է Հայաստանի ամերիկյան համալսարանը,⁶⁸ որն ունի թափոնների թեմաներին առնչվող ընդհանուր կրթության առարկաներ, ինչպես նաև հատուկ դասընթաց կոշտ և վտանգավոր թափոնների կառավարման հիմունքների մասին:

Հայկական կրթական համակարգը, կոնկրետ ծրագրերն ու առանձին դասընթացները պետք է ներառեն ավելի մեծ թվով թեմաներ կոշտ թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսության վերաբերյալ՝ անդրադառնալով թափոնների հիերարխիայի հարցերին՝ կանխարգելումից և կրճատումից սկսած՝ մինչև թափոնների՝ Էկոլոգիապես արդյունավետ հեռացում:

2.9.4 Առողջապահական հաստատություններում վտանգավոր թափոնների վերաբերյալ իրազեկվածություն

Հանրության համար բժշկական թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկման հատուկ ծրագրեր չկան, սակայն բժշկական կազմակերպությունների համար, ինչպիսիք են հիվանդանոցներն ու կլինիկաները, համապատասխան ուսուցումը իրավական պահանջ է:

Առողջապահության նախարարի 2008 թվականի N 03-Ն հրամանով սահմանվող պահանջի համաձայն՝ «Կազմակերպության այն աշխատողները, որոնց աշխատանքային պարտականությունները առնչվում են բժշկական թափոնների գործածության հետ, մինչև իրենց աշխատանքային պարտականություններին անցնելը պարտադիր անցնում են բժշկական թափոնների անվտանգ գործածության պահանջների ուսուցում, ինչպես նաև ծանոթանում են Ակտի պահանջներին: Աշխատողների՝ դասընթացներն անցնելը հավաստվում է կազմակերպության տնօրենի հրամանով: Արգելվում է բժշկական թափոնների անվտանգ գործածության կարգը ուսուցում չանցած աշխատողների մասնակցությունը բժշկական թափոնների

⁶⁶ Տեսնել ավելին՝ <http://recp.am/about-project/>

⁶⁷ Տեսնել ավելին՝ https://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/environment_and_energy/generate-global-environmental-benefits-through-environmental-edu.html

⁶⁸ Տեսնել ավելին՝ <https://aia.am>

գործածությանը»։ Բժշկական թափոնների կառավարման վերաբերյալ կրթական ծրագրերը, ուսուցումը, մշտադիտարկումները և վերահսկողությունը իրականացվում են պետական միջոցներով: Այս հարցը կարևորվում է և ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող մշտադիտարկման առարկաներից մեկն է՝ ներհիվանդանոցային վարակների կանխարգելման գործընթացի մի մասը:

2.9.5 Թափոնների ռեսուրսների շտեմարան

2019 թ. -ին ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը ստեղծեց Թափոնների ռեսուրսների շտեմարանը՝⁶⁹ հավաքելու, պահպանելու և հասանելի դարձնելու թափոնների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝

- թափոններին առնչվող առկա օրենսդրական շրջանակը,
- թափոնների կառավարման ոլորտում ներգրավված հանրային, բիզնես և պետական հաստատությունները,
- թափոններին առնչվող ենթակառուցվածքների ներդրումային ծրագրերը,
- Հայաստանում թափոնների կառավարման համակարգի հետ կապված հետազոտությունները, քաղաքականությունը և ռազմավարական փաստաթղթերը:

⁶⁹ Տեսնել ավելին՝ <https://wri-ace.aua.am/>

3 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՅԵՐ

Սույն գլուխն ամփոփում է թափոնների կառավարման ոլորտի բացերը, որոնք բացահայտվել են ուսումնասիրության ընթացքում և արդեն քննարկվել նախորդ գլխում: Բացերը գնահատող գլուխը բաժանվում է հետևյալ չորս բաժինների.

- 3.1 Օրենսդրական և ռազմավարական բացեր
- 3.2 Ինստիտուցիոնալ բացեր
- 3.3 Ֆինանսական մեխանիզմների բացեր
- 3.4 Տեխնոլոգիական և ենթակառուցվածքային բացեր

Յուրաքանչյուր բաց ներկայացվում է աղյուսակով, որտեղ նշվում է դրա անվանումը, տիրույթը, գնահատումը և վավերացումը, հղումներ «Առկա իրավիճակի վերլուծություն» գլխի համապատասխան բաժիններին, ինչպես նաև հղում «Քաղաքականության առաջարկներ» գլխի համապատասխան առաջարկին:

3.1 Օրենսդրական և ռազմավարական բացեր

3.1.1 Օրենսդրական բաց 1

Անվանում	Մի քանի առանցքային ազգային առաջնահերթություններում և ռազմավարություններում բացակայում են թափոնների կառավարման առնչվող դիտարկումներ
Տիրույթ	Քաղաքականություններ և ռազմավարություններ
Գնահատում	ՀՀ կառավարության 2019թ. -ի գործողությունների ծրագիրն ուրվագծում է երկրի թափոնների կառավարման համակարգի գլխավոր ուղղությունը՝ ընդգծելով դրա կարևորությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, առողջապահությունը և շինարարությունը: Թափոնների կառավարման հարցում միջոլորտային մոտեցում ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ թափոնների կառավարման տարրեր ներառեն ոչ միայն ուղղակիորեն թափոնների կառավարմանը վերաբերող ռազմավարությունները և քաղաքականությունները, այլ նաև այնպիսի քաղաքականություններ, ինչպիսին է, օրինակ, Էներգետիկ անվտանգության ռազմավարությունը: Էներգետիկայի ոլորտը կարող է շահել թափոնից Էներգիա ստացող այնպիսի լուծումներից, ինչպիսիք են կենսազագի արտադրությունը, թիրախային աղբակիզումը, պիրոլիզը և այլն: Թափոնների կառավարման միջոլորտային նման մոտեցումներ պետք է ներառվեն գյուղատնտեսությանը, արդյունաբերությանը, զբոսաշրջությանը և այլ ոլորտներին վերաբերող քաղաքականությունների մեջ:
Բացի գնահատման հղում	2.1.7 Առանցքային ազգային գերակայություններ 2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգային փաստաթղթեր
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.1.2 Օրենսդրական բաց 2

Անվանում	Ոլորտը կարգավորող օրենսդրությունում չկա թափոնների հիերարխիա եզրույթը, դրա սահմանումը և այլ կարևոր սահմանումներ
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Փնահատում	<p>Թեպետ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը ներառում և խրախուսում է թափոնների հիերարխիայի բոլոր տարրերը, սկսած թափոնների կրճատումից մինչև օգտահանում և անվտանգ հեռացում, օրենքը, այնուամենայնիվ, հստակ կերպով չի սահմանում առաջնահերթությունների հերթականությունը, ինչն այդքան կարևոր է թափոնների հիերարխիայի մոտեցման դեպքում: Մասնավորապես բարձր արժեք ստեղծող վերամշակման (առարկայի վերօգտագործում, որի արդյունքում ստացվում է սկզբնականից բարձր արժեք) և ցածր արժեք ստեղծող վերամշակման (առարկայի վերօգտագործում, որի արդյունքում ստացվում է սկզբնականից ցածր արժեք) եզրույթները օրենքում ներառված չեն:</p> <p>Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ)՝ «Հինգբայանոց թափոնների հիերարխիայի և թափոնների կանխարգելման ծրագրերին համահունչ թափոնների կառավարման պլանների պատրաստում» պահանջի դրույթները կատարելու նպատակով անհրաժեշտ է լինելու «թափոնների հիերարխիա» եզրույթը ներառել օրենքում:</p> <p>Թափոնների վերաբերյալ օրենքների շրջանակը նաև չի ներառում այլ կարևոր սահմանումներ, ինչպիսիք են՝</p> <ul style="list-style-type: none"> • Բարձր արժեք ստեղծող վերամշակում (upcycling) • Ցածր արժեք ստեղծող վերամշակում (downcycling) • Վերամշակելիների տեսակներ (recyclable types) • Կենսաթափոններ (bio-waste) • Թափոնի տնօրինող (waste owner) • Վերավաճառող (dealer) • Առանձին հավաքում (separate collection) • Շրջանաձև տնտեսություն (circular economy)
Բացի գնահատման հղում	2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ159-Ն) 2.4.15 Բաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.1.3 Օրենսդրական բաց 3

Անվանում	Չկան Գնումներին վերաբերող օրենսդրության և կարգավորումների մեջ բացակայում են կանաչ գնումների և թափոնների հիերարխիայի մոտեցումը խրախուսող դրույթներ
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Փնահատում	<p>Ո՛չ «Գնումների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-21-Ն), ո՛չ էլ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (N 526-Ն) չեն ներառում որևէ դրույթ կանաչ գնումների և թափոնների հիերարխիայի մոտեցումները խթանող կամ որպես առաջնահերթություն դիտարկող որևէ դրույթ: Սա հանգեցնում է հանրային գնումներում ավելի մեծ առողջապահական և բնապահպանական ռիսկերի և հետևանքների:</p> <p>Մասնավորապես, հանրային տեղերների իրականացումը կարող է խթանել թափոնների կրճատման և վերամշակման նպատակով իրականացվող նորարարական լուծումներ՝</p>

	<p>կապված թափոնների տեսակավորված հավաքման, փոխադրման և վնասագերծման հետ:</p> <p>Այլ երկրների Էներգետիկ ոլորտներում առկա են կանաչ հանրային գնումներին միտված ջանքեր և ընթացակարգեր: Սրանք կարող են ընդլայնվել և ներառել կանաչ գնումներն ընդհանրապես՝ հատուկ ուշադրություն դարձնելով թափոնների հիերարխիայի վրա: Այս պրակտիկաները դեռ պետք է մշակվեն:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.4 Օրենսդրություն և կարգավորումներ</p> <p>2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.1.4 Օրենսդրական բաց 4

Անվանում	Լիցենզավորման մասին օրենսդրության և կարգավորումների մեջ թափոնների հիերարխիայի մոտեցմանը համահունչ թափոնների կառավարման դրույթների բացակայություն
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանված է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-193): Դրանք ներառում են առողջապահությունը, գյուղատնտեսությունը, կրթությունը, Էներգետիկան, տրանսպորտը, շրջակա միջավայրը, շինարարությունը և այլ ոլորտներ: Թափոնների հիերարխիայի մոտեցումը, մասնավորապես, թափոնների կանխարգելումը կարող է լինել լիցենզավորման համար անհրաժեշտ պահանջներից մեկը:
Բացի գնահատման հղում	<p>2.4 Օրենսդրություն և կարգավորումներ</p> <p>2.4.6 «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-193)</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.1.5 Օրենսդրական բաց 5

Անվանում	Թափոնների հիերարխիայի մոտեցման, մասնավորապես ազգային և տեղական մակարդակում թափոնների կանխարգելումը խրախուսող ծրագրերին աջակցող ազգային քաղաքականությունների բացակայություն
Տիրույթ	Զաղաքականություններ և ռազմավարություններ
Գնահատում	<p>2011թ. -ին ՀՀ կառավարությունը որդեգրել է Մաքուր արտադրության հայեցակարգը (ՄԱՀ), որի նպատակն է արտադրության և ծառայությունների բացասական ազդեցությունների նվազեցումը դրանց ողջ տևողության ընթացքում՝ արդյունահանումից մինչև սպառում և հեռացում: Այս հայեցակարգի ընդունմանը չի հետևել իրականացման կամ գործողությունների որևէ պլանի ընդունում:</p> <p>Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակում Հայաստանն այժմ հանձնառու է իրականացնել «Թափոնների կառավարման պլանների պատրաստում համաձայն թափոնների հիերարխիայի հինգբայանոց մոտեցման և թափոնների կանխարգելման ծրագրերի»:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգային փաստաթղթեր</p> <p>2.3.4 Մաքուր արտադրության հայեցակարգ (ՄԱՀ)</p> <p>2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.1.6 Օրենսդրական բաց 6

Անվանում	Թափոնների հիերարխիայի պահանջներին համահունչ նախաձեռնությունները խրախուսող տնտեսական խթանների ոչ բավարար մեխանիզմներ
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Թեպետ «Թափոնների մասին» օրենքի հոդված 23-ը խրախուսում է խթանների տրամադրումը այն կազմակերպություններին, որոնք ներդնում են թափոնների գոյացման կրճատմանը նպաստող տեխնոլոգիաներ, չկա որևէ իրավական ակտ կամ ուղեցույց, որը սահմանում է արտոնությունների համար դիմելու և ստանալու ընթացակարգը, կամ թե ինչպիսին պետք է լինեն այդ արտոնությունները: Բացի այդ, հոդված 23-ը չի մանրամասնում, թե ինչպիսի արտոնությունների մասին է խոսքը՝ հարկային, ներկրման, կանաչ սակագնի, թե այլ արտոնություններ: 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիրը և գործողությունների պլանը հստակ կերպով չեն խրախուսում տնտեսական խթանների օգտագործումը՝ միտված թափոնների հիերարխիայի, թափոնների՝ Էկոլոգիապես մաքուր կառավարման և ռեսուրսների կայուն կառավարման խթանմանը: Ավելին, չկա որևէ անդրադարձ շրջանաձև տնտեսությանը:
Բացի գնահատման հղում	2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր 2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ159-Ն) 2.4.3 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր 2.4.15 Զառնարկային և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.7 Օրենսդրական բաց 7

Անվանում	Թափոնների տեսակավորումը խրախուսող կամ խթանող դրույթների բացակայությունն ոլորտը կարգավորող օրենսդրությունում
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Թեպետ «Թափոնների մասին» օրենքը համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանելիս նշում է, որ «համայնքի ղեկավարն աջակցում է համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանը», չկա որևէ կարգավորման մեջ նշված հստակ պահանջ կամ տեսակավորված հավաքման խթանում որպես արդյունավետ օգտահանման նախապայման: Չկա նաև պահանջ՝ մշակելու թափոնների կառավարման պլաններ, որոնք կներառեն աղբյուրի մոտ թափոնի առանձնացման մասին պահանջ: Աղբավայրեր ուղարկվող կենսաբայթայվող կենցաղային թափոնների քանակի կրճատմանն ուղղված ազգային ռազմավարության պատրաստումը հանդիսանում է ՀԸԳՀ-ի պահանջների մասը:
Բացի գնահատման հղում	2.3.6 ՀԸԳՀ 2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ159-Ն) 2.4.9 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր 2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.8 Օրենսդրական բաց 8

Անվանում	Պատասխանատու սպառում խրախուսող դրույթների բացակայությունն ոլորտը կարգավորող օրենսդրությունում
----------	--

Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ, քաղաքականություններ և ռազմավարություններ
Գնահատում	«Թափոնների մասին» օրենքը խրախուսում է պատասխանատու արտադրությունը «զրո թափոն», «ավելի քիչ թափոն» մոտեցումների և ռեսուրսարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով՝ միևնույն ժամանակ չխրախուսելով «զրո թափոն» և «ավելի քիչ թափոն» մոտեցմամբ պատասխանատու սպառում: Նույնը վերաբերում է մյուս ռազմավարական փաստաթղթերին և թափոնների կառավարման պլաններին, որոնք հիմնականում կենտրոնանում են տեխնոլոգիաների խթանման վրա և ուղղակիորեն չեն խրախուսում պատասխանատու սպառման պրակտիկան: Այս բացը վերաբերում է պատասխանատու արտադրությանը սպառմանն առնչվող ազգայնացված ԿՁՆ 12-ին և թափոնների կանխարգելման ծրագրերի խթանման մասին ՀԸԳՀ-ի պահանջին:
Բացի գնահատման հղում	2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.3 ՀՀ ենթօրենսդրական ակտեր
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.9 Օրենսդրական բաց 9

Անվանում	Տեղական (համայնքային կամ մարզային) թափոնների կառավարման ռազմավարությունների սակավություն
Տիրույթ	Քաղաքականություններ և ռազմավարություններ
Գնահատում	Միայն մի քանի դեպքեր կան, որտեղ համայնքը մշակել է կոշտ թափոնների կառավարման ռազմավարություն կամ պլան: Սրանք այն դեպքերն են, երբ որևէ միջազգային կամ տեղական կազմակերպություն իրականացրել է ծրագիր, որի ընթացքում առաջացել է նման պլանի անհրաժեշտություն: Սովորաբար թափոնների կառավարումը ներառվում է համայնքների տարեկան ընդհանուր ծրագրերում և գործողությունների պլաններում, սակայն դրանք անդրադառնում են միայն հավաքման և հեռացման հարցերին և ուշադրություն չեն դարձնում թափոնների կանխարգելման, տեսակավորման և օգտահանման հարցերին: Թափոնների կառավարման պլանների մշակումը համաձայն թափոնների հիերարխիայի հինգ քայլերի և թափոնների կանխարգելման ծրագրերի հանդիսանում է ՀԸԳԸ-ի պահանջներից մեկը:
Բացի գնահատման հղում	2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգային փաստաթղթեր 2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր 2.4.15 Քաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.10 Օրենսդրական բաց 10

Անվանում	Առանձին թափոնի հոսքերի (կամ տեսակների) վերաբերյալ կարգավորումների բացակայություն
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	ՀՀ իրավական շրջանակը ներառում է կարգավորումներ թափոնային յուղերի և քսանյութերի, շինարարության և քանդման թափոնների, բժշկական թափոնների, վտանգավոր քիմիական նյութերի վերաբերյալ: 2019թ. -ի իր ծրագրում ՀՀ կառավարությունը հանձնառություն է ստանձնում մշակելու թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումներ՝ միտված արդյունաբերական, գյուղատնտեսական, բժշկական և Շ/Ք թափոնների հոսքերի կանխարգելմանը և վերամշակմանը: Այդուհանդերձ, չկան առանձին կարգավորումներ կամ արտահայտված ցանկություն՝ մշակելու հայեցակարգային մոտեցումներ այնպիսի թափոնների համար, ինչպիսիք են

	Էլեկտրական թափոնները, կյանքի ավարտ ունեցող մեքենաները, մարտկոցները, կենդանական թափոնները, վերամշակման արդյունքում ստացված ապրանքները և կենսաքայքայման ենթակա թափոնները:
Բացի գնահատման հղում	2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգային փաստաթղթեր 2.4.8 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.11 Օրենսդրական բաց 11

Անվանում	Չկան աղբավայրերի վերաբերյալ պատշաճ տեխնիկական ուղեցույցներ
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Բնապահպանական առումով արդյունավետ կոշտ թափոնների կառավարման նախապայմաններից է աղբավայրերի պատշաճ նախագծման, շահագործման, պահպանման, փակման և փակմանը հետևող խնամքի իրականացումը, որը պահանջում է ենթաօրենսդրական ակտերով սահմանված որակյալ տեխնիկական ուղեցույցներ և նորմեր: Հայաստանում կան մոտավորապես 330 աղբավայրեր, որոնց մեծ մասը ենթակա են փակման, որը պահանջում է տեխնիկական ուղեցույց, ինչը, իհարկե, ինչն, իհարկե, բացակայում է: Բացի այդ, ՀՀ-ի պահանջների մաս է հանդիսանում աղբավայրերի շահագործման, փակման և փակմանը հաջորդող փուլում վերահսկման և մշտադիտարկման ընթացակարգերի, ինչպես նաև գոյություն ունեցող աղբավայրերի բարելավման պլանների սահմանումը:
Բացի գնահատման հղում	2.3.6 ՀՀ-ի 2.4.8 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.12 Օրենսդրական բաց 12

Անվանում	Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրության ընդհանուր տեխնիկական ուղեցույցի բացակայություն
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Գոյացած թափոնների քանակի և բաղադրության մասին տվյալների հասանելիությունը կարևոր է երկրում թափոնների հաջող կառավարում իրականացնելու համար: Տվյալների այս հասանելիությունը, սակայն, ենթադրում է դրանց տրամադրման պարբերականություն, հետևողականություն և ճշգրտություն: 2000թ. -ից ի վեր Հայաստանում իրականացված ութ տարբեր ծրագրեր ներառել են կոշտ թափոնների քանակի և բաղադրության վերլուծության բաղադրիչ՝ կամ որպես ծրագրի մաս կամ որպես դրա հիմնական նպատակ: Նշված բոլոր վերլուծություններն իրականացվել են տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ, երկրի տարբեր հատվածներում և տարբեր եղանակների ընթացքում: Այսպիսով, դրանց արդյունքները համադրելի չեն միմյանց հետ:
Բացի գնահատման հղում	2.2.3 Թափոնների քանակի և բաղադրության մասին ուսումնասիրություններ 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.13 Օրենսդրական բաց 13

Անվանում	Վտանգավոր թափոնների ԷՅԿ (Էկոլոգիապես համահունչ կառավարում) կայանքների վերաբերյալ օրենքների կամ կարգավորումների բացակայություն
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Թեպետ վտանգավոր թափոնների գործածությանն առնչվող նորմերն ու կարգավորումները համեմատաբար լավ են մշակված, երկրում դեռևս չկա վտանգավոր թափոնների համար (օր.՝ սնդիկ պարունակող լամպեր կամ ջերմաչափեր, մարտկոցներ և այլն) գեթ մեկ ԷՅԿ օբյեկտ: Նման օբյեկտի նախագծումն ու շինարարությունը կարգավորող որևէ հրաման կամ իրավական ակտ գոյություն չունի: 2019թ. -ի սեպտեմբեր ամսվա դրությամբ չի եղել որևէ հրաման կամ իրավական ակտ՝ կապված այնպիսի ԷՅԿ օբյեկտի նախագծման և կառուցման հետ, որը կընդուներ առաջին դասի վտանգավորության թափոններ՝ առնվազն դրանց տեսակավորում իրականացնելու նպատակով:
Բացի գնահատման հղում	2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր 2.4.9 Վտանգավոր թափոններին վերաբերող օրենսդրություն 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.14 Օրենսդրական բաց 14

Անվանում	Թափոն գոյացնողի սահմանափակ պարտավորություններ և պատասխանատվություն
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Ըստ ՀՀ իրավական շրջանակի՝ թափոնը գոյացնողը (սկզբնական արտադրողը) պատասխանատու չէ թափոնի համար՝ այն թափոնի գործածությամբ զբաղվող ընկերությանը փոխանցելուց հետո: Այսինքն, եթե թափոնները հավաքող կազմակերպության կողմից գործածվում են ոչ պատշաճ կերպով (ապօրինի տեղադրում աղբավայրում կամ հեռացման այլ եղանակ), ապա որևէ պատասխանատվություն չի կրում թափոնը գոյացնողը: Պատասխանատվություն կրում է միայն թափոնը գործածող ընկերությունը: Մինչև թափոնի կյանքի ավարտը մշակման համար պատասխանատվություն չկրող թափոն գոյացնողները կարող են ընտրել թափոնների գործածությամբ զբաղվող ընկերություններ՝ հիմնվելով միայն դրանց ծառայության արժեքի վրա, այլ ոչ թե հեղինակության կամ այլ տվյալների: Կարգավորումները չեն մանրամասնում, թե որ դեպքերում է թափոնի սկզբնական արտադրողը պատասխանատու մշակման ողջ շղթայի համար կամ թե որ դեպքերում կարող են թափոնը գոյացնողը և այն տնօրինողը կիսել պատասխանատվությունը կամ այն պատվիրակել կառավարման շղթայում գործող այլ դերակատարների: Այս հարցը սերտորեն առնչվում է թափոնի սեփականության խնդրին թափոնի կառավարման շղթայի բոլոր փուլերում, ինչը բավականին անորոշ է ՀՀ իրավական շրջանակում: ՀԸԳՀ պահանջները նույնպես պահանջում են լրացնել այս բացը, սահմանելով կանոններ և ընթացակարգեր, միտված շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելմանն ու վերականգնմանը (ջուր, հող, պահպանվող տեսակներ և բնական միջավայրեր)՝ հիմնվելով «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա, ինչպես նաև սահմանելով խիստ պատասխանատվություն վտանգավոր աշխատանքային գործունեության համար:
Բացի գնահատման հղում	2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ159-Ն) 2.4.8 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարեփոխում

3.1.15 Օրենսդրական բաց 15

Անվանում	«Թափոնների մասին» օրենքը հստակ չի պահանջում, որ աղբահանող ընկերությունները ներկայացնեն տվյալներ հավաքված և աղբավայրերում տեղադրված կոշտ թափոնների վերաբերյալ
Տիրույթ	Օրենքներ և կարգավորումներ
Գնահատում	Ըստ օրենքի՝ թափոնների կադաստրը պետք է նաև ներառի «թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստր» և «թափոնների հեռացման վայրերի ռեեստր»: Այն, սակայն, չի վերաբերում թափոնների հավաքման և փոխադրման կազմակերպություններին: Այսինքն՝ երկրում գործող ԿԿԹ օպերատորները կադաստրին հաշվետվություն չեն ներկայացնում հավաքված և աղբավայրում տեղադրված թափոնների մասին: Այս տվյալները ՀՀ վիճակագրական կոմիտեին հաղորդում են միայն համայնքապետարանները՝ հիմնվելով ծավալների մոտավոր հաշվարկների վրա: Այս բացին անդրադառնում է նաև ՀԸԳԳ պահանջը՝ «շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկություններ չհայտնելու կամ միայն մասնակի տեղեկություններ հայտնելու մասին որոշումների վերանայման ընթացակարգերի սահմանում»:
Բացի գնահատման հղում	2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր 2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ159-Ն) 2.4.8 ՀՀ ենթաօրենսդրական ակտեր 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.2 Բ. Կառավարման բարելավում

3.1.16 Օրենսդրական բաց 16

Անվանում	Վտանգավոր թափոնների համար ԷՀԿ օբյեկտների զարգացումը խրախուսող տնտեսական խթանների անբավարար մեխանիզմներ
Տիրույթ	Զաղաքականություններ և ռազմավարություններ
Գնահատում	Վտանգավոր թափոնների վնասագրերում և հեռացումը կարող է պետությունից աջակցություն պահանջել սուբսիդիաների, հարկային արտոնությունների և այլ տնտեսական խթանների տեսքով: Չկան իրականացվող հստակ քայլեր, որոնք նպատակ ունեն խրախուսել երկրում վտանգավոր թափոնների համար ԷՀԿ կայանների զարգացումը:
Բացի գնահատման հղում	2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր 2.4.2 «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ159-Ն) 2.4.15 Զաղաքականության և օրենսդրության հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.2 Ինստիտուցիոնալ բացեր

3.2.1 Ինստիտուցիոնալ բաց 1

Անվանում	Բնապահպանական տեղեկությունների տարածման ոչ պատշաճ մեխանիզմներ
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	<p>Կոշտ թափոնների կառավարման ոլորտում ներգրավված առանցքային գերատեսչությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցական հանդիպումները և հարցազրույցները ցույց տվեցին իրագրվածության ցածր մակարդակը յուրաքանչյուր գերատեսչության նախաձեռնությունների և գործընթացների վերաբերյալ, որի արդյունքում առկա է ոչ բավարար հաղորդակցություն և համագործակցություն: Սրա պատճառը մասնակիորեն կապված է տեղեկությունների տարածման ոչ պատշաճ մեխանիզմների հետ:</p> <p>Իր 2019թ. -ի ծրագրում ՀՀ կառավարությունը հանձնառություն է ստանձնում մինչև 2023թ. -ը ավարտին հասցնելու Համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգը (SEIS): Բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը (հանրության համար) նույնպես ՀԸԳՀ պահանջներից մեկն է:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.2 Տեղեկատվություն և տվյալներ</p> <p>2.2.1 ՀՀ վիճակագրական կոմիտե</p> <p>2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ</p> <p>2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր</p> <p>2.3.6 ՀԸԳՀ</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.1 Ա. Մշտադիտարկում, տվյալներ և տեղեկատվություն

3.2.2 Ինստիտուցիոնալ բաց 2

Անվանում	Տվյալների հավաքագրման, մշակման, հաշվետվությունների ներկայացման համար ոչ բավարար ինստիտուցիոնալ շրջանակ
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	<p>ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացվող տվյալները թափոնների մասին հաճախ վստահելի չեն տվյալների ձեռքբերման աղբյուրների և մեթոդաբանության պատճառով: Օրինակ, աղբավայրեր փոխադրված թափոնների ծավալների մասին տվյալները համայնքապետարանների կողմից հաղորդվում են վիճակագրական կոմիտեին: Այս ծավալները հաշվարկվում են հիմնվելով ոչ թե ավտոմոբիլային կշեռքների օգնությամբ ստացված քաշի, այլ փոխադրող բեռնատարների տարողունակության վրա: Այս հաշվարկի թերությունն այն է, որ բեռնատար մեքենաների տարբերությամբ պայմանավորված (կոմպակտավորում իրականացնող և ոչ) փոխադրված թափոնների ծավալների մասին հաղորդված տվյալներն ընդամենը մոտավոր գնահատականներ են, որոնք այնուհետև փոխակերպվում են որոշակի գործակցով քաշի:</p> <p>Բացի այդ, տվյալների ձեռք բերման և մշակման ինստիտուցիոնալ համակարգը հաճախ բազմաթիվ անճշտություններ է թույլ տալիս: Ինչպես քննարկվում է «2.2 Տեղեկատվություն և տվյալներ» բաժնում, թափոնների վերաբերյալ տվյալները ձեռք են բերվում տարբեր աղբյուրներից չորս տարբեր գերատեսչությունների կողմից, և հիմնական պետական կազմակերպությունների մեջ չկա որևէ համագործակցություն այդ տվյալների մշակման, վերլուծման և տարածման հարցում: Հավաքված տվյալների տարածումը և փոխանակումը գերատեսչությունների միջև իրականացվում է անկազմակերպ և բարդ եղանակով, քանի որ առկա չեն տվյալների փոխանակման հստակ ընթացակարգեր և գործիքներ, ինչը թափոնների կառավարումը և որոշումների ընդունումը բոլոր մակարդակներում դարձնում է անարդյունավետ:</p>

Բացի գնահատման հղում	2.2 Տեղեկատվություն և տվյալներ 2.2.1 ՀՀ վիճակագրական կոմիտե 2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ 2.3.1 2019թ. -ի ՀՀ կառավարության ծրագիր 2.3.6 ՀԸԳՀ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.1 Ա. Մշտադիտարկում, տվյալներ և տեղեկատվություն

3.2.3 Ինստիտուցիոնալ բաց 3

Անվանում	Լաբորատոր թեստավորման ոչ բավարար կարողություններ
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և շրջակա միջավայրի նախարարության մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոնի ներկայացուցիչների հետ խորհրդակցական հանդիպումները և հարցազրույցները վեր հանեցին բողոքներ՝ կապված երկրում առկա լաբորատոր թեստավորման օբյեկտների հասանելիության մասով անհատակության հետ: Նշված պետական կազմակերպությունները հաճախ ստիպված են օգտագործել «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի թեստավորման հնարավորությունները: Բացի այդ, լաբորատորիաներում առկա չեն բավարար տեխնիկական սարքավորումներ թափոնների և արտանետումների, մասնավորապես ԿՕԱ-ների, օրինակ՝ նոր ԿՕԱ-ների, չկանխամտածված ԿՕԱ-ների թեստավորման համար
Բացի գնահատման հղում	2.5 Ինստիտուցիոնալ շրջանակ 2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.1 Ա. Մշտադիտարկում, տվյալներ և տեղեկատվություն

3.2.4 Ինստիտուցիոնալ բաց 4

Անվանում	Պայմանագրերի, այդ թվում՝ ՀՄԳ պայմանագրերի կառավարման թույլ կարողություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Շատ համայնքներ խնդիրներ ունեն թափոնների հեռացման և սակիտարական մաքրման հարցում պայմանագրերի կառավարման հետ: Մարտահրավերները նույնիսկ ավելի մեծ են ՀՄԳ պայմանագրերի դեպքում, երբ նախագծման, կառուցման և շահագործման մրցույթները պահանջում են կատարողական հիմնական ցուցանիշների (ԿՀՑ) սահմանում և մշտադիտարկում շինարարության ստանդարտների, ներդրումների չափերի, մատուցված ծառայությունների և ձախողումների դեպքում պատշաճ միջոցառումներ ձեռնարկելու համար:
Բացի գնահատման հղում	2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.2 Բ. Կառավարման կարողություն

3.2.5 Ինստիտուցիոնալ բաց 5

Անվանում	Կոշտ թափոնների կառավարման ոլորտում կայուն գործառնության տեխնիկական ուղեցույցների և ուսուցման բացակայություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Մի քանի համայնքապետարանների հետ իրականացված հարցազրույցները ցույց տվեցին, որ թափոններ հավաքող օպերատորներն ունեն պատրաստվածության ցածր մակարդակ և չունեն թափոնների կառավարման համակարգերի և ենթակառուցվածքի (աղբարկղեր, աղբատար մեքենաներ, աղբավայրեր և այլն) կայուն շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական ուղեցույց, ինչը հանգեցնում է տվյալ համակարգերի կյանքի

	տնտեսության կրճատմանը և բարձր ծախսերի: Մասնավորապես, ոչ պատշաճ շահագործման պատճառով անվավոր աղբարկղների կյանքի տնտեսությունը կրճատվում է անիվների վնասման պատճառով, ինչը նաև բարձրացնում է արդյունավետության մակարդակը և սպասարկման վրա ծախսվող ժամանակի տնտեսությունը:
Բացի գնահատման հղում	2.8.6 Հավաքում, փոխադրում և հեռացում Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.2 Բ. Կառավարման կարողություն

3.2.6 Ինստիտուցիոնալ բաց 6

Անվանում	Գործառնական առումով անարդյունավետ թափոնների հավաքման սխեմաներ
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Բացի միայն մի քանի բացառություններից, համայնքների մեծ մասը կիրառում են թափոնների հավաքման անարդյունավետ սխեմաներ, ինչը հանգեցնում է աղբահանության անկանոն և ուշացած իրականացման, աշխատանքի առումով ինտենսիվ գործունեության, հավաքման վրա ծախսվող ժամանակի մեծացման և հաճախ նաև գործառնական ծախսերի աճի: Սրա պատճառը հիմնականում թափոնների հավաքում իրականացնող անձնակազմի պատրաստվածության պակասն է:
Բացի գնահատման հղում	2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ 2.8.6 Հավաքում, փոխադրում և հեռացում Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.2 Բ. Կառավարման կարողություն

3.2.7 Ինստիտուցիոնալ բաց 7

Անվանում	Աղբավայրերի կառավարման համար անհրաժեշտ գիտելիքների պակաս և ոչ բավարար կարողություններ
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Բացի միայն մի քանի բացառություններից, համայնքների մեծ մասը չունեն աղբավայրերը, այդ թվում՝ դեպի աղբավայրեր տանող ճանապարհները պատշաճ կերպով կառավարելու, հրդեհները վերահսկելու, թափոնների տեղադրման և կոմպակտավորման համար անհրաժեշտ տարրական գիտելիքներ և պարզ քայլեր ձեռնարկելու կարողություններ:
Բացի գնահատման հղում	2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ 2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.2 Բ. Կառավարման կարողություն

3.2.8 Ինստիտուցիոնալ բաց 8

Անվանում	Թափոնների տեղական կառավարման պլաններ մշակելու ոչ բավարար կարողություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Բացի միայն մի քանի բացառություններից, համայնքների մեծ մասը չունի տարրական գիտելիքներ և կարողություններ՝ մշակելու տեղական թափոնների կառավարման պլաններ, որոնք կներառեն ինքնաբավության տեսանկյունից այնպիսի քայլեր, ինչպիսիք են թափոնների կանխարգելման ծրագրերը, տեսակավորված հավաքումը, վերամշակման ենթակա չոր առարկաներից իրականացվող օգտահանումը, հավաքված վճարների օգնությամբ ծախսերի վերականգնումը և ցուցանիշների կիրառումը:
Բացի գնահատման հղում	2.5.8 Տեղական ինքնակառավարման մարմիններ 2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ

Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.2 Բ. Կառավարման կարողություն
--------------------------------	----------------------------------

3.2.9 Ինստիտուցիոնալ բաց 9

Անվանում	Թափոնների ապօրինի հեռացումը վերահսկող ոչ բավարար կարողություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Բոլոր թափոնային հոսքերի հետ կապված ամենամեծ խնդիրներից մեկը թափոնների չվերահսկվող նետումն է: Ֆերմերային տնտեսությունների գոմաղբը հաճախ նետվում է ձորեր և գետեր, իսկ կենցաղային աղբը, մեքենաների կմախքները, արդյունաբերական թափոնները և Շ/Ք թափոնները տեղադրվում են ճանապարհների կողային հատվածներում: Նման պրակտիկայի պատճառները ներառում են վատ կրթությունն ու ցածր հանրային իրազեկվածությունը, հեռացման վայրերի այլընտրանքների պակասը, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունների անբավարար կիրառում և այլն:
Բացի գնահատման հղում	2.5 Ինստիտուցիոնալ շրջանակ Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.2 Բ. Կառավարման բարելավում

3.2.10 Ինստիտուցիոնալ բաց 10

Անվանում	Թեև դա օրենքի պահանջն է, կենցաղային թափոնների հավաքման համար թույլտվություններ փաստացի չեն տրամադրվում
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	«Լիցենզավորման մասին» օրենքը (ՀՕ-193) պահանջում է, որ վտանգավոր թափոնների վերամշակում, վնասագերծում, պահպանում, փոխադրում և պահում իրականացնող ընկերություններն ունենան ՀՀ կառավարության կողմից տրամադրված թույլտվություն և անցնեն փորձաքննություն և հավաստագրում: Ըստ «Թափոնների մասին» օրենքի (ՀՕ-159) և վտանգավոր թափոնների ցանկի (N 430-Ն)՝ կենցաղային թափոնն ունի վտանգավորության 4-րդ դաս, ինչը պետք է պահանջի, որ կենցաղային թափոն տեղափոխող և աղբավայրում տեղադրող ցանկացած օպերատոր ստանա գործունեություն իրականացնելու լիցենզիա: Իրականում երկրում գործող ոչ մի աղբահանող ընկերություն նման թույլտվություն չունի: Սա այն դեպքում, երբ թափոնների հեռացման կամ օգտահանման աշխատանքներ կատարող և վտանգավոր թափոնների մասով հատուկ պարտավորություններ ունեցող ընկերությունների կամ նախաձեռնությունների համար թույլտվությունների համակարգի սահմանումը հանդիսանում է ՀԸԳՀ-ի պահանջներից մեկը:
Բացի գնահատման հղում	2.3.6 ՀԸԳՀ 2.4 Օրենսդրություն և կարգավորումներ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

3.2.11 Ինստիտուցիոնալ բաց 11

Անվանում	Թեև դա օրենքի պահանջն է, կենցաղային թափոնների հավաքման և աղբավայրերում դրանց տեղադրման համար փաստացի ՇՄԱԳ չի իրականացվում
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ) սահմանում է, որ գործունեության հետևյալ տեսակները ենթակա են «Ա» կատեգորիայի գնահատման և փորձաքննության. <ul style="list-style-type: none">վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, վերամշակում, հեռացում, վնասագերծում, տեղադրում, թաղում,

	<ul style="list-style-type: none"> 15 000 և ավելի բնակչության սպասարկման համար կամ օրական 10 տոննա և ավելի աղբ ընդունող աղբավայրերի կազմակերպում և/կամ կենցաղային թափոնների վերամշակում: <p>Համաձայն ըստ վտանգավորության աստիճանի դասակարգված թափոնների ցանկի (ՀՀ կառավարության որոշում N 430-Ն)՝ բնակելի տարածքներից և կազմակերպությունների բնակելի հատվածներից հավաքված չտեսակավորված կոշտ թափոնները սահմանվում են որպես 4-րդ դասի վտանգավորության թափոն: Ո՛չ համայնքներում գործող աղբահանող ընկերությունները, ո՛չ էլ աղբավայրերի օպերատորները չեն անցնում ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ՇՄԱԳ-ի կամ փորձաքննության ընթացակարգը:</p>
Բացի գնահատման հղում	2.4 Օրենսդրություն և կարգավորումներ 2.4.4 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք 2.5 Ինստիտուցիոնալ շրջանակ Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

3.2.12 Ինստիտուցիոնալ բաց 12

Անվանում	Թույլ ինստիտուցիոնալ շրջանակ ներդրողների հետ աշխատելու համար
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	2019թ. -ի հոկտեմբեր ամսվա դրությամբ առկա է եղել ներդրողների հետ աշխատելու ինստիտուցիոնալ կարողությունների բացակայություն: Շատ ներդրողներ փորձում են կապ հաստատել քաղաքական գործիչների և կառավարության հետ՝ իրենց բիզնեսների համար երաշխիքներ փնտրելու նպատակով: Սա ինստիտուցիոնալ քառու է ստեղծում և երկրի համար վատ հեղինակության պատճառ է դառնում օտարերկրյա ներդրողների շրջանում:
Բացի գնահատման հղում	2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

3.2.13 Ինստիտուցիոնալ բաց 13

Անվանում	Երկրում թափոնների կառավարման համար պատասխանատու հիմնական պետական գերատեսչությունների միջև հատվածականության առկայություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Երկրում թափոնների կառավարման և ղեկավարման ոլորտներում հիմնական պետական գերատեսչությունները ներկայացնող շահագրգիռ կողմերի հետ անցկացված խորհրդակցական հանդիպումները ցույց տվեցին, որ ինստիտուցիոնալ մակարդակում առկա է որոշակի հատվածականություն: Թափոնների վերաբերյալ շրջանակային օրենքներով սահմանված իրավասություններն ու պարտավորությունները չեն վերաբերում կոնկրետ թափոնային հոսքերին, այլ վերաբերում են թափոնների ընդհանրապես և հաճախ նույնն են երկու կամ ավելի գերատեսչությունների համար: Միայն մի քանի դեպքերում են, որ իրավասություններն ու պարտավորությունները հստակ Նշված են ըստ թափոնների վտանգավորության աստիճանի: Նշված հատվածականությունը նկատելի է, երբ հարցը վերաբերում է այնպիսի գործառնություններին, ինչպիսիք են մշտադիտարկումը, տվյալների հավաքումը կամ լիցենզավորումը, թույլտվությունների տրամադրումը և կիրարկումը:
Բացի գնահատման հղում	2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

3.2.14 Ինստիտուցիոնալ բաց 14

Անվանում	Համայնքների կողմից օգտագործվող աղբավայրերի հողատարածքների սեփականության և իրավական հիմքերի տարածություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Աղբավայրերի մեծամասնությունը համայնքային սեփականություն են, սակայն կան նաև համայնքներ, որոնք օգտագործում են մասնավոր ընկերությանը պատկանող աղբավայրեր: Համայնքների առնվազն 10%-ը օգտագործում են ինքնաբերաբար կերպով առաջացած աղբավայրեր, որոնք չեն ստեղծվել որևէ հրամանի կամ որոշման հիման վրա:
Բացի գնահատման հղում	2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

3.2.15 Ինստիտուցիոնալ բաց 15

Անվանում	Վերամշակելիներից արժեք ստանալու շուրջ գիտելիքների և կարողության բացակայություն
Տիրույթ	Հաստատություններ
Գնահատում	Իրազեկվածության ցածր մակարդակի, գիտելիքի շղթաների, կարողությունների և համայնքների ու տեղական իշխանությունների շրջանում մոբիլիզացիայի պակասի արդյունքում կորսվում է վերամշակման ենթակա նյութերի արժեքը (հիմնականում պլաստմասե, ապակե, թղթե և մետաղե իրեր), որը կարող էր միջոցներ գոյացնել թափոնների գործածության համար: Հաշվի առնելով վերամշակման ենթակա նյութերի համար երկրում առկա համեմատաբար բարձր պահանջարկը (հատկապես պլաստմասե, ապակե, մետաղե և թղթե իրերի)՝ համայնքները կարող են շահել թափոնների առանձին հավաքման կազմակերպումից:
Բացի գնահատման հղում	2.5.15 Առանցքային ինստիտուցիոնալ թերություններ 2.6 Ֆինանսական մեխանիզմներ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

3.2.16 Ինստիտուցիոնալ բաց 16

Անվանում	Երկրում ԱՊԸ որդեգրման աջակցող թափոնների գործածության, օգտահանման և վերամշակման կարողությունների վերաբերյալ բավարար տեղեկատվության բացակայություն
Տիրույթ	Քաղաքականություններ և ռազմավարություններ
Գնահատում	ԱՊԸ մոտեցման որդեգրումը կապահանջի երկրում գործածման, օգտահանման և վերամշակման, ինչպես նաև տեսակավորված հավաքման և փոխադրման կարողությունների գնահատում կոնկրետ տեսակի թափոնների (կյանքի ավարտ ունեցող արտադրանք) համար, որոնք ենթակա են օգտահանման և ընտրվել են ըստ սպառման ոչ ենթակա արտադրանքների նախնական ցանկի:
Բացի գնահատման հղում	2.2 Տեղեկատվություն և տվյալներ 2.3 Ազգային ծրագրեր, ռազմավարություններ և հայեցակարգային փաստաթղթեր 2.3.5 Արտադրողի պատասխանատվության ընդլայնում (ԱՊԸ)
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

3.3 Ֆինանսական մեխանիզմների բացեր

3.3.1 Ֆինանսական բաց 1

Անվանում	Աղբահանության ցածր վճարը չի բավարարում լիարժեք հնքնածախսածածկմանը
Տիրույթ	Ֆինանսական մեխանիզմներ
Գնահատում	<p>Հայաստանում թափոնների կառավարման վճարը անհամեմատ ցածր է, ինչը հանգեցնում է հետևյալին.</p> <ul style="list-style-type: none"> • Զաղաքացիների և կազմակերպությունների շրջանում պատասխանատվության ցածր մակարդակ • «Աղտոտողը վճարում է» սկզբունքի ոչ պատշաճ իրականացում • Թափոնների հավաքման և համակարգի արդիականացման համար անբավարար միջոցներ • Թափոնների կառավարման վճարը չի ներառում թափոնների բացասական ազդեցությունների հետ կապված ծախսերը <p>Բացի այդ, վճարների հավաքման մեխանիզմն անարդյունավետ է թե՛ բնակիչների, թե՛ առևտրային կազմակերպությունների պարագայում:</p> <p>Նշված նախորդ երկու կետերի արդյունքում գրանցվում է ծախսերի ոչ ամբողջական վերականգնում, մինչդեռ ծախսերի ամբողջական վերականգնման ապահովումը համաձայն «աղտոտողը վճարում է» և «արտադրողի պատասխանատվության ընդլայնում սկզբունքների» հանդիսանում է ՀԸԳՀ պահանջների կարևոր մասը:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.6 Ֆինանսական մեխանիզմներ</p> <p>2.6.1 Թափոնների հավաքման վճար</p> <p>2.6.4 Ֆինանսական մեխանիզմների հետ կապված հիմնական ֆինանսական թերություններ</p> <p>2.3.6 ՀԸԳՀ</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում

3.3.2 Ֆինանսական բաց 2

Անվանում	Չափազանց ցածր բնապահպանական հարկ չտեսակավորված կոշտ կենցաղային թափոններն աղբավայրերում տեղադրելու համար
Տիրույթ	Ֆինանսական մեխանիզմներ
Գնահատում	<p>Խառը (չտեսակավորված) կենցաղային թափոնները կարող են պարունակել մարտկոցներ, դյուրավառ նյութեր, վարակիչ առարկաներ, քիմիական նյութեր և այլ վտանգավոր նյութեր: Ըստ ՀՀ համապատասխան կարգավորումներով սահմանված վտանգավոր թափոնների ցանկի՝ այս թափոնային հոսքը համարվում է 4-րդ դասի վտանգավորության աստիճանի: 4-րդ դասի թափոնի համար ՀՀ հարկային օրենսգրքը սահմանում է 1,500 ՀՀԴ/տոննա աղբավայրի հարկ, բացառությամբ կենցաղային թափոնների հավաքում և սանիտարական մաքրում իրականացնող օպերատորների: Նշված օպերատորների համար վճարը սահմանված է 60 ՀՀԴ/տոննա: Այս բացառությունը չափազանց ցածր աղբավայրի հարկի հետ միասին սխալ խթան է ստեղծում կենցաղային թափոնների տեսակավորման պրակտիկայի տեսանկյունից:</p> <p>Համեմատության համար նշենք, որ աղբավայրի հարկը ԵՄ տարածքում ոչ վտանգավոր կոշտ կենցաղային թափոնների համար տատանվում է 3 եվրո/տոննայից (Լիտվա) մինչև ավելի քան 100 եվրո/տոննա (Բելգիա)</p>
Բացի գնահատման հղում	<p>2.6 Ֆինանսական մեխանիզմներ</p> <p>2.6.2 Աղբավայրի հարկ</p> <p>2.6.4 Ֆինանսական մեխանիզմների հետ կապված հիմնական ֆինանսական թերություններ</p>

	2.3.6 ՀԸԳՀ Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում

3.3.3 Ֆինանսական բաց 3

Անվանում	Թափոնների կառավարման գործառնական ծախսերի ոչ պատշաճ սահմանում
Տիրույթ	Ֆինանսական մեխանիզմներ
Գնահատում	Թափոնների կառավարման գործառնականությունների ծախսերը չեն ներառում թափոնի ողջ կյանքի տևողության ընթացքում առաջացող ծախսերը, օրինակ, աղբավայրի կառավարման, փակմանը հաջորդող խնամքի, բնապահպանական, վերականգնման և այլ ծախսերը, այլ միայն հիմնված են վառելիքի ծախսի, աղբատար մեքենաների և աղբարկղների պահպանման աշխատանքների վրա, մինչդեռ վերևում նշված ծախսերը արտացոլված չեն թափոնների հավաքման վճարի մեջ:
Բացի գնահատման հղում	2.6 Ֆինանսական մեխանիզմներ 2.6.4 Ֆինանսական մեխանիզմների հետ կապված հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում

3.3.4 Ֆինանսական բաց 4

Անվանում	«Աղտոտող վճարում է» սկզբունքի գործիքները լիարժեք չեն կիրարկվում՝ ծախսերի ամբողջական վերականգնում ստանալու և թափոնների հետ կապված ցանկալի վարքագիծ խթանելու նպատակով
Տիրույթ	Ֆինանսական մեխանիզմներ
Գնահատում	«Աղտոտող վճարում է» և «արտադրողի պատասխանատվության ընդլայնում» սկզբունքների համաձայն ծախսերի ամբողջական վերականգնման մեխանիզմի սահմանումը ՀԸԳԸ պահանջների մաս է հանդիսանում: Ինչպես նկարագրվում է ֆինանսական գործիքներին առնչվող բաժիններում, Հայաստանում «աղտոտող վճարում է» սկզբունքի կիրառվող գործիքներից են միայն աղբահանության վճարն ու աղբավայրերի հարկերը: Այլ գործիքները կարող են ներառել փոփոխական վճարների (օր . ` «վճարի թափածի չափով») և արտադրողի պատասխանատվության սխեմաներ, ինչպես նաև կանխավճարների փոխհատուցման համակարգ, որը նախատեսված է տնային տնտեսությունների դրական վարքագիծը խթանելու համար: Կարող են նաև լինել այլ սխեմաներ, ինչպիսիք են ընկերությունների միջև թափոնների հետ առնչվող փորձի համադրումը:
Բացի գնահատման հղում	2.6 Ֆինանսական մեխանիզմներ 2.6.2 Աղբավայրերի հարկ 2.6.4 Ֆինանսական մեխանիզմների հետ կապված հիմնական թերություններ 2.3.6 ՀԸԳՀ Մշտադիտարկում և վերահսկում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում

3.3.5 Ֆինանսական բաց 5

Անվանում	Գիտելիքի և տարրական կարողությունների պակասի արդյունքում վերամշակման ենթակա նյութերի արժեքի կորուստ
Տիրույթ	Ֆինանսական մեխանիզմներ
Գնահատում	Գնահատվել է, որ թափոնների օգտահանման օբյեկտների կողմից տարեկան ընդունվում է մոտ 2,000 տոննա վերամշակման ենթակա պլաստմասե նյութեր (հիմնականում PET և PP տեսակի): Որևէ թիվ չկա վերամշակման ուղարկվող մետաղական և ապակե նյութերի

	քանակի վերաբերյալ: Սակայն, այս նյութերի մեծ մասը հավաքվում են աղբավայրերից, այսպես կոչված, ոչ ֆորմալ ոլորտի կողմից, մինչդեռ համայնքապետարանները կամ համայնքները վճարում են այս նյութերը հավաքելու և դեպի աղբավայրեր փոխադրելու ծախսերը: Տեսակավորված հավաքում իրականացնելու դեպքում համայնքները գոնե մասնակիորեն կարող են ծախսերի վերականգնում ստանալ: Այս առումով լուծման ենթակա մեկ այլ խնդիր է թափոնների սեփականատիրության հարցը, ինչը անորոշ է օրենսդրության մեջ:
Բացի գնահատման հղում	2.6.4 Ֆինանսական մեխանիզմների հետ կապված հիմնական թերություններ
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում

3.4 Տեխնոլոգիական և ենթակառուցվածքային բացեր

3.4.1 Տևե բաց 1

Անվանում	Աղբատար մեքենաների պարկի անբավարար կարողություններ
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	<p>2018թ. -ի նոյեմբերի դրությամբ, ըստ տեխնիկական կարողությունների գույքագրման, Հայաստանի մարզերում կար 774 աղբատար մեքենա, որոնցից 204-ը ունեն կոմպակտավորման մեխանիզմներ, ինչպես նաև կային 11,868 աղբարկղեր (0.3, 0.7լ տարողությամբ):</p> <p>Համայնքների մոտ 75%-ը ունեն միայն մեկ աղբատար մեքենա, ինչի արդյունքում գրանցվում են թափոնների ուշացած հավաքման դեպքեր այն դեպքերում, երբ բեռնատարը խափանվում է կամ տրվում է վերանորոգման: Համայնքների մոտ 11% չունեն աղբատար մեքենա: Բացի այդ, բոլոր աղբատար մեքենաների ավելի քան 60%-ը բաց թափքով բեռնատարներ են, ինչը պահանջում է մեծ ծավալի մեխանիկական աշխատանք, որի արդյունքում թափոնների հավաքումը դառնում է անարդյունավետ և ծախսատար: Հին բեռնատարների վատ վիճակը հաճախ հանգեցնում է դրանց խափանվելու հաճախականության բարձրացմանը և ընդհանուր կյանքի տևողության կրճատմանը և ամենակարևորը՝ ծառայության ցածր մակարդակի:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.6 Ֆինանսական մեխանիզմներ</p> <p>2.7 Ենթակառուցվածքներ</p> <p>2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.1 Ա. Հավաքման ենթակառուցվածքներ

3.4.2 Տևե բաց 2

Անվանում	ԿԿԹ աղբարկղների ոչ բավարար քանակություն, տեսակ և տեղադրում
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	<p>Համայնքում աղբարկղների թիվը, տեսակը և տեղադրման վայրը հաճախ պայմանավորվում է գոյություն ունեցող աղբատարների թվով, ֆինանսական սահմանափակումներով և ունեցած նախկին փորձով: Այդուհանդերձ, աղբարկղների վերակարգումը պետք է հանդիսանա ավելի ընդգրկուն ռազմավարական պլանավորման մաս, որտեղ նշվում են այնպիսի հստակ թիրախներ և գործունեության ցուցանիշներ, ինչպիսիք են թափոնների հավաքման ծավալները, վերամշակման ծավալները, սպասարկման ժամանակը և այլն: Տեղական իշխանությունները նման պլաններ չեն մշակում, ինչը նրանց ստիպում է ներդրումներ կատարել ըստ անհրաժեշտության:</p>

	<p>Ոչ բավարար քանակի և տեսակի աղբարկղների գնումը և նրանց տեղադրումը սխալ վայրերում հանգեցնում է յուրաքանչյուր հավաքման կետի վրա ծախսվող ժամանակի աճին, թափոնի հավաքման գործընթացը դարձնում է շատ աշխատատար և, ընդհանուր առմամբ, իջեցնում է թափոնների հավաքման ծառայության որակը: Աղբարկղների չափից ավելի լցվածությունը կարող է լինել աղբարկղների չափի և քանակի սխալ ընտրությունից: Չափազանց մեծ աղբարկղները կարող են վնաս հասցնել աղբատար մեքենաներին: Կափարիչներ չունեցող աղբարկղները թափոնը հասանելի են դարձնում կենդանիների համար:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.7 Ենթակառուցվածք 2.7.1 Կենցաղային կոշտ թափոնների գործածության ենթակառուցվածք</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.1 Ա. Հավաքման ենթակառուցվածքներ

3.4.3 Տևե բաց 3

Անվանում	Չոր վերամշակելիների տեսակավորված հավաքման համար ենթակառուցվածքների բացակայություն
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածքներ
Գնահատում	<p>Հայաստանում կան մի քանի նախաձեռնություններ և ընկերություններ, որոնք իրականացնում են պլաստմասե, ապակե, և մետաղե թափոնների առանձնացում կոշտ կենցաղային թափոններից, ինչպես նաև տեսակավորված հավաքում: Այս նախաձեռնությունների գործունեությունը սովորաբար ծախսարդյունավետ չէ նույնիսկ դոնորային ֆինանսական աջակցության առկայության դեպքում, ինչը դրանք դարձնում է ոչ ինքնաբավ:</p> <p>Թեպետ մի քանի փորձեր եղել են, այս պահին չկա որևէ համայնք, որն այսօր իրականացնում է թափոնների տեսակավորված հավաքում: Օրգանական և վտանգավոր նյութեր պարունակող չտեսակավորված խառը կենցաղային թափոնները շարունակում են տեղադրվել աղբավայրերում՝ աղտոտելով հողը, ստորերկրյա ջրերը և օդը:</p> <p>Աղբավայրերից հավաքված և տեսակավորված վերամշակման ենթակա թափոնների մի մասը փոխադրվում են վերամշակման կայաններ կեղտոտ կամ աղտոտված վիճակում, որից հետո նախքան արտադրական փուլերով անցնելը լվացվում են հիմնականում ոչ բավարար սանիտարական պայմաններում՝ այդպիսով տվյալ օբյեկտի բոլոր աշխատակիցներին խոցելի դարձնելով տարբեր տեսակի ռիսկերի համար:</p>
Բացի գնահատման հղում	<p>2.7 Ենթակառուցվածք 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.8.5 Առանձնացում և տեսակավորված հավաքում</p>
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.1 Ա. Հավաքման ենթակառուցվածքներ

3.4.4 Տևե բաց 4

Անվանում	Տնային տնտեսություններում գոյացող խոշոր եզրաչափերով թափոնների և առանձին հավաքում պահանջող այլ թափոնների համար նախատեսված Տարանջատ հավաղման կենտրոնների բացակայություն
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	<p>Որևէ համայնք չունի այնպիսի ընդունման կետեր, որտեղ քաղաքացիները կարող են անվճար կերպով թողնել տնային տնտեսությունների շինարարական առարկաներ, խոշոր կենցաղային ապրանքներ, կահույք և խոշոր եզրաչափերով այլ թափոններ: Արդյունքում ԿԿԹ կամ շինարարական թափոնների հավաքման օպերատորները հաճախ ստիպված են լրացուցիչ ծառայություն տրամադրել՝ հավաքելով աղբարկղների մոտ թողնված խոշոր եզրաչափերի թափոնները:</p>

Բացի գնահատման հղում	2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.8.5 Առանձնացում և տեսակավորված հավաքում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.1 Ա. Հավաքման ենթակառուցվածքներ

3.4.5 Տևեք բաց 5

Անվանում	Սննդի և այլ օրգանական թափոնների տեսակավորված հավաքման և մշակման համար ենթակառուցվածքի բացակայություն
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	<p>Թեպետ աղբավայրերից իրականացվում է որոշ տեսակի վերամշակման ենթակա նյութերի (պլաստմասսա, ապակի և մետաղներ) հավաքում և տեսակավորում, սննդային և այլ օրգանական թափոնները (օր.՝ գյուղատնտեսական և ֆերմերային աշխատանքներից մնացած) մնում և փտում են աղբավայրերում՝ արտանետելով մեթան և այլ ջերմոցային գազեր: Բացառություն են միայն այն հազվագյուտ դեպքերը, երբ գոմաղբը, այգեգործական թափոնները, մշակաբույսերի մնացորդներն ու այլ օրգանական նյութերը տեղական մակարդակում օգտագործվում են կենսագազի, վառելիքի, պարարտանյութի արտադրության կամ ուղղակի այրման համար: Սննդային թափոնների մի մասն էլ օգտագործվում է որպես հումք: Սակայն, գոյացած օրգանական թափոնների հիմնական մասն ուղարկվում է աղբավայրեր: Օրգանական թափոնների այնպիսի խոշոր արտադրողների կողմից, ինչպիսիք են սննդի մշակման կամ գյուղատնտեսական արտադրողները չեն կիրառվում օրգանական թափոնների մշակման տարբերակներ, ներառյալ կոմպոստացում, անատրոբային մշակում կամ սննդային թափոնի գործածումը որպես կենդանիների կեր:</p> <p>Բացի այդ, աղբավայրեր ուղարկվող կենսաքայքայման ենթակա կենցաղային թափոնների քանակի կրճատման վերաբերյալ ազգային ռազմավարության պատրաստումը ՀՀԳՀ պահանջների մաս է հանդիսանում:</p>
Բացի գնահատման հղում	2.3.6 ՀՀԳՀ 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.8.5 Առանձնացում և տեսակավորված հավաքում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.1 Ա. Հավաքման ենթակառուցվածքներ

3.4.6 Տևեք բաց 6

Անվանում	Շատ համայնքներ օգտագործում են աղբամուղներ և բունկերային համակարգեր
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	<p>Շատ համայնքներ օգտագործում են աղբամուղներ և բունկերային համակարգեր, որոնք մեծ խնդիրներ են առաջացնում կապված կառավարման, հանրային առողջության և շրջակա միջավայրի հետ՝ չնայած այն բանին, որ օրենսդրությամբ սահմանվում են պարտադիր նորմեր բազմաբնակարան շինություններում ընդհանուր սեփականության պահպանման համար, այդ թվում՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Սպառման (տնային տնտեսությունների) թափոնների հեռացում առնվազն երեք օրը մեկ, իսկ +50°C ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր 2. Միջատների և կրծողների վնասագերծում ընդհանուր օգտագործման տարածքներում, աղբամուղներում և թափոնների հավաքման տարածքներում առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

	Սանիտարական խնդիրներից բացի, աղբամուղների համակարգը մեծացնում է թափոնների հավաքման ժամանակը և շատ մեխանիկական աշխատանք է ենթադրում:
Բացի գնահատման հղում	2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.8.6 Հավաքում, փոխադրում և հեռացում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.1 Ա. Հավաքման ենթակառուցվածքներ

3.4.7 Տևեք բաց 7

Անվանում	Սանիտարական աղբավայրերի պակաս
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	Թեև այս պահին ընթացքի մեջ են երկու սանիտարական աղբավայրի ենթակառուցվածքային ծրագրեր, համայնքներում գոյացած կոշտ թափոնները շարունակում են տեղադրվել ավելի քան 300 աղբավայրերում: Աղբավայրերի շահագործման, փակման, փակմանը հաջորդող փուլերում վերահսկման և մշտադիտարկման ընթացակարգերի սահմանումը, ինչպես նաև գործող աղբավայրերի բարելավման պլանների ստեղծումը, թափոնների ընդունման ընթացակարգերի և թույլտվությունների համակարգի կիրարկումը հանդիսանում են ՀԸԳՀ պահանջների մաս:
Բացի գնահատման հղում	2.3.6 ՀԸԳՀ 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.7.4 Այլ վտանգավոր թափոններ 2.8.6 Հավաքում, փոխադրում և հեռացում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.2 B. Աղբավայրեր

3.4.8 Տևեք բաց 8

Անվանում	Հատուկ վտանգավոր նյութերի համար նախատեսված աղբավայրերի բացակայություն
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	Երկրում չեն եղել հատուկ վտանգավոր նյութերի համար նախատեսված աղբավայրեր, ինչի արդյունքում գրանցվել են աղբի չվերահսկվող նետումներ և կուտակումներ: Հազվագյուտ դեպքերում պատասխանատու վարք դրսևորող թափոն արտադրողները փորձել են վտանգավոր թափոնների հեռացման պատշաճ ուղիներ գտնել և արդյունքում համապատասխան մարմինների խնդրանքով ստիպված են եղել այդ թափոնները պահել իրենց մոտ: Արդյունքում մեղիկ և այլ վտանգավոր նյութեր պարունակող առարկաները հայտնվում են աղբավայրերում: ՄԱԶԾ «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և քիմիկատների կայուն կառավարման շրջանակներում կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ-ներ/POP's) աղտոտված տարածքների հարցերի լուծում» ծրագիրը ներառում է Կոտայքում թափոնների կառավարման հանրապետական կենտրոնի ստեղծում, որը կունենա ապահով պահման կարողություն և վտանգավոր թափոնների մշակման և հողի վերականգնման տեխնոլոգիաների ներդրումը հնարավոր դարձնող հիմնական ենթակառուցվածքներ: 2019թ. -ի հոկտեմբեր ամսվա դրությամբ Կոտայքի նշված կենտրոնը դեռևս չէր հիմնվել: ՀԸԳՀ պահանջների մաս է կազմում նաև ապահովելը, որ համապատասխան թափոնները ենթարկվեն մշակման նախքան աղբավայրերում տեղադրվելը:
Բացի գնահատման հղում	2.3.6 ՀԸԳՀ 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.7.4 Այլ վտանգավոր թափոններ

	2.8.6 Զավաքում, փոխադրում և հեռացում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.2 Բ. Աղբավայրեր

3.4.9 Տևեք 9

Անվանում	Բժշկական և այլ վտանգավոր թափոնների մշակման համար անորոշ կարողություններ
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	<p>Բժշկական հաստատություններում իրականացվում է օրենքով թափոնների պարտադիր առանձնացում: Բժշկական թափոնների հետագա մշակումը, վնասագերծումը, պահումը, փոխադրումն ու հեռացումն իրականացվում է լիցենզավորված ընկերությունների կողմից, և երկրում գործող բոլոր բժշկական հաստատությունները պարտավոր են ունենալ համապատասխան պայմանագիր առնվազն մեկ ընկերության հետ:</p> <p>2019թ. -ի դրությամբ երկրում կա երկու ընկերություն, որոնք լիցենզավորված են մշակելու բժշկական թափոններ և ունեն հավաքման ու մշակման սահմանափակ կարողություններ, ինչը ստեղծում է որոշակի ռիսկեր հեռավոր համայնքներում, մասնավորապես, կապված բժշկական թափոնների պատշաճ կառավարման հետ (օր.՝ երբեմն կիրառվում են տեղական լուծումներ. թափոնների ապօրինի և ոչ պատշաճ աղբակիզում կամ այրում, թաղում և այլն):</p>
Բացի գնահատման հղում	2.3.6 ԶԸԳԶ 2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.7.4 Այլ վտանգավոր թափոններ 2.8.6 Զավաքում, փոխադրում և հեռացում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.2 Բ. Աղբավայրեր

3.4.10 Տևեք 10

Անվանում	Թափոնների քանակի չափման սարքավորումների (ավտոմոբիլային կշեռքեր և այլն) բացակայություն
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	Գոյացած թափոնների քանակի մասին տեղեկությունները կարևոր են արդյունավետ թափոնների կառավարման պլանավորում իրականացնելու համար: Այս տեղեկությունների ձեռք բերումը կանոնավոր պարբերականությամբ և պատշաճ ճշգրտությամբ պահանջում է տարրական ենթակառուցվածքներ, ինչպիսիք են աղբավայրերում ավտոմոբիլային կշեռքերը կամ փոխանցման կայանները, որտեղ կիրականացվի յուրաքանչյուր բեռնատար ավտոմեքենայի կշռումն ու գրանցումը:
Բացի գնահատման հղում	2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.8.6 Զավաքում, փոխադրում և հեռացում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.2 Բ. Աղբավայրեր

3.4.11 Տևեք 11

Անվանում	Վատ մուտքային ճանապարհներ աղբավայրերի մեծ մասում
Տիրույթ	Տեխնոլոգիա և ենթակառուցվածք
Գնահատում	Գոյություն ունեցող աղբավայրերի վատ մուտքային ճանապարհները (2-4կմ) անիվների հասցվող և այլ վնասների պատճառով հանգեցնում են թափոնները հավաքող մեքենաների կյանքի տևողության կրճատմանը: Աղբավայրերից ոչ մեկը չունի ավտոմոբիլային կշեռք՝ վերահսկելու աղբավայրում տեղադրվող թափոնների քանակը:

	Միայն մի քանի աղբավայրեր են ցանկապատված, իսկ դրանց մեծ մասը պարզապես բաց է հրդեհների և աղբի մեջ օգտակար իրեր փնտրողների համար:
Բացի գնահատման հղում	2.7.1 Կոշտ կենցաղային թափոնների գործածության ենթակառուցվածքներ 2.8.6 Հավաքում, փոխադրում և հեռացում
Բացին անդրադարձող առաջարկ(ներ)	4.4.2 Բ. Աղբավայրեր

4 ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Սույն գլուխն ամփոփում է թափոնների կառավարման առնչվող առաջարկությունները՝ հիմնված տվյալ ուսումնասիրության և բացերի գնահատման վրա: Այս գլուխը բաժանվում է չորս բաժինների.

- 4.1 Առաջարկություններ օրենսդրության և ռազմավարությունների վերաբերյալ
- 4.2 Առաջարկություններ ինստիտուտների վերաբերյալ
- 4.3 Առաջարկություններ ֆինանսական մեխանիզմների վերաբերյալ
- 4.4 Առաջարկություններ տեխնոլոգիայի և ենթակառուցվածքների վերաբերյալ

Սույն գլուխը կարող է համարվել գործողությունների ուղեցույց՝ թափոնների հիերարխիայի և շրջանաձև տնտեսության սկզբունքների վրա հիմնվող կատարելագործված թափոնների կառավարման համակարգի համար:

Առաջարկությունները խմբավորվել են թեմատիկ փաթեթներում, որոնք բաժանվել են հետևյալ տեղեկությունները պարունակող առանձին աղյուսակների.

- Առաջարկվող գործողություն
- Գործողության իրականացման համար պատասխանատու կողմ
- Հղում՝ առաջարկվող գործողության կողմից անդրադարձ կատարվող բաց(եր)ին
- Կապը ՀԸԳՀ-ի հետ. արդյոք գործողությունը նաև անդրադառնում է ՀԸԳՀ-ի համապատասխան պահանջներին:

Այս բաժնում չի առաջարկվում որևէ ժամանակացույց: Առաջարկվող գործողությունների ժամանակացույցները պետք է սահմանվեն համապատասխան մարմինների հետ խորհրդատվության արդյունքում: Այնուամենայնիվ, որոշակի ժամանակացույցներ սահմանվում են ՀԸԳՀ պահանջների կողմից: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս 2.3.6 ՀԸԳՀ:

4.1 Առաջարկություններ օրենսդրության և ռազմավարությունների վերաբերյալ

4.1.1 Ա. Թափոնների հիերարխիայի մոտեցման որդեգրում և խրախուսում

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
1	Վերանայել գոյություն ունեցող ազգային ռազմավարություններն ու քաղաքականությունները և ներառել թափոնների հիերարխիան թիրախավորող թափոնների կառավարման բաղադրիչներ և հարցեր:	ՀՀ կառավարություն Համապատասխան Նախարարություններ	3.1.1 Օրենսդրական բաց 1 Մի քանի առանցքային ազգային առաջնահերթություններում և ռազմավարություններում բացակայում են թափոնների կառավարմանն առնչվող դիտարկումներ	
2	ՀՀ օրենսդրության մեջ ներառել հետևյալ սահմանումները և եզրույթները. <ul style="list-style-type: none"> • Թափոնների հիերարխիա • Բարձր արժեք ստեղծող վերամշակում • Ցածր արժեք ստեղծող վերամշակում • Վերամշակման ենթակա առարկաների տեսակներ • Կենսաթափոն • Թափոնը տնօրինող • Առանձնացված հավաքում • Շրջանաձև տնտեսություն 	ՀՀ կառավարություն ՏԿԵ Նախարարություն	3.1.2 Օրենսդրական բաց 2 Ոլորտը կարգավորող օրենսդրությունում չկա թափոնների հիերարխիա եզրույթը, դրա սահմանումը և այլ կարևոր սահմանումներ	ԱՅՈ
3	Ինտեգրել թափոնների հիերարխիայի սկզբունքին համահունչ արտադրանքների և ծառայությունների առաջնահերթությունների սահմանումը հանրային գնումների գործընթացում: Օրինակ, շինարարության և վերանորոգման օբյեկտներից, սարքավորումների և անհրաժեշտ իրերի գնումներից ու այլ գործընթացներից կարող է պահանջվել ունենալ թափոնների հիերարխիա (վերամշակում կամ օգտահանման այլ ձև):	ՀՀ կառավարություն ՏԿԵ Նախարարություն Շրջակա միջավայրի Նախարարություն Էկոնոմիկայի Նախարարություն Ֆինանսների Նախարարություն	3.1.3 Օրենսդրական բաց 3 Գնումներին վերաբերող օրենսդրության և կարգավորումների մեջ բացակայում են կանաչ գնումների և թափոնների հիերարխիայի մոտեցումը խրախուսող դրույթները:	
4	Թափոնների հիերարխիայի հետ համապատասխանության պահանջը ներառել լիցենզիայի տրամադրման համար ներկայացվող պահանջների թվում:	ՀՀ կառավարություն ՏԿԵ Նախարարություն Շրջակա միջավայրի Նախարարություն Էկոնոմիկայի Նախարարություն Ֆինանսների Նախարարություն	3.1.4 Օրենսդրական բաց 4 Լիցենզավորման մասին օրենսդրության և կարգավորումների մեջ թափոնների հիերարխիայի մոտեցմանը համահունչ թափոնների կառավարման դրույթների բացակայություն	
5	Մշակել և ներդնել մեխանիզմներ և ուղեցույցներ՝ միտված տեղական իշխանություններին թափոնների	ՀՀ կառավարություն ՏԿԵ Նախարարություն	3.1.5 Օրենսդրական բաց 5 Թափոնների հիերարխիայի մոտեցումը, մասնավորապես	ԱՅՈ

	<p>կանխարգելման տեղական ծրագրեր մշակելու և իրականացնելու հարցում աջակցելուն:</p> <p>Ներդնել տեղական իշխանությունների կողմից թափոնների կանխարգելման ծրագրեր մշակելու և իրականացնելու մասին պահանջ:</p>		<p>ազգային և տեղական մակարդակում թափոնների կանխարգելումը խրախուսող ծրագրերին աջակցող ազգային քաղաքականությունների սակավություն</p> <p>3.1.8 Օրենսդրական բաց 8 Պատասխանատու սպառումը չի խրախուսվում ՀՀ օրենքներով</p>	
6	<p>«Թափոնների մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ը նշում է այն կազմակերպություններին, որոնք կարող են ստանալ արտոնություններ թափոնների կրճատման տեխնոլոգիաների համար և այլն: Սահմանել և կանոնակարգել այս կազմակերպությունների համար արտոնություններ ստանալու համար դիմելու ընթացակարգերը:</p>	<p>ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն</p>	<p>3.1.6 Օրենսդրական բաց 6 Թափոնների հիերարխիայի պահանջներին համապատասխանող նախաձեռնությունները խրախուսող տնտեսական խթանների ոչ բավարար մեխանիզմներ</p>	
7	<p>ԱՊԸ մոտեցման որդեգրումը կպահանջի երկրում գործածման, օգտահանման և վերամշակման, ինչպես նաև տեսակավորված հավաքման և փոխադրման կարողությունների գնահատում կոնկրետ տեսակի թափոնների (կյանքի ավարտ ունեցող արտադրանք) համար, որոնք ենթակա են օգտահանման և ընտրվել են ըստ սպառման ոչ ենթակա արտադրանքների նախնական ցանկի (տե՛ս գործողություն 3 ԱՊԸ գործողությունների պլանում):</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն</p>	<p>3.2.16 Ինստիտուցիոնալ բաց 16 Երկրում ԱՊԸ որդեգրմանը աջակցող թափոնների գործածության, օգտահանման և վերամշակման կարողությունների վերաբերյալ բավարար տեղեկատվության բացակայություն</p>	ԱՅՈ

4.1.2 Բ. Կառավարման բարելավում

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
8	<p>Մշակել և ներդնել ուղեցույցներ և մեխանիզմներ՝ աջակցելու տեղական ինքնակառավարման մարմիններին թափոնների կառավարման պլաններ պատրաստելու գործում:</p>	ՏԿԵ նախարարություն	<p>3.1.9 Օրենսդրական բաց 9 Տեղական (համայնքային կամ մարզային) թափոնների կառավարման ռազմավարությունների սակավություն</p> <p>3.1.5 Օրենսդրական բաց 5 Թափոնների հիերարխիայի մոտեցումը, մասնավորապես ազգային և տեղական</p>	ԱՅՈ

			մակարդակում թափոնների կանխարգելումը խրախուսող ծրագրերին աջակցող ազգային քաղաքականությունների սակավություն	
9	<p>ՏԻՄ համար սահմանել տեղական թափոնների կառավարման պլաններ մշակելու պահանջ:</p> <p>Պլանները կարող են նախատեսել տնային տնտեսությունների վերամշակման ենթակա թափոնների և սննդային թափոնների տեսակավորված հավաքման ծառայություն առաջարկելու սխեմաներ</p>	ՏԿԵ նախարարություն	3.1.9 Օրենսդրական բաց 9 Տեղական (համայնքային կամ մարզային) թափոնների կառավարման ռազմավարությունների սակավություն	ԱՅՈ
10	<p>Նշանակել իրավասու մարմիններ և մշակել աղբավայրերի կառավարման ազգային ծրագիր, ինչը կներառի գործողության պլան աղբավայրերի պահպանման, փակման և փակմանը հետևող խնամքի համար, ինչպես նաև բարելավման պլաններ գործող աղբավայրերի համար:</p> <p>Ծրագիրը պետք է ներառի. գոյություն ունեցող աղբավայրերի ռեեստր, դասակարգման համակարգ, նոր աղբավայրերի պահանջներ, լիցենզավորման պահանջներ և շահագործման պլան յուրաքանչյուր աղբավայրի համար:</p>	ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն	<p>3.1.11 Օրենսդրական բաց 11 Չկան աղբավայրերի վերաբերյալ պատշաճ տեխնիկական ուղեցույցներ</p> <p>3.4.7 ՏԱԵ բաց 7 Սանիտարական աղբավայրերի պակաս</p> <p>3.4.11 ՏԱԵ բաց 11 Վատ մուտքային ճանապարհներ աղբավայրերի մեծ մասում</p>	
11	<p>Նշանակել իրավասու մարմիններ և մշակել աղբավայրերում տեղադրվող կենսաքայքայվող կենցաղային թափոնների կրճատման ազգային ռազմավարություն: Ռազմավարությունը պետք է ներառի հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • Իսթանել կենսաքայքայվող կոշտ կենցաղային թափոնների հեռացումը աղբավայրերից: • Զաղաքային ՏԻՄ-երին ներկայացնել տնային տնտեսությունների համար սննդային թափոնների հավաքման ծառայություն տրամադրելու պահանջ: • Չարգացնել աղբավայրերում չտեղադրված կենսաքայքայվող ԿԿԹ-ն վերամշակելու պատշաճ ենթակառուցվածքներ: • Սահմանել մեթանի արտանետումներն Էականորեն կրճատելու թիրախներ: • Բիզնեսներից պահանջել իրականացնել օրգանական թափոնների առանձնացում (օրինակ 	ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	<p>3.1.7 Օրենսդրական բաց 7 Թափոնների տեսակավորումը խրախուսող կամ խթանող դրույթների բացակայություն ուրրտը կարգավորող օրենսդրությունում</p> <p>3.1.8 Օրենսդրական բաց 8 Պատասխանատու սպառումը չի խրախուսվում ՀՀ օրենքներով</p> <p>3.4.5 ՏԱԵ բաց 5 Սննդի և այլ օրգանական թափոնների տեսակավորված հավաքման և մշակման համար ենթակառուցվածքի բացակայություն</p>	ԱՅՈ

	<p>ռեստորաններից պահանջել առանձնացնել սննդային թափոնները) և դրանք տրամադրել հավաքման: Խրախուսել բիզնեսներին ներդրում կատարել սննդային թափոնների առանձնացված հավաքման ենթակառուցվածքներում:</p>			
12	<p>Իր 2019թ. -ի ծրագրում ՀՀ կառավարությունը հանձնառություն է ստանձնել մշակելու հայեցակարգային մոտեցումներ թափոնների կառավարման վերաբերյալ, որոնք միտված կլինեն արդյունաբերական, գյուղատնտեսական, բժշկական և Շ/Ք թափոնների կանխարգելմանն ու վերամշակմանը: Բացի այդ, նաև մշակել հայեցակարգային մոտեցում և կարգավորող շրջանակ էլեկտրական թափոնների, կյանքի ավարտ ունեցող մեքենաների, թափոնային մարտկոցների, կենդանական, գյուղատնտեսական թափոնների և կողմնակի արտադրանքի համար:</p>	<p>ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>3.1.10 Օրենսդրական բաց 10 Առանձին թափոնի հոսքերի (կամ տեսակների) վերաբերյալ կարգավորումների բացակայություն</p>	
13	<p>Նշանակել իրավասու մարմիններ և մշակել աղբավայրերի տեխնիկական ուղեցույցներ, որոնք կներառեն աղբավայրերի նախագծման, շահագործման, փակման և փակմանը հետևող խնամքի ընթացակարգերը:</p>	<p>ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>3.1.11 Օրենսդրական բաց 11 Չկան աղբավայրերի վերաբերյալ պատշաճ տեխնիկական ուղեցույցներ</p>	
14	<p>Նշանակել իրավասու մարմիններ և մշակել ընդհանուր տեխնիկական ուղեցույցներ թափոնների քանակի և բաղադրության վերլուծության մասին:</p>	<p>ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն</p>	<p>3.1.12 Օրենսդրական բաց 12 Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրության ընդհանուր տեխնիկական ուղեցույցի բացակայություն 3.2.5 Կոշտ թափոնների կառավարման ոլորտում կայուն գործառնության տեխնիկական ուղեցույցների և ուսուցման բացակայություն</p>	
15	<p>Պատրաստել օրենսդրություն, որը կնպաստի վտանգավոր թափոնների համար ԷՀԿ (Էկոլոգիապես համահունչ կառավարման) օբյեկտների կառուցմանը:</p>	<p>ՀՀ կառավարություն Շրջակա միջավայրի նախարարություն ՏԿԵ նախարարություն</p>	<p>3.1.1 Օրենսդրական բաց 1 Մի քանի առանցքային ազգային առաջնահերթություններում և ռազմավարություններում բացակայում են թափոնների կառավարմանն առնչվող դիտարկումներ 3.1.13 Օրենսդրական բաց 13 Վտանգավոր թափոնների ԷՀԿ օբյեկտների շուրջ օրենքների կամ</p>	

			կարգավորումների բացակայություն 3.4.7 Տևե բաց 7 Սանիտարական աղբավայրերի պակաս	
16	Մշակել ԷՀԿ սիսեմաներ և տարբերակներ որոշակի տեսակի թափոնների համար , որոնց մշակումը Հայաստանում հնարավոր չէ:	ՀՀ կառավարություն Շրջակա միջավայրի նախարարություն ՏԿԵ նախարարություն	3.1.13 Օրենսդրական բաց 13 Վտանգավոր թափոնների ԷՀԿ օբյեկտների շուրջ օրենքների կամ կարգավորումների բացակայություն 3.1.16 Օրենսդրական բաց 16 Վտանգավոր թափոնների համար ԷՀԿ օբյեկտների զարգացումը խրախուսող տնտեսական խթանների անբավարար մեխանիզմներ	
17	Մշակել և ներդնել օրենքների կամ կարգավորումների փոփոխություններ, որոնք ընդլայնում են թափոնն արտադրողի պատասխանատվությունը թափոնների ոչ պատշաճ գործածության և վերամշակման համար: Պետք է ներկայացվեն փոփոխություններ, որոնք ավելի ճշգրիտ կերպով կսահմանեն թափոնի սեփականատիրության հարցը կառավարման շղթայի տարբեր փուլերում: Կարգավորումները պետք է հստակ նշեն, թե որ դեպքերում է թափոնի սկզբնական արտադրողը պահպանում ամբողջ վերամշակման շղթայի համար պատասխանատվությունը կամ որ դեպքերում է, որ արտադրողի և տնօրինողի պատասխանատվությունը կարող է լինել ընդհանուր կամ պատվիրակվել վերամշակման շղթայում գործող այլ դերակատարների:	ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	3.1.14 Օրենսդրական բաց 14 Թափոն գոյացնողի սահմանափակ պարտավորություններ և պատասխանատվություն	ԱՅՈ
18	Մշակել և ներդնել օրենսդրական փոփոխություններ, որոնցով կպահանջվի թափոնների հավաքման և փոխադրման ոլորտում ներգրավված ընկերություններից ներկայացնել տվյալներ գործածված թափոնների վերաբերյալ :	ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	3.1.15 Օրենսդրական բաց 15 «Թափոնների մասին» օրենքը հստակ չի պահանջում, որ աղբահանող ընկերությունները ներկայացնեն տվյալներ հավաքված և աղբավայրերում տեղադրված կոշտ թափոնների վերաբերյալ 3.2.1 Ինստիտուցիոնալ բաց 1 Բնապահպանական տեղեկությունների տարածման ոչ պատշաճ մեխանիզմներ	ԱՅՈ

4.2 Առաջարկություններ ինստիտուտների վերաբերյալ

4.2.1 Ա. Մշտադիտարկում, տվյալներ և տեղեկատվություն

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
19	Չարգացնել ինստիտուցիոնալ կարողություններ և ապահովել միջոցներ՝ իրականացնելու կոշտ թափոնների բաղադրության վերլուծություն առնվազն տարին չորս անգամ (տարբեր եղանակների ընթացքում) երեք տարին մեկ կամ թափոնների կառավարման համակարգի յուրաքանչյուր էական փոփոխությունից հետո:	ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	3.2.2 Ինստիտուցիոնալ բաց 2 Տվյալների հավաքագրման, մշակման, հաշվետվությունների ներկայացման համար ոչ բավարար ինստիտուցիոնալ շրջանակ	
20	Ապահովել պատշաճ լաբորատոր կարողություններ և միջգերատեսչական պայմանավորվածություններ՝ բարձրացնելու թափոնների ոլորտի մշտադիտարկման և ստուգումների արդյունավետությունը:	ՀՀ կառավարություն	3.2.3 Ինստիտուցիոնալ բաց 3 Լաբորատոր թեստավորման ոչ բավարար կարողություններ	
21	Մշակել և ներդնել թափոնների մասին առցանց հաշվետվությունների ներկայացման համակողմանի և կենտրոնացված գործիք՝ թափոնների հետազոծին հետևելու և առնչվող տվյալներ ներկայացնելու համար՝ այդպիսով ապահովելով տեղեկությունների հասանելիությունը հանրության համար: Այս պահանջը պետք է նաև վերաբերի թափոնների գործածությամբ զբաղվող մասնավոր բիզնեսներին և կապալառուներին:	ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Վիճակագրական կոմիտե	3.2.1 Ինստիտուցիոնալ բաց 1 Բնապահպանական տեղեկությունների տարածման ոչ պատշաճ մեխանիզմներ 3.2.2 Ինստիտուցիոնալ բաց 2 Տվյալների հավաքագրման, մշակման, հաշվետվությունների ներկայացման համար ոչ բավարար ինստիտուցիոնալ շրջանակ	ԱՅՈ
22	Իրականացնել բժշկական թափոնների ծավալների և ստուգման կարողությունների գնահատում: Սա պետք է սահմանի մշտադիտարկման և այլ բավարար կարողություններ՝ ապահովելու ընթացակարգեր, որոնք հնարավոր կդարձնեն երկրում գոյացող ողջ վտանգավոր բժշկական թափոնների հավաքումը և վերամշակումը:	Առողջապահության նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	3.4.9 Տև.Ե բաց 9 Բժշկական և այլ վտանգավոր թափոնների մշակման համար անորոշ կարողություններ	
23	Վերանայել և պարզեցնել տվյալների ձեռք բերման և հաշվետվությունների կազմման ինստիտուցիոնալ համակարգը:	ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Վիճակագրական կոմիտե	3.2.1 Ինստիտուցիոնալ բաց 1 Բնապահպանական տեղեկությունների տարածման ոչ պատշաճ մեխանիզմներ 3.2.2 Ինստիտուցիոնալ բաց 2 Տվյալների հավաքագրման, մշակման, հաշվետվությունների ներկայացման համար ոչ	ԱՅՈ

		բավարար ինստիտուցիոնալ շրջանակ	
--	--	--------------------------------	--

4.2.2 Բ. Կառավարման կարողություն

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
24	Մշակել և ներդնել պարբերաբար իրականացվող ուսումնական ծրագրեր տեղական իշխանությունների համար՝ նպատակ ունենալով բարձրացնել կայուն հանրային գնումներ, պայմանագրերի կառավարում և կայուն բնապահպանական կառավարում իրականացնելու կարողությունները:	ՀՀ կառավարություն Էկոնոմիկայի նախարարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Քաղ. հասարակական կազմակերպություններ	3.2.4 Ինստիտուցիոնալ բաց 4 Պայմանագրերի, այդ թվում՝ ՀԱԳ պայմանագրերի կառավարման թույլ կարողություն 3.2.5 Ինստիտուցիոնալ բաց 5 Կոշտ թափոնների կառավարման ոլորտում կայուն գործառնության տեխնիկական ուղեցույցների և ուսուցման բացակայություն 3.2.6 Ինստիտուցիոնալ բաց 6 Գործառնական առումով անարդյունավետ թափոնների հավաքման սխեմաներ 3.2.7 Ինստիտուցիոնալ բաց 7 Աղբավայրերի կառավարման համար անհրաժեշտ գիտելիքների պակաս և ոչ բավարար կարողություններ 3.2.8 Ինստիտուցիոնալ բաց 8 Թափոնների տեղական կառավարման պլաններ մշակելու ոչ բավարար կարողություն 3.4.2 ՏԱԵ 2 ԿԿԹ աղբարկղների ոչ բավարար քանակություն, տեսակ և տեղադրում	
25	Մշակել և ներդնել մեխանիզմներ՝ միտված թափոնների ապօրինի հեռացումը վերահսկելուն/կանխարգելելուն, այդ թվում՝ տեխնոլոգիաների որդեգրմանը և իրազեկվածության բարձրացմանը: Համայնքները կարող են նախաձեռնել մշտադիտարկման և վերահսկման սեփական գործողությունները:	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին Շրջակա միջավայրի նախարարություն ՏԿԵ նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ	3.2.9 Ինստիտուցիոնալ բաց 9 Թափոնների ապօրինի հեռացումը վերահսկող ոչ բավարար կարողություն	

26	Թափոնների ոլորտում կիրառել գործունեության արդյունավետության վրա հիմնված պայմանագրերի կնքում (Ներառյալ, օրինակ, ԿՅՑ-ներ) և կառավարում:	ՏԿԵ նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն	3.2.4 Ինստիտուցիոնալ բաց 4 Պայմանագրերի, այդ թվում՝ ՀԱԳ պայմանագրերի կառավարման թույլ կարողություն 3.2.5 Ինստիտուցիոնալ բաց 5 Կոշտ թափոնների կառավարման ոլորտում կայուն գործառնության տեխնիկական ուղեցույցների և ուսուցման բացակայություն 3.2.6 Ինստիտուցիոնալ բաց 6 Գործառնական առումով անարդյունավետ թափոնների հավաքման սխեմաներ 3.2.1 Ինստիտուցիոնալ բաց 1 Բնապահպանական տեղեկությունների տարածման ոչ պատշաճ մեխանիզմներ	
27	Մշակել ծախսերի վերականգնում ապահովող մեխանիզմներ վերամշակման/օգտահանման արժեշղթաների կամ «աղտոտողը վճարում է» և «արտադրողի պատասխանատվության ընդլայնում» սկզբունքների միջոցով: ԸՋԿ-ները կարող են բարձրացնել հանրային իրազեկվածությունը վերամշակման ենթակա կյուբերի արժեքի վերաբերյալ, իսկ կառավարությունները կարող են խթաններ տրամադրել բիզնեսների համար:	ՀՀ կառավարություն Շրջակա միջավայրի նախարարություն ՏԿԵ նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Զաղ. հասարակական կազմակերպություններ	3.3.5 Ֆինանսական բաց 5 Գիտելիքի և տարրական կարողությունների պակասի արդյունքում վերամշակման ենթակա կյուբերի արժեքի կորուստ 3.2.4 Ինստիտուցիոնալ բաց 4 Պայմանագրերի, այդ թվում՝ ՀԱԳ պայմանագրերի կառավարման թույլ կարողություն 3.2.5 Ինստիտուցիոնալ բաց 5 Կոշտ թափոնների կառավարման ոլորտում կայուն գործառնության տեխնիկական ուղեցույցների և ուսուցման բացակայություն 3.2.6 Ինստիտուցիոնալ բաց 6 Շահագործման առումով անարդյունավետ թափոնների հավաքման սխեմաներ	ԱՅՈ

4.2.3 Գ. Ինստիտուցիոնալ շրջանակ

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
28	Ապահովել, որ վտանգավոր թափոնների, այդ թվում՝ նաև վտանգավորության 4-րդ դաս ունեցող խառը կենցաղային կոշտ թափոնների գործածմամբ զբաղվող բոլոր օպերատորները համապատասխանեն ՀՀ օրենսդրության լիցենզավորման	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին Շրջակա միջավայրի նախարարություն	3.2.10 Ինստիտուցիոնալ բաց 10 Թեև դա օրենքի պահանջն է, կենցաղային թափոնների հավաքման համար թույլտվություններ փաստացի չեն տրամադրվում	ԱՅՈ

		<p>3.2.11 Ինստիտուցիոնալ բաց 11. Թեև դա օրենքի պահանջն է, կենցաղային թափոնների հավաքման և աղբավայրերում դրանց տեղադրման համար փաստացի ՇՄԱԳ չի իրականացվում</p>	
<p>29 Ապահովել, որ վտանգավոր թափոնների, այդ թվում նաև վտանգավորության 4-րդ դաս ունեցող խառը կենցաղային կոշտ թափոնների գործածմամբ զբաղվող բոլոր օպերատորները համապատասխանեն ՀՀ օրենսդրության ՇՄԱԳ-ի պահանջներին: Այս պահանջը կարող է իրականացվել աստիճանաբար մի քանի տարվա ընթացքում:</p>	<p>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>3.2.11 Ինստիտուցիոնալ բաց 11 Թեև դա օրենքի պահանջն է, կենցաղային թափոնների հավաքման և աղբավայրերում դրանց տեղադրման համար փաստացի ՇՄԱԳ չի իրականացվում</p>	<p>ԱՅՈ</p>
<p>30 Թափոնների կառավարման ոլորտում մշակել և ներդնել մեկ պատուհանի սպասարկման կենտրոններ, որոնք պոտենցիալ ներդրողներին կիրառել են և կուղղորդեն Հայաստանում թափոնների գործածության հետ կապված հնարավորությունների մասին՝ տրամադրելով տեղեկություններ տեղեկությունների, իրանման սխեմաների, ռազմավարությունների և քաղաքականությունների վերաբերյալ: Սա պետք է փոխկապակցվի այլ բիզնես ներդրումային պորտալների հետ:</p>	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>3.2.12 Ինստիտուցիոնալ բաց 12 Թույլ Ինստիտուցիոնալ շրջանակ ներդրողների հետ աշխատելու համար</p>	
<p>31 Դիտարկել շրջակա միջավայրի պաշտպանության ազգային գործակալության (ՇՄԴԳ) կամ համանման մարմնի ստեղծումը՝ իրականացնելու կանոնակարգող, կիրարկում ապահովող, լիցենզավորող, թույլտվություններ տրամադրող և տվյալների հավաքման գործառնություններ, իսկ քաղաքականության մշակումը բաշխել թափոնների կառավարման հարցում ներգրավված առանցքային նախարարությունների միջև՝ ստուգման և կիրարկումն ապահովող դերը վերապահելով պետական տեսչական մարմիններին:</p> <p>Նման գործակալության հիմնումը պետք է համարվի գերատեսչությունների միջև հատվածականության խնդրի լուծումներից մեկը:</p> <p>Նման գործակալությունը կթեթևացնի նախարարությունների տարբեր բաժինների և պետական</p>	<p>ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն</p>	<p>3.2.13 Ինստիտուցիոնալ բաց 13 Հատվածականություն երկրում թափոնների կառավարման համար պատասխանատու հիմնական պետական գերատեսչությունների միջև</p>	

<p>գործակալությունների գործը, որոնք ծանրաբեռնված են տարբեր պարտականություններով և գործառնություններով, սակայն դրանց համար չունեն բավարար ռեսուրսներ և կարողություններ:</p>			
--	--	--	--

4.3 Առաջարկություններ ֆինանսական մեխանիզմների վերաբերյալ

4.3.1 Ա. Ֆինանսական բարելավում

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
32	Ապահովել ծախսերի ամբողջական վերականգնում՝ հիմնվելով «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա: Սա ներառում է երկրում թափոնների կառավարման իրական գործառնական, ինչպես նաև բնապահպանական ծախսերի գնահատում և թափոնների հավաքման վճարների հաշվարկների վերանայում: Վերանայել ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարների սահմանափակումները՝ դրանք ծախսերի ամբողջական վերականգնման մոտեցման հետ համապատասխանեցնելու նպատակով:	ՀՀ կառավարություն Շրջակա միջավայրի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն ՏԿԵ նախարարություն	3.3.1 Ֆինանսական բաց 1 Աղբահանության ցածր վճարը չի բավարարում լիարժեք ինքնածախսածածկմանը	ԱՅՈ
33	Բարելավել բնակիչներից և բիզնես կազմակերպություններից վճարների հավաքագրման արդյունավետությունը ՝ վճարների գանձումը միացնելով այլ կոմունալ վճարումների համակարգին, օրինակ, հոսանքի վճարին:	ՀՀ կառավարություն Տեղական իշխանություններ	3.3.1 Ֆինանսական բաց 1 Աղբահանության ցածր վճարը չի բավարարում լիարժեք ինքնածախսածածկմանը	
34	Վերացնել թափոնների հավաքում և սանիտարական մաքրում իրականացնող կազմակերպությունների հարկային արտոնությունները՝ կապված աղբավայրի հարկի հետ:	Պետական եկամուտների կոմիտե ՏԿԵ նախարարություն Ֆինանսների նախարարություն	3.3.2 Ֆինանսական բաց 2 Չափազանց ցածր բնապահպանական հարկ չտեսակավորված կոշտ կենցաղային թափոններն աղբավայրերում տեղադրելու համար	

4.4 Առաջարկություններ տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների վերաբերյալ

4.4.1 Ա. Շինարարական ենթակառուցվածքներ

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
35	Ապահովել միջոցներ համայնքներում աղբատար մեքենաների թարմացման համար: Միևնույն ժամանակ որպես կայուն թափոնների կառավարման մաս ապահովել տեխնիկական ուսուցում սարքավորումների գործածման, պահպանման և երթուղիների բարելավման հարցերում: Դրանից բացի տե՛ս նաև ճանապարհների բարեկարգման մասին առաջարկությունը:	ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն Տեղական իշխանություններ	3.4.1 Տևե բաց 1 Աղբատար մեքենաների պարկի անբավարար կարողություններ	
36	Ապահովել միջոցներ համայնքներում աղբարկղների թարմացման համար՝ միևնույն ժամանակ տրամադրել ուսուցում աղբարկղների պատշաճ գործածության վերաբերյալ՝ դրանց պիտանելիության ժամկետը երկարացնելու նպատակով:	ՀՀ կառավարություն ՏԿԵ նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն Տեղական իշխանություններ	3.4.2 Տևե բաց 2 ԿԿԹ աղբարկղների ոչ բավարար քանակություն, տեսակ և տեղադրում	
37	Մշակել և խթանել մեխանիզմներ և ուղեցույցներ՝ միտված համայնքային մակարդակում վերամշակման ենթակա առարկաների տեսակավորված հավաքման, ներառյալ ոչ թանկ աղբարկղերի և ցածրարժեք փոխադրման տարբերակների իրագործելի լուծումների և համայնքի կողմից նախաձեռնված թափոնների հավաքման միջոցառումների իրականացմանը: Տեղական իշխանությունները և ԶՀԿ-ները պետք է համագործակցեն այս ուղղությունը խթանելու շուրջ:	ՏԿԵ նախարարություն Տեղական իշխանություններ ԶՀԿ-ներ	3.4.3 Տևե բաց 3 Չոր վերամշակելիների տեսակավորված հավաքման համար ենթակառուցվածքների բացակայություն	
38	Վերամշակման ենթակա թափոններից առավել արդյունավետ կյուբական օգտահանում և թափոնների հավաքում իրականացնելու նպատակով ստեղծել թափոնների ընդունման կետեր այն համայնքներում, որտեղ նպատակահարմար է և համայնքների շրջանում բարձրացնել	Տեղական իշխանություններ ԶՀԿ-ներ	3.4.4 Տևե բաց 4 Տնային տնտեսություններում գոյացող խոշոր եզրաչափերով թափոնների և առանձին հավաքում պահանջող այլ թափոնների համար նախատեսված Տարանջատ	ԱՅՈ

	<p>իրազեկվածությունը խոշոր եզրաչափերով թափոնների, էլեկտրական թափոնների, փոքր մարտկոցների և այլ նման թափոնների պատշաճ հեռացման վերաբերյալ:</p> <p>Լավագույն փորձը կլինի այն, որ տվյալ կետի համար անհրաժեշտ տարածքը հատկացվի համայնքային սեփականություն հանդիսացող տարածքից:</p>		<p>հավաղման կենտրոնների բացակայություն</p>	
39	<p>Տնային տնտեսություններում և առևտրային գոտիներում գտնվող օրգանական թափոնները աղբավայրերում չտեղադրելու նպատակով խրախուսել տեսակավորված սննդային թափոնների հավաքման սխեմաները այնպիսի համայնքներում, որտեղ համայնքային կամ թաղային մակարդակով հնարավոր կլինի իրականացնել կոմպոստացում:</p> <p>Համայնքներում, որտեղ համայնքային կամ թաղային մակարդակով կոմպոստացման իրականացումը հնարավոր տարբերակ ՉԷ, խթանել սննդային թափոնների կոմպոստացման սխեմաները տնային տնտեսություններում:</p>	<p>Տեղական իշխանություններ ԶՀԿ-ներ</p>	<p>3.4.5 ՏԱԵ բաց 5</p> <p>Սննդի և այլ օրգանական թափոնների տեսակավորված հավաքման և մշակման համար ենթակառուցվածքի բացակայություն</p>	ԱՅՈ
40	<p>Մշակել և ներդնել տեղական լուծումներ աղբամուղների և բունկերային համակարգերի համար՝ նպատակ ունենալով լուծել սանիտարական և գործառնական խնդիրներ:</p>	<p>ՏԿԵՆ Տեղական իշխանություններ ԶՀԿ-ներ</p>	<p>3.4.6 ՏԱԵ բաց 6</p> <p>Շատ համայնքներ օգտագործում են աղբամուղներ և բունկերային համակարգեր</p>	

4.4.2 Բ. Աղբավայրեր

#	Առաջարկվող գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախավորվող բաց(եր)	ՀԸԳՀ
41	<p>Սանիտարական աղբավայրերի հետ կապված բոլոր ներդրումները պետք է ապահովեն, որ վտանգավոր թափոնները չտեղադրվեն աղբավայրերում:</p>	<p>ՏԿԵ նախարարություն</p> <p>Տեղական իշխանություններ</p>	<p>3.4.7 ՏԱԵ բաց 7</p> <p>Սանիտարական աղբավայրերի պակաս</p>	ԱՅՈ
42	<p>Տրամադրել միջոցներ վտանգավոր թափոնների համար աղբավայրեր կառուցելուն:</p> <p>Վտանգավոր թափոնների ցանցերի զարգացումը ներառել նոր սանիտարական աղբավայրերի ծրագրերում:</p>	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>3.4.8 ՏԱԵ բաց 8</p> <p>Հատուկ վտանգավոր նյութերի համար նախատեսված աղբավայրերի բացակայություն</p> <p>3.1.16 Օրենսդրական բաց 16</p> <p>Վտանգավոր թափոնների համար ԷՀԿ օբյեկտների զարգացումը</p>	

			խրախուսող տնտեսական խթանների անբավարար մեխանիզմներ	
43	Աղբավայրերի կառավարման ազգային ծրագրում ներառել տարածքային փոխանցման կայաններում և/կամ հատուկ աղբավայրերում ավտոմոբիլային կշեռքների տեղադրումը: Ավտոմոբիլային կշեռքների տեղադրումը ներառել աղբավայրերին վերաբերող ապագա բոլոր ծրագրերում:	ՏԿԵ նախարարություն Տեղական իշխանություններ	3.4.10 Տևե բաց 10 Թափոնների քանակի չափման սարքավորումների (ավտոմոբիլային կշեռքներ և այլն) բացակայություն	
44	Աղբավայրերի կառավարման ազգային ծրագրի շրջանակում միջոցներ տրամադրել աղբավայրերում շահագործման ենթակա ճանապարհների վերանորոգման համար (երկար ժամկետի համար):	ՏԿԵ նախարարություն Տեղական իշխանություններ	3.4.11 Տևե բաց 11 Վատ մուտքային ճանապարհներ աղբավայրերի մեծ մասում	

ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ

ԳԼԽԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ա 1 Համակողմանի լավագույն փորձ
- Ա 2 ԿԿԹԿ ռազմավարությունների լավագույն փորձ
- Ա 3 ԿԿԹ հավաքման լավագույն փորձ
- Ա 4 Թափոնների մշակման լավագույն փորձ
- Ա 5 Թափոնների կառավարման բնապահպանական ազդեցությունների վերահսկողություն

Թափոնների կառավարման ցանկացած ռազմավարության հիմքում ընկած է տվյալ քաղաքում կամ երկրում թափոնների շուրջ իրավիճակի մանրամասն վերլուծությունը: Վերջինս ենթադրում է օրենսդրության, ենթակառուցվածքների, կարողությունների, իրազեկվածության մակարդակի ուսումնասիրություն, և ամենակարևորը՝ թափոնների հևարավորինս մեծ թվով առանձին հոսքերի քանակական և որակական տվյալների հասանելիություն: Հանդիսանալով նաև թափոնների կառավարման պլան՝ ռազմավարությունը պետք է սահմանի հստակ թիրախներ, որոնք գնահատվում են թափոնների և դրանց առանձին հոսքերի առաջացման, տարանջատման, վերամշակման, օգտահանման և հեռացման ցուցանիշներով: Այս թիրախները սահմանելու և ցանկալի ցուցանիշներին հասնելու համար առանցքային է լավագույն միջազգային փորձի իմացությունը:

Եվրամիության մի շարք երկրներում մինչ օրս հաջողությամբ կիրառվող թափոնների կառավարման լավագույն փորձը հակիրճ ամփոփելու համար օգտվել ենք հետևյալ աղբյուրներից՝

- 1) «Բնապահպանական կառավարման լավագույն փորձ թափոնների կառավարման ոլորտի համար» [x] 2018 թվականի ԵՄ Հետազոտությունների միավորված կենտրոնի զեկույց
- 2) «Մոնիցինգայալ թափոնների կառավարման լավագույն փորձ. մոնիցինգայալ թափոնների կառավարման կայուն նախագծման մոտեցումների մասին տեղեկություններ» [xi] 2018 թվականի Գերմանիայի շրջակա միջավայրի գործակալության զեկույց
- 3) «Լավագույն հասանելի տեխնիկաներ (L3S). թափոնների կառավարման տեղեկատու փաստաթուղթ» [xii] Եվրամիության Հետազոտությունների միավորված կենտրոնի զեկույց
- 4) «Թափոնների կառավարման ազգային ռազմավարությունների ուղեցույցներ» [xiii] 2013 թվականի Միացյալ ազգերի կազմակերպության բնապահպանական ծրագրի զեկույց
- 5) «Դեպի շրջանաձև տնտեսություն. զրո-թափոն ծրագիր հանուն Եվրոպայի» [xiv] 2014 թվականի ԵՄ հանձնաժողովի հաղորդակցությունը
- 6) «Փակելով շրջանը. ԵՄ շրջանաձև տնտեսության գործողությունների պլան» [xv] 2015 թվականի ԵՄ հանձնաժողովի հաղորդակցությունը

Ա 1 Համակողմանի լավագույն փորձ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ա 1.1 Թափոնների հիերարխիա
- Ա 1.2 Չրո թափոն
- Ա 1.3 Թափոնի ավարտի չափորոշիչ
- Ա 1.4 Թափոնների կառավարման կենսացիկլի գնահատում
- Ա 1.5 Տնտեսական գործիքներ
- Ա 1.6 Արտադրողի պատասխանատվության ընդլայնում

Ա 1.1 Թափոնների հիերարխիա⁷⁰

Թափոնների կայուն կառավարման մասին ցանկացած քննարկում անդրադառնում է տարբեր մասնագիտացված հայեցակարգերի: Թափոնների կառավարման քաղաքականության անկյունաքարային հասկացություններից են թափոնների հիերարխիան, թափոնների առաջացման կանխարգելումը կամ դրանք նվազագույնի հասցնելը, զրո-թափոն մոտեցումը, թափոնի ավարտի չափորոշիչները, արտադրանքի կենսացիկլը, ռեսուրսների արդյունավետությունը, բնապահպանական պատշաճ կառավարումը և այլն:

Թափոնների կառավարման հիերարխիան ունի թափոնների նվազեցմանն ու կառավարմանն ուղղված գործողությունների աստիճանակարգություն և սովորաբար ներկայացվում է աղյուսակային պատկերմամբ (բերված է ստորև): Թափոնների հիերարխիան ներկայացվում է շուրջ տված բուրգի տեսքով, քանի որ քաղաքականության հիմնական ուղղությունն առաջին հերթին վերաբերում է թափոնների գեներացման կանխմանը: Ըստ գործողությունների աստիճանակարգության՝ հաջորդ քայլը պետք է լինի նվազեցնել առաջացող թափոնների ծավալները (օրինակ՝ վերօգտագործման միջոցով): Վերամշակումը, այդ թվում՝ կոմպոստացումը և անաերոբ ֆերմենտացումը, հաջորդ գործողություններն են, որոնց կարող են հետևել տարբեր նյութերի օգտահամման և թափոններն էներգիայի վերածելու քայլերը: Էներգիայի օգտահամմանը աղբավայրից կամ այրման և պիրոլիզի միջոցով նույնպես գտնվում է հիերարխիայի այս մակարդակում:

Վերջին գործողությունը թափոնների տեղադրումն է աղբավայրերում կամ դրանց կիզումն առանց էներգիայի ստացման: Այս վերջին քայլը կիրառվում է որպես ամենավերջին հնարավորություն այն թափոնների համար, որոնց առաջացումը հնարավոր չի եղել կանխել, դրանք ուղղորդել կամ մշակել նախորդ փուլերում: Առանց էներգիայի ստացման թափոնների կիզումից կամ պատշաճ կերպով կառուցված և կառավարվող աղբավայրերից ներքև գտնվում են վերահսկվող և չվերահսկվող աղբավայրերը, որտեղ սովորաբար նետվում է աղբը ցածր եկամուտներ ունեցող երկրներում (նույնիսկ միջին եկամուտներ ունեցող որոշ երկրներում):

Թափոնների հիերարխիան հաճախ կրճատ նշվում է 3R (Reduce, Reuse, Recycle) անգլերեն հապավմամբ, որը ներկայացնում է համապատասխան գործողություններն ըստ աստիճանակարգության՝ նվազեցնել, վերօգտագործել, վերամշակել:

Հիերարխիան ընդգծում է նյութի կամ արտադրանքի անցումը թափոնների կառավարման հաջորդական փուլերով և ներկայացնում է յուրաքանչյուր արտադրանքի կենսացիկլի վերջին հատվածը: Կենսացիկլն սկսվում է նախագծմամբ, որից հետո գալիս է արտադրությունը, տարածումը, գործածումը և

⁷⁰ Թափոնների հիերարխիան սահմանված է ԵՄ թափոնների դիրեկտիվի 4-րդ հոդվածով: Տե՛ս՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:32008L0098>

հիերարխիայի ստորին փուլերում արտացոլված տարբերակները (վերօգտագործում, օգտահանում, վերամշակում և հեռացման տարբերակներ): Կենսացիկլի յուրաքանչյուր փուլը հնարավորություններ է ստեղծում քաղաքականության միջամտության համար՝ վերադիտարկել ապրանքի անհրաժեշտությունը, իրականացնել դրա նոր նախագծում՝ արտադրանքի թափոնային պոտենցիալի նվազեցման նպատակով, փոփոխության ենթարկել կամ ընդլայնել դրա գործածությունը՝ նպատակ ունենալով նվազեցնել արտադրանքի թափոնային պոտենցիալը և օգտահանել ներառված ռեսուրսները: Ապրանքի արտադրության ժամանակ գործածվող ռեսուրսները թափոնների կառավարման քաղաքականության հիմնական շարժիչներն են: Քաղաքականության նպատակը թափոնների ավելի լավ կառավարում կամ թափոնների կառավարման իրավակարգավորումների պահպանումն ապահովելը չէ, այլ՝ աշխարհի նյութական ռեսուրսների գործածման օպտիմալացումը, որը իրականացվում է թափոնների առաջացումից խուսափելու, իսկ այն պարագայում, երբ դրանց առաջացումն անխուսափելի է, դրանց որպես օգտահանման և օգտագործման ենթակա ռեսուրսի վերաբերվելու միջոցով: Այս երեք սկզբունքները՝ թափոնների հիերարխիան, ապրանքների կենսացիկլը և թափոնի որպես ռեսուրս դիտարկումը, ամբողջ փաստաթղթի հիմնասյուններն են և պետք է հիմք ծառայեն ռազմավարության մշակման ցանկացած գործընթացի համար:

Թափոնների հիերարխիա				
#	Առաջարկի հետ կապված միջոցառում	Առաջարկի հիմնավորումը	ՀՀ-ում կիրառելու կարևորության և աստիճան	Ժամկետներ
1	Ներառել Թափոնների հիերարխիա հասկացությունը և դրա սահմանումը «Թափոնների մասին» օրենքում	Թեև «Թափոնների մասին» օրենքը պարունակում է Թափոնների հիերարխիայի բոլոր բաղադրիչները, այնուամենայնիվ օրենքը չի սահմանում դրանց առաջնահերթությունը, որը կենտրոնական դեր ունի ԹՀ մոտեցման համար: Առաջարկը համահունչ է ՀԸԳՀ (CEPA)-ի հետ և ուղղակիորեն կնպաստի ՇՏ հայեցակարգի և դրա սկզբունքների ինտեգրմանը երկրի ռեսուրսների կառավարման քաղաքականություններում:	Հրատապ	01.01.2020
2	Լիցենզավորման և պետական գնումների գործընթացներում ներառել ԹՀ-ին համապատասխանության մասին պահանջներ և առաջնահերթություններ:	Առաջարկն ուղղակիորեն կնպաստի «Թափոնների մասին» օրենքով սահմանված գ) թափոնների գոյացման ծավալները նվազեցնող և արտադրության մեջ սակավաթափոն տեխնոլոգիաներ ներդնող, ինչպես նաև երկրորդային հումքը համարվող թափոնների հավաքման, պահեստավորման և հանձնման գործառնություններով զբաղվող ընկերություններին և կազմակերպություններին օրենքով սահմանված դեպքում և կարգով արտոնությունների տրամադրելուն	Կարևոր	06.01.2020

Ա 1.2 Չրո-թափոն

Շատ երկրներ կոնկրետ ժամկետ են սահմանել են «չրո-թափոնի» հասնելու ազգային (երբեմն տարածաշրջանային կամ տեղական) թիրախի համար: Սակայն որևէ երկիր կամ նույնիսկ քաղաք դեռևս չի հասել նշված թիրախին, սակայն չկա նաև որևէ երկիր կամ քաղաք, որին բավարարում է թափոնների նվազագույնի հասցմանն ուղղված սեփական ջանքերը: Ցանկացած տեսակի հաջողություն մշտապես ծնում է ավելի լավ գործելու հավակնություն: Այս հավակնությունն է թափոնների կառավարման շարունակական կատարելագործման շարժիչ ուժը:

Չրո-թափոն մոտեցման որդեգրումը որպես ազգային թիրախ ճանաչումն է այն իրողության, ըստ որի թափոնների գեներացման կամ վերամշակման ասպարեզում աստիճանական առաջընթացը բավարար չէ և անհրաժեշտ է սահմանել թափոնների իսպառ վերացման նպատակ: Չրո-թափոն թիրախը բնութագրում է թափոնների կառավարման աշխատանքների երբեք չավարտվող բնույթը՝ այն, որ մշտապես լինելու է բարելավման անհրաժեշտություն, մեկ թիրախի նվաճումից հետո գալու են մյուսները, ավելի բարդ և աշխատատար նպատակներ, որոնց դեռևս պետք է հասնել: Չրո-թափոն թիրախը կարող է նաև օգտակար լինել երկարաժամկետ բարեփոխումներ փնտրելու մասին հիշեցնող և երկարաժամկետ արմատական փոփոխությունների վրա ուշադրության կենտրոնացնող դեր տանելով: Այն պետք է իրականացվի հստակ, չափելի նպատակների և ենթաթիրախների սահմանման միջոցով, որոնք հնարավորություն կտան գնահատել երկրում թափոնների ամբողջական վերացմանն ուղղված աշխատանքների գրանցած առաջընթացը:

Չրո-թափոն				
#	Առաջարկի հետ կապված միջոցառում	Առաջարկի հիմնավորումը	ՀՀ-ում կիրառելու կարևորության աստիճան	Ժամկետներ
1	Կոշտ թափոնների կառավարման ազգային ռազմավարությունում ներառել կոնկրետ Չրո-թափոն թիրախներ և դրանց իրականացման քայլեր	Առաջարկը կնպաստի «Թափոնների մասին» օրենքով հողված 23-ի նպատակներին՝ Թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների խթանումը	Հրատապ	01.01.2020

Ա 1.3 Թափոնի ավարտի չափորոշիչ⁷¹

Թափոնի ավարտի չափորոշիչները սահմանում են, թե երբ է թափոնը դադարում այլևս այդպիսին համարվելուց և ձեռք բերում արտադրանքի (կամ երկրորդային հումքի) կարգավիճակ: Ըստ ԵՄ Թափոնների կառավարման շրջանակային դիրեկտիվի (2008/98/ԵՅ) հողված 6(1) և (2)-ի, որոշ տեսակի թափոններ դադարում են այդպիսին լինել, երբ դրանք ենթարկվում են օգտահանման (ներառյալ՝ վերամշակման) աշխատանքների և համապատասխանում են կոնկրետ չափանիշների, որոնք պետք է մշակվեն որոշակի իրավական պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Նյութի կամ առարկայի գործածությունն ընդունված է որոշակի նպատակների համար
- Նյութի կամ առարկայի համար առկա է պահանջարկ կամ շուկա
- Օգտագործումն օրինական է (նյութը կամ առարկան համապատասխանում է կոնկրետ նպատակների համար սահմանված տեխնիկական պահանջներին, ինչպես նաև ապրանքների համար կիրառելի չափանիշների և օրենսդրության պահանջներին)
- Օգտագործումը չի հանգեցնի բացասական հետևանքների շրջակա միջավայրի և մարդու առողջության համար

Եվրոպական հանձնաժողովի կողմից նման չափանիշներ պետք է սահմանվեն կոնկրետ նյութերի համար՝ կիրառելով հողված 39(2)-ում նկարագրված Թափոնների կառավարման շրջանակային դիրեկտիվը (այսպես կոչված «հանձնաժողովային աշխատանք»): ԵՅ հրահանգի համաձայն՝ սահմանվում են շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանություն և տնտեսական օգուտներ ապահովող թափոնի

⁷¹ Սույն սահմանումը վերցված է Եվրամիության հետևյալ կայքէջից՝ https://ec.europa.eu/environment/waste/framework/end_of_waste.htm

ավարտի չափորոշիչներ: Դրանք նպատակ ունեն խրախուսել թափոնների վերամշակման իրականացումը ԵՄ տարածքում՝ ստեղծելով իրավական կանխատեսելիություն և հավասար խաղի կանոններ, ինչպես նաև վերացնելով անհարկի վարչական բեռը:

Չափանիշների մշակման մեթոդաբանությունը կազմվել է Հետազոտությունների միավորված կենտրոնի կողմից (ՀՄԿ զեկույցներ):

Անդամ երկրների հետ այս մեթոդաբանությունը համաձայնեցնելուց հետո Եվրոպական հանձնաժողովն այժմ թափոնի ավարտի չափորոշիչներ է պատրաստում առաջնային թափոնների հոսքերի համար: Առայժմ չափորոշիչներ սահմանվել են հետևյալի համար.

- **Երկաթի, մետաղի և պողպատի ջարդոն** (ԵՄ Խորհրդի իրավակարգավորում (ԵՄ) N° 333/2011)
- **Ապակե թափոններ** (ԵՀ իրավակարգավորում (ԵՄ) N° 1179/2012)
- **Պղնձի ջարդոն** (ԵՀ իրավակարգավորում (ԵՄ) N° 715/2013)

Թափոնի ավարտի չափորոշիչ				
#	Առաջարկի հետ կապված միջոցառում	Առաջարկի հիմնավորումը	ՀՀ-ում կիրառելու կարևորության աստիճան	Ժամկետներ
1	Թափոնի ավարտի չափորոշիչները ներառել ԿԿԹԿ հայեցակարգերում	Թափոնի ավարտի մոտեցման կիրառումը թույլ կտա ավելի լավ գնահատել և վերլուծել ռեսուրսների կառավարումը երկրում:	Ցանկալի	2023

Ա 1.4 Ինտեգրված թափոնների կառավարման ռազմավարություններ

Բնապահպանական կառավարման լավագույն փորձ (ԲԿԼՓ) կարող է համարվել ինտեգրված թափոնների կառավարման այնպիսի ռազմավարության մշակումն ու իրականացումը, որը հաշվի կառնի հետևյալը.

- Թափոնների հիերարխիան, միջոցառումների առաջնահերթությունների սահմանումն ըստ հիերարխիայի (սկզբում՝ թափոնների առաջացման կանխում, ապա՝ վերօգտագործման նախապատրաստություն, և այլն)
- Թափոնների հոսքերի ներկա և ապագա միտումները
- Բնապահպանական հարցերի շուրջ բնակիչների ընթացիկ վերաբերմունքն ու ընկալումները
- Թափոնների կառավարման վրա ազդող ցանկացած այլ պայման (օրինակ՝ զբոսաշրջիկների/ճանապարհորդների զգալի քանակություն, որոշակի տնտեսական գործունեություն, կլիմա)

Թափոնների կառավարման ռազմավարության մշակումը պահանջում է թափոնների ամեն մի խոշոր հոսքի քանակի և որակի մասին իրազեկվածության ապահովում՝ տվյալների պատշաճ մշտադիտարկման և թափոնների կառավարման տարբերակների լիարժեք գնահատում իրականացնելու միջոցով: Որոշ դեպքերում սա կարող է պահանջել կենսացիկլի գնահատման (ԿՑԳ) կիրառում՝ նպատակ ունենալով բացահայտել շրջակա միջավայրի առումով լավագույն տարբերակները (տես՝ հաջորդ ԲԿԼՓ), որոնք երբեմն կարող են շեղվել թափոնների հիերարխիայից:

Ա 1.5 Թափոնների կառավարման կենսացիկլի գնահատում

ԲԿԼՓ է համարվում թափոնների կառավարման ռազմավարության և գործառնությունների մեջ կենսացիկլային մոտեցման և գնահատման ներառումը: Ստորև նշված քայլերից Էական նշանակություն

ունեն 1-ը և 2-ը, իսկ 3-8 քայլերն ունեն ժամանակավոր ԿՑԳ իրականացման անհրաժեշտություն, որոնք ոչ միշտ են պարտադիր.

- 1) Կենսացիկլային մոտեցման համակարգային կիրառում թափոնների կառավարման ռազմավարության նախագծման և իրականացման բոլոր փուլերում (ի լրումն թափոնների հիերարխիայի):
- 2) ԿՑԳ գրականության ուսումնասիրություն՝ թափոնների կառավարման այլընտրանքային տարբերակների բնապահպանական ցուցանիշները դասակարգելու, ինչպես նաև պարզելու համար, թե որքանով են ուսումնասիրված համակարգերը ուղղակիորեն համեմատելի առկա տարբերակների հետ:
- 3) ԿՑԳ կիրառում կառավարման և տեխնոլոգիաների այն տարբերակների դեպքում, որոնց վերաբերյալ չկա հրատարակված վստահելի գրականություն: Սա պահանջում է ԿՑԳ ծառայությունների գնում կամ համապատասխան ԿՑԳ համակարգչային ծրագրի տեղային կիրառություն:
- 4) Համակարգային սահմանների մանրակրկիտ դիտարկում՝ տարբերակների ճշգրիտ համեմատություն ապահովելու նպատակով, այդ թվում՝ որոշ գործընթացների համար համակարգի ընդարձակում և/կամ ԿՑԳ (օրինակ՝ ցանցային էլեկտրոգիայի արտադրություն):
- 5) Հոսքերի հետ կապված կենսացիկլային գույքագրումների հավաքագրում և փաստագրում, հնարավորության դեպքում օգտագործելով արժեշղթայի փուլերում գրանցված հիմնական տվյալները՝ նշելով տվյալների որակը և անճշտությունների միջակայքերը:
- 6) Գլխավոր բնապահպանական խնդիրները նկարագրող ազդեցության համապատասխան խմբերի ընտրություն:
- 7) Ազդեցության համապատասխան խմբերի նորմավորված արդյունքների ներկայացում՝ նպատակ ունենալով գնահատել լրացումներն ու հավասարակշռող գործոնները՝ հստակ նշելով անճշտության միջակայքերն ու զգայունության վերաբերյալ վերլուծությունները:
- 8) ԿՑԳ վավերացում անկախ երրորդ կողմի կատարմամբ (Ստանդարտիզացման միջազգային կազմակերպության 14044 պահանջը արդյունքների արտաքին տարածման մասին: Լավ պրակտիկա է համարվում անգամ ներքին գործածության դեպքում):

Թափոնների կառավարման տեխնոլոգիաների գնահատման ԿՑԳ գործիքի օրինակ է ՇՄՏԲԳԳ-ն (Շրջակա միջավայրի տեխնոլոգիաների բնապահպանական գնահատման համակարգ), որը մշակվել է Դանիայի տեխնիկական համալսարանի կողմից: ՇՄՏԲԳԳ-ն օգտատերերին հնարավորություն է տալիս իրականացնել տարատեսակային կողմնակա հոսքերի հետ գործ ունեցող համակարգերի ԿՑԳ՝ դիտարկելով ռեսուրսների գործածումը, օգտահանումը և արտանետումները («Դամգասարդ և մյուններ», 2011թ): Կիրառման վերաբերյալ ուսուցման և դրա թարգմանության մոտ 5,000 եվրո արժեցող ծախսը հոգալու պարագայում ՇՄՏԲԳԳ-ն և ՇՄԹԲԳԳ մոդուլը (շրջակա միջավայրի թափոնների բնապահպանական գնահատման համակարգ) կարող են հասանելի լինել հետազոտողների, խորհրդատուների, իշխանությունների և տեխնոլոգիաներ մշակողների համար (ԴՏՀ 2015թ.):

Անվճար կամ առևտրային հիմունքներով հասանելի են ԿՑԳ ծրագրային այլ գործիքներ ևս, որոնց թվում են ստորև բերված օրինակները՝

- OpenLCA – ԿՑԳ անվճար համակարգչային ծրագիր <http://www.openlca.org/>
- SimaPro – Վճարովի ԿՑԳ . հնարավոր է ձեռք բերել «PRé Consultants»-ից <http://www.pre-sustainability.com/simapro>
- GaBI – Վճարովի ԿՑԳ <http://www.gabi-software.com/>

Ա 1.6 Տնտեսական գործիքներ

ԲԼԿՓ Է տնտեսական գործիքների կիրառումը՝ թափոններ արտադրող քաղաքացիների և կազմակերպությունների վարքը դեպի բնապահպանական առումով ավելի օգտակար արդյունքներ ուղղորդելու համար: Տնտեսական գործիքները կարող են խթան հանդիսանալ հետևյալի համար.

- Առաջացող թափոնների ծավալների նվազեցում կամ վտանգավոր թափոնների համամասնության նվազեցում
- Թափոնների վերաօգտագործման և վերամշակման համար նախապատրաստության խրախուսում, թափոնների այրման և աղբավայրում տեղադրման նվազեցում
- Արտադրության նախագծման բարելավում (օրինակ՝ արտադրության մեջ վերամշակման ենթակա նյութերի գործածման խրախուսում)

Թափոնների կառավարման հետ առնչվող տնտեսական գործիքները կարող են ունենալ թե՛ խթանիչ (դրական տնտեսական ուղերձներ՝ զեղչեր, պարգևատրման վաուչերներ), թե՛ խոչընդոտող ազդեցություն (բացասական տնտեսական ուղերձներ՝ հարկեր, վճարներ, տուգանքներ):

Տնտեսական գործիքների կիրառումը մշտապես խրախուսվել է (ԵՀ, 2003, 2005, 2007, ՏՀԶԿ, 2004, 2007): Կիրառվող գործիքներից որոշները ներկայացված են ստորև.

- Հարկեր, ներառյալ՝
 - Աղբահանության հարկ
 - Աղբավայրում տեղադրման հարկ
 - Աղբակիզման հարկ
 - Արտադրական վճարներ (պոլիէթիլենային տոպրակների և իրերի)
- Թափոնների գների սահմանում.
 - Ըստ միավորի վճար և ըստ թափոնի ծավալի («վճարի ըստ թափածի») վճարելու մեխանիզմներ
 - Տարբերվող և փոփոխական դրույքաչափեր
 - Վճարների կամ զանձման փոփոխական համակարգեր
- Կանխավճարի վերադարձման մեխանիզմներ
- Արտադրողի պատասխանատվության ընդլայնման համակարգեր
- Այլ, ներառյալ՝
 - Փոխանցման ենթակա լիցենզիաներ
 - Վերամշակման սուբսիդիաներ
 - ԱԱՀ-ից ազատում
 - Ամորտիզացիայի ժամկետների ընդլայնում
 - Դրական խթաններ

Ա 1.7 Արտադրողի պատասխանատվության ընդլայնում

Արտադրողի պատասխանատվություն ունեցող ընկերությունների համար (ԱՊՈԸ) ԲԿԼՓ Է համարվում արտադրողի պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) իրենց սխեմաների ընդարձակումը խթանների սահմանման միջոցով (իրավական պահանջներից զատ), որոնք բարձրացնում են տարանջատված հավաքման, վերօգտագործման և վերամշակման մակարդակը ԱՊԸ շրջանակում: ԱՊՈԸ-ների կողմից կատարման ենթակա գործողությունները կարող են ընդգրկել հետևյալը.

- Հաղորդակցության նորարարական միջոցառումների, օրինակ՝ շրջանների միջև մրցակցության կազմակերպման միջոցով մոտիվացնել քաղաքացիներին տեղում թափոնների ավելի լավ և արդյունավետ տարանջատում իրականացնելու համար
- Հանրային իշխանությունների հետ սերտ համագործակցություն (ֆինանսական, տեխնիկական և/կամ նյութատեխնիկական)

- Սոցիալական տնտեսության դերակատարների հետ համագործակցության ապահովում
ապրանքների հավաքման և վերօգտագործման մասով՝ արտադրողներին դրդելով նախագծել
ավելի կայուն արտադրանք («ազատ մոդելավորման» միջոցով)
Բնապահպանական ձեռքբերումների ուղենշում այն տարածքների համար, որոնց վերաբերում է
ԱՊԸ սիսեման (հանրային իշխանությունների տեղական/մարզային մակարդակով):

Ա 2 ԿԿԹԿ ռազմավարությունների լավագույն փորձ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա 2.1 Ծախսերի ուղենշում

Ա 2.2 Թափոնների վշտադիտարկում

Ա 2.3 Վճարիր-թափաժի-չափով (ՎԹՉ) սխեմաներ

Ա 2.4 Ըստ կատարողականի պայմանագրեր

Ա 2.5 Իրազեկման բարձրացում

Ա 2.6 Թափոնների խորհրդատվական ցանց

Ա 2.7 Տնային և համայնքային կոմպոստացում

Ա 2.8 Թափոնների կրճատման ծրագրեր

Ա 2.9 Ապրանքների և թափոնների վերօգտագործումը խթանող սխեմաներ

Ա 2.10 Տուրիզմի ռազմավարություն

Ա 2.1 Ծախսերի ուղենշում

Թափոնների կառավարման ոլորտում որոշումները մեծապես կախված են մի շարք տնտեսական գործոններից: Լավագույն փորձ համարվող ծախսերի ուղենշումը թույլ է տալիս համեմատել երկու համայնքապետարանների ծախսերի կառուցվածքները, և ստեղծում է հնարավորություն մշակելու ավելի օպտիմալ և առավել Էկոլոգիական ծառայությունների տարբերակներ: Ծախսերի ուղենշման ուսումնասիրությունը սովորաբար իրականացվում է անկախ կազմակերպության, մեկ կամ մի քանի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Վերլուծման ենթակա ծախսերը ներառում են՝

- թափոնների տարբեր բաժնեմասերը հավաքելու ծախսեր (օր. մնացորդային աղբ, թղթե, օրգանական թափոններ և այլն)
- մնացորդային աղբի մշակման/հեռացման ծախսեր
- աղբավայրի շահագործման, փակման և փակված աղբավայրի կառավարման ծախսեր (նեխաջրերի մշակում, ռեկուլտիվացում և այլն)
- այլ բնապահպանական ազդեցությունների վնասագերծման կամ հատուցման ծախսեր
- կոշտ թափոնների կառավարման անձնակազմի և վարչական ծախսեր
- մասնավոր ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ծախսեր
- համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների ծախսեր
- համայնքապետարանի կողմից մեկ այլ համայնքապետարանին մատուցվող ծառայությունների ծախսեր
- այլ ծախսեր

Վերլուծման ենթակա եկամուտները ներառում են՝

- թափոններից օգտահանված էներգիայի կամ վառելիքի վաճառքից եկամուտ
- թափոններից անատերոք եղանակով օգտահանված կենսազազի վաճառքից եկամուտ
- տեսակավորմամբ հավաքված թղթի թափոնների վաճառքից եկամուտ
- տեսակավորմամբ հավաքված փաթեթավորման թափոնների վաճառքից եկամուտ
- տեսակավորմամբ հավաքված ապակե թափոնների վաճառքից եկամուտ
- տեսակավորմամբ հավաքված մետաղյա թափոնների վաճառքից եկամուտ
- տեսակավորմամբ հավաքված օրգանական թափոններից ստացված կոմպոստի վաճառքից եկամուտ
- բիզնեսներից թափոնների հավաքման և հեռացման դիմաց վճարներից եկամուտ

Ա 2.2 Թափոնների մշտադիտարկում

Արդյունավետ թափոնների կառավարման ռազմավարության մշակումն ու իրականացումը մեծապես կախված է վիճակագրական տվյալների հասանելիությունից թափոնների կառավարման բոլոր փուլերի վերաբերյալ: Այս ուղղությամբ լավագույն փորձը հետևյալն է՝

- պարբերաբար հավաքագրել և մշակել հասանելի տվյալները թափոնների յուրաքանչյուր առանձին հոսքի տարբեր փուլերի վերաբերյալ՝ առաջացում, հավաքում, տեսակավորում, վերօգտագործում (կամ վերօգտագործման համար նախապատրաստում), վերամշակում օգտահանում և հեռացում
- պարբերաբար իրականացնել կոշտ թափոնների բաղադրության ուսումնասիրություն
- թափոնների կառավարման պայմանագրեր կնքելիս ներառել պարտադիր դրույթ ծառայություն մատուցողի կողմից պարբերական տվյալների տրամադրման վերաբերյալ

Ա 2.3 Վճարիր-թափածի-չափով (ՎԹՉ) սխեմաներ

Վճարիր-թափածի-չափով սխեմայի նպատակն է «աղտոտողը-վճարում է» սկզբունքի արդար գործարկումը՝ հիմնվելով սպառողների առաջացրած թափոնների քանակի վրա: Այս ուղղությամբ լավագույն փորձը ֆիքսված վճարն է՝ հավելված փոփոխական բաղադրիչով: Այս երկուսը միասին արտացոլում են թափոնների կառավարման ծախսերի կառուցվածքը: Ընդ որում, փոփոխական բաղադրիչը սպառողներին խրախուսում է նվազեցնել թափոնների առաջացումը (որքան քիչ առաջացնեն, այնքան քիչ կվճարեն), մինչդեռ ֆիքսված բաղադրիչը հաստատուն եկամուտ է ապահովում աղբահանություն իրականացնողների համար:

Գործնականում այս համակարգը կարելի է իրականացնել տարբեր եղանակներով, օրինակ՝

- ըստ ծավալի սխեմաներ (սպառողն ընտրում է աղբամանի ծավալը)
- ըստ տոպրակի սխեմաներ (սպառողն ընտրում է աղբի հատուկ տոպրակների քանակը)
- ըստ քաշի սխեմաներ (հաշվարկվում է տվյալ աղբամանի քաշը)
- ըստ հաճախության (հաշվարկվում է աղբամանի դատարկման հաճախությունը: Այս սխեման կարելի է համադրել ըստ քաշի կամ ծավալի սխեմաների հետ):

Նշված սխեմաները կարող են ներառել ինչպես միայն մնացորդային (տեսակավորումից հետո մնացած) աղբը, այնպես էլ առանձին թափոնների հոսքեր: Բոլոր դեպքերում այս սխեմաները մեծապես նպաստում են առաջացման փուլում թափոնների կրճատմանը:

Նման սխեմաների կիրառման բազմաթիվ օրինակներ կան, սակայն լավ օրինակ է Գերմանիայի Աշաֆենբուրգ գավառը, որը 1997 թվականին որդեգրելով ՎՏՊ սխեման սկսեց գրանցել կոշտ կենցաղային թափոնների տարանջատման և վերամշակման կտրուկ աճ՝ միաժամանակ նվազեցնելով դրանց առաջացումը: 2017 թվականի դրությամբ Աշաֆենբուրգն ունի Գերմանիայում ամենաբարձր՝ 86% վերամշակելի թափոնների հավաքման ցուցանիշը, և ամենացածր՝ 55 կգ/տարի մեկ շնչի հաշվով մնացորդային աղբի առաջացման գործակիցը:⁷²

Ա 2.4 Ըստ կատարողականի պայմանագրեր

Բնապահպանական կառավարման լավագույն փորձ է համարվում այն պրակտիկան, երբ թափոնների կառավարման ծառայություն մատուցող մասնավոր ընկերությունների հետ տեղական ինքնակառավարման մարմինների կնքած պայմանագրերը ներառում են ըստ կատարողականի

⁷² Morlok, Juergen & Schoenberger, Harald & Styles, David & Galvez-Martos, Jose-Luis & Zeschmar-Lahl, Barbara. (2017). *The Impact of Pay-As-You-Throw Schemes on Municipal Solid Waste Management: The Exemplar Case of the County of Aschaffenburg, Germany*. Resources. 6. 8. 10.3390/resources6010008.

պայմանագրային դրույթներ, որոնք ապահովում են ինչպես բնապահպանական, այնպես էլ ֆինանսական պահանջների կատարումը:

Ըստ կատարողականի պայմանագրերն ունեն երեք կարևոր հատկանիշ.

1. պայմանագրում սահմանվում են մի շարք նպատակներ և ցուցանիշներ, որոնց համաձայն գնահատվելու է կապալառուի կատարողական բնութագիրը
2. ծառայության մատուցումը գնահատելու նպատակով պայմանագրում սահմանվում է նշված ցուցանիշների հետ կապած տվյալների հավաքագրման եղանակը
3. կապալառուի վարձատրությունը (ավելի բարձր եկամուտ կամ պատժամիջոցներ) կպայմանավորվի լավ կամ վատ կատարողական բնութագրով

Ծառայությունների մատուցման ամենատարածված կատարողական ցուցանիշներից են՝

- սպառողի գոհացումը (կոշտ կենցաղային թափոնների հավաքման ծառայությունից գոհ բնակիչների տոկոսը)
- Սահմանված բնապահպանական նպատակներին հասնելու աստիճանը

Միացյալ Թագավորության Բրիստոլ քաղաքը 2009 թվականին թափոնների կառավարման ծառայության մի կոր մրցույթ հայտարարեց, որում առաջին անգամ համապատասխանեցման հիմքով գործող տեխնիկական պահանջների փոխարեն հանդես էին գալիս հետևյալ գերադասելի արդյունքները՝

- մատուցված ծառայության հետ կապված «ածխածնային ոտնահետքի» նվազեցում Բրիստոլ քաղաքի 2020 թվականի համար սահմանված թիրախներին համապատասխան
- թափոնների կրճատման, վերօգտագործման, վերամշակման և կոմպոստացման աճ դեպի գրո-թափոն իրականություն
- աղբավայրերում չվերամշակված թափոնների տեղադրման քանակի զգալի կրճատում
- ռեսուրսների օգտահանման առավելագույն մակարդակ (օր. Էներգիայի ստացում վերամշակելի թափոններից կամ մնացորդային թափոններից)
- բնապահպանական իրավախախտումների բացահայտում և կրճատում
- Համայնքներում թափոնների կայուն կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում

Ա 2.5 Իրազեկման բարձրացում

Իրազեկման բարձրացման լավագույն փորձը նպատակ ունի խրախուսելու թափոնների կրճատմանը, վերօգտագործմանը և վերամշակմանն ուղղված վարքագծի որդեգրումը: Ի վերջո, այդ վարքագիծը պիտի արտացոլվի թափոնների կառավարման բոլոր առանցքային ցուցանիշների բարելավված բնութագրերով:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է իրազեկման բարձրացման տարատեսակ մեթոդներ իրենց հաղորդակցման միջոցներով

Մեթոդ	Հաղորդակցման միջոց
Գովազդ	Ռադիո, տպագիր մամուլ, հեռուստատեսություն, արտաքին գովազդային վահանակներ, առցանց, հեռախոսային գովազդ, կարճամետրաժ ֆիլմեր
Հանրային կապեր	Ռադիոյի, մամուլի, հեռուստատեսության և առցանց լրատվական կապեր
Անմիջական մարքեթինգ	Դռնեղուռ ակցիաներ, թռուցիկների/տեղեկույթի տարածում, ցուցադրություններ և միջոցառումներ
Համայնքի ներգրավում	Դպրոցների հետ կապեր, աջակցություն համայնքային խմբերին, երրորդ ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցություն (տես՝ 4.4.2 ենթաբաժինում նկարագրված վերօգտագործման սխեմաների փորձի օրինակները), ինչպես նաև փողոցային

	Ներկայացումներ, սեմինարներ և դռնեղուռ ակցիաներ
Առցանց ներգրավում	Տեղական իշխանություններ, աղբահանության կազմակերպություն, պետական գործակալության կամ երրորդ ոլորտի կայքեր: Առցանց հաշվիչներ, ինտերակտիվ միջոցառումներ, տեսանյութեր և հավելվածներ (օրինակ՝ ամենամոտ գտնվող թափոնների հավաքագրման կետերի մասին տեղեկություններ տրամադրող հավելված)
Սոցիալական մեդիա	Սոցիալական մեդիան քաղաքացիների համար արդյունավետ միջոց է իրական ժամանակի կամ վայրի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ ստանալու համար: Այն ապահովում է հաղորդակցության համար հարմար և ճկուն հաղորդակցման ձև: Սոցիալական ընդգրկում է այնպիսի կայքեր, ինչպիսիք են Youtube-ը, Facebook-ը, Twitter-ը և այլն: Ստորև բերված են որոշ օրինակներ. https://www.youtube.com/watch?v=PZEA63TPYT0 (Գերմանիա, տեսանյութ) https://www.youtube.com/watch?v=jo-nPS3VWvw (ՄԹ, տեսանյութ) https://www.youtube.com/watch?v=q3deji0AGys (ՄԹ, տեսանյութ) https://twitter.com/ACRplus (ԵՄ, Twitter) https://twitter.com/2EWWR , https://twitter.com/LetsCleanUpEU (ԵՄ, Twitter)
Արտադրանքի պիտակավորում	Արտադրողները կարող են աշխատել այլ շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես թափոնների կառավարմամբ զբաղվող կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով վերոնշյալ բոլոր միջոցներով հաղորդակցվել սպառողների հետ արտադրողի ընդլայնված պատասխանատվության շրջանակներում: Բացի այդ, արտադրողները, թափոնների ծավալները նվազագույնի հասցնելու համար, կարող են փաթեթվածքի վրա լրացուցիչ տեղեկություններ տեղադրել ժամկետների, պահպանման և վերամշակման մասին:
Ներքին հաղորդակցություն	Թափոնների կառավարում իրականացնող կազմակերպությունները կարող են իրենց անձնակազմին նոր նախաձեռնությունների և ծրագրերի մասին տեղեկացնել անձնակազմի համար նախատեսված ամսագրերի, ներքին ցանցի, տեղեկատվական թղթապանակների, գործունեության մասին հաշվետվությունների, միջոցառումների, մրցույթների (կարգախոսների և այլն) և կատարելագործման առաջարկությունների միջոցով: ZeroWastePro ընկերությունը թափոնների կառավարում իրականացնող ընկերությունների անձնակազմերի համար պատրաստել է հետևյալ ուսուցողական ձեռնարկը՝ http://www.zerowastepro.eu/publications/ .

Ա 2.6 Թափոնների հարցով խորհրդատվական ցանց

ԲԿԼՓ է համարվում հանրության իրազեկվածության մակարդակը (բնակիչներն ու փոքր բիզնեսներն իրենց թափոնները տեղափոխում են կենցաղային թափոնների կառավարման համակարգ) բարձրացնելու նպատակով թափոնների հարցով խորհրդատուների ցանցի հիմնադրումը (նաև հայտնի որպես «թափոնների [կանխման] հարցերով պատասխանատուներ») տեղական մակարդակում:

Թափոնների հարցերով խորհրդատուների ինստիտուտի հիմնումը հատկապես կարևոր է որոշակի խնդիրներ լուծելու նպատակով կոնկրետ տարածաշրջան կամ լսարան թիրախավորելու առումով: Այնպիսի շրջան, որտեղ կա թափոնների տարանջատման ցածր մակարդակ և վտանգավորության բարձր մակարդակ՝ առանձին հավաքագրված թափոններում: Թափոնների հարցերով խորհրդատուները կարող են խորհրդակցել դեմ առ դեմ և առաջարկել լուծումներ:

Թափոնների հարցերով խորհրդատուները սովորաբար ունենում են համապատասխան որակավորում բնապահպանական ոլորտում, ինչպես նաև գիտելիքներ թափոնների նվազեցման, վերօգտագործման և վերամշակման պրակտիկաների վերաբերյալ և կարող են աշխատել կամավորական հիմունքներով, կես կամ ամբողջական դրույքով: Թափոնների հարցերով խորհրդատուները կարող են իրականացնել այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են.

- Բնակիչներին և փոքր բիզնեսներին իրազեկել թափոնների առաջացման և կառավարման հետ կապված բնապահպանական խնդիրների մասին
- Բնակիչներին և փոքր բիզնեսներին տեղեկացնել թափոնների հավաքման կանոնների և տարբեր խմբերի թափոնների մշակման և վերամշակման մասին

- Բնակիչներին և փոքր բիզնեսներին տրամադրել տեղեկություններ իրենց առաջացրած թափոնների կրճատման կամ առավել լավ կառավարման (օրինակ՝ տեղում թափոնների ավելի արդյունավետ տարանջատում) հնարավորությունների մասին
- Աշխատել բնակիչների և փոքր բիզնեսների հետ թափոնների խնդրահարույց հոսքերի մասով (սննդային թափոններ, տեքստիլ թափոններ, երեխաների տակաշորեր և այլն)
- Իրականացնել կոնկրետ լսարաններ թիրախավորող (երեխաներ/պատանիներ, թոշակառուներ, բիզնեսներ, օտարալեզու բնակիչներ) միջոցառումներ
- Ավելի լավ պատկերացում կազմել առկա պրակտիկայի վերաբերյալ (խնդիրներ առաջացնող հարցեր, պատճառներ, թերություններ):

Ավստրիայում կենցաղային թափոնների հարցերով խորհրդատուների ինստիտուտը համարվում է աղբահանության ոլորտի ամենահաջողվածը փոփոխությունը: Այդ ինստիտուտի հիմնադրումից հետո արդեն շուրջ երեսուն տարի թափոնների խորհրդատուներն իրենց ներդրումն են ունեցել թափոնների տարանջատված հավաքման մակարդակի բարձրացման գործում (որոշ շրջաններում այդ մակարդակը մոտ 0-ից բարձրացնելով մինչև ավելի քան 70%-ի)՝ նպաստելով միջոցների խնայողությանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Կենցաղային թափոնների հարցերով խորհրդատուների ինստիտուտն առաջին անգամ հիմնվեց 1986թ. - ին, երբ թափոնների կառավարմամբ զբաղվող տեղական կամ շրջանային իշխանությունները աշխատանքի ընդունեցին թափոնների հարցերով խորհրդատուների, որոնք աշխատում են տարբեր մակարդակներում:

- Բաղաքապետարաններ/տեղական իշխանություններ
- 3,000 և ավելի բնակչություն ունեցող բնակավայրեր
- Բաղաքներ
- Շրջանների/քաղաքների միավորումներ
- Մարզային իշխանություններ
- Պետական պայմանագրերով գործող ասոցիացիաներ
- Թափոնների կառավարման համայնքային հիմնարկներ

Ի սկզբանե թափոնների հարցերով խորհրդատուների ինստիտուտի հիմնման նպատակը եղել է մարդկային ռեսուրսների օգտագործման միջոցով բնապահպանական խնդիրները և հանրային ծախսերը («խողովակաշարի վերջում կատարվող մշակման» փոխարեն՝ «թափոնների առաջացման կանխում») նվազագույնի հասցնելը՝ նախքան բոլոր իրավական սահմանափակումներն ու արտադրական ներդրումների իրականացումը: Հայեցակարգը հետևյալն է. արդեն իսկ (ոչ պատշաճ կերպով) հավաքված թափոնների մշակման թանկարժեք տեխնիկական լուծումների փոխարեն բնակչությանն իրազեկել թափոնների կանխարգելման և տարանջատման պրակտիկայի մասին: 2016թ. -ի դրությամբ Ավստրիայի թափոնների կառավարման համակարգի հաղորդակցության և հանրային կապերի աշխատանքների կազմակերպման հարցում կարևորագույն առաքելություն են իրականացնում կենցաղային թափոնների հարցերով 410 խորհրդատուներ: Սա նշանակում է՝ միջին հաշվով մեկ խորհրդատու յուրաքանչյուր 20,000 բնակչի համար:

Ա 2.7 Տնային և համայնքային կոմպոստացում

Այն դեպքերում, երբ տնային և համայնքային կոմպոստացումը, համաձայն ընդունված թափոնների կառավարման ռազմավարության և/կամ թափոնների կառավարման տարբերակների ԿՑԳ ուսումնասիրության (տես՝ ենթագլուխ 3.3.1 և 3.3.2), լավագույն տարբերակն է կենսաբանական թափոնների կառավարման համար, բնապահպանական կառավարման լավագույն փորձ է համարվում հետևյալը:

- Ներդնել և սիստեմատիկաբար խթանել տնային և համայնքային կոմպոստացումը՝ գրանցելով ներգրավված բնակիչների թիվը և այն վայրերը, որտեղ կոմպոստացման սարքավորումները տեղադրվել և շահագործվում են:
- Կազմակերպել իրազեկվածության բարձրացման մեկնարկի արշավներ տեսողական կյանքի, հանրային հանդիպումների, թափոնների հարցով խորհրդատուների և այլ միջոցների օգնությամբ (տես՝ նախորդ գլուխներում)՝ բնակիչներին տեղեկացնելով և սովորեցնելով տնային և համայնքային կոմպոստացման, դրա օգուտների, պատշաճ իրականացման, անհրաժեշտ կենսաբանական թափոնների և այլ հարցերի մասին:
- Բնակիչներին պարբերաբար տրամադրել տնային և համայնքային կոմպոստացման մասին նորություններ և իրականացման մասին ուսուցում:
- Պարբերական մշտադիտարկման ենթարկել տնային և համայնքային կոմպոստացման վայրերը: Մի շարք ներկայացուցչական վայրեր կարող են ստուգվել տարեկան կտրվածքով՝ նպատակ ունենալով ապահովել պատշաճ կոմպոստացում և բնապահպանական օգուտներ:

«SYBERT»-ը Ֆրանսիայի Բեզանսոն քաղաքում գտնվող թափոնների կառավարման ընկերությունն է: Նրանք իրականացնում են տարբեր նախաձեռնություններ՝ ուղղված համայնքային և քաղաքային կոմպոստացման շուրջ մարտահրավերների հաղթահարմանը: Բեզանսոն քաղաքում արդեն կա կոմպոստացման ավելի քան 230 կետ, այդ թվում՝ ստորև բերված օրինակները:

2015թ. -ի դրությամբ կոմպոստացման 11 կետեր են տեղադրվել շատ խիտ բնակեցված վայրերում, որոնցից 10-ն է այժմ գործում: Դրանցից օգտվում են 5,380 տնային տնտեսություններ (մոտ 10,450 մարդ), որոնց 24% մասնակցում է կոմպոստացման աշխատանքներին:

Կոմպոստացում իրականացնող ավտոմատացված սարքերից մեկը գործում է մեծ բազմաբնակարան համալիրում, որտեղ կա 2 հազարից ավելի տնային տնտեսություն: Շաբաթական երեք անգամ սարքը բացվում է թափոններ ստանալու նպատակով, այդ թվում՝ միս, ձուկ, կաթնամթերք և պելետային փայտ կառուցվածքի/օղավորման համար: Կեղտաջրերը մուտք են գործում կոյուղի: Կոմպոստացումը ձգվում է չորս շաբաթից ավել, իսկ կոմպոստը համապատասխան սարքից դուրս է գալիս միայն 50 աստիճանի ջերմության հասնելու դեպքում, որին հետևում է դրսում տեղադրված արկղերում⁷³ իրականացվող և մոտ 3-4 շաբաթ տևող հասունացման գործընթացը:

Ա 2.8 Թափոնների կրճատման ծրագրեր

ԲԿԼՓ է համարվում թափոնների առաջացումը կանխող միջոցառումների ներդրումը տնային տնտեսությունների, հանրային և մասնավոր կազմակերպություններին համար: Նշված միջոցառումների օրինակներ են պոլիէթիլենային տոպրակների համար տեղական վճարների սահմանումը, վերանորոգման կենտրոնների ստեղծմանն աջակցություն տրամադրելը, արտադրանքի/կյանքի փոխանակման կետերի ստեղծումը, ինչպես նաև սոցիալական ձեռնարկատիրության կազմակերպությունների, ՀԿ-ների և ռեստորանների հետ համագործակցությունը՝ նպատակ ունենալով խրախուսել սննդային թափոնների կրճատումները՝ դրանց շուրջ տարբեր համաձայնագրերի կնքման և նվիրատվությունների միջոցով: Թափոնների առաջացումը կանխող միջոցառումները կարող են սահմանվել ըստ հետևյալի.

- Տարածաշրջանում թափոնների առաջացման դիմամիկայի գնահատում
- Սահմանել թափոնների հոսքերի հերթականությունը ըստ դրանց առաջացումը կանխելու հնարավորության, ինչպես օրինակ՝ սննդային թափոններ և կենսաբանական թափոններ, թուղթ/սովարաթուղթ, պլաստիկ (փաթեթվածք), ապակի և տեքստիլ թափոններ

⁷³ Աղբյուր՝ SYBERT (2015թ.)

- Թափոնների կանխարգելման տեղական ռազմավարության մշակում համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավմամբ (բնակիչներ, տեղական բիզնեսներ, սոցիալական ձեռնարկություններ և ՀԿ-ներ)
- Թափոնների առաջացումը կանխող միջոցառումների արդյունքների մշտադիտարկում և, ըստ այդմ, թափոնների կանխարգելման ռազմավարության վերանայում:

Ա 2.9 Ապրանքների և թափոնների վերօգտագործումը խթանող սխեմաներ

ԲԿԼՓ է համարվում վերօգտագործման ենթակա ապրանքները օգտագործված իրերի վաճառքի կամ փոխանակման շուկաների (անհրաժեշտության դեպքում նաև վերանորոգման արհեստանոցների օգնությամբ) և բարեգործական նպատակով իրերի հավաքման կետերի հիմնման ուղղությամբ ակտիվ աշխատանքների միջոցով թափոնների հոսքերից դեպի վերօգտագործման հոսքեր տեղափոխելը: Ավելին, թափոնների կառավարում իրականացնող կազմակերպությունները կկարողանան թափոնների որոշակի հոսքեր ուղղել վերօգտագործման՝ վերօգտագործման/վերանորոգման կենտրոններ հիմնելու կամ դրան նպաստելու միջոցով: ԲԿԼՓ-ը ներառում է 4 առանցքային միջոցառումներ.

- Հավաքել վերօգտագործման համար պիտանի ապրանքները նախքան դրանց թափոն համարվելը, անհրաժեշտության դեպքում դրանք վերանորոգել և բաժանել կամ վաճառել բնակիչներին, կազմակերպություններին, այդ թվում՝ բարեգործական ընկերություններին
- Հավաքել վերօգտագործման ենթակա իրերը, պատրաստել դրանք վերօգտագործման համար, այնուհետև բաժանել կամ վաճառել դրանք բնակիչներին և կազմակերպություններին, այդ թվում՝ բարեգործական ընկերություններին
- Ստեղծել վերօգտագործման ենթակա օգտագործված իրերի պահանջարկը և դրանց հասանելիությունը գովազդող արդյունավետ տեղեկատվական սխեմաներ
- Իրականացնել վերանորոգման և վերօգտագործման այն կենտրոնների արդյունքների մշտադիտարկում (անկախ այն բանից՝ նրանց հումքը համարվում է թափոն, թե՛ ոչ), որոնք լիցենզավորվել են ըստ Թափոնների կառավարման շրջանակային դիրեկտիվի հավելված 4-ի դրույթների:

Ա 2.10 Տուրիզմի ռազմավարություն⁷⁴

Ստորև դիտարկվում են ԲԿԼՓ ուղղությունները տուրիզմի մասով.

1. ԲԿԼՓ Էկոտուրիզմի սերտիֆիկացման և պիտակավորման գործընթացում
2. ԲԿԼՓ կացարանային/հյուրատանային ոլորտում
3. ԲԿԼՓ տուրիստական վայրերում օրգանական թափոնների ընտրովի հավաքում (ՕԹԸՀ) վերամշակման նպատակով

1. ԲԿԼՓ Էկոտուրիզմի սերտիֆիկացման և պիտակավորման գործընթացում

Սերտիֆիկացման սխեմաները կարևոր դեր են խաղում զբոսաշրջության ոլորտի բնապահպանական բաղադրիչի բարելավման առումով: Նշված սխեմաները, թափոնների կառավարման համակարգի հետ կապված, համապատասխան շահագրգիռ կողմերին մեծ պահանջներ են ներկայացնում:

Սերտիֆիկացումը կարելի է բաժանել մի քանի մասի. բնապահպանական կառավարման համակարգ (ԲԿՀ)՝ սերտիֆիկացում (օրինակ՝ ԲԿՀ, ՍՄԿ 14001), որը, ըստ էության, առնչվում է բնապահպանական գործունեության մշտադիտարկմանը և դրա շուրջ հաշվետվությունների ներկայացմանը, ինչպես նաև բնապահպանական ստանդարտներ, որոնք վերաբերում են բնապահպանական կառավարման որոշակի պրակտիկային առնչվող պահանջներին կամ կոնկրետ բնապահպանական բնութագրիչների հետ

⁷⁴ <http://www.urban-waste.eu/wp-content/uploads/2017/02/URBANWASTE-Compendium-of-waste-management-practices.pdf>

համապատասխանությանը: Այնուամենայնիվ գոյություն ունեն մի շարք խիստ չափորոշիչներ և առկա ստանդարտներին համապատասխան դրանց ստուգման գործընթաց: Ամենապահանջկոտ ստանդարտները ԵՄ «Էկոպիտակ» (ԵՄ «Ճաղիկ»), Nordic Swan և ավստրիական «Էկոպիտակ»-ը ստանդարտներն են, որոնք ներառում են ընդգրկուն պարտադիր չափորոշիչներ՝ կապված հարգի բնապահպանական փորձի և գործունեության մակարդակների հետ (Ստայյս և ուրիշներ, 2013թ.): Մյուս այլ ստանդարտները սովորաբար քանակական առումով ավելի փոքր են և/կամ ավելի ոչ թափանցիկ և տարբերվում են իրենց իրականացման մակարդակով:

Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է կայունության ստանդարտները և Էկոտուրիզմի պիտակները եվրոպական երկրների համար: Ստորև նաև բերված են թափոնների կառավարման պահանջների հակիրճ նկարագրություններ և հղումներ:

Սերտիֆիկացում	Թափոնների կառավարման պահանջներ
ԵՄ «Էկոպիտակ» /Ecolabel/ (ԵՄ Ծաղիկ)	ԵՄ Էկոպիտակ/Ecolabel, որը տրվում է այն կազմակերպություններին, որոնք բավարարում են պարտադիր չափորոշիչների համալիր խմբի և ընտրովի այլ չափանիշների, իր մեջ ներառում է գործունեության քանակական ուղենիշներ: Այն պահանջում է թափոնների կառավարման իրականացում, որը նպաստում է հյուրերի կողմից թափոնների տարանջատման իրականացմանը և թափոնների տեսակավորմանը՝ նպատակ ունենալով խուսափել նետման ենթակա արտադրանքից և մեկանգամյա օգտագործման սննդային փաթեթավորումից (բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերից): http://ec.europa.eu/environment/ecolabel/
Կանաչ տուրիզմի բիզնես սխեմաներ	ՄԹ-ում և Իռլանդիայում գործող կայուն տուրիզմի սերտիֆիկացման սխեման որակապես գնահատում է գործունեությունը՝ հիմնվելով 120 բնապահպանական միջոցառումների իրականացման վրա (ծախսային խնայողություններ վերօգտագործման և վերադարձի ենթակա փաթեթվածքի օգտագործման միջոցով): Բիզնեսները գնահատվում են ըստ երեք մակարդակի՝ բրոնզ, արծաթ և ոսկի: http://www.green-tourism.com/
Կանաչ երկրագունդ [Green Globe]	Հիմնականում իրավական համապատասխանություն և կայունության մշտադիտարկման չափորոշիչներ են, որոնք նաև ներառում են առավել լավ բնապահպանական գործունեություն իրականացնելու որակական պահանջներ: Պետք է բավարարվեն թափոնների կառավարման չափորոշիչներ, որոնք վերաբերում են թափոնների պլանավորմանը, կրճատմանը, վերօգտագործմանը և վերամշակմանը: Ստանդարտները, սակայն չեն ներառում որակական գործունեության պահանջներ: http://greenglobe.com/
Կանաչ բանալի [Green Key]	Կայունության սերտիֆիկացման միջազգային սխեմա՝ հիմնված չափորոշիչների ենթակա 13 ոլորտների վրա: Չափորոշիչների մեծ մասը պարտադիր են, իսկ որոշ մասը՝ կամընտրական: Սրանք ներառում են կոնկրետ բնապահպանական միջոցառումներ, սակայն որոշ դեպքերում քանակական ուղենիշները բացակայում են (օրինակ՝ հաստատությունից պահանջվում է կրճատել թափոնների քանակը): http://www.greenkey.global/
«Ibex» պիտակ [Ibex label]	Շվեյցարական կայունության պիտակ կացարանային ոլորտի համար, ինչպես նաև կլինիկաների, առողջապահական կենտրոնների և ծեր քաղաքացիների խնամքի կենտրոնների համար, որոնք ներառում են ՍՄԿ 9001 և 14001 չափորոշիչները: Այս ստանդարտը հատկացվում է հինգ մակարդակներում՝ կախված կայունության համապատասխան հինգ ոլորտներից ստացված միավորների քանակից: Այդ ոլորտներն են՝ կառավարումը, շրջանային, սոցիալական ծառայություններ, Էկոլոգիա, տնտեսություն http://ibexfairstay.ch
Լատվիական կանաչ սերտիֆիկատ [Latvia Green Certificate]	Լատվիական Էկոպիտակը տրվում է գյուղական շրջանների/փոքր քաղաքների տուրիստական կազմակերպություններին, տուրիզմի ոլորտում գործող ճամբարային վայրերին և փոքր արտադրողներին, որոնք բավարարում են 14 ոլորտների հետ առնչվող պարտադիր բնապահպանական և սոցիալական ընդգրկուն չափորոշիչների պահանջներին: Թափոնների կառավարման մասով պետք է պահպանվեն նվազագույն չափորոշիչների պահանջները, թեև գոյություն ունեն նաև լրացուցիչ չափորոշիչներ: http://eko.celotajs.lv/
«Legambiente Turismo»	Իտալական Էկոտուրիզմի պիտակ տուրիստական ոլորտի ցանկացած կացարանային բիզնեսի համար: Լավ կառավարման փորձերի իրականացում, կապված տաս սոցիալական և բնապահպանական նպատակների հետ, որոնք, ի թիվս այլոց, ուղղված են թափոնների կրճատմանը, վերամշակմանը, քիչ ջուր և էներգիա օգտագործելուն և առողջ սննդի ու տեղական արտադրանքի խթանմանը: http://legambienteturismo.it/en/home/
«Nordic Swan»	Սկանդինավյան Էկոպիտակ ստացած հյուրանոցները պետք է բավարարեն մի շարք պարտադիր չափորոշիչների և նաև ընտրովի չափորոշիչների պահանջներին: Պիտակը նաև ներառում է գործունեության քանակական ուղենիշներ (օրինակ՝ հյուրանոցների թույլատրվում է 0.20կգ չտեսակավորված թափոն միայն մեկ հյուրի հաշվով): http://www.nordic-ecolabel.org/
«Travelife» կայունության համակարգ հյուրանոցների համար	Միջազգային տուր օպերատորների (մատակարարման շղթա) վրա հիմնվող կայունության սերտիֆիկացման սխեմա՝ հիմնված բազմաթիվ բնապահպանական և սոցիալական չափորոշիչների կատարողականի վրա: Սկսած 2014 թվականից՝ «Travelife»-ի առևտրային իրականացվում են ըստ նոր չափորոշիչների, որոնք ավելի ընդգրկուն և խստապահանջ են: http://travelifecollection.com/awards

2. ԲԿԼՓ կացարանային/հյուրատնային ոլորտում

Հյուրանոցային ոլորտը կարող է զգալիորեն կրճատել իր զենեացրած թափոնների ծավալները թափոնների կառավարման այնպիսի համակարգի կիրառմամբ, որը նախագծված է կրճատման, վերօգտագործման և վերամշակման հայեցակարգերի հիման վրա (Greenhotelier, 2004թ): Հյուրանոցների կոշտ թափոնների մոտ 54%-ը կարող է ենթարկվել վերամշակման և վերօգտագործման (Ալեքսանդր, 2002թ .): Բոհդանովիչի (2005թ.) գնահատումները նույնպես ցույց են տալիս, որ կացարանային հաստատությունների թափոնների 50-60%-ը վերամշակման և վերօգտագործման ենթակա թափոններ են:

Հյուրանոցները հաճախ խնդիրների առաջ են կանգնում ոչ միայն իրենց արտադրած թափոնների տեսակավորման ու վերամշակման պահանջների պատճառով, այլ նաև թափոնների կառավարման ենթակառուցվածքների պատճառով, որոնք սովորաբար պատկանում են տեղական իշխանություններին և շահագործվում են նրանց կողմից, հատկապես եթե գոյություն չունեն տեղական համակարգի կողմից չհավաքվող և չմշակվող թափոնների այլ գնորդներ:

Ստայլսի և մյունների (2013թ.) հեղինակած ուսումնասիրությունը նշում է, որ «թափոնների տեսակավորման, վերամշակման և նրանց առաջացումը կանխող համապատասխան սկզբնակետ կարող է լինել տեղում թափոնների գրանցումը ըստ աղբյուրի և խմբի»: Բացի այդ, տեղական մակարդակում վերօգտագործման և վերամշակման տարբերակների դիտարկումը նույնպես կարող է օգտակար լինել: Կարելի է նաև փնտրել արտադրանքի վերօգտագործման հնարավորություններ նախքան թափոնները վերամշակման հանձնելը (օրինակ՝ փաթեթվածքը մատակարարներին ետ ուղարկելը): Թափոնների հաջողակ տեսակավորում և վերամշակում իրականացնելը պահանջում է բոլոր բաժիններում տեխնիկական և մարդկային ռեսուրսների կարիքները համակարգող ուժեղ կառավարում, ներառյալ կրթական միջոցառումների՝ անձնակազմի ուսուցման իրականացում և ժամանակի պատշաճ բաշխում (աղյուսակները՝ ստորև):

Բաժին	Միջոցառում	Նկարագրություն
Բոլորը (ղեկավար բաժնի առաջնորդությամբ)	Մշակել թափոնների գույքագրման և նույնականացման տարբերակներ	Բոլոր տարածքների և գործընթացների ուսումնասիրություն՝ տեղում առաջացող թափոնների տեսակները և աղբյուրները բացահայտելու նպատակով: Պարզել թափոնների վերամշակման և փաթեթվածքի վերադարձման տեղական մակարդակում առկա տարբերակները
	Մշտադիտարկում և հաշվետվությունների ներկայացում	Թափոնների առաջացման և հավաքման շարունակական մշտադիտարկում և հաշվետվությունների կանոնավոր ներկայացում ըստ տեսակների
Գնումներ	Գնումների ընտրություն	Վերամշակված և վերամշակման ենթակա նյութերից պատրաստված արտադրանքի և փաթեթավորման ընտրություն
Մաքրման ծառայություն	Աղբարկղեր	Սենյակներում տեղադրել թափոնների առանձին հավաքման արկղեր
	Աղբի հավաքում սենյակներում	Սենյակների մաքրման ընթացքում թափոնների տեսակավորման իրականացում

	Թափոնների կառավարում «փակ դռների ետևում»	Հանրային վայրերից, բաց և փակ վայրերի պահպանման ընթացքում և այլ փակ տարածքներում առաջացող թափոնների տարանջատում ըստ տեսակների՝ թափոնների վերամշակում և պատշաճ հեռացում իրականացնելու համար
Սննդի ապահովման ծառայություն	Կանաչ գնումներ	Դիտարկել փաթեթավորման ծավալը, արտադրության ազդեցությունը և վերամշակման ենթակա լինելը կանաչ գնումներ իրականացնելու նպատակով արտադրանքի գնահատում կատարելիս
	Տարանջատում	Խոհանոցում և ընթրիլու սրահներում տեղադրել ապակու, պլաստիկի և թղթի ու սովարաթղթի առանձին հավաքման աղբարկղեր և անձնակազմին վերապատրաստել դրանց օգտագործման մասով
Ընդունելության բաժին և հանրային օգտագործման այլ վայրեր	Հավաքման կետեր	Տեղադրել թղթի և ամսագրերի, մարտկոցների և այլ վտանգավոր թափոնների հավաքման կետեր

Ստորև բերված են հյուրանոցներում թափոնների կառավարման լավագույն փորձի օրինակներ:

Հիլթոն Սյուսեն Հոթել, Շվեդիա

Ստոկհոլմում գտնվող Հիլթոն Սյուսենը թափոնները տեսակավորում է ըստ 26 տարբեր խմբերի: 1997թ. -ին թափոնների տեսակավորման և վերամշակման սխեմայի ներդրումից հետո աղբավայրեր ուղարկվող ամսական ավելի քան 125 տոննա թափոնների ծավալը նվազել է 76%-ով և այժմ կազմում է 0.3կգ մեկ հյուր/գիշերվա հաշվով: Բացի վերամշակվող սովարաթղթից և փայտային նյութերից, որոնք օգտագործվում են Ստոկհոլմից դուրս գտնվող շենքերի ջեռուցման համար, մյուս ոլորտավառ նյութերն օգտագործվում են բնակարանների ջեռուցում ապահովելու համար: Մոմերի մնացորդները նվիրաբերվել են խնամքի կենտրոններին և եկեղեցուն՝ վաճառքի ենթակա նոր մոմերի արտադրության համար: Օրգանական թափոնները գործածվել են կենսագազի արտադրության համար, իսկ սննդային մնացորդները ուղարկվում են Ստոկհոլմից դուրս՝ անաերոբ մշակման (Բաքեր, 2006թ. , Ստայլս և մյուսներ 2013թ.):

Թաուեր Հոթել, Միացյալ Թագավարություն

2006թ. -ին Շոտլանդիայի Փերտշիր քաղաքում գտնվող Թաուեր Հոթելը տեղադրեց կոմպոստացման ավտոմատացված համակարգ, որը օրական 4կվ/ժ-ից քիչ հոսանք ծախսելով, օրգանական թափոնները մոտ 14 օրվա ընթացքում վերածում էր կոմպոստի (համեմատած 12-18 ամսվա ընթացքում առաջացող կոմպոստի կույտերի հետ): Վերջնարդյունքը ենթարկվում է գնման, որից հետո մեծ բաժնեմասերը վերադարձվում են լրացուցիչ կոմպոստացման, իսկ ավելի մանր նյութերը պահպանվում են լրացուցիչ երկու ամիս՝ նախքան հյուրանոցի տարածքում գործածվելը: Այս գործընթացի միջոցով հյուրանոցի խոհանոցից առաջացող 2.5խմ (1.25 տոննա) բուսական թափոնները և 6խմ (1.25 տոննա) այգեգործական

Թափոնները կարող են մշակվել և վերածվել 1.5 տոննա կոմպոստի՝ համակարգի տեղադրմանը հաջորդող առաջին տարում (HUB4 2007թ. , Ստայլս և մյուսներ, 2013թ.):

3. ԲԿԼՓ Է համարվում տուրիստական վայրերում օրգանական թափոնների ընտրովի հավաքումը (ՕԹԸՀ)

Եվրոպական այս ծրագիրը, որը 2013-2015թթ. ֆինանսավորվել է Միջերկրական ծովի տարածաշրջանում միջսահմանային համագործակցության ծրագրի կողմից (ENPI CBC Med), նպատակ ունի Միջերկրական տարածաշրջանի տուրիստական և գյուղատնտեսական գործունեություն ծավալող վայրերում ստեղծել կենսաբանական թափոնների հավաքման և վերամշակման մատչելի, տեխնիկապես պարզ և բարձրորակ մոդելներ:

ՕԹԸՀ-ի նպատակն է կենսաբանական արտադրություն ունեցող շրջանների և կոմպոստի պահանջարկ ունեցող տարածքների մոտ գտնվող ապակենտրոնացված փոքրամասշտաբ կոմպոստացման կայաններում թափոնների արդյունավետ մշակման միջոցով ստեղծել և զարգացնել կենսաբանական թափոնների կառավարման կայուն և նորարարական համակարգ: Ծրագրի մյուս վերջնարդյունքները կարող են լինել հետևյալը.

- Դրական փորձի տվյալների բազա
- Առանցքային տարրերի և կառավարման տարբերակների տեխնիկական ուսումնասիրություն
- ՕԹԸՀ-ի կառավարման մոդելը և մշտադիտարկման արձանագրությունները սահմանող ուղեցույցներ
- Փոքր կոմպոստացման կայանների կառավարման մասին ձեռնարկ/Vademecum
- Իրականացված կառավարման մոդելների արդյունքների ցուցանիշների տվյալների բազա

Օգտագործված ձեթի օգտահանում

Առաջացող թափոնների ընտրովի մշակման մեկ այլ հնարավորություն է այնպիսի օգտակար օրգանական բաժնեմասերի տարանջատումը, ինչպիսին են ձեթը, ճարպերն ու յուղերը՝ նախքան օրգանական թափոնների ուղարկումը անաերոբ մշակման կամ կոմպոստացման: Յուղերը կարող են պահպանվել անվտանգ տարանջատում, որոնք կհավաքվեն բիոդիզելի կամ անասնակերի, օճառի կամ կոսմետիկայի արտադրության մեջ մասնագիտացած կապալառուի կողմից: Խոհանոցներում տեղադրվող յուղերի դրենաժները կարող են լինել օգտահանման ևս մի տարբերակ (Ստայլս և ուրիշներ 2013թ.)

Ա 3 ԿԿԹ հավաքման լավագույն փորձ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ա 3.1 ԿԿԹ հավաքման ռազմավարություն
- Ա 3.2 Միջհամայնքային համագործակցություն (ՄՀՀ) փոքր քաղաքապետարանների միջև
- Ա 3.3 Տարանջատ հավաքման կենտրոններ (ՏՀԿ)
- Ա 3.4 Թափոնների հավաքման նյութատեխնիկական մասի օպտիմալացում
- Ա 3.5 Զիչ արտանետող աղբատարներ

Ա 3.1 ԿԿԹ հավաքման ռազմավարություն

ԲԿԼՓ Է համարվում թափոնների հավաքման այնպիսի ռազմավարության նախագծումն ու իրականացումը, որը ներառում է հետևյալը՝

- Թափոնների կառավարման ռազմավարության հիմնական բնութագրերը (օրինակ՝ առանձին հավաքվող թափոնների բաժնեմասերի թիվը)
- Թափոնների կառավարման ռազմավարության մեջ սահմանված թիրախները (ընդհանուր հավաքվող թափոնների մեջ տարանջատված հավաքվող թափոնների տեսակարար կշիռը, առանձին հավաքված բաժնեմասերի աղտոտվածության մակարդակը, վերամշակումից առաջացող եկամուտները)

- Աղբահանության տարածքի նկարագրությունը (բնակչության խտությունը և բնակելի կառույցների տեսակները)
- Բնապահպանության մասով բնակիչների վարքն ու ընկալումները
- Թափոնների հավաքման վրա ազդող որևէ այլ պայման (տուրիստների/ճանապարհորդների ներկայություն, տնտեսական գործունեություն, կլիմա):

Թափոնների հավաքման ռազմավարության հիմնական նպատակը թափոնների՝ տնտեսապես և ժամանակային առումով պատշաճ հավաքում իրականացնելն է, այդ թվում՝ տեղում առավելագույնս թափոնների տարանջատում կազմակերպելու միջոցով, որպեսզի հնարավոր լինի դյուրացնել հաջորդիվ գործընթացը՝ տեսակավորումը/մշակումը, որն էլ իր հերթին կնպաստի վերամշակման մակարդակի բարձրացմանը: Շատ դեպքերում այս նպատակներին հնարավոր է հասնել կատարելով հետևյալ քայլերը՝

- Թափոնների հավաքում հաճախակի իրականացվող դմնեղում այցերի միջոցով (օրինակ՝ ամեն շաբաթ կամ ավելի մեծ հաճախականությամբ՝ կապված եղանակային և սեզոնային պայմաններից)
- Խառը թափոնների հավաքման ավելի ոչ հաճախ իրականացում (օրինակ՝ երկու շաբաթ մեկ)
- Այն վայրերում, որտեղ հանրորեն ընդունված է նման պրակտիկան, իրականացնել վերամշակման ենթակա նյութերի հավաքում դմնեղում այցերի միջոցով (թուղթ, սովարաթուղթ, անոթներ, պլաստիկ, ապակի): Հակառակ պարագայում՝ տեսակավորում իրականացնել նյութերի օգտահանման կայանում:
- Կենցաղային իրերի ընդունման կետերի հարմարավետ ցանց (տես՝ ենթաբաժին 3.3.3), որը կատարում է բոլոր այն թափոնների ընդունում, որոնք չեն հավաքվում դմնեղում այցերի և փողոցներում տեղադրված աղբարկղների միջոցով, այդ թվում՝ վտանգավոր և կենսաբանական թափոններ:

Ա 3.2 Միջհամայնքային համագործակցություն (ՄՀՀ) փոքր քաղաքապետարանների միջև

ԲԿԼՓ է համարվում փոքր և միջին համայնքապետարանների կողմից միջհամայնքային համագործակցության որդեգրումը, որը հնարավորություն կտա իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կհանգեցնեն թափոնների կառավարման համակարգի՝ բնապահպանական առումով առավել արդյունավետ գործունեության: Համայնքապետարանները կարող են միավորել ջանքերը թափոնների կառավարման ծառայությունները համատեղ մատուցելու համար կամ պայմանագիր կնքել նշված ծառայություններն ապահովող ընկերության հետ՝ նպատակ ունենալով հասնել ծախսերի խնայողության և ունենալ թափոնների կառավարման արդյունավետ համակարգի գործունեության համար պահանջվող թափոնների նվազագույն ծավալ:

Միջհամայնքային համագործակցությունը համայնքապետարաններին հնարավորություն կտա՝

- Կիսել վարչական ծախսերը
- Կրճատել միավոր ծախսերը և բարելավել ծառայությունների որակը արտադրության մեծացման հաշվին առաջացած խնայողությունների միջոցով
- Գրավել որոշակի նվազագույն մեծության ծրագրերի համար նախատեսված ներդրումային միջոցներ (օրինակ՝ ԵՄ կառուցվածքային միջոցներ կամ այլ ներդրումային մեխանիզմներ),
- Ընդլայնել տնտեսական գործունեությունը համակարգված պլանավորման միջոցով՝ միևնույն ժամանակ հնարավորություն ստեղծելով ավելի արդյունավետ շրջակա միջավայրի պահպանություն իրականացնելու համար

Էստոնիայի Հարջու շրջանի աղբահանության ծառայությունների օպտիմալացման մասին 2015թ. -ին հրատարակված ուսումնասիրությունը ցույց է տալիս կենսաբանական և թղթե թափոնների տարանջատված հավաքման կենտրոնացված իրականացման հնարավոր ազդեցությունը գյուղական վայրերում: Ուսումնասիրությունը բացահայտում է միջհամայնքային համագործակցության արդյունքում

ստացված վարչական, տնտեսական և նյութատեխնիկական առավելությունները: Գյուղական վայրերում ծախսերի հիմնական աղբյուրը թափոնների փոխադրումն է (սպառված վառելիքը, իսկ մեկ տոննա թափոնի հավաքման վրա ծախսվող ժամանակն ավելի շատ է): Վարչական ծանրաբեռնվածությունը համարվում է բարելավմանը խոչընդոտող գլխավոր սահմանափակումներից մեկը: Օրինակ, ուսումնասիրված շրջանի 23 համայնքապետարաններում կան թափոնների կառավարմամբ զբաղվող առնվազն 23 պաշտոնյաներ, որոնց աշխատանքի նկարագրությունը շատ փոքր առնչություն ունի թափոնների հետ: Իրականում թափոնների կառավարման հարցը շատ հեշտ կարող էր լուծվել ընդամենը չորս աշխատակից ունեցող որևէ վերհամայնքային կառույցի միջոցով: Էստոնիայում համայնքների 70%-ը ունեն չորս հազարից պակաս բնակիչ և մեծապես կարող են օգտվել նման սխեմաներից (Պոլդնուրկ, 2015 թ):

Ա 3.3 Տարանջատ հավաքման կենտրոններ (ՏՀԿ)

Ամենատարածված թափոնների խմբերի արդյունավետ դնեղում (մայթեզրին) հավաքմանը առանցքային լրացնող միջոցառում և ԲԿԼՓ է համարվում տարանջատ հավաքման կենտրոնների շահագործումը (Նաև հայտնի որպես՝ արկղերի այգիներ, թափոնների հավաքման կենտրոններ, մաքուր կենտրոններ, Էկոկետեր, օգտահանման վայրեր, թափոնների այգիներ և այլն), որտեղ քաղաքացիները և փոքր բիզնեսները կարող են նետել ամենատարբեր խմբերի թափոններ՝ տարանջատված հավաքման նպատակով: Տարանջատ հավաքման կենտրոնների լավագույն փորձը ներառում է հետևյալը.

- Համայնքում առնվազն մեկ ՏՀԿ առկայություն կամ շարժական ՏՀԿ-ի կանոնավոր հասանելիություն
- Ցանկացած խմբի թափոնների առանձին հավաքում և կենցաղային թափոնների տեղադրման հնարավորություն
- ՏՀԿ անձնակազմի վերապատրաստում՝ վերամշակումը, օգտահանումը և համապատասխան անվտանգ հեռացումը հնարավորինս մեծացնելու համար
- Ջրադիմացկուն, երեսպատված տարածք և մակերեսային ջրերի հավաքում՝ պատշաճ մշակում իրականացնելու նպատակով
- ՏՀԿ-ների հասանելիության ապահովումը քաղաքացիների համար (բնակչության մեծ մասի համար հասանելի է առանց տրանսպորտի անհրաժեշտության) նաև շարժական/ժամանակավոր ՏՀԿ-ների օգնությամբ
- Աշխատանքների երկար ժամերի սահմանում, որպեսզի այն հնարավորինս հարմար լինի բնակչությանը: Աշխատանքային ժամերը կարող են փոփոխության ենթարկվել սեզոնների ընթացքում (հատկապես կանաչ հատումների համար):

Ա 3.4 Թափոնների հավաքման լոգիստիկ օպտիմալացում

ԲԿԼՓ է համարվում աղբահանության նյութատեխնիկական մասի օպտիմալացումը.

- Քաղաքային վայրերում հնարավորության դեպքում տեղադրել տրանսպորտային փոխադրման միջոցով իրականացվող և աղբահանությանը այլընտրանք հանդիսացող լուծումներ՝ ինչպես օրինակ օդի ճնշմամբ գործող համակարգեր
- Օպտիմալացնել թափոնների հավաքման գործընթացը մեքենաների երթուղիների և ժամանակացույցների համակարգչային կազմակերպման միջոցով
- Ուսումնասիրել թափոնների կառավարում իրականացնող հարևան կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունները
- Վառելիքի/էներգիայի սպառման և/կամ ածխաթթու գազի արտանետումների ուղեկցում
- Ցանցերի նախագծերի և ճանապարհների օպտիմիզացիայի ալգորիթմներում ներառել մեկ կամ ավելի բնապահպանական չափումներ իրականացնող գործողություն, ինչպես օրինակ էներգիայի գումարային պահանջարկի և/կամ ածխաթթու գազի արտանետումների չափումներն են

- Տելեմատիկ սարքավորումների տեղադրում մեքենաների վրա՝ իրական ժամանակում գլոբալ տեղորոշման համակարգի (ԳՏՀ) միջոցով ճանապարհների օպտիմիզացիայի իրականացման համար, ինչպես նաև վարորդների վերապատրաստում Էկոլարման նրբությունների մասին:

Ա 3.5 Զիչ արտանետող աղբատարներ

Աղբատար մեքենաների վառելիքի ծախսի և արտանետումների կրճատումը ԲԿԼՓ Է: Առաջնահերթ տեխնիկական տարբերակները ներառում են.

- Կանգ/մեկնարկ և շարժիչի անջատում
- Ցածր շարժական դիմադրություն ունեցող անվադողեր
- Հիբրիդային մեքենաներ
- Բնական գազով/կենսամեթանով կամ երկու տեսակի վառելիքով գործող մեքենաներ (դիզել/գազ)
- Էլեկտրական հոսանքով գործող մեքենաներ

Եվրոպայի ճանապարհների վրա կան ավելի քան մեկ միլիոն գազով աշխատող մեքենաներ (Տասսան և ուրիշներ, 2013թ.): Այս ԲԿԼՓ-ն շեշտը դնում է բնական գազով և կենսամեթանով աշխատող աղբատարների կամ հիբրիդ էլեկտրական մեքենաների գործածման վրա: Բնապահպանական առումով լավագույն լուծումը կարող է լինել օրգանական թափոններից ստացվող կենսամեթանի գործածումը, սակայն, այնտեղ, որտեղ սա հնարավոր չէ, աղբատարների՝ բնական գազով աշխատանքը կարող է օգտակար քայլ լինել այս ուղղությամբ: Հիբրիդ էլեկտրական մեքենաները նույնպես զգալիորեն կրճատում են թափոնների փոխադրման ազդեցությունները և հանգեցնում տրանսպորտային փոխադրման միջոցների անցմանը էլեկտրական հոսանքին, ինչը նույնպես հետագայում կարող է բնապահպանական առումով օգուտներ բերել:

Ա 4 Թափոնների մշակման լավագույն փորձ

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ա 4.1 Օրգանական թափոնների կոմպոստացում
- Ա 4.2 Օրգանական թափոնների անատերոբ մշակում
- Ա 4.3 Թղթի թափոններ
- Ա 4.4 Ապակե թափոններ
- Ա 4.5 Փաթեթավորման թափոններ
- Ա 4.6 Թեթև փաթեթավորման թափոններ
- Ա 4.7 Խոշոր եզրաչափերի թափոններ
- Ա 4.8 Կենցաղային մարտկոցներ

Ստորև բերված բաժինները մշակվել են Գերմանիայի շրջակա միջավայրի գործակալության 2018 թվականի «Կենցաղային թափոնների կառավարման լավագույն փորձ. տեղեկություններ կենցաղային թափոնների կառավարման և օժանդակ տեխնոլոգիաների ու սարքավորումների կայուն նախագծման մոտեցումների մասին» հրատարակության հիման վրա:

Ա 4.1 Օրգանական թափոնների կոմպոստացում

Օրգանական թափոնների մշակման նպատակն է օգտակար օրգանական և անօրգանական նյութերի օգտահանումը կենսաքայքայվող թափոններից՝ կենսաբանական գործընթացների և դրանց միատեղման միջոցով օգտագործման համար պիտանի բուսահող ստանալու համար: Նշված նպատակներից է նաև կենսաքայքայվող թափոնների զգալի ծավալների կրճատումը, որը հակառակ պարագայում պետք է տեղադրվեր աղբավայրերում կամ ենթարկվեր թափոնների այլ ձևերի մշակման, օրգանական առումով

հարուստ թափոնների ռեակցիոն ներուժի կրճատումը և կենսաբանական մշակման գործընթացների, ինչպես օրինակ, անաէրոբ մշակման արդյունքում առաջացած մնացորդների ազդեցության նվազեցումը:

Հումքային նյութերը պետք է լինեն տարանջատված հավաքման միջոցով ստացված թափոններ, որոնք պետք է ուսումնասիրվեն՝ պարզելու համար, թե արդյոք դրանք պարունակում են այնպիսի բաղադրիչներ, որոնք կարող են նորից վտանգավոր նյութեր արտանետել (օրինակ՝ մարտկոցներ), և որոնք պետք է առանձնացվեն այլ նման նյութերի հետ միասին, ինչպիսիք են, օրինակ, խոշոր թիթեղները: Անտառային մնացորդներում, Էսոման և այգեգործական թափոններում տեղ գտած խոշոր նյութերը պետք է մանրացվեն:

Կոմպոստը, մասնավորապես, անհրաժեշտ է գյուղատնտեսական գործունեության, այգեգործության և կանաչապատման աշխատանքների, մրգերի և այլ կուլտուրաների աճեցման, ռեկուլտիվացման աշխատանքներում և տնային այգեգործության մեջ: Կոմպոստի մաղումից հետո առաջացող հիմնականում փայտի մնացորդները կարող են օգտագործվել հոսանքի արտադրության մեջ (կենսազանգվածով գործող էլեկտրակայաններում): Կոմպոստացման մնացորդները կարող են նաև օգտագործվել որպես կենսաբանական ֆիլտրում իրականացնելու համար անհրաժեշտ նյութեր: Կոմպոստացման գործընթացների մնացորդները, օրինակ՝ մաղման ժամանակ տարանջատված թիթեղները, պետք է մշակվեն այլ գործընթացների (ջերմային) միջոցով:

Թափոնների կոմպոստացումը նաև լավ հնարավորություններ է ստեղծում թե որոշակի հմտություններ չունեցող մարդկանց, թե առավել բարձր որակավորում ունեցող անձնակազմի զբաղվածության համար: Բավականին բարձր գործընթացների ժամանակ (օրինակ՝ թունելային կոմպոստացում) նույնիսկ կա հատուկ վերապատրաստում անցած և որակավորում ունեցող անձանց անհրաժեշտություն, որպեսզի հնարավոր լինի ապահովել կառույցի պատշաճ կառավարում և շահագործում:

Կոմպոստացման կայաններն, ըստ Էուբյան, կարող են օգտագործվել ցանկացած վայրում: Դրանց տեղադրումն առավելություն կդիտվի այնպիսի վայրերում, որտեղ գեներացվում են համապատասխան թափոնները և այն վայրերում, որոնք ճանապարհային մատչելիություն ունեն և հասանելի են տրանսպորտային ցանցի համար, ինչը կոմպոստային արտադրանքի հեշտ իրացման հնարավորություն կդառնա: Ինչպես ցանկացած այլ կենսաբանական թափոնների մշակման կայանի պարագայում, այստեղ նույնպես պետք է պահպանվի բնակելի տարածքներից նվազագույն հեռավորություն պահպանելու մոտեցումը, որպեսզի հնարավոր լինել խուսափել վատ հոտերի, կրծողների կամ այլ անցանկալի վնասատուների հնարավոր ազդեցությունից:

Ֆինանսավորումը կարող է իրականացվել կոմպոստացման կայանների թափոնների տեղափոխման դիմաց գանձվող վճարների միջոցով կամ համապատասխան աղբահանության համակարգի միջոցով (կենսաբանական թափոնների համար նախատեսված առանձին արկղեր): Ծախսերը կարող են նաև ներառվել ընդհանուր աղբահանության ծառայությունների մեջ (օրինակ՝ աղբահանության հարկի տեսքով) կամ թափոնների կառավարումը ֆինանսավորող այլ մեխանիզմների միջոցով:

ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թողարկվում է արտադրանք, որը խիստ սուղ է և շատ վայրերում ունի մեծ պահանջարկ
- Հնարավորություն է տալիս վերջնական հեռացվող թափոնների ծավալները կրճատել, ինչը հանգեցնում է կարողությունների և ծախսերի խնայմանը և հետագա մշակումից առաջացող արտանետումների կրճատմանը
- Թափոնների հոսքից օրգանական մասի հեռացման կամ չորացման միջոցով մեծանում են թափոնների մշակման ծավալները
- Համեմատաբար պարզ է և անվտանգ

- Հիմնականում ոչ մեծ կապիտալ պահանջող գործունեություն
- Հայտնի և լավ ուսումնասիրված տեխնոլոգիայի կիրառություն
- Ամենուրեք մեծապես ընդունվող պրակտիկա

Ա 4.2 Օրգանական թափոնների անաէրոբ մշակում

Օրգանական թափոնների, կոյուղու տիղմի և շատ բարձր թթվածնի քիմիական պահանջարկ (ԹԶՊ) ունեցող կեղտաջրերի անաէրոբ մշակման նպատակը կենսաքայքայվող օրգանական նյութերի բովանդակության և նշված թափոնների փոխազդեցության պոտենցիալի կրճատումն է և թափոններից էներգիայի օգտահանումը:

Թափոնները պետք է հավաքվեն տարանջատված կերպով և ազատվեն տարբեր տեսակի խանգարող բաղադրիչներից, ինչպես օրինակ մեծ եզրաչափեր ունեցող իրերից: Որոշակի թափոնների դեպքում (օրինակ՝ սպանդանոցների թափոններ) հնարավոր է պահանջվի հարուցիչների ոչնչացում/հիգիենիկ մաքրում:

Օրգանական և հանքային մշակման մնացորդները պետք է չորացվեն: Այն դեպքերում, երբ այս մնացորդներն առաջանում են միայն տարանջատված կերպով հավաքված կենսաքայքայվող թափոնների մշակման միջոցով, նյութերը կարող են օգտագործվել որպես կոմպոստ միայն հիգիենիկ մաքրումից կամ կոմպոստացման գործընթացի ժամանակ մշակումից հետո: Դաշտերում դրանց ուղիղ կիրառությունը կարող է հնարավոր դառնալ միայն որոշակի պայմանների բավարարելուց հետո, որը սովորաբար թույլատրվում է որոշ երկրներում: Չոր մշակման մնացորդները նույնպես ունեն էներգետիկ նպատակներով գործածության կիրառություն:

Ֆինանսավորումը կարող է իրականացվել մշակման կայան թափոնների տեղափոխման համար գանձվող վճարի կամ աղբահանության համապատասխան համակարգի միջոցով (կենսաբանական թափոնների համար առանձին արկղեր): Մեկ այլ տարբերակ կարող է լինել ծախսերի ներառումը ընդհանուր աղբահանության ծառայությունների համար գանձվող վճարի մեջ կամ թափոնների կառավարման ֆինանսավորման հաստատուն վճար ենթադրող որևէ մեխանիզմի մեջ: Արտադրված էլեկտրաէներգիայից ստացված եկամուտները նույնպես կարող են եկամտի աղբյուր հանդիսանալ, բացի էլէներգիայից, որը օգտագործվում է սեփական աշխատանքների իրականացման ընթացքում և այդպիսով կրճատում տվյալ կայանի ծախսերը:

ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Չոր օրգանական թափոններից բացի, կարող են օգտագործվել նաև սննդային թափոնների և սննդի մշակման ու գյուղատնտեսական թափոնների խոնավ էլեմենտները
- Ձեռք բերված կենսազազը կարող է նաև օգտագործվել էլեկտրաէներգիայի արտադրության և ջեռուցման համար՝ այդպիսով գեներացնելով նաև եկամուտ, որը կարող է ծախսվել թափոնների մշակման գործընթացի ժամանակ էներգիայի սեփական պահանջարկը բավարարելու համար
- Ֆերմենտացված ենթաշերտը որոշ չափով կարող է օգտագործվել հեղուկ կամ չոր վիճակում
- Կայանի տեղադրման տեխնիկական մասը համեմատաբար փոքր տարածք է զբաղեցնում
- Կկրճատվեն աղբակիզման կայանների և/կամ սանիտարական աղբավայրերի կողմից այրման ենթական թափոնների քանակությունը և դրանց հանգեցրած արտանետումները/ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Ա 4.3 Թղթի թափոններ

Պետք է խուսափել թղթե թափոնների հավաքումը այլ թափոնների և հատկապես թաց, ճարպոտ կամ այլ կերպ աղտոտված թափոնների հետ միասին իրականացնելու պրակտիկայից: Արդյունավետ վերամշակում և վերամշակման ենթակա արտադրանք ապահովելու ամենանախընտրելի ձևը տեղում նյութերի

տարանջատում և առանձին հավաքում իրականացնելն է: Թղթե թափոնները, որոնք առանձին չեն հավաքվում և ստացվում են թափոնների խառը հոսքերից կամ աղբավայրերից, սովորաբար ունեն այնպիսի որակը, որը հազվադեպ է բավարարում անգամ ցածրորակ ստվարաթղթի արտադրության համար: Նախքան ըստ որակի տեսակավորում իրականացնելը տեղում իրականացված տարանջատմամբ թափոնների հավաքումից բացի որևէ այլ գործողության անհրաժեշտություն չկա:

Տեսակավորման արդյունքում առաջացող թղթե թափոնների տարբեր խմբերը կարող են ուղղակիորեն կիրառվել նոր թղթային պարագաների արտադրության կամ վերամշակման այլ ձևերի մեջ: Վերամշակման այլ տարբերակները ներառում են օգտահանված թղթի կիրառությունը, օրինակ, որպես մեկուսիչ նյութ մանրաթելային ձուլվածքներում, փայտաթելային սալիկներում կամ որպես ասֆալտի մեջ օգտագործվող հավելում:

Տեսակավորման ընթացքում առանձնացված անմաքուր ու խանգարող նյութերը պետք է հեռացվեն: Սա անելու ամենատարածված տարբերակներն են աղբակիզումը կամ թափոններից մշակման միջոցով վառելիքի ստացումը: Տնտեսական կենսունակության առումով էական նշանակություն ունեն մեծ ծավալի թափոններ գեներացնող և մաքրության բավական բարձր մակարդակ ունեցող հումք (տեղում տարանջատում իրականացնելու միջոցով) ապահովող շրջանները՝ հատկապես թափոնների տեսակավորման տեսանկյունից: Էլեկտրական հաղորդակցության աճին զուգահեռ տպագիր մամուլի և գրասենյակային թղթի կիրառության նվազումը, ըստ գնահատականների, մինչև 2020թ. -ը կհասնի այս ոլորտում 2008թ. -ին եղած պահանջարկի 50%-ին: Ստվարաթղթային արտադրության և փաթեթավորման մեջ թղթի գործածումն ակնկալվում է, որ կաճի կամ կմնա նույնը: Տեսակավորման գործընթացները պետք է համեմատաբար ճկուն լինեն, որպեսզի կարողանան արագորեն հարմարվել շուկայում տեղի ունեցող փոփոխություններին:

Թղթի վերամշակումը նվազեցնում է հիմնական (փայտյա) մանրաթելերի անհրաժեշտությունը թղթի արտադրության մեջ և հանգեցնում է այս գործընթացում, ընդհանուր առմամբ, էներգիայի սպառման նվազեցմանը: Մեկ տոննա թղթային թափոնների վերամշակումը և թղթի արտադրության մեջ դրա որպես հիմնական հումքային նյութ կիրառությունը միջին հաշվով հավասարազոր է 700կգ պակաս ածխաթթու գազի արտանետման:

Ա 4.4 Ապակե թափոններ

Ապակե թափոնների հավաքումը պետք է կատարվի մյուս թափոններից առանձին (ընտրովի հավաքում): Բացի այդ, նյութական տարբեր բաղադրությունների և վերամշակվող ապրանքների արտադրության և որակի գործընթացի վրա ունեցող բացասական հետևանքների պատճառով պետք է խուսափել ապակե տարաների և մյուս ապակե թափոնների՝ շոգեմշակված ապակու, ապակե բաղադրիչներով արտադրանքի կամ ապակե սպասքի խառը հավաքումից: Այնտեղ, որտեղ հավաքումն այլ նյութերից տարանջատված չի իրականացվում, առաջին հերթին պետք է իրականացվի ապակե թափոնների բաժնեմասերի առանձնացում:

Վերամշակման արդյունավետությունը, հնարավորություններն ու որակը բարձրացնելու համար նաև օգտակար է արդեն ըստ գույնի տարանջատված ապակե թափոնների հավաքումը: Ապակե թափոնների հավաքումն ըստ գույնի Գերմանիայում հանգեցնում է ապակե թափոնների բաժնեմասերի տարանջատմանը տեղում հետևյալ համամասնությամբ՝ 50% - թափանցիկ ապակի, 40% - կանաչ ապակի, 10% - շագանակագույն ապակի: Տեսակավորման ընթացքում ի հայտ եկող ապակե թափոնների խմբերը կարող են կիրառվել նոր ապակե պարագաների արտադրության կամ այլ նպատակներով, ինչպիսիք են մեկուսիչ նյութերի արտադրությունը (ապակե բուրդ, փրփրապակի): Հավաքված ապակե թափոններից զատված մետաղները նույնպես կարող են վերամշակվել: Տեսակավորման արդյունքում առաջացած այլ

մնացորդները, ինչպես օրինակ ոչ ապակե իներտ նյութերը, հիմնականում տեղադրվում են աղբավայրերում՝ առանց լրացուցիչ մշակման:

Ապակու վերամշակումը նվազեցնում է ապակու արտադրության հիմնական հումքի պահանջարկը և հանգեցնում է այս գործընթացում էներգիայի սպառման նվազեցմանը: Մեկ տոննա վերամշակված ապակին և այն ապակու արտադրության մեջ որպես հումք օգտագործումը հավասարազոր է միջին հաշվով 500կգ-ով ավելի քիչ ածխաթթու գազի արտանետման:

Ա 4.5 Փաթեթավորման թափոններ

Տնային տնտեսություններից և կոմերցիոն աղբյուրներից առանձին հավաքված փաթեթվածքի թափոնների մշակման արդյունքում ստացվում են մետաղների, պլաստիկի, կոմպոզիտային նյութերի և վաճառքի ենթակա այլ նյութերի հոսքերի չաղտոտված, վերամշակման ենթակա խմբեր: Չկա նախնական մշակման որևէ պահանջ քանի դեռ իրականացվում է փաթեթավորման թափոնների կամ չոր թափոնների բաղադրիչների տարանջատված հավաքում:

Տեսակավորման ընթացքում ձեռք բերված վերամշակման ենթակա տարբեր բաժնեմասերի թափոնները կարող են օգտագործվել վերամշակման համար (մետաղներ, սովարաթուղթ): Հատկապես պլաստիկ բաղադրիչները կարող են պահանջել լրացուցիչ մշակում նախքան որպես բուն վերամշակման ենթակա նյութ ծառայելը: Հնարավոր է դրանք օգտագործել նաև էներգետիկ նպատակներով և ստանալ որոշակի օգուտներ:

Տեսակավորման մնացորդները պետք է պատշաճ կերպով հեռացվեն: Բարձր կալորիական արժեք ունեցող թափոնները սովորաբար կարելի է օգտագործել վառելանյութի ստացման նպատակով, որը կարող է այրվել արդյունաբերական գործընթացների ժամանակ (տես՝ «արդյունաբերական այրման» վերաբերյալ նշված փաստերը): Նշվածի անհնարինության պարագայում պետք է դիտարկվի էներգիայի օգտահանման հարցը, իսկ թափոնների իներտ մասը կարող է տեղադրվել աղբավայրերում:

Փաթեթավորման թափոնների տեսակավորումը շատ դեպքերում կարող է արվել մեխանիկական եղանակով: Սա զբաղվածության համար լավ հնարավորություններ կարող է ստեղծել, ինչի արդյունքում հնարավոր կլինի նաև աշխատանքի վերցնել կրթական և տեխնիկական ցածր որակավորում ունեցող անձանց:

Այս գործընթացը կարող է տնտեսապես կենսունակ լինել այնտեղ, որտեղ ապահովվում է բարձրորակ վերջնարդյունք և դրա համար առկա են համապատասխան շուկաները: Հակառակ պարագայում հնարավոր է, որ անհրաժեշտություն լինի գործի ղնել վերաֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են փաթեթավորման վճարները կամ «Green-Dot»-ի օրինակով լիցենզավորման մեխանիզմները:

Ա 4.6 Թեթև փաթեթավորման թափոններ

Երբ թեթև փաթեթավորման թափոնները (պլաստիկից, կոմպոզիտային նյութերից, այլումինից և պողպատից, երբեմն նույնիսկ մանրաթելերից (թղթե և սովարաթղթե) պատրաստված փաթեթվածքներ) միախառնված են հավաքվում, ապա ԲԿԼՓ է համարվում միախառնված փաթեթավորման թափոնների տեսակավորման իրականացումը նյութի օգտահանման կայանքներում (ՆՕԿ):

Նմանատիպ սովորական կայանն ունի հինգ հիմնական տեխնիկական բաժիններ.

1. Հումքի ապահովում և նախապատրաստում, ինչը ներառում է պարկերի բացում և հումքային նյութերի մուտքի ապահովում
2. Նախատեսակավորում, ինչը ներառում է չհամապատասխանող իրերի հեռացում

3. Տեսակավորում, ինչը ներառում է մի քանի քայլ, այդ թվում տարաներից մանրաթելերի տարանջատում, մանրաթելերի տեսակավորում, մետաղական տարաների տեսակավորում մագնիսների գործածմամբ, մրրկային հոսանքներ կամ ռենտգեն, պլաստիկ տարաների նախնական տեսակավորում ըստ պոլիմերի (PET շշերի տարանջատում այլ պլաստիկ տարաներից)
4. Մաքրում, որը բաղկացած է տեսակավորման լրացուցիչ քայլերից, ինչպիսիք են պոլիմերների լրացուցիչ տեսակավորումն ըստ դրանց տեսակների (HDPE, PP) և գույնի, որպեսզի վերջնարդյունքը հանդիսացող արտադրանքի որակը բավարարի շուկայի պահանջներին: Որակի վերահսկողությունն իրականացվում է ավտոմատացված կամ մեխանիկական տեսակավորման միջոցով:
5. Արտադրանքի հետ աշխատանք, ինչը ներառում է կապոցների կազմումը և արտադրանքի պահպանումը կապոցների, չամրացված նյութերի տեսքով կամ պարզապես տարաներում: Արտադրանքի հետ աշխատանքը կարող է նաև ներառել բեռնման գործողություններ՝ հետագա հոսքեր ուղղորդելու նպատակով:

Քանի որ ՆՕԿ-երը ստանում և տեսակավորում են թափոնների հավաքման տարբեր համակարգերից բերվող և տարբեր բաղադրություններ ունեցող նյութեր, ժամանակակից ՆՕԿ-ը պետք է բավականաչափ ճկունություն ունենա նման տարբերություններով թափոնների արդյունավետ մշակում իրականացնելու համար:

Ա 4.7 Խոշոր եզրաչափերի թափոններ

Խոշոր եզրաչափերի թափոնների պարագայում տեղում տարանջատված թափոնների հավաքումից կամ ընդունման կետեր տեղափոխումից բացի որևէ այլ նախնական մշակման գործողության անհրաժեշտություն չկա: Տեսակավորման արդյունքում ձեռք բերված վերամշակման ենթակա նյութերի տարբեր բաժնեմասերը կարող են կամ միանգամից (մետաղները) կամ լրացուցիչ մշակումից հետո ուղարկվել վերամշակման: Նաև հնարավոր է որոշ խմբեր օգտագործել էներգիայի արտադրության մեջ: Տեսակավորման արդյունքում առաջացած մնացորդները, որոնք ունեն բարձր կալորիական արժեք, կարող են ենթարկվել աղբակիզման, իսկ իներտ նյութերը հնարավորության դեպքում կարող են տեղադրվել աղբավայրերում:

Տեսակավորման արդյունքում առաջացած մնացորդները պետք է ենթարկվեն վերջնական մշակման: Այսինքն, նախքան վերջնական հեռացումը դրանք պետք է ենթարկվեն վերջնական մշակման կամ պարզապես պետք է իրականացվեն այն միջոցառումները, որոնք սովորաբար իրականացվում են նման թափոնները աղբավայրերում տեղադրելուց առաջ: Հատկապես կարևոր է պաշտպանությունը աղմուկից, կրակից և աշխատանքների բոլոր փուլերում աշխատանքային անվտանգության կանոնների պահպանումը՝ վթարներից խուսափելու նպատակով:

Խոշոր եզրաչափերի թափոնների մշակման յուրահատուկ եղանակ է աշխատանքների պատվիրակումը սոցիալական հնարավորություններից զրկված անձանց (հաշմանդամություն ունեցող անձինք), սոցիալական աջակցության ծրագրերում ներգրավված մարդկանց կամ այլ վայրերում զբաղվածություն գտնելու հարցում սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց: Նրանց աշխատանքը կլինի խոշոր եզրաչափերի թափոններից այն իրերի տարանջատումը, որոնք հնարավոր կլինի վերավաճառել կամ օգտագործել այլ նպատակներով (հին կահույք, հնություններ, որոշ տեխնիկական սարքեր), պիտանի կլինեն վերանորոգման կամ ապամոնտաժման համար՝ վաճառքի կամ որպես պահեստամաս կիրառվելու նպատակով, ինչպես նաև բարեգործական ծրագրերում կամ հանրային հաստատություններում գործածման համար:

Հավաքման համար պետք է նախատեսվի բավարար մատչելիություն և տարածք ունեցող ժամանակավոր պահպանման վայր: Ինչ վերաբերում է տեսակավորման և վերամշակման կետերին, ապա խոշոր

Եզրաչափերի թափոնների երկար ժամանակ խլող փոխադրումը անարդյունավետ է և տնտեսապես ոչ շահավետ:

Այս գործընթացը կարող է տնտեսապես կենսունակ լինել այն վայրերում, որտեղ վերջնարդյունքի որակը բարձր է, վերօգտագործման ենթակա իրերը օգտահանվում են և շուկա գոյություն ունի թե վերամշակման ենթակա նյութերի, և թե կրկնակի օգտագործման ապրանքների համար: Վերաֆինանսավորումն ընդհանրապես պետք է հնարավոր դարձնի այնպիսի գործիքների կիրառմամբ, ինչպիսիք են մուտքի վճարը կամ ընդհանուր գանձման մեխանիզմը: Սակայն մշակման ծախսերը սովորաբար ներառվում են աղբահանության ծառայությունների վճարների մեջ կամ դառնում են հատուկ գանձման առարկա, որի միջոցով վճար է գանձվում ուղարկված յուրաքանչյուր միավոր (օրինակ՝ խմ) թափոնի համար կամ միայն այն միավորների համար, որոնք չափից շատ քանակությամբ են ուղարկվում՝ սահմանելով թափոնի տարեկան հաստատուն ծավալ: Վերանորոգված բաղադրիչների/իրերի կամ օգտահանված պահեստամասերի վաճառքից ստացված եկամուտները պետք է հաշվի առնվեն վճարի հաշվարկման շրջանակներում: Այդ պարագայում հնարավոր է խոշոր եզրաչափերի թափոնների հավաքումն իրականացվի անվճար կերպով կամ անվճար հավաքվեն միայն այն իրերը, որոնք ունեն հետագա գործածման կամ վերանորոգումից հետո վաճառքի հնարավորություն:

Ա 4.8 Կենցաղային մարտկոցներ

Մարտկոցներն ու կուտակիչները պետք է հավաքվեն կենցաղային այլ թափոնային հոսքերից անջատ՝ վերամշակման բարձր քվոտա ձեռք բերելու նպատակով: Հին մարտկոցների և կուտակիչների առանձին հավաքման համակարգերի տեղադրումն ապացուցված արդյունավետ եղանակ է: Գերմանիայում մարտկոցներ և կուտակիչներ արտադրողները օրենքով պարտավոր են արտադրողի պատասխանատվության շրջանակում ստեղծել հետ ընդունման համակարգ: Սա հնարավոր է դառնում հետ ընդունման շահույթ չհետապնդող համակարգում մասնակցության կամ մեկ կամ մի քանի արտադրողների սեփական հետ ընդունման համակարգերի ստեղծման միջոցով: Բացի այդ, մեքենաների և արդյունաբերական մարտկոցների արտադրողները պարտավոր են իրենց դիստրիբյուտորներին անվճար ապահովել հետ ընդունման տարբերակ: Այս պարտավորությունների փոխանցումը գոյություն ունեցող հետ ընդունման համակարգերին, ինչպես նաև արտադրողի յուրահատուկ հետ ընդունման համակարգերի հիմնումը նույնպես հնարավոր տարբերակ է:

Առաջարկվում է ստեղծել կենտրոնական ռեեստր, որը կիրականացնի շուկայում ակտիվ արտադրողների մշտադիտարկում, վերահսկում և հրապարակում՝ այդպիսով ստեղծելով թափանցիկություն բոլոր մասնակիցների համար: Արտադրողները պետք է փոխանցեն տեղեկություններ իրենց բրենդի, շուկայում առկա արտադրանքի քանակի, ինչպես նաև տեղեկություններ հետ ընդունման իրենց պարտավորությունների իրականացման վերաբերյալ: Արտադրողները նաև պետք է ապահովեն, որ մարտկոցների փոխադրումը (մասամբ վտանգավոր նյութեր), տեսակավորումը, վնասագերծումը և վերամշակումն իրականացվի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Հնարավորինս բարձր մասնակցություն ունենալու համար վերջնական սպառողի համար ծախսեր չպետք է լինեն: Պետք է նաև երաշխավորվի արտադրողների կողմից մասնավոր վերջնական սպառողների պատշաճ տեղեկացվածությունը հետևյալի շուրջ:

Մարտկոցների վրա նշված պիտակների/նշանների նշանակությունը, օրինակ, մարտկոցներում թունավոր նյութերի նշանակությունը, ինչը պետք է նշվի պիտակի վրա

Վերջնական սպառողների՝ հին մարտկոցները և կուտակիչները պաշտոնական հավաքման կետեր հասցնելու իրավական պատասխանատվությունը՝ այդպիսով դրանք հասանելի դարձնելով պատշաճ վերամշակման համար

Արտադրողների վաճառքի կետերում անվճար հետ ընդունման հնարավորություն

Յուրաքանչյուր մարտկոցի և կուտակիչի պիտակավորումը հետևյալ նշանով վերջնական սպառողին տեղեկացնում է թափոնի առանձին հավաքման անհրաժեշտության և հին մարտկոցներն ու կուտակիչներն անվտանգ հեռացման համակարգի համար հասանելի դարձնելու կարևորության մասին:



Հետ ընդունման և հատուկ հավաքման սխեմաները օգտագործված մարտկոցների և կուտակիչների հավաքման և օգտահանման ամենատարածված եղանակներն են: Հետ ընդունումը կարող է առավելագույնս արդյունավետ իրականացվել մարտկոցները վաճառող խանութների և վաճառքի կետերի, թափոնների ընդունման հանրային կետերի, համայնքապետարանների վերամշակման կայանների կամ վերամշակող ընկերությունների և (առևտրային) օգտատերերի միջև թափոնները տեղում վերցնելու շուրջ պայմանավորվածությունների կամ հատուկ թափոնների հավաքման արշավների (համայնքապետարաններում) միջոցով:

Հետ ընդունումը իրականացնող գործընկերներին առաջարկվում է օգտագործել հատուկ տարաներ՝ օգտագործված մարտկոցների/կուտակիչների առանձին հավաքման վրա ուշադրություն հրավիրելու և իրենց տարածքում անվտանգ պահպանումը իրականացնելու համար: Ավելին, մարտկոցների հասցվող վնասը կարող է կանխվել վաղ փուլում, քանի որ հավաքման տարաները կարող են փոխանակվել և պարտադիր չէ, որ դրանք լցվեն: Վնասված մարտկոցները կարող են առաջացնել կարծ միացումներ, որոնք կարող են հանգեցնել հրդեհների տեղափոխման ժամանակ:



Նկար 7 – Օգտագործված լիթիումային մարտկոցների հավաքման տարա Ադեյուրը՝ INTECUS GmbH

Ա 5 Թափոնների կառավարման բնապահպանական ազդեցությունների վերահսկողություն

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ա 5.1 Ընդհանուր բնապահպանական բնութագրի բարելավում
- Ա 5.2 Մշտադիտարկում
- Ա 5.3 Մթնոլորտի աղտոտում
- Ա 5.4 Աղմուկ և թրթիռներ
- Ա 5.5 Ջրի աղտոտում
- Ա 5.6 Արտակարգ պատահարներից և վթարներից առաջացած արտանետումներ
- Ա 5.7 Նյութարդյունավետություն
- Ա 5.8 Էներգաարդյունավետություն
- Ա 5.9 Փաթեթվածքի վերօգտագործում

Սույն բաժնում քննարկվում են 2018 թվականին հրատարակված «Լավագույն հասանելի տեխնիկաներ (ԼՅՏ). թափոնների մշակման տեղեկատու փաստաթուղթ» գրքում⁷⁵ ամփոփված թափոնների մշակման և դրա բնապահպանական ազդեցությունների վերահսկողության հարցում լավագույն հասանելի տեխնոլոգիաները, որոնք նախատեսված են ինչպես աղբ վերամշակող գործարանների, այնպես էլ վերահսկող մարմինների համար: Առանձին ԼՅՏ-ների ավելի մանրամասն ուսումնասիրության համար ուսանելի նյութ կարող է լինել վերոնշյալ հրատարակությունը:

Ա 5.1 Ընդհանուր բնապահպանական բնութագրի բարելավում

ԼՅՏ 1 - Ընդհանուր բնապահպանական բնութագրի բարելավման լավագույն հասանելի տեխնիկա է Բնապահպանական կառավարման համակարգի (ԲԿՀ) մշակումը և հետևողական իրականացումը, ինչը ներառում է ստորև առանձին-առանձին քննարկվող հետևյալ բաղադրիչները.

- I. Դեկավարության, այդ թվում՝ ավագ դեկավարության հանձնառությունն աշխատանքի նկատմամբ
- II. Դեկավարության կողմից բնապահպանական քաղաքականության սահմանումը, ինչը ներառում է հաստատության՝ բնապահպանական առումով կատարողականի շարունակական բարելավումը
- III. Ֆինանսական պլանավորման և ներդրումների հետ մեկտեղ կատարել անհրաժեշտ ընթացակարգերի, նպատակների և թիրախների պլանավորման և սահմանման աշխատանքներ
- IV. Ընթացակարգերի և արձանագրությունների իրականացում
- V. Կատարողականի ստուգում և ճշգրտող գործողության իրականացում
- VI. Բարձր դեկավարության կողմից ԲԿՀ-ի և դրա շարունակական համապատասխանության, համարժեքության և արդյունավետության ուսումնասիրություն
- VII. Հետամուտ լինել առավել մաքուր տեխնոլոգիաների զարգացմանը
- VIII. Վերամշակման նոր կայանի նախագծման փուլում դրա գործունեության ընթացքում և փակումից հետո առաջացող բնապահպանական ազդեցությունների դիտարկում
- IX. Ոլորտային ուղենշման պարբերական իրականացում
- X. Թափոնների հոսանքի կառավարում (տես՝ ԼՅՏ 2)
- XI. Կեղտաջրերի և թափոնային զազերի հոսքերի գույքագրում (տես՝ ԼՅՏ 3)
- XII. Մնացորդների կառավարման պլան (տես՝ 6.6.5 ենթազխում ներառված նկարագրությունը)
- XIII. Վթարների կառավարման պլան (տես՝ 6.6.5 ենթազխում ներառված նկարագրությունը)

⁷⁵ Antoine Pinasseau, Benoit Zerger, Joze Roth, Michele Canova, Serge Roudier; Best Available Techniques (BAT) Reference Document for Waste treatment Industrial Emissions Directive 2010/75/EU (Integrated Pollution Prevention and Control); EUR 29362 EN; Publications Office of the European Union, Luxembourg, 2018; ISBN 978-92-79-94038-5, doi:10.2760/407967, JRC113018

XIV. Հոտերի կառավարման պլան (տես՝ ԼՅՏ 12)

XV. Աղմուկի և թրթիռների /վիբրացիաների/ կառավարման պլան (տես՝ ԼՅՏ 17)

ԲԿՀ-ի շրջանակը (մանրամասների մակարդակը) և բնույթը (նորմավորված և ոչ նորմավորված) սովորաբար կառնչվի կառույցի բնույթի, մեծության և բարդության, ինչպես նաև իր հնարավոր բնապահպանական ազդեցությունների հետ (որոնք որոշվում են ըստ մշակված թափոնների տեսակի և ծավալի):

LՅՏ 2 – Կայանի ընդհանուր բնապահպանական բնութագիրը բարելավելու նպատակով LՅՏ Ե (համարվում) ստորև բերված բոլոր տեխնիկաների կիրառումը.

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Թափոնների բնութագրման և նախքան ընդունումը գործող ընթացակարգերի սահմանում և իրականացում	Այս ընթացակարգերը նպատակ ունեն ապահովելու թափոնների մշակման գործողությունների տեխնիկական (և իրավաբանական) համապատասխանությունը կոնկրետ թափոնի տեսակի համար նախքան դրա փոխադրումը կայան: Դրանք ներառում են թափոնների մասին տեղեկություններ հավաքելու ընթացակարգեր և կարող են նաև ընդգրկել թափոնների նմուշառում և բնութագրում՝ թափոնի բաղադրության վերաբերյալ բավականաչափ պատկերացում կազմելու համար: Թափոնների հետ մինչ ընդունումն իրականացվող գործընթացները ճիսկային են՝ հաշվի առնելով, օրինակ, թափոնի վտանգավոր հատկությունները, թափոնի ներկայացրած վտանգները՝ մշակման, աշխատանքային անվտանգության և բնապահպանական ազդեցության, ինչպես նաև թափոնի նախկին պահպանման վայր(եր)ից դրա մասին տրամադրած տեղեկությունների մասով:
b.	Թափոնների ընդունման ընթացակարգերի սահմանում և իրականացում	Ընդունման ընթացակարգերը նպատակ ունեն հաստատելու թափոնի բնութագրերն այնպես, ինչպես դրանք սահմանվել են ընդունմանը նախորդող փուլում: Այս գործընթացները թափոնների՝ կայան հասնելու պահին սահմանում են հաստատման ենթակա տարրերը, ինչպես նաև թափոնների ընդունման կամ մերժման չափորոշիչները: Սրանք կարող են ներառել նմուշառում, ստուգում և անալիզ: Թափոնների ընդունման գործընթացները ճիսկային են՝ հաշվի առնելով, օրինակ, թափոնի վտանգավոր հատկությունները, թափոնի ներկայացրած վտանգները՝ մշակման, աշխատանքային անվտանգության և բնապահպանական ազդեցության, ինչպես նաև թափոնի նախկին պահպանման վայր(եր)ից դրա մասին տրամադրած տեղեկությունների առումով:
c.	Հիմնադրել և գործարկել թափոններին հետևելու և զույլագրման համակարգ	Թափոններին հետևելու և զույլագրելու համակարգի նպատակն է տեղորոշել թափոնի գտնվելու վայրը և կայանում առկա թափոնների քանակությունը: Այն պարունակում է նախքան թափոնների ընդունման ընթացակարգերը եղած բոլոր տեղեկությունները (կայան հասնելու ամսաթիվը և թափոնի նույնականացման թիվը, թափոնի նախորդ տնօրինող(ներ)ի մասին տեղեկություններ, մինչ ընդունելը և ընդունումից հետո կատարված անալիզի արդյունքները, նախատեսված մշակման ճանապարհը, տեղում պահվող թափոնների բնույթն ու քանակությունը, ներառյալ բոլոր բացահայտված վտանգները), ինչպես նաև ընդունման, պահպանման, մշակման և/կամ փոխադրման մասին տեղեկությունները: Թափոններին հետևելու համակարգը հիմնվում է որոշակի ռիսկերի վրա, օրինակ՝ թափոնների վտանգավոր հատկությունների, թափոնների ներկայացրած ռիսկերը մշակման անվտանգության, աշխատանքային անվտանգության և բնապահպանական ազդեցության, ինչպես նաև թափոնների նախորդ տնօրինող(ներ)ի տրամադրած տեղեկությունների մասով:
d.	Հիմնադրել և գործարկել վերջնարդյունքի որակի վերահսկման համակարգ	Այս տեխնոլոգիան իրենից ներկայացնում է վերջնարդյունքի որակի վերահսկման համակարգի հիմնադրում և իրականացում՝ նպատակ ունենալով ապահովել թափոնների մշակման արդյունքում ստացվող վերջնարդյունքի համապատասխանությունը ակնկալիքներին՝ կիրառելով, օրինակ, առկա եվրոպական չափանիշները: Այս համակարգը նաև թույլ է տալիս իրականացնել թափոնների մշակման կատարողականի մշտադիտարկում և օպտիմալացում, և այս նպատակով այն կարող է ներառել թափոնների մշակման ամբողջ ընթացքում համապատասխան բաղադրիչների կոլեկցիան հոսքերի անալիզ: Նյութական հոսքի անալիզը ճիսկային է համարվում, եթե դիտարկում են թափոնների վտանգավոր հատկությունները, թափոնների ներկայացրած ռիսկերը՝ կապված մշակման անվտանգության, աշխատանքային անվտանգության, բնապահպանական ազդեցության, ինչպես նաև թափոնի նախկին տնօրինող(ներ)ի կողմից տրամադրված տեղեկությունների հետ:

e.	Թափոնների առանձնացման ապահովում	Թափոնները, կախված իրենց հատկություններից, պահպանվում են առանձին, որպեսզի ավելի ոյուրին լինի նրանց՝ բնապահպանական առումով անվտանգ պահպանումն ու մշակումը: Թափոնների առանձնացումը ենթադրում է թափոնների ֆիզիկական առանձնացում և այնպիսի գործընթացների իրականացում, որոնք սահմանում են, թե երբ և որտեղ պետք է պահպանվեն թափոնները:
f.	Այսպիսով թափոնների համապատասխանությամբ ունը նախքան դրանց միախառնումը	Համապատասխանությունն ապահովվում է որոշ միջոցառումների և թեստերի միջոցով՝ նպատակ ունենալով պարզել, թե արդյոք կան անցանկալի և/կամ հավանական վտանգ ներկայացնող քիմիական ռեակցիաներ թափոնների միջև (պոլիմերիզացում, գազի փոխակերպում (Էվոլյուցիա) Էկզոթերմային ռեակցիա, տարրալուծում, բյուրեղացում, թանձրացում), որոնք տեղի են ունենում խառնվելու կամ մշակման այլ գործողություններ իրականացնելու ընթացքում: Համապատասխանությունը պարզող թեստերը ճիսկային գործոն են պարունակում հաշվի առնելով, օրինակ, թափոնների վտանգավոր հատկությունները և թափոնների ներկայացրած ռիսկերը՝ կապված մշակման անվտանգության, աշխատանքային անվտանգության և բնապահպանական ազդեցության, ինչպես նաև թափոնների նախորդ տնօրինող(ներ)ի կողմից տրամադրված տեղեկությունների հետ:
g.	Մուտք արվող կոշտ թափոնների տեսակավորում	<p>Մուտք արվող կոշտ թափոնների տեսակավորման (1) նպատակն է կանխել անցանկալի նյութերի թափանցումը թափոնների մշակմանը հաջորդող գործընթացներ: Այն կարող է ներառել հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • Մեխանիկական տարանջատում վիզուալ զննման միջոցով • Գունավոր, ոչ գունավոր մետաղներ կամ բոլոր մետաղների առանձնացում • Օպտիկական առանձնացում ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի կամ ռենտգեն համակարգերի միջոցով • Տարանջատում ըստ խտության, օրինակ՝ ըստ օդային դասակարգման, սուզվող-լողացող թափոնների զատման սարքերով, վիբրացիոն սեղանների միջոցով • Տարանջատում ըստ չափերի մաղելու միջոցով

ԼՐՏ 3 – Ջրի և օդի մեջ արտանետումների կրճատմանը նպաստելու նպատակով ԼՐՏ Ե համարվում կեղտաջրերի և թափոնային գազերի հոսքերի գույքագրման իրականացումը որպես բնապահպանական կառավարման համակարգի մաս (տես՝ ԼՐՏ 1), որը ներառում է հետևյալ բոլոր գործոնները.

- I. Տեղեկություններ մշակման ենթակա թափոնների բնութագրերի և թափոնների մշակման գործընթացների մասին, այդ թվում՝
 - A. Հոսքերի մասին պարզեցված ձևաչափի թերթիկներ, որոնք ցույց են տալիս արտանետումների սկզբնաղբյուրը
 - B. Մշակման տեխնոլոգիաների և տեղում կեղտաջրերի/թափոնային գազերի մշակման նկարագրությունները, ներառյալ դրանց կատարողականները
- II. Տեղեկություններ կեղտաջրերի հոսքերի բնութագրերի մասին, ինչպիսիք են՝
 - A. Հոսքի միջին արժեքներն ու փոփոխականությունը, թթվայնությունը, ջերմաստիճանն ու հաղորդունակությունը
 - B. Համապատասխան նյութերի և նրանց փոփոխականության (ԹԶՊ/ԸՕԱ) միջին կոնցենտրացիան և արժեքները, ազոտի տեսակներ, ֆոսֆոր, մետաղներ, առաջնահերթ նյութեր/միկրոաղտոտիչներ)
 - C. Կենսաբանական ճանապարհով վերացման ենթակա լինելու մասին տվյալներ (ԹԿՊ, ԹԿՊ-ԹԶՊ հարաբերակցություն, Չահն-Վելլենս թեստ, կենսաբանական զսպման ներուժ (օրինակ՝ ակտիվացված տիղմի պահպանում)) (տես՝ ԼՐՏ 52)
- III. Թափոնային գազերի հոսքերի բնութագրերի մասին տեղեկություններ՝
 - A. Հոսքի և ջերմաստիճանի միջին արժեքներն ու փոփոխականությունը

- B. Համապատասխան նյութերի և նրանց փոփոխականության միջին կոնցենտրացիան և արժեքները (օրգանական միացություններ, ԿՕԱ հանդիսացող պոլիքլորացված բիֆենիլներ)
- C. Դյուրավառություն, պայթյունավտանգության ստորին և վերին սահմաններ, ռեակտիվություն
- D. Թափոնային գազերի մշակման համակարգի կամ մշակման կայանի անվտանգության վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ նյութերի առկայություն (թթվածին, ազոտ, ջրային գոլորշի, փոշի)

Գույքագրման շրջանակը (մանրամասների խորությունը) և բնույթը սովորաբար կապված են կայանի բնույթի, մասշտաբի և համալիրության հետ և դրա հնարավոր բնապահպանական ազդեցությունների մեծության հետ (ինչը սաև որոշվում է մշակված թափոնների ծավալով և տեսակով):

ԼՐՏ 4 – Թափոնների պահպանման հետ կապված բնապահպանական ռիսկերի կրճատման նպատակով ԼՐՏ է համարվում ստորև նշված բոլոր տեխնոլոգիաների կիրառումը.

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Օպտիմալացված պահպանման վայրի տեղադիրք	Սա ներառում է հետևյալ տեխնոլոգիաները. <ul style="list-style-type: none"> • Պահպանման վայրը գտնվում է տեխնիկապես և տնտեսական իմաստով հնարավորինս հեռու բոլոր զգայուն ռեցեպտորներից և ջրագծերից և այլն • Պահպանման վայրն ունի այնպիսի դիրք, որը հնարավորություն է տալիս կայանի ներսում վերացնել կամ նվազագույնի հասցնել թափոնների անհարկի մշակումը (օրինակ՝ նույն թափոնները մշակվում են երկու և ավելի անգամ կամ կայանում առկա տեղափոխման հեռավորությունները չափազանց մեծ են)
b.	Պահպանման պատշաճ կարողություններ	Ձեռնարկվում են թափոնների կուտակումից խուսափելու միջոցառումներ, այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> • Պահպանման առավելագույն տարողությունները հստակ սահմանված են և չեն անցում նշված սահմանները՝ հաշվի առնելով թափոնների բնութագրերը (օրինակ՝ կապված հրդեհի ռիսկերի հետ) և մշակման կարողությունները • Պահպանվող թափոնների քանակությունը պարբերաբար ենթարկվում է մշտադիտարկման, որպեսզի թույլատրելի պահպանման առավելագույն տարողությունը չգերազանցվի • Թափոնների պահպանման առավելագույն ժամկետը հստակորեն սահմանված է
c.	Անվտանգ պահպանում	Ներառում է հետևյալ միջոցառումները՝ <ul style="list-style-type: none"> • Թափոնների բեռնման, բեռնաթափման և պահպանման համար օգտագործվող սարքավորումները ունեն համապատասխան պիտակներ • Տերմության, լույսի, օդի, ջրի նկատմամբ զգայուն թափոնները պաշտպանված են նման պայմաններից • Տարաներն ու արկղերը տեղադրված են անվտանգ կերպով և ըստ նպատակի
d.	Առանձին տարածք՝ փաթեթավորված վտանգավոր թափոնների պահպանման և մշակման համար	Փաթեթավորված վտանգավոր թափոնների պահպանման և մշակման համար օգտագործվող հատուկ առանձին տարածք

ԼՂՏ 5 – Թափոնների փոխադրման և մշակման հետ կապված բնապահպանական ռիսկերի կրճատման նպատակով ԼՂՏ Է համարվում հավաքման և փոխադրման ընթացակարգերի սահմանումն ու իրականացումը:

Հավաքման և փոխադրման ընթացակարգերը նպատակ ունեն ապահովել թափոնների անվտանգ հավաքումն ու տեղափոխումը համապատասխան պահպանման կամ մշակման վայրեր: Նշված ընթացակարգերը ներառում են հետևյալ տարրերը.

- Թափոնների հավաքումն ու փոխադրումն իրականացվում է կոմպետենտ անձնակազմի կողմից
- Թափոնների հավաքումն ու փոխադրումը պատշաճ կերպով փաստաթղթավորվում է և հաստատվում է իրականացումից առաջ և հետո
- Իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված արտահոսքերի բացահայտմանը, կանխմանն ու մեղմացմանը
- Թափոնների խառնման կամ աղացման ընթացքում ձեռնարկվում են շահագործմանն առնչվող նախապատրաստական միջոցառումներ (փոշոտ թափոնների մաքրում)

Հավաքման և փոխադրման ընթացակարգերը որոշակի ռիսկերի վրա են հիմնված, եթե հաշվի առնենք վթարների հավանականությունը և նրանց հնարավոր բնապահպանական ազդեցությունները:

Ա 5.2 Մշտադիտարկում

ԼՂՏ 6 – Կեղտաջրերի հոսքերի գույքագրման օգնությամբ բացահայտված դեպի ջուր համապատասխան արտահոսքերի մասով (տես՝ ԼՂՏ 3) ԼՂՏ Է համարվում գործընթացի առանցքային պարամետրերի մշտադիտարկումը (կեղտաջրերի հոսք, թթվայնություն, ջերմաստիճան, հաղորդունակություն, ԹԿՊ) հիմնական վայրերում (մշակումից առաջ թափոնների մուտքի և/կամ ելքի վայրում, վերջնական մշակման գնացող թափոնների մուտքի վայրում, այն վայրում, որտեղ արտահոսքը տեղի է ունենում):

ԼՂՏ 7 – ԼՂՏ Է համարվում ջրի մեջ արտահոսքերի մշտադիտարկումը՝ առնվազն ստորև բերված հաճախականությամբ և եվրոպական չափանիշների հետ համապատասխանությամբ: Եթե այդ չափանիշներն առկա չեն, ԼՂՏ Է համարվում ՍՄԿ, ազգային կամ այլ միջազգային չափանիշների գործածումը, որոնք ապահովում են համապատասխան գիտական որակի տվյալների տրամադրումը:

Մանրամասների համար տես՝ «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ (ԼՂՏ). թափոնների մշակման տեղեկատու փաստաթուղթ», Էջ 722:

ԼՂՏ 8 – ԼՂՏ Է համարվում դեպի մթնոլորտ արտանետումների մշտադիտարկումը՝ առնվազն ստորև բերված հաճախականությամբ և եվրոպական ստանդարտների հետ համապատասխանությամբ: Եթե այդ ստանդարտներն առկա չեն, ապա ԼՂՏ Է համարվում ՍՄԿ, ազգային կամ այլ միջազգային չափանիշների գործածումը, որոնք ապահովում են համապատասխան գիտական որակի տվյալների տրամադրումը:

Մանրամասների համար տես՝ «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ (ԼՂՏ). թափոնների մշակման տեղեկատու փաստաթուղթ», Էջ 726:

ԼՂՏ 9 – ԼՂՏ Է համարվում օրգանական միացությունների տարբեր աղբյուրներից դեպի մթնոլորտ արտանետումների մշտադիտարկումը: Սրանք արտանետումներ են, որոնք առաջանում են օգտագործված լուծիչների ռեգեներացումից, ԿՕԱ-ներ պարունակող սարքավորումների՝ լուծիչներով իրականացվող ախտահանումից և լուծիչների կալորիական արժեքի օգտահանման նպատակով դրանց ֆիզիկական և քիմիական մշակումից: Այս մշտադիտարկումը պետք է իրականացվի տարեկան առնվազն մեկ անգամ ստորև բերված տեխնոլոգիաներից մեկի կամ մի քանիսի կիրառմամբ:

	Տեխնիկա	Նկարագրություն
a	Չափում	Տեղեկությունների մշտադիտարկման մեթոդներ, գազի օպտիկական պատկերում, արևային օպտիկական հեռահար զոնդավորում [solar occultation flux] կամ դիֆերենցիալ կլանում: Համապատասխան նկարագրությունները ներկայացված են 6.6.2 ենթագլխում:
b	Արտանետումների գործոններ	Արտանետումների հաշվարկ՝ հիմնված արտանետումների գործոնների վրա, որոնք պարբերաբար հաստատվում են չափումների միջոցով (երկու տարին մեկ):
c	Չանգվածի հաշվեկշիռ	Ցրված աղբյուրներից արտանետումների հաշվարկը զանգվածի հաշվեկշռի գործածման միջոցով՝ հաշվի առնելով լուծիչների մուտքը, մթնոլորտ մղված արտանետումները, դեպի ջուր մղված արտանետումները, գործընթացի վերջնարդյունքում տեղ գտած լուծիչները և գործընթացի (գտման) մնացորդները:

LՐՏ 10 – LՐՏ Է համարվում հոտային բնույթի արտանետումների պարբերական մշտադիտարկումը նման արտանետումները կարող են մշտադիտարկվել հետևյալի օգնությամբ.

- Եվրոպական ստանդարտներ (13725 եվրոպական ստանդարտի համաձայն՝ դինամիկ օլֆակտոմետրի կիրառում՝ մթնոլորտում հոտային կոնցենտրացիան որոշելու համար կամ եվրոպական ստանդարտ 16841-1-ի կամ -2-ի համաձայն որոշել հոտի տարածվածությունը
- Երբ կիրառվում են այնպիսի այլընտրանքային մեթոդներ, որոնց համար չկան եվրոպական չափանիշներ (օրինակ՝ հոտային արտանետման ազդեցության գնահատում), այդ դեպքերում կարող են գործածվել ՍՄԿ, ազգային կամ այլ միջազգային չափանիշներ, որոնք ապահովում են համարժեք գիտական որակ ունեցող տվյալների տրամադրումը

Մշտադիտարկման հաճախականությունը սահմանվում է հոտի կառավարման պլանում (տես՝ LՐՏ 12): Այս LՐՏ-ի կիրառելիությունը սահմանափակվում է այնպիսի դեպքերով, որտեղ հոտի տիպությունը զգայուն ռեցեպտորների մոտ ակնկալվում է, որ կհիմնավորվի և/կամ արդեն հիմնավորվել է:

LՐՏ 11 – LՐՏ Է համարվում առնվազն տարին մեկ անգամ ջրի, Էներգիայի և հումքի սպառման, ինչպես նաև մնացորդների և կեղտաջրերի տարեկան գեներացման մշտադիտարկում իրականացնելը:

Մշտադիտարկումը ներառում է չափումներ, հաշվարկ կամ գրանցում՝ կիրառելով, օրինակ, համապատասխան չափիչներ կամ ապրանքագրեր: Մշտադիտարկումն իրականացվում է համապատասխան մակարդակում (գործընթացի կամ կայանի/կառույցի մակարդակում) և դիտարկում է կայանում/կառույցում տեղի ունեցած բոլոր Էական փոփոխությունները:

Ա 5.3 Մթնոլորտի աղտոտում

LՐՏ 12 – Հոտային արտանետումները կանխելու կամ այնտեղ, որտեղ դա հնարավոր չէ իրականացնել, ապա դրանք կրճատելու նպատակով, LՐՏ Է համարվում հոտի կառավարման պլանի սահմանում, իրականացումը և դրա պարբերական վերանայումը՝ որպես բնապահպանական կառավարման համակարգի մաս կազմող գործողություններ (տես՝ LՐՏ 1), որոնք ներառում են հետևյալ բոլոր տարրերը.

- Գործողություններ և ժամանակացույցեր պարունակող արձանագրություն
- LՐՏ 10-ով սահմանված մշտադիտարկման իրականացման մասին արձանագրություն
- Հոտային բնույթի պատահարներին կամ բողբոքներին արձագանքելու մասին արձանագրություն
- Հոտային բնույթի արտանետումների կանխման և կրճատման ծրագիրը, որը նպատակ ունի՝
 - Բացահայտել աղբյուր(ներ)ը
 - Բնութագրել աղբյուրներից տեղի ունեցող արտազատումները
 - Իրականացնել կանխարգելման և/կամ կրճատման միջոցառումներ

ԼՂՏ 13 – Հոտային բնույթի արտանետումները կանխելու կամ, այնտեղ, որտեղ դա հնարավոր չէ, դրանք կրճատելու նպատակով ԼՂՏ Է համարվում ստորև նշված տեխնոլոգիաներից մեկի կամ մի քանիսի համատեղ կիրառությունը

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Նվազագույնի հասցնելով պահպանման ժամանակը	Վատ հոտային բնույթ ունեցող թափոնների՝ պահպանման կամ մշակման համակարգերում (խողովակներ, բաքեր, տարաներ) մնալու ժամանակի կրճատում (հատկապես անաերոբ պայմաններում գտնվող թափոնների համար): Հնարավորության դեպքում կատարվում է սեզոնային բարձր ծավալների թափոնների ընդունում: Կիրառելի է միայն բաց համակարգերի համար:
b.	Զիմիական մշակում	Զիմիական նյութերի գործածում՝ հոտային բնույթ ունեցող միացությունների առաջացումը նվազեցնելու կամ դրանք ոչնչացնելու համար (ջրածնի սուլֆիդի օքսիդացում կամ թանձրացում): Կիրառելի չէ, եթե այն կարող է վնասակար ազդեցություն ունենալ վերջնարդյունքի որակի վրա:
c.	Աերոբական մշակման օպտիմիզացում	Ջրային հիմքով հեղուկ թափոնի աերոբական մշակումը կարող է ներառել՝ <ul style="list-style-type: none"> • Մաքուր թթվածնի օգտագործում • Բաքերում նստվածքի հեռացում • Օդափոխության համակարգի պահպանման աշխատանքների հաճախակի իրականացում Այս ԼՂՏ-ն, ընդհանուր առմամբ, կիրառելի է: Ոչ ջրային հիմքով հեղուկ թափոնների աերոբիկ մշակման համար տես ԼՂՏ 36:

ԼՂՏ 14 – Ցրված աղբյուրներից արտանետումները, մասնավորապես՝ փոշու, օրգանական միացությունների և հոտային բնույթ ունեցող արտանետումները դեպի մթնոլորտ կանխելու կամ, այնտեղ, որտեղ դա հնարավոր չէ, դրանք կրճատելու նպատակով ԼՂՏ Է համարվում ստորև բերված տեխնոլոգիաների պատշաճ համադրության կիրառումը:

Մանրամասների համար տես՝ «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ (ԼՂՏ). թափոնների մշակման տեղեկատու փաստաթուղթ», Էջ 730:

ԼՂՏ 15 – Բոցով այրման իրականացումը ԼՂՏ Է համարվում միայն անվտանգության նկատառումներով կամ ոչ սովորական պայմաններում աշխատանքի համար, եթե կիրառվում են ստորև նշված տեխնոլոգիաները.

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Կայանի պատշաճ նախագծում	Սա ներառում է պատշաճ կարողություններ ունեցող գազի օգտահանման համակարգի ապահովում և բարձր ճնշումից պաշտպանող համակարգերի կիրառություն: Այս ԼՂՏ-ն հիմնականում կիրառելի է նոր կայանների համար: Գազի օգտահանման համակարգը կարող է ավելացվել գոյություն ունեցող կայաններին:
b.	Կայանի կառավարում	Սա ներառում է գազի համակարգի հավասարակշռում և գործընթացների բարձրակարգ վերահսկողության իրականացում: Այս ԼՂՏ-ն հիմնականում կիրառելի է:

ԼՂՏ 16 – Այրման արտանետումները կրճատելու նպատակով (երբ այրումից խուսափել հնարավոր չէ), ԼՂՏ Է համարվում հետևյալ տեխնոլոգիաների կիրառումը.

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Այրման սարքավորումների ճիշտ նախագծում	Բարձրության և ճնշման օպտիմիզացիա, աջակցություն գոլորշու, օդի կամ գազի, այրման տեսակի մասին խորհրդատվությամբ՝ նպատակ ունենալով ապահովել ավելորդ գազերի անծուխ, արդյունավետ և հուսալի այրման գործընթաց: Այս ԼՅՏ-ն հիմնականում կիրառելի է սոր այրման գործընթացների համար: Գոյություն ունեցող կայաններում դրա կիրառությունը կարող է սահմանափակվել՝ կախված պահպանման աշխատանքների համար պահանջվող ժամանակից:
b.	Մշտադիտարկում և գրանցում որպես այրման կառավարման բաղկացուցիչ մաս	Սա ներառում է այրման ուղարկված գազի քանակության շարունակական մշտադիտարկում: Այն կարող է ներառել այլ պարամետրերի գնահատումներ (գազի հոսքի բաղադրություն, ջերմության բովանդակություն, օգնության հարաբերակցություն, արագություն, մղվող գազի հոսքի արագություն, աղտոտիչների արտանետումներ (ազոտի օքսիդներ, ածխաթթու գազ, ածխաջրածիններ), աղմուկ): Այրման գրանցումը սովորաբար ներառում է այրումների տևողությունն ու թիվը, որը թույլ է տալիս հաշվարկել արտանետումների քանակությունը և հետագա այրման դեպքերի կանխարգելման հավանականությունը: Այս ԼՅՏ-ն հիմնականում կիրառելի է:

Ա 5.4 Աղմուկ և թրթիռներ

ԼՅՏ 17 – Աղմուկն ու թրթիռները (վիբրացիա) կանխելու կամ այնտեղ, որտեղ դա հնարավոր չէ, դրանք կրճատելու նպատակով ԼՅՏ է համարվում աղմուկի և թրթիռների կառավարման պլանի սահմանումը, իրականացումն ու կանոնավոր վերանայումը (տես՝ ԼՅՏ 1), որը ներառում է հետևյալ բոլոր տարրերը.

- I. Համապատասխան գործողություններ ու ժամանակացույցեր պարունակող արձանագրություն
- II. Աղմուկի և թրթիռների (վիբրացիա) մշտադիտարկում
- III. Աղմուկի և թրթիռների (վիբրացիա) գրանցված դեպքերին (բողոքներին) արձագանքելու արձանագրություն
- IV. Աղմուկի և վիբրացիայի նվազեցման ծրագիր՝ միտված աղբյուր(ներ)ի բացահայտմանը, աղմուկի և վիբրացիայի ազդեցության չափմանը/գնահատմանը, աղբյուրների բնութագրմանը, կանխարգելման և/կամ նվազեցման միջոցառումների իրականացմանը

Կիրառելի է այնպիսի դեպքերի համար, որտեղ ակնկալվում է և/կամ հիմնավորվել է աղմուկի կամ վիբրացիայի ազդեցությունը զգայուն ռեցեպտորների վրա:

ԼՅՏ 18 – Աղմուկի և վիբրացիայի կանխարգելման, իսկ այնտեղ, որտեղ դա հնարավոր չէ անել, ապա դրանց նվազեցման համար ԼՅՏ է համարվում հետևյալ մոտեցումներից մեկի կամ մի քանիսի համատեղ կիրառությունը:

Մանրամասների համար տես «Լավագույն հասանելի տեխնիկաներ (ԼՅՏ). թափոնների մշակման տեղեկատու փաստաթուղթ» իրատարակության 733 էջը:

Ա 5.5 Զրի աղտոտում

ԼՅՏ 19 – Զրի սպառումը օպտիմալացնելու, գեներացվող կեղտաջրերի ծավալը կրճատելու և ջրի ու հողի մեջ արտանետումները կանխելու, իսկ այնտեղ, որտեղ գործնականում դա անհնարին է, դրանք նվազեցնելու նպատակով ԼՅՏ է համարվում ստորև ներկայացված տեխնոլոգիաների պատշաճ համադրության գործածումը:

Տեխնիկա	Նկարագրություն
---------	----------------

a	<p>Ջրի կառավարում</p>	<p>Ջրի սպառումն օպտիմալացվում է այնպիսի միջոցառումների իրականացմամբ, որոնք կարող են ներառել հետևյալը՝</p> <ul style="list-style-type: none"> • Ջրի խնայողության ծրագրեր (ջրի արդյունավետության նպատակների, հոսքային դիագրամների և ջրային հաշվեկշիռների սահմանում) • Լվացման ջրի գործածման օպտիմալացում (չոր մաքրում, լվացող սարքերի վրա փականային վերահսկողության գործածում) • Վակուումի ստեղծման նպատակով ջրի կիրառման նվազեցում (եռման բարձր աստիճան ունեցող հեղուկներով գործող պոմպերի կիրառում) <p>Այս ԼՂՏ-ն հիմնականում կիրառելի է</p>
b	<p>Ջրի վերաշրջանառում</p>	<p>Մշակման գործընթացից հետո կայանի ներսում անհրաժեշտության դեպքում ջրային հոսքերը ենթարկվում են վերաշրջանառության, որը սահմանափակվում է կայանի ջրային հաշվեկշռով, անմաքուր կյուլթերի բաղադրությամբ (հոտային բնույթ ունեցող միացություններ) և/կամ ջրային հոսքերի բնութագրերով (անդային բովանդակություն):</p> <p>Այս ԼՂՏ-ն հիմնականում կիրառելի է</p>
c	<p>Անթափանց մակերես</p>	<p>Կախված թափոնների ներկայացրած ռիսկերից՝ կապված հողի և/կամ ջրի աղտոտման հետ, թափոնների մշակման ամբողջ կայանի մակերեսը (թափոնների ընդունում, փոխադրում, պահպանում, մշակում և տեղափոխում) պետք է անթափանց լինի համապատասխան հեղուկների համար:</p> <p>Այս ԼՂՏ-ն հիմնականում կիրառելի է</p>
d	<p>Բաքերից և խողովակներից արտահոսքերի հավանականության և դրանց ազդեցության կրճատման տեխնոլոգիաներ</p>	<p>Կախված բաքերում և խողովակներում գտնվող հեղուկների կողմից ներկայացրած վտանգներից (հողի և/կամ ջրի աղտոտման առումով)՝ նշված տեխնոլոգիաները կարող են լինել այսպիսին՝</p> <ul style="list-style-type: none"> • Արտահոսքերի դետեկտորներ • Արտահոսող խողովակները ուղղված են դեպի փակ դրենաժային համակարգ (երկրորդային համապատասխան պահպանման համակարգ կամ մեկ այլ խողովակ) • Հեղուկների համար նախատեսված բաքեր, որոնք տեղադրված են համապատասխան երկրորդային պահպանման վայրում: Երկրորդային պահպանման վայրի տարողունակությունը սովորաբար այնպիսին է, որ հնարավոր լինի պահպանել ամենամեծ բաքի պարունակությունը դրա խափանման դեպքում • Բաքերի, խողովակների և երկրորդային պահպանման միջոցների մեկուսացում (փականների փակում) <p>Այս ԼՂՏ-ն հիմնականում կիրառելի է</p>
e	<p>Թափոնների պահպանման և մշակման վայրերի ծածկերի ապահովում</p>	<p>Կախված հողի և/կամ ջրի աղտոտման մասով թափոնների ներկայացրած ռիսկերից՝ թափոնները պահպանվում և մշակվում են ծածկ ունեցող վայրերում՝ նպատակ ունենալով կանխել անձրևաջրերի հետ շփումը և այդպիսով նվազագույնի հասցնել աղտոտված մակերեսային ջրերի ծավալը:</p> <p>Այս տեխնոլոգիայի կիրառելիությունը կարող է բարդանալ մեծ ծավալների թափոնների պահպանման կամ մշակման դեպքում (մեխանիկական մշակման իրականացում մետաղական թափոնների մանրացման կայաններում):</p>
f	<p>Ջրի հոսքերի առանձնացում</p>	<p>Յուրաքանչյուր ջրի հոսք (մակերեսային ջրեր, մշակման ժամանակ օգտագործվող ջրեր) հավաքվում և մշակվում է առանձին՝ կախված աղտոտիչի բովանդակությունից և կիրառվող մշակման տեխնոլոգիաների համադրությունից: Մասնավորապես, չաղտոտված կեղտաջրերի հոսքերը առանձնացվում են այն կեղտաջրերի հոսքերից, որոնք մշակում են պահանջում:</p> <p>Հիմնականում կիրառելի է նոր կայանների համար և որոշ սահմանափակումներով նաև նոր կայանների համար՝ կախված ջրի հավաքման համակարգի կառուցվածքից:</p>

g .	Պատշաճ դրենաժային ենթակառուցվածքներ	Թափոնների մշակման տարածքը կապված է դրենաժային ենթակառուցվածքների հետ: Մշակման և պահպանման վայրերի վրա տեղացող անձրևաջրերը լվացման ջրերի, ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող հեղեղումների և այլ արտահոսքերի հետ միասին հավաքվում են դրենաժային ենթակառուցվածքում և, կախված աղտոտիչի բովանդակությունից, ենթարկվում են վերաշրջանառության կամ ուղարկվում հետագա մշակման:
h .	Նախագծման և պահպանման հնարավորություններ, որոնք թույլ կտան բացահայտել և վերանորոգել արտահոսքերը	Հավանական արտահոսքերի կանոնավոր մշտադիտարկումը հիմնվում է որոշ ռիսկերի վրա, իսկ անհրաժեշտության դեպքում սարքավորումները վերանորոգվում են: Ստորգետնյա բաղադրիչների կիրառումը նվազագույնի է հասցված: Ստորգետնյա բաղադրիչների գործածման դեպքում, կախված այդ բաղադրիչներում պարունակվող թափոնների ներկայացրած ռիսկերից (հողի և/կամ ջրի մասով), տեղադրվում է ստորգետնյա բաղադրիչների պահպանման երկրորդային համակարգ:
i .	Բուժերային պահեստավորման հնարավորություն	Համապատասխան բուժերային պահեստավորման հնարավորությունը նախատեսվում է այն դեպքերի համար, երբ կեղտաջրերն առաջացել են շահագործման ոչ սովորական պայմաններում՝ ռիսկային մոտեցման կիրառման արդյունքում (հաշվի առնելով աղտոտիչների բնույթը, կեղտաջրերի մշակման ազդեցությունները և ընդունող շրջակա միջավայրը): Կեղտաջրերի բացթողումը այս բուժերային պահեստավորման համակարգից կարող է իրականացվել միայն համապատասխան միջոցառումների ձեռնարկումից հետո (մշտադիտարկում, մշակում, վերօգտագործում):

LՐՏ 20 – Ջրի մեջ արտանետումների կրճատման նպատակով LՐՏ է համարվում կեղտաջրերի մշակումը ստորև բերված տեխնոլոգիաների պատշաճ համադրման միջոցով.

Մանրամասների համար տես՝ «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ (LՐՏ). թափոնների մշակման տեղեկատու փաստաթուղթ» հրատարակությունը, Էջ 736:

Ա 5.6 Արտակարգ պատահարներից և վթարներից առաջացած արտանետումներ

LՐՏ 21 – Պատահարների և վթարների բնապահպանական ազդեցությունները կանխելու կամ սահմանափակելու նպատակով LՐՏ է համարվում վթարների կառավարման պլանի շրջանակներում ստորև բերված տեխնոլոգիաների կիրառումը (տես՝ LՐՏ 1).

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Պաշտպանական միջոցառումներ	Ներառում է հետևյալ միջոցառումները՝ <ul style="list-style-type: none"> • Կայանի պաշտպանությունը դիտավորյալ չարամիտ գործողություններից • Հրդեհներից և պայթյունից պահպանման համակարգ, որը ներառում է բացահայտման, կանխարգելման և վերացման սարքավորումներ • Վերահսկողության համապատասխան սարքավորումների մատչելիություն և կիրառելիություն արտակարգ իրավիճակներում
b .	Վթարների/պատահարների արդյունքում առաջացած արտանետումների կառավարում	Սահմանվում են ընթացակարգեր և ապահովվում տեխնիկական հնարավորություններ պատահարների և վթարների (հեղեղումների, հրշեջների օգտագործած ջրերի կամ անվտանգության փականների արտահոսքերի դեպքում առաջացած արտանետումներ) ժամանակ առաջացած արտանետումների կառավարման համար (հնարավոր պահպանման առումով)
c.	Պատահարների/վթարների գրանցում և	Ներառում է հետևյալ տեխնոլոգիաները՝ <ul style="list-style-type: none"> • Բոլոր վթարների, պատահարների, ընթացակարգերի փոփոխությունների և ստուգումների արդյունքների գրանցում հատուկ գրանցամատյանում

<p>գնահատման համակարգ</p>	<ul style="list-style-type: none"> Նման պատահարներին և վթարներին արձագանքելու, դրանց ինդիվիդները բացահայտելու և դրանցից դասեր քաղելու ընթացակարգերի ձևակերպում
---------------------------	---

Ա 5.7 Նյութերի արդյունավետություն

ԼՐՏ 22 – Նյութերի արդյունավետ օգտագործման նպատակով ԼՐՏ է համարվում դրանց փոխարինումը թափոններով:

Թափոնների մշակման նպատակով (թթվային մշակման համար օգտագործվում են աղային կամ թթվային թափոններ, մոխրային թափոններն օգտագործվում են որպես ամրակցող նյութեր) այլ նյութերի փոխարեն օգտագործել թափոններ:

Կիրառելիության որոշ սահմանափակումներ կապված են այլ նյութերին փոխարինող թափոններում առկա բաղադրիչների (ծանր մետաղներ, ԿՕՎ-ներ, հարուցիչներ) կողմից ներկայացվող աղտոտման ռիսկերի հետ: Մեկ այլ սահմանափակում կարող է լինել այլ նյութերին փոխարինող թափոնների համապատասխանությունը ընդունվող թափոնի հետ (տես՝ ԼՐՏ 2):

Ա 5.8 Էներգաարդյունավետություն

ԼՐՏ 23 – Էներգիայի արդյունավետ գործածման համար ԼՐՏ է համարվում ստորև բերված մոտեցումների կիրառությունը:

Տեխնիկա		Նկարագրություն
a.	Էներգաարդյունավետության պլան	<p>Էներգաարդյունավետության պլանը ենթադրում է գործունեության (կամ գործողությունների) Էներգետիկ սպառման կոնկրետ հաշվարկ, տարեկան կտրվածքով գործունեության հիմնական ցուցանիշների սահմանում (օրինակ Էներգիայի սպառում կվժ/տոննա մշակված թափոնի հաշվով) և բարելավման թիրախների պարբերական պլանավորում և դրանց առնչվող գործողություններ: Պլանը հարմարեցվում է թափոնների մշակման յուրահատկությունների հետ՝ իրականացվող գործընթաց(ներ)ի, մշակվող թափոնային հոսք(եր)ի և այլ հարցերի մասով:</p>
b.	Էներգետիկ հաշվեկշռի գրանցում	<p>Էներգետիկ հաշվեկշռի գրանցումը թույլ է տալիս տեսնել Էներգիայի սպառման և արտադրության (այդ թվում՝ արտահանման) պատկերն ըստ աղբյուրի (հոսանք, գազ, ավանդական հեղուկ վառելիքներ, կոշտ վառելանյութ և թափոններ): Սա ներառում է հետևյալը՝</p> <ul style="list-style-type: none"> Տեղեկություններ մատակարարված Էներգիայի մասին Տեղեկություններ կայանից արտահանված Էներգիայի մասին Էներգիայի հոսքի մասին տեղեկություններ (Սանքի [Sankey] սխեմաներ կամ Էներգիայի հաշվեկշիռներ), որոնք ցույց են տալիս, թե ինչպես է հոսանքն օգտագործվում ողջ գործընթացի ժամանակ: Էներգիայի հաշվեկշռի գրանցումը հարմարեցվում է թափոնի մշակման յուրահատկությունների հետ (իրականացված գործընթաց(ներ)ի, մշակված թափոնների հոսքի և այլ հարցերի մասով)

Ա 5.9 Փաթեթվածքի վերօգտագործում

ԼՐՏ 24 – Հեռացման համար առանձնացված թափոնների քանակությունը կրճատելու նպատակով ԼՐՏ է համարվում մնացորդների կառավարման պլանի (տես՝ ԼՐՏ 1) շրջանակներում փաթեթվածքի վերօգտագործման ծավալները հնարավորինս մեծացնելը:

Փաթեթվածքը (արկղեր, տարաներ, բեռնարկղեր (IBC), ծղոտե ներքնակներ և այլն) վերօգտագործվում է թափոնների պահպանման համար այն պարագայում, երբ դրանք գտնվում են լավ վիճակում և բավարար չափով մաքուր են՝ կախված նաև պարունակվող նյութերի հետ (շարունակական օգտագործման ժամանակ) համապատասխանության ստուգումից: Անհրաժեշտության դեպքում փաթեթվածքը նախքան վերօգտագործումը (մաքրում, վերանորոգում և այլն) ուղարկվում է համապատասխան մշակման:

Վերօգտագործվող փաթեթվածքի արդյունքում թափոնների աղտոտման պատճառով կարող են լինել կիրառելիության որոշ սահմանափակումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ – Չեկույցում քննարկված օրենսդրական ակտերի ցանկ

ՀՀ օրենքներ

#	Օրենքի անվանում	Ակտի համարը	Ամսաթիվ
1	ՀՀ սահմանադրություն		
2	Թափոնների մասին ՀՀ օրենք	ՀՕ-159-Ն	24-նոյ-2004
3	Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենք	ՀՕ-237-Ն	23-հուն-2011
4	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	ՀՕ-110-Ն	21- հուն -2014
5	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին ՀՀ օրենք	ՀՕ-43	12-դեկ-1992
6	Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	ՀՕ-193	30-մայ-2001
7	Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	ՀՕ-337	07-մայ-2002
8	Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	ՀՕ-5-Ն	26-դեկ-2008
9	ՀՀ օրենք բնապահպանական վերահսկողության մասին	ՀՕ-82-Ն	11-ապր-2005
10	ՀՀ հարկային օրենսգիրք	ՀՕ-165-Ն	01-հուն-2018
11	ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք	ՀՍՍՀԳՍ	06-դեկ-1985
12	ՀՀ քրեական օրենսգիրք	ՀՕ-528-Ն	18-ապր-2003

ՀՀ ենթաօրենսդրական ակտեր

#	Ակտի անվանումը	Ակտի համարը	Ամսաթիվ
1	Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին ՀՀ Բնապահպանության նախարարի հրաման	N 430-Ն	25-դեկ-2006
2	«Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ Առողջապահության նախարարի հրաման	N 03-Ն	4-մար-2008
3	«Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ	N 25-Ն	22-դեկ-2009

	պահանջներ N 2.1.7.002-09 սահմանադրական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ Առողջապահության նախարարի հրաման		
4	Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշում	N 1161-Ն	4-հուլ-2017
5	ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում	N 121-Ն	30-հուն-2003
6	Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին ՀՀ Բնապահպանության նախարարի հրաման	N 342-Ն	26-հուլ-2006
7	Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում	N 921-Ն	13-օգ-2009
8	Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը Հայաստանի Հանրապետության տարածքում կիրարկելու մասին ՀՀ Զարգացիչության նախարարի հրաման	321-A	29-դեկ-2009
9	Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում	N 526-Ն	4-մայ-2017
10	Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասագերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին ՀՀ Կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք	N 16	26-ապր-2012
11	Թափոնի անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին ՀՀ Բնապահպանության նախարարի հրաման	19-Ն	2-փետ-2007
12	Դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման կարգը սահմանելու մասին ՀՀ Առողջապահության նախարարի հրաման	05-Ն	1-փետ-2013
13	Քսուքային նյութերի, յուղերի և հատուկ հեղուկների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում	546-Ն	14-մայ-2015
14	Փաթեթվածքից և փաթեթավորումից գոյացած թափոնների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշում	1544-Ն	28-սեպ-2006

ՀԱՎԵԼՎԱԾ Գ – Հայաստանում թափոնների օգտահանման գործարանների ցանկ

#	Անվանում	Օգտահանվող նյութեր
1	«Սարանիստ» ՍՊԸ	Ապակի
2	«Օսիայան» ՍՊԸ	Ապակի (սպիտակ)
3	«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ	Վտանգավոր թափոններ (բժշկական)
4	«Էկոպրոտեկտ» ՍՊԸ	Վտանգավոր թափոններ (բժշկական)
5	«Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊԸ	Մետաղ
6	«Արմավիրի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ	Մետաղ
7	«Զուլակենտրոն» ԲԲԸ	Մետաղ
8	«Մ. Ն. Գ. ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ	Մետաղ
9	«Նիկոլ Դուման ձուլարան» ՍՊԸ	Մետաղ
10	«Էդմետ» ՍՊԸ	Վտանգավոր թափոններ (մարտկոց)
11	«ՄԵՏԵԶՍԻՄ» ՍՊԸ	Մետաղ, վտանգավոր թափոններ, մարտկոց
12	«ՈՌԻՍԱԼ ԱՐՄԵՆԱԼ» ՓԲԸ	Մետաղ, վտանգավոր թափոններ, մարտկոց
13	«Շիմիցու Զորփորեյշն»	Աղբավայրից մեթանի օգտահանում
14	«ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ	Օրգանական (գոմաղբի և խոզանի որդակոմպոստացում)
15	«Արեգունի բիոգազ»	Օրգանական (գոմաղբից բիոգազ)
16	«Գեղամասար բիոգազ»	Օրգանական (գոմաղբից բիոգազ)
17	«Փամբակ բիոգազ»	Օրգանական (գոմաղբից բիոգազ)
18	«Միրիալ» ՍՊԸ	Օրգանական (գոմաղբ, խոզան, ստվարաթուղթ վառելիքի համար)
19	«Առողջ Սունկ» ՍՊԸ	Օրգանական (թրչնաղբից բիոգազ)
20	«Լուսակերտ Բիոգազ Փլանթ»	Օրգանական (թրչնաղբից բիոգազ)
21	«ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ	Օրգանական (բանջարեղենի և մրգի թափոններից բիոգազ)
22	«ԶԲ Թեքնոլոջիս» ՍՊԸ	Օրգանական (ծեթից վառելիք)
23	«ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Թուղթ
24	«Իշխան և Անդրանիկ» ՍՊԸ	Թուղթ
25	«Մաքսիս» ՍՊԸ	Թուղթ
26	«ՍՏԱԼԱԿՏԻՏ» ՍՊԸ	Թուղթ
27	«Վահագ» Ա/Ձ	Թուղթ
28	«Վազգեն Աբգարյան» ՍՊԸ	Թուղթ
29	«Վլադիմիր Ավագյան» Ա/Ձ	Թուղթ
30	«Կարտոնտարա» ՍՊԸ	Թուղթ, ստվարաթուղթ
31	«ՍՈՖՏԵԶՍ» ՍՊԸ	Թուղթ, ստվարաթուղթ
32	«ԶԼԻՆԵՆԴ» ՍՊԸ	Պլաստիկներ (PET), ստվարաթուղթ
33	«Պլաստ Շին» ՍՊԸ	Պլաստիկներ (շինանյութի համար)
34	«ԷկոՊլաստ» ՍՊԸ	Պլաստիկներ (պոլիէթիլեն, PP)
35	«ՕՎԱԼ-ՊԼԱՍՏ» ՍՊԸ	Պլաստիկներ
36	«ՊԼԱՍՏԻԿ» ԲԲԸ	Պլաստիկներ
37	«ՊՈԼԻ-ՍԵՐՎ» ՍՊԸ	Պլաստիկներ
38	«ԱրմՊլաստ» ՍՊԸ	Պլաստիկներ (HDPE, PE, LDPE, PP)
39	«ԱՄ-Էսկա» ՍՊԸ	Ռետին, անվաղողեր, յուղեր
40	«ԳՐԱՖԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ	Ռետին (մնացորդներ)

Ցանկի թարմացված տարբերակը հասանելի է ՀԱՀ Ցանկերեան բնապահպանական կենտրոնի Թափոնների ռեսուրսների շտեմարանում հետևյալ հղումով՝ <https://wri-ace.aua.am/hy/institutions/#private>

ՀԱՎԵԼՎԱԾ Դ – Հարցազրույցներ և խորհրդատվություն շահակիցների հետ

Սույն հետազոտության շրջանակներում ծրագրի փորձագետներն ունեցել են մի շարք անհատական հարցազրույցներ, երկու հանդիպում թափոնների կառավարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ և բազմաշահառու կողմերի հետ երկու քննարկում հանդիպումներ:

Անհատական հարցազրույցներ

- Անահիտ Ալեքսանդրյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ
- Անահիտ Ավանեսյան, ՀՀ առողջության փոխնախարար
- Անի Օբոսյան, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրեն
- Անժելա Մանուկյան, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի տնօրեն
- Արսեն Գասպարյան, ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական (նախկինում)
- Արթուր Գրիգորյան, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար (նախկինում)
- Էմմա Անախասյան, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի փորձագետ
- Գագիկ Պետրոսյան, ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար (հարցազրույցն արվել է 2019 թվականի փետրվարին, երբ դեռ նախարարությունը չէր միացվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը)
- Գոհար Կարապետյան, «Էկոպրոտեկտ» (վտանգավոր թափոնների մշակման) գործարանի գործավար
- Գոռ Խաչատրյան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի տնօրեն
- Նարինե Սկրտչյան, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչ
- Նելլի Բաղդասարյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Նունե Բակունց, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
- Նվարդ Շահմուրադյան, «Շեն» ՀԿ-ի օրգանական գյուղատնտեսության ծրագրերի համադրող

Հանդիպումներ թափոնների կառավարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ

Հանդիպում հուլիսի 2-ին, 2019 թ.

1. Ալեն Ամիրխանյան, ՀՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն
2. Ահարոն Խաչատրյան, Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետի տեղակալ
3. Անահիտ Ալեքսանդրյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ
4. Անետա Բաբայան, Ռազմավարական պլանավորման և մոնիտորինգի վարչության ռազմավարական ծրագրավորման բաժնի պետ
5. Անուշ Սարգսյան, Հասարակական կազմակերպություն
6. Արարատ Խաչիկյան, Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչության պետ

7. Արման Հովհաննիսյան, ՀՀ արտաքին գործերի նախարարության ՄԱԿ-ի բաժնի վարիչի պաշտոնակատար
8. Արմեն Գևորգյան, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ
9. Արսեն Գասպարյան, ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, աշխատանքային խմբի ղեկավար
10. Գ. Ալեքսանյան, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության գերատեսչական իրավական ակտերի փորձաքննության և գրանցման բաժնի պետ
11. Գոհար Մամիկոնյան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական
12. Գոհարիկ Հովհաննիսյան, Իրավաբանական վարչության պետի տեղակալ
13. Դավիթ Մանուկյան, ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
14. Դմիտրի Մարիյասին, ՄԱԶԾ-ն Հայաստանում - Մշտական ներկայացուցիչ
15. Չարուհի Մաթևոսյան, ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի խորհրդական
16. Իվա Մարության, Հասարակական կազմակերպություն
17. Լիլիա Աֆրիկյան, Վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
18. Լիլիթ Բանդուրյան, Վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար, աշխատանքային խմբի քարտուղար
19. Լուսինե Միքայելյան, Վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության պետի տեղակալ
20. Հարություն Ալպետյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետ
21. Հովհաննես Ահարոնյան, Զաղաքային տնտեսության վարչության աղբահանության և սանիտարական բաժնի պետ (համաձայնությամբ)
22. Մարինա Մինասյան, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ռազմավարական ծրագրավորման և մոնիտորինգի վարչության ռազմավարական ծրագրավորման բաժնի պետ
23. Մելակ Դազարյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության թափոն-ների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ
24. Նարինե Ավետյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման վարչության պետ
25. Նունե Բակունց, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
26. Սերգեյ Շահնազարյան, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ
27. Սուրեն Շաքարյան, Պատմամշակութային հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման վարչության պետ
28. Վահագն Լալայան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներդրումային քաղաքականության վարչության պետ
29. Տիգրան Մանուկյան, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար

Հանդիպում դեկտեմբերի 18-ին, 2019 թ.

1. Ալեն Ամիրխանյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն

2. Անահիտ Ալեքսանդրյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ
3. Արարատ Խաչիկյան, Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսու-թյան վարչության պետ
4. Գոհար Մամիկոնյան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական
5. Դավիթ Շինոյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության փորձագետ
6. Հարություն Ալպետյան, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետ
7. Նարինե Ավետյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման վարչության պետ
8. Ն. Սահակով, ՀՀ արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչությունում խորհրդական
9. Սերգեյ Շահնազարյան, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ
10. Սրբուհի Ղազարյան, ՀՀ վարչապետի խորհրդական (աշխատանքային խմբի ղեկավար)
11. Վահագն Լալայան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի խորհրդական

Բազմաշահառու կողմերի հետ խորհրդատվություն

Մեկնարկային աշխատաժողով, դեկտեմբերի 4-ին, 2018 թ.

Աշխատաժողովն ունեցավ ավելի քան 50 մասնակից, այդ թվում՝

- Շվեդ փորձագետներ (Milav, LIFE)
- ՀՀ կառավարության ներկայացուցիչներ
- Քաղաքացիական հասարակական կազմակերպություններ
- Մասնավոր հատված
- Ակադեմիա
- Լրատվամիջոցներ

Ծրագրի նախնական զեկույցի քննարկում, դեկտեմբերի 5-ին, 2019 թ.

Ավելի քան 20 մասնակից այդ թվում՝

- Քաղաքացիական հասարակական կազմակերպություններ
- Մասնավոր հատված
- Ակադեմիա

ՀԱՎԵԼՎԱԾ Ե – Հաղորդակցում պետական մարմինների հետ

Հաղորդակցություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ Հայաստանում ԱՊԸ համակարգի ներդրման գործընթացի առնչությամբ

Ուղարկված հարցումը և ստացված պատասխանը

Բարև Ձեզ,

Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը ներկայումս իրականացնում է Թափոնների կառավարումը Հայաստանում (ԹԿՀ) ծրագիրը (wga-ace.aua.am), որի նպատակն է Հայաստանի կառավարությանը տրամադրել անկախ խորհրդատվություն կոշտ թափոնների կառավարման ազգային քաղաքականության, ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման հարցում:

Ուսումնասիրության մաս կազմող՝ երկրում կոշտ թափոնների կառավարման առկա իրավիճակի վերլուծության շրջանակներում անդրադարձ է արվում Հայաստանում Արտադրողի պատասխանատվության ընդլայնման մոտեցումների և ռազմավարության մշակման գործընթացին:

2018 թ. ապրիլի 12-ի նիստում ՀՀ Կառավարությունը հավանություն է տվել Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021 թվականների միջոցառումների ծրագրին: Ռազմավարությունը նախատեսում է երկու փուլ, որոնց շրջանակներում սահմանված է որոշ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում, նոր ենթաօրենսդրական ակտերի ընդունում, հավաստագրերի տրամադրման համակարգի ներդրում, անհրաժեշտ մեթոդական ցուցումների, ձևաչափերի, ընթացակարգերի մշակում և հաստատում և այլն:

Խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել այս գործընթացների մասին, մասնավորապես նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին: Շնորհակալ կլինենք ցանկացած տեղեկատվության համար:

Հարգանքով՝
ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետ
ԹԿՀ նախագծի ղեկավար
Հարություն Ալպետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՄ

№ 5/01.2/53030

08 « 10 » 2019թ.

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Յակոբեան
բնապահպանական կենտրոնի փորձագետ,
Թափոնների կառավարումը Հայաստանում
նախագծի ղեկավար պարոն Հ. Ալպետյանին

Հարգելի պարոն Ալպետյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հոկտեմբերի 3-ի առցանց հարցման, տրամադրում եմ տեղեկատվություն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի նիստի N14 արձանագրությունով հավանության արժանացած «11. Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման 2-րդ հավելվածի 1-3-րդ կետերի կատարման վերաբերյալ:

Առդիր՝ 1 նիշք:

Հազանքով՝
պաշտոնակատար

Վ. Զիլավյան

10/8/2019


ՎԱՆԵ ԶԻԼԱՎՅԱՆ
Signed by: JILAVYAN VAHE 4101750076

Բնապահպանական ռազմավարական ծրագրերի
ու մոնիթորինգի վարչություն
Մ. Հարությունյան
011818515



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք. Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | min_ecology@mnp.am | www.mnp.am
(+374) 11 818-520 | Fax: (+374) 11 818-506

Առդիր

Տեղեկատվություն

Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարության կարգավիճակի և նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի նիստի N14 արձանագրությունով հավանության արժանացած «11. Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման 2-րդ հավելվածի նախատեսվում էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. «Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում»՝ մինչև 2018 թվականի ավարտը,
2. «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում»՝ մինչև 2019 թվականի ավարտը,
3. «Օգտահանման ենթակա, շահագործման համար ոչ պիտանի ապրանքների (ներառյալ փաթեթվածքների) ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում»՝ մինչև 2020 թվականի ավարտը:

Սակայն վերոնշյալ միջոցառումների իրականացումը համարվել է ժամանակավրեպ և ոչ նպատակահարմար (ինչի վերաբերյալ 08.01.2019 թ. N 02/24.10/8 հանձնարարականով ստացվել է Վարչապետի համաձայնությունը) հաշվի առնելով հետևյալ հիմնավորումները.

- Ներկայումս Հայաստանում գրեթե բացակայում են արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման համար անհրաժեշտ՝ թափոնների մշակում, վերամշակում, օգտահանում և վնասագրծում իրականացնող կազմակերպությունների, համապատասխան ենթակառուցվածքների, ինչպես նաև թափոնների տեսակավորված հավաքման, վերամշակման կետ տեղափոխման համակարգերը.
- 2018 թ. ապրիլի 12-ին վավերացված «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և Ատտմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրի (ՀԳԸՀ) 3-րդ հավելվածի՝ հայկական կողմը պարտավորություն է ստանձնել մինչև 2026 թվականը ներդնել արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմը՝ իրականացնելով համապատասխան օրենսդրական մոտարկումներ՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ թափոնների մասին հրահանգի պահանջներին համապատասխան: Տվյալ պարտավորությունը ամրագրված է նաև վարչապետի կողմից 2019 թ. հունիսի 1-ի N666-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային քարտեզի բնապահպանության բաժնում: Վերոնշյալ միջոցառման իրականացումը նախատեսվում է իրականացնել ԵՄ աջակցությամբ և հիմք ընդունելով Եվրոպական փորձը:

Ելնելով վերոգրյալից՝ ոլորտում իրականացվող գործընթացների իրավական կարգավորման տեսանկյունից միասնական մոտեցման ապահովման նպատակով Շրջակա միջավայրի նախարարությունը նախատեսում է արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման համար անհրաժեշտ միջոցառումները իրականացնել վերոնշյալ ճանապարհային քարտեզի իրականացման շրջանակներում և ժամկետներում:

Հաղորդակցություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ Հայաստանի կրթական համակարգում թափոնների կառավարման վերաբերյալ թեմաներ ներառող դասընթացների և ծրագրերի առնչությամբ

Ուղարկված հարցումը և ստացված պատասխանը

Բարև Ձեզ,

Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը ներկայումս իրականացնում է թափոնների կառավարմանն առնչվող տարբեր հետազոտական նախագծեր: Դրանցից մեկն է Թափոնների կառավարումը Հայաստանում ծրագիրը (wga-ace.aua.am), որի նպատակն է Հայաստանի կառավարությանը տրամադրել անկախ խորհրդատվություն կոշտ թափոնների կառավարման ազգային քաղաքականության, ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման հարցում:

Ուսումնասիրության մի մասը կազմում է «Երկրում կոշտ թափոնների կառավարման առկա իրավիճակը» գլուխը, որն անդրադառնում նաև իրազեկվածության մակարդակին: Այս հարցի շուրջ է, որ ակնկալում ենք օգնություն Ձեր նախարարության կողմից:

Շնորհակալ կլինենք, եթե տրամադրեք տեղեկություն հետևյալ հարցերի շուրջ.

1. Ներառված է արդյոք դպրոցական ծրագրերում կոշտ թափոնների կառավարմանը վերաբերող որևէ թեմա: Եթե այո, ապա
 - ո՞ր առարկայում (առարկաներում)
 - ի՞նչ թեմա(ներ)
 - բոլոր դպրոցներում, թե ոչ (նշել դպրոցները)
 - ո՞ր դասարանի ծրագրում
 - պարտադիր առարկա է, թե ոչ
 - առցանց հասանելի է, թե ոչ (հասանելիության դեպքում խնդրում ենք տրամադրել հղում կայքէջին)

2. Ներառված է արդյոք ԲՈւՀ-երի ծրագրերում կոշտ թափոնների կառավարմանը վերաբերող որևէ թեմա: Եթե այո, ապա
 - ո՞ր առարկայում (առարկաներում)
 - ի՞նչ թեմա(ներ)
 - բոլոր ԲՈւՀ-երում, թե ոչ (նշել ԲՈւՀ-երը)
 - ո՞ր կուրսերի ծրագրում
 - պարտադիր առարկա է, թե ոչ
 - առցանց հասանելի է, թե ոչ (հասանելիության դեպքում խնդրում ենք տրամադրել հղում կայքէջին)

3. Դաստիարակներն ու ուսուցիչները ներգրավված են արդյոք վերապատրաստման ծրագրերում, ուր քննարկվում է թափոնների կառավարումը (եթե այո, նշել ծրագիրը)
4. Եթե առկա է կոշտ թափոնների կառավարման վերաբերյալ Հայաստանում իրականացվող իրազեկման ծրագրերի մասին տեղեկություն ինդրումենք տրամադրել:

Կանխավ շնորհակալ ենք հարցմանը արձագանքելու համար:

Հարգանքով՝

ՀԱՅ Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետ

ԹԿՅ Նախագծի ղեկավար

Հարություն Ալպետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel. 010520632, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ерван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, Y. Sargsyan 3, Government House 2, Yerevan, www.edu.am, secretariat@edu.am

№ 03/06/21972-19

« 02 » 10 2019թ.

Հայաստանի ամերիկյան համալսարանի
Յակոբեան բնապահպանական կենտրոնի
փորձագետ, ԹԿՀ նախագծի ղեկավար
Հարություն Ալպետյանին
Էլ. հասցե՝ alpetyan@aua.am

Հարգելի պարոն Ալպետյան,

Ի պատասխան Ձեր 2019-09-25 առցանց հարցման՝ տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից
հայցվող տեղեկատվությունը ստանալու համար հարցում ենք հղել 3 բուհերի՝ Երևանի պետական,
Հայաստանի ազգաբարձի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարաններին:

Կից Ձեզ եմ ներկայացնում Կոշտ թափոնների կառավարման առկա իրավիճակի
վերաբերյալ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանից ստացված
տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ 2 բուհերից, ինչպես նաև հանրակրթական
ուսումնական հաստատություններից հայցվող տեղեկատվությունը ստանալու դեպքում
կտեղեկացնենք լրացուցիչ գրությամբ:

Առդիր՝ 7 էջ:

Հարգանքով՝

Գրիշա Թամրազյան

02.10.2019

X

ԳՐԻՇԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Signed by: TAMRAZYAN GRISHA 3307850652

Կատ՝ Տաթև Խաչատրյան
Հեռ.՝ 374 (10) 52 56 62

Առդիր

Բուհի անվանումը	Բուհում դասավանդվող առարկան, որում ներառված է կոշտ թափոնների կառավարմանը վերաբերող որևէ թեմա	Թեմաները	Ուսումնառության ո՞ր մակարդակում և որերորդ կուրսում է դասավանդվում առարկան	Պարտադիր թե՞ կամընտրակա է առարկա	Առցանց հասանելի է թե՞ ոչ (հասանելիության դեպքում խնդրում ենք տրամադրել հղում կայքէջին)
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	1. Փոքրաթափոն հումքախնայող և էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների մշակման սկզբունքները	1.1. Կոշտ արդյունաբերական թափոնների վերաօգտագործման խնդիրները 1.2. Կոշտ կենցաղային թափոնների հավաքում, դասակարգում, վերաօգտագործում	բակլավր, 4-րդ կուրս	պարտադիր առարկա	առցանց հասանելի չէ
	2. Ռադիոակտիվ թափոնների պահպանման հիմնախնդիրները	2.1. Ռադիոակտիվ թափոնների վերամշակում և պահպանում 2.2. Ռադիոակտիվ թափոնների պահպանման միջոցներ	բակլավր, 4-րդ կուրս	պարտադիր առարկա	առցանց հասանելի չէ
	3. Թունավոր թափոնների բնապահպանական հիմնախնդիրները	3.1. Կոշտ արդյունաբերական թափոնների դասակարգում 3.2. Թափոնակույտեր, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները	մագիստրատուրա, 2-րդ կուրս	ընտրովի առարկա	առցանց հասանելի չէ
	4. ԱԷԿ-ների ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի պահպանման ժամանակակից տեխնոլոգիաները	4.1. Ռադիոակտիվ թափոնների տեսակները և դասակարգումը, 4.2. Աշխատած միջուկային վառելիքի բնութագրերը, 4.3. Ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգության ապահովման ՀՀ նորմերը, 4.4. ԱԷԿ-ի շահագործման և շահագործումից դուրսբերման ընթացքում առաջացող ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի հավաքումը, տեսակավորումը և վերամշակումը, 4.5. Հեղուկ ռադիոակտիվ թափոնների՝ տարողություններում պահման հիմնախնդիրները, դրանց ապակեցման, բիտումացման, ցեմենտացման տեխնոլոգիաները, կիրառման համաշխարհային փորձը և հիմնախնդիրները, 4.6. Պինդ ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի պահման «թաց» և «չոր» եղանակները, դրանց առավելությունները և թերությունները, 4.7. Չոր պահեստարանների և կոնտեյներների տեսակները, 4.8. Ռադիոակտիվ թափոնների պահումից թաղման անցման ժամանակահատվածի գնահատման սկզբունքները,	մագիստրատուրա, 1-ին կուրս	ընտրովի առարկա	առցանց հասանելի չէ

	<p>4.9. Թափոնների թաղման հիմնական և այլընտրանքային տարբերակները,</p> <p>4.10. Թաղման տարբերակի ընտրման տեխնիկատնտեսական և էկոլոգիական հիմնախնդիրները,</p> <p>4.11. Աշխատած միջուկային վառելիքի վերամշակման արտասահմանյան փորձը,</p> <p>4.12. Վերամշակման պարագայում առաջող հիմնախնդիրները:</p>			
<p>5. Ակտիվագերծման պրոցեսները ԱԷԿ-ներում</p>	<p>5.1. ԱԷԿ-ների շահագործման պայմաններում առաջացող ճառագայթաակտիվ պինդ, հեղուկ և գազային թափոնները, դրանց դասակարգումը, բնութագրերը, վնասագերծման պահանջները և առանձնահատկությունները,</p> <p>5.2. Ճառագայթաակտիվ մակերևույթների ակտիվագերծման մեթոդները, սարքավորումները և համակարգերը:</p>	<p>մագիստրատուրա, 2-րդ կուրս</p>	<p>ընտրովի առարկա</p>	<p>առցանց հասանելի չէ</p>
<p>6. ԱԷԿ-ների շահագործումից դուրս բերման տեխնոլոգիաները</p>	<p>6.1. ԱԷԿ-ների շահագործումից դուրսբերման պրոցեսի առանձնահատկությունները, տարբերակները, փուլերը, տարբերակների տեխնոլոգիական և ֆինանսական համեմատությունը,</p> <p>6.2. Շահագործումից դուրսբերման ընթացքում ձևավորվող պինդ և հեղուկ ճառագայթաակտիվ թափոնների հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները,</p> <p>6.3. Ճառագայթաակտիվ գրաֆիտի վնասագերծման հիմնախնդիրները,</p> <p>6.4. Հայկական ԱԷԿ-ի շահագործումից դուրսբերման պլանը:</p>	<p>մագիստրատուրա, 2-րդ կուրս</p>	<p>ընտրովի առարկա</p>	<p>առցանց հասանելի չէ</p>
<p>7. Արտադրական և կենցաղային թափոնների կառավարում</p>	<p>7.1. Թափոնների կառավարում</p> <p>7.2. Կոշտ կենցաղային թափոններ</p> <p>7.3. Հանքագործության կոշտ թափոնների կառավարում</p>	<p>բակալավր, 4-րդ կուրս</p>	<p>պարտադիր առարկա</p>	<p>առցանց հասանելի չէ</p>
<p>8. Հանքահարստացման արտադրության լցակայանների պոչամբարների ձևավորում</p>	<p>8.1. Լցակայանների ձևավորման եղանակները:</p> <p>8.2. Լցակայանաձևավորում մեխանիկական թիակներով:</p> <p>8.3. Լցակայանաձևավորում դրազայններով:</p> <p>8.4. Լցակայանաձևավորում բազմաշերտփանի էքսկավատորներով:</p> <p>8.5. Լցակայանաձևավորում կոնվեյերներով:</p>	<p>բակալավր, 4-րդ կուրս</p>	<p>պարտադիր առարկա</p>	<p>առցանց հասանելի չէ</p>

		<p>8.6. Պոչամբարներ և դրանց դասակարգումը:</p> <p>8.7. Պոչամբարների բնակլիմայական, ճարտարագիտաերկրաբանական ու հիդրոլոգիական բնութագրերը:</p> <p>8.8. Պոչամբարների տեղակայման սեյսմատեկտոնական պայմանները:</p> <p>8.9. Պոչամբարների տիպերը և հիմնական կառուցվածքային յուրահատկությունները:</p> <p>8.10. Պոչամբարների տեղադրման վայրի ընտրումը:</p> <p>8.11. Պոչամբարների նախագծման մեթոդները:</p> <p>8.12. Պոչամբարներին ներկայացվող հիմնական պահանջները:</p> <p>8.13. Հիդրոտրանսպորտ:</p> <p>8.14. Պոչամբարների կայունությունը:</p> <p>8.15. Պոչամբարների շահագործումը:</p> <p>8.16. Բնապահպանական միջոցառումները պոչամբարների շահագործման ժամանակ:</p>			
	<p>9. Ռեկուլտիվացիա և կոնսերվացում</p>	<p>9.1. Ռեկուլտիվացիոն և խախտված հողերի վերականգնման աշխատանքների կազմակերպման ընդհանուր հարցերը:</p> <p>9.2. Բնական և տեխնածին լանդշաֆտների տեսակները:</p> <p>9.3. Բնական և տեխնածին լանդշաֆտների ռեկուլտիվացիայի փուլերը:</p> <p>9.4. Բնական և տեխնածին լանդշաֆտների ռեկուլտիվացիայի դասերը:</p> <p>9.5. Մակաբացման ապարների դասակարգումը ըստ բիրոլոգիական ռեկուլտիվացիայի հնարավորության:</p> <p>9.6. Լցվածքների ռեկուլտիվացիա:</p> <p>9.7. Լցակույտերի ռեկուլտիվացիա:</p> <p>9.8. Լցվածքների բարեկարգում:</p> <p>9.9. Լցակույտերի բարեկարգում:</p> <p>9.10. Աղբանոցներով և պոլիգոններով խախտված հողերի ռեկուլտիվացիան և բարեկարգումը:</p>	<p>մագիստրատուրա, 2-րդ կուրս</p>	<p>ընտրովի առարկա</p>	<p>առցանց հասանելի չէ</p>

Հաղորդակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ անապահով ընտանիքներին օգնելու նպատակով օգտագործված իրերի հավաքագրման ծրագրերի առնչությամբ

Ուղարկված հարցումը և ստացված պատասխանը

Բարև Ձեզ,

Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը ներկայումս իրականացնում է Թափոնների կառավարումը Հայաստանում (ԹԿՀ) ծրագիրը (wga-ace.aua.am), որի նպատակն է Հայաստանի կառավարությանը տրամադրել անկախ խորհրդատվություն կոշտ թափոնների կառավարման ազգային քաղաքականության, ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման հարցում:

Ուսումնասիրության մաս կազմող՝ երկրում կոշտ թափոնների կառավարման առկա իրավիճակի վերլուծության շրջանակներում անդրադարձ է արվում Հայաստանում ապրանքների կրկնակի օգտագործման պրակտիկաներին:

Հայտնի է, որ Սոցապ նախարարությունը իրականացնում է տարբեր մարզերում օգտագործված իրերի հավաքագրման ծրագրեր անապահով ընտանիքների օգնելու համար:

Խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել այս գործընթացների մասին:

Շնորհակալ կլինենք ցանկացած տեղեկատվության համար:

Հարգանքով՝
ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի փորձագետ
ԹԿՀ նախագծի ղեկավար
Հարություն Ալպետյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

« 30 » 09 2019 թ.

N 114/20239-2019

Ձեռք U/51812-2019

25.09.2019

**«ՀԱՆՑ ԅԱԿՈՐԲԵԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ»
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼՊԵՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ալպետյան,

Ի պատասխան Ձեր հարցման, տեղեկացնում եմ, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 05.06.2019թ. N 71-Ա/1 հրամանով (կցվում է) հաստատվել է սոցիալական շտապ օգնության համակարգի ձևավորման ծրագիրը, որի նպատակը կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակում հայտնված անձանց(ընտանիքներին) արագ և արդյունավետ օգնության կազմակերպումն է, ինչպես նաև փոխօգնության հանրային վարվելակերպի տարածման խրախուսումը:

Հայտնում եմ նաև, որ նախարարությունը նախաձեռնել է սոցիալական շտապ օգնության համակարգի միասնական հարթակի ձևավորման գործընթաց:

Ընդհանրապես կլինենք ցանկացած համագործակցության համար:

Առդիր՝ 10 էջ:

Մամուլի քարտուղար՝

Ս. Մարտիրոսյան

Առդիր

[374807]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

05. հունիս 2019 թ.

N 71-26/1

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով, հաշվի առնելով նախարարությունում ստացված բանավոր, գրավոր դիմումներում, ահազանգերում, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող հանգամանքների մասին վկայող տվյալները, դրանց արագ արձագանքման, այդ իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին) արագ և արդյունավետ օգնություն կազմակերպելու նպատակով, ինչպես նաև խրախուսելով փոխօգնության հանրային վարվելակերպի տարածումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

- 1. Հաստատել «Սոցիալական շտապ օգնության համակարգի ձևավորման ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:
- 2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն).
 - 1) միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետին՝ ապահովել միջազգային և հասարակական կազմակերպությունների միջոցով անհրաժեշտ ապրանքատեսակներու

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
2019թ. ի *հունվար* «*Տ*»-ի N *41* - Ա/1 հրամանի

ԾՐԱԳԻՐ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Սոցիալական շտապ օգնության համակարգը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ միջազգային կառույցների, հասարակական սեկտորում գործառնող ակտիվ, ինչպես նաև մասնավոր սեկտորի այլ կազմակերպությունների հետ համագործակցության պայմաններում:

2. Սոցիալական շտապ օգնության համակարգի նպատակն արագ արձագանքն է արտակարգ՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին, այսուհետ՝ շահառու) սոցիալական խնդիրների լուծման հարցում:

3. Սոցիալական շտապ օգնության համակարգի շրջանակներում տրամադրվում են սոցիալական ծառայություններ, այդ թվում բնափրային:

4. Սոցիալական շտապ օգնության համակարգի շրջանակներում տրամադրվող հիմնական սոցիալական ծառայություններն են.

- 1) Հոգեբանական օգնություն.
- 2) Խնամքի ծառայությունների միանվագ տրամադրում.
- 3) Փաստաբանական օգնություն (քաղաքացիական գործերով).
- 4) Կացարանի տրամադրում.
- 5) Բնափրային օգնություն:

5. Սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման կենտրոնական և տարածքային պահուստները (այսուհետ՝ Պահուստ) կարող են ներառել

- 1) Մթերք և սնունդ.
- 2) Հագուստեղեն և կոշիկներ.

3) Գրքեր, գրենական պիտույքներ, դասագրքեր և դպրոցական պայուսակ և այլ գրասենյակային պարագաներ.

4) Անկողնային պարագաներ.

5) Կահույք.

6) Հաշմանդամություն եննցող անձանց աջակցող միջոցներ.

7) Վառելիքայտ.

8) Առաջին անհրաժեշտության կենցաղային ապրանքներ՝ սառնարան, լվացքի մեքենա և այլ խոհանոցային պարագաներ:

6. Պահուստում սույն Ծրագրի 5-րդ կետով նախատեսված ապրանքատեսականին հավաքագրվում է անհատ քաղաքացիների մասհանումներից, հասարակական, բարեգործական կազմակերպությունների հատկացումներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

7. Սույն Ծրագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված մթերքը և սնունդը պահուստի առանձին բաղադրիչ է (այսուհետ՝ մթերային բանկ), որի ձևավորումն ունի իր առանձնահատկությունները.

1) մթերային բանկը միանվագ կամ պարբերական ձևով ստանում է համապատասխան մթերքն արտադրողից (անհատ գյուղացիներից կամ գյուղացիական տնտեսություններից), խանութներից, սուպերմարկետներից և անհատ բարեգործներից.

2) Մթերքը հիմնականում դժվար վաճառվող է կամ պիտանելիության ժամկետի ավարտը մոտ է, ունի խաթարված փաթեթավորում (պիտանի է օգտագործման համար).

3) Մթերքի հատկացումները կատարվում են գնորդների կողմից կամավոր «մեծ առևտրի» (Նոր Տարվա, Սուրբ ծննդյան տոների, Սուրբ Զատիկի, Սուրբ Իսաչի կամ այլ տոնակատարությունների նախօրյակ) օրերին՝ կամավորների կան հասարակական կազմակերպությունների աշխատողների կազմակերպած ակցիաների շրջանակներում.

4) Մթերքը հատով է, հեղուկ մթերքը գործարանային պայմաններում շալցված է, մթերքը փաթեթավորված է (թեկուզ խաթարված, բայց անվնաս), պահպանման հատուկ ջերմային պայմաններ (սառնարանային) պահանջող մթերքն ընդունվում է նման պայմանների առկայության կամ անմիջապես շահառուին տրամադրելու դեպքում.

ՀՂՈՒՄՆԵՐ

- i. ՀՀ կառավարության ծրագիր, 2019 թ.
Հասանելի է՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>
- ii. ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն
Հասանելի է՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf
- iii. ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն.
Հասանելի է՝ <http://www.mtad.am/files/docs/1552.pdf>
- iv. ՀՀ Էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր
Հասանելի է՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/07/14_0836.pdf
- v. Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն
Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=94848>
- vi. Մաքուր արտադրության հայեցակարգ
Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=64672>
- vii. ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն
Հասանելի է՝ http://old.minagro.am/public/uploads/2014/02/agstrategy_arm3.pdf
- viii. Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն
Հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=94848>
- ix. Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)
Հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52017JC0037>
ՀԸԳՀ գործողությունների ծրագիրը հասանելի է՝ http://www.osf.am/wp-content/uploads/2018/06/CEPA-Roadmap_ENG-Draft_June-2018.pdf
- x. Dri M., Canfora P., Antonopoulos I. S., Gaudillat P., *Best Environmental Management Practice for the Waste Management Sector*, JRC Science for Policy Report, EUR 29136 EN, Publications Office of the EU, Luxembourg, 2018, ISBN 978-92-79-80361-1, doi:10.2760/50247, JRC111059;
Հասանելի է՝ https://publications.jrc.ec.europa.eu/repository/bitstream/JRC111059/jrc111059_bemp_waste_2018_final_04_2.pdf
- xi. Bernd Bilitewski, Jörg Wagner, Jan Reichenbach; *Best Practice Municipal Waste Management: Information pool on approaches towards a sustainable design of municipal waste management and supporting technologies and equipment*; German Environment Agency.
Հասանելի է՝ https://publications.jrc.ec.europa.eu/repository/bitstream/JRC111059/jrc111059_bemp_waste_2018_final_04_2.pdf
- xii. Antoine Pinasseau, Benoit Zenger, Joze Roth, Michele Canova, Serge Roudier; *Best Available Techniques (BAT) Reference Document for Waste treatment Industrial Emissions Directive 2010/75/EU (Integrated Pollution Prevention and Control)*; EUR 29362 EN; Publications Office of the European Union, Luxembourg, 2018; ISBN 978-92-79-94038-5, doi:10.2760/407967, JRC113018;
Հասանելի է՝ https://eippcb.jrc.ec.europa.eu/reference/BREF/WT/JRC113018_WTbref.pdf
- xiii. Mark Hyman, Brandon Turner, Ainhoa Carpintero, *Guidelines for National Waste Management Strategies*, UNEP, 2013.
Հասանելի է՝ http://cwm.unitar.org/national-profiles/publications/cw/wm/UNEP_UNITAR_NWMS_English.pdf
- xiv. COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS *Towards a circular economy: A zero waste program for Europe**/ COM/2014/0398 final */
Հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:52014DC0398>
- xv. COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS *Closing the loop - An EU action plan for the Circular Economy* COM/2015/0614 final
Հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52015DC0614>
- xvi. Camia A., Robert N., Jonsson R., Pilli R., García-Condado S., López-Lozano R., van der Velde M., Ronzon T., Gurriá P., M'Barek R., Tamosiunas S., Fiore G., Araujo R., Hoepffner N., Marelli L., Giuntoli J., *Biomass production, supply, uses and flows in the*

European Union. First results from an integrated assessment, EUR 28993 EN, Publications Office of the European Union, Luxembourg, 2018, ISBN 978-92-79-77237-5, doi:10.2760/539520, JRC109869.
 Հասանելի է՝ https://publications.jrc.ec.europa.eu/repository/bitstream/JRC109869/jrc109869_biomass_report_final2pdf2.pdf

xvii. EUROPEAN COMMISSION, EUROSTAT *Guidance on municipal waste data collection*.
 Հասանելի է՝ <https://ec.europa.eu/eurostat/documents/342366/351811/Guidance+on+municipal+waste+reporting/0710f1a4-6b68-4d48-ac4c-75901bc0644b>

xviii. Veeken, Adrie & Hamminga, P. & Mingshun, Zhang. *Improving sustainability of municipal solid waste management in China by source separated collection and biological treatment of the organic fraction. Innovative environmental management & sustainable development*, 2006.
 Հասանելի է՝ <https://edepot.wur.nl/23061>

xix. Jan Pavlík, *Feasibility assessment of Agricultural Waste to energy Potential and Opportunities for Armenia*, 2017. UNDP.
 Հասանելի է՝ http://nature-ic.am/Content/announcements/10538/FS_Biogas%20Potential_final.pdf

xx. Tim Elliott, *Landfill Tax in the United Kingdom*, 2017. Institute for European Environmental Policy.
 Հասանելի է՝ <https://ieep.eu/uploads/articles/attachments/e48ad1c2-dfe4-42a9-b51c-8fa8f6c30b1e/UK%20Landfill%20Tax%20final.pdf?v=63680923242>

xxi. ՀՀ վիճակագրական կոմիտե, *Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2018 թ.*
 Հասանելի է՝ <https://www.armstat.am/am/?nid=81&id=2202>

xxii. UN, Economic Commission for Europe, Committee on Environmental Policy, *Environmental Performance Review – Armenia*, 2000.
 Հասանելի է՝ https://www.unece.org/fileadmin/DAM/env/epr/epr_studies/armenia.pdf

xxiii. Georgi Arzumanyan, *Municipal Solid Waste Management in Armenia: Current Trends and Steps Forward*, 2004.
 Հասանելի է՝ <http://lup.lub.lu.se/luur/download?func=downloadFile&recordId=1329229&fileId=1329230>

xxiv. Patricia Butler, *Composition of Solid Waste in the Berd Municipal Dump in Tavush Marz, Armenia*, 2007.
 Հասանելի է՝ <https://files.peacecorps.gov/multimedia/pdf/learn/whyvol/masters/theses/Forestry/Butlerp.pdf>

xxv. FICHTNER, *Advisory Study on the Municipal Solid Waste Management in Yerevan*, 2008.
 Հասանելի է՝ http://s3.amazonaws.com/zanran_storage/www.mineconomy.am/ContentPages/17266642.pdf

xxvi. Bundesumweltministerium, *Recycling of Household Waste in Armenia: Personnel training, data collection including waste analyses, recommendations for waste management actions*, 2010.
 Հասանելի է՝ <https://www.umweltbundesamt.de/sites/default/files/medien/beratungshilfe/long/58-1-A-EN.pdf>

xxvii. COWI A/S, *Կոտայքի մարզի Կոշտ Կենցաղային Թափոնների Կառավարման Ծրագիր -ԲՍՈԼ –ՈՏԱ Նախագիծ*, ՀՀ ՏԿԵՆ 2010.
 Հասանելի է՝ <http://www.mtad.am/files/docs/922.pdf>

xxviii. Enviroplan S.A, *Qualitative Analysis of Municipal Solid Waste in Armenia, Croatia, Cyprus, F.Y.R.O.M. and Ukraine – Methodology and Results*, 2015.
 Հասանելի է՝ <http://www.enviroplan.gr/public/uploads/bbvko1lfz584a78d644d84.pdf>

xxix. Yerevan Municipality, EIB, Enviroplan S.A, *Waste Diversion Concept Note (Yerevan Solid Waste Assignment)*, 2016.

xxx. Bolagen, *Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրություն*, ՏԿԵՆ, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, 2019.
 Հասանելի է՝ <https://ace.aua.am/hy/wqcs/>

xxxi. EU. *DIRECTIVE 2008/98/EC OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 19 November 2008 on waste and repealing certain Directives*.
 Հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32008L0098>

xxxii. EU. *Council Directive 1999/31/EC of 26 April 1999 on the landfill of waste*.
 Հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv:OJ.L_.1999.182.01.0001.01.ENG&toc=OJ:L:1999:182:TOC

xxxiii. EU, Armenia. *Comprehensive and enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia*.
 Հասանելի է՝ [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1584785265847&uri=CELEX:22018A0126\(01\)](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1584785265847&uri=CELEX:22018A0126(01))